



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99.0927.002

71-89

~~0237 - 7/11/77~~
~~178 - 20/11/77~~
~~313 - 12/11/77~~
806 - 17/11/78
1158 29/11/79

891.99.092 *u/m2+*

u-89

1-11

20 06 / 09

①

Lmy

314

~~11X 9. 24A~~

x6 47

Wm. W. Phelps

9
ԳԵՐԸ ԳՌԾՅԵԱՆՑ

4092

ՅՈՒՇԻԿՆԵՐ

Ա. ՀՐԶԱՆ



ԹԻՓԼԻՍ

Типографія М. Вартанянца, Велям. ул. д. № 7.

Տպարան Մ. Վարդանեանցի

1894



891.98.002 ՊՈՐՏՅԱԼ

Պ. 89

ՊԵՐՃ ՊՌՕՃԵՆՆԵՐ

ւ՛

124

ՅՈՒՇԻԿՆԵՐ

Ա. ՀՐԶԱՆ

21600



ԹԻՓԼԻՍ

Типография М. Варганиянца, Велик. ул. д. № 7.

Տպարան Մ. Վարգանիկանցի

1894

33333333 3333

98543210

333333 33

Дозволено Цензурою, Тифлисъ, 31 Августа 1894 г. г. Тифлисъ.

Издатель

И. С. Соловьев

Тифлисъ

1894

ՆՈՐԻՆ ԳԵՐԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ

Սրբազան Առաջնորդին

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵՔԻ

Տ. ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՍՈՒՐԷՆԵԱՆՑ

ն ու է ը

Ո Ր Դ Ի Ա Կ Ա Ն

Լ ո ո ը ի ն

Ղ ա ը զ ա ն ա ց :

Մ Բ Ա Ջ Ա Ն Հ Ա Յ Բ Ը .

Առաջին անճնաւորութիւնը, որ խրախուսեց
ինձ «Յուշիկներիս» տպագրութիւնն ապագային չը
թողնել, Ձեր Գերապատուութիւնն էր. եթէ Ձեր
անկեղծ քարեկամական քաջալերը զօրավիզն
չը հանդիսանար, ես այսօր չէի վայելիլ Ձեր եւ
ովանց առատասրտութեան արգասիքը:

Թոյլ տուէ՛ք, ուրեմն, երկասիրութեանս ճա-
կատը զարդարել Ձեր անուամբը:

Պ երճ Պ ո զ ն ա ն ց :

Յ Ա Ռ Ա Ջ Ա Ռ Ա Ն

Յուշիկներս այսօրուայ գործ չեն, երկար տարիների արդիւնք են:

Գիտակցութեան եկած օրիցս սովորութիւն էի արել՝ ընդհանրութեանն և ի մասնաւորի իմ անձին վերաբերեալ աչքի ընկնող դէպքերը գրի առնել:

1880 թուի սկզբներին՝ ամուսնոյս և բարեկամներիս ստիպմամբ և ինդրանօք «Յուշիկներս» ժամանակագրական շրջանների բաժանեցի և կարգի տակ դրի, բայց տպագրութիւնը վաղաժամ համարեցի:

Փոքրաթիւ հարցասէր և առատաձեռն ազգայնոց շնորհիւ՝ այսօր յաջողուում է ինձ առաջին շրջանը լոյս ընծայել:

Ենորհապարտ եմ վերոյիշեալ ազնուամիտ և արգոյ տեարց, որոնց համեստութիւնը չը վիրաւորելու համար՝ պարտաւորուած եմ անունները չը յիշել:

Հետեւեալ շրջաններին հրատարակութիւնը յաջող նիւթական միջոցներից է կախուած:

Գործիս մէջ անկեղծութիւնն և ճշմարտութիւնն եմ ինձ ղեկավար առել, աշխատել եմ լուրերի և պատմութեան յաճախակի չը դիմել, շատ դէպքերում ականատես և մասնակից եմ եղել. լաւ եմ հա-

մարել ստուգապատում լինել, նոյն իսկ իմ անձս
և թերու[թ]իւններս, իբրև սխալական մարդ, հասարակաց
անաչառ դատաստանին յանձնել, քան թէ
ծածկել և կատկածելի անուն կրել:

Պերժ Պոռշեանց.

Ը.

Ես ծնուել եմ Երեւանու նահանգի Աշտարակ գիւղումը:

Թէպէտ ծննդական փկայականիս ցուցմամբ՝ ես ծնունդ եմ 1837 թուականի յունիս ամսի, սակայն մետրիքականից աւելի հաւատ ընծայելու է մօրս պատմածներին:

Հանգուցեալի ասութեամբ՝ ռուսաց Նիկոլ Ա. ՅՈՍ Կայսեր Էջմիածին այցելած տարին՝ եսնոր ոտն էի ուղղում լինել, չոչ է չոչ էի քայլում. ուրեմն դարձեալ 1837 թուին, կամ մի տարի յառաջ կամ յետ

Հայրս՝ Ստեփան Տէր Առաքելեան Պաօշեանց եւ մայրս—Յալաք Մարգարեան Մէլումեանց՝ բուն Աշտարակի ծնունդ են եղել:

Մօրս նախնիների մասին ոչինչ չըգիտեմ, իսկ հայրական պապերս բնիկ Աշտարակեցի չեն եղած.

պատմական Գառնի աւանից (արդիս Բաշ—Գառնի գիւղից) են գաղթել Աշտարակ՝ անցեալ 18 երորդ դարու սկզբներում:

Հօրս բերանացի պատմութիւնը եւ երկու մամուռտած գերեզմանաքար վկայում են այդ:

Պապիս՝ Տէր Առաքելի մահարձանագիրն է. «Ամիհովեալ ղնի յայսմիկ կայան, Տէր Առաքել Դանիէլեան, ըուն Գառնեցի, ազգ Պոռշեան եւայլն»:

Իսկ նոյն Դանիէլի քրոջ տապանագիրն է. «Այս է տապան Խորիշանին, որ է կենակից Գէորգ Խալֆին եւ է զուստր Ազարիային Գառնեցոյ՝ Պոռշեանց. թիւ Հայոց ՌՄԾԱ» (1802).

Թէպէտ դարուս վերջին քառորդի գործն է անուն եւ ազգանունով ստորագրուելը, առաջ ամենքը բաւականանում էին հօր անունով կոչուիլ, օրինակ՝ Մարտիրոս Ազարի, Սահակ Գրիգորի, Մեսրոպ Սարգսի եւ այլն, բայց իմ հայրս երբեմնապէս միայն հետեւում էր եղած սովորութեանը. նա մեծ մասամբ ստորագրում էր՝ Ստեփան Տէր Առաքելեան Խուրովեանց:

Խուրովեանց տոհմանունը, կերեւի, Հաշտարխանում իւրացրած սովորութեան հետեւանքն էր:

Պատանեկութեան տարիներում հայրս պարսկական տիրապետութեան ժամանակ՝ չըզխտեմ ինչպէս, Վրաստանի կողմերում երկար թափառելուց յետոյ՝ ընկնում է Հաշտարխան:

Այնտեղ նա ծանօթանում է իւր ազգակից

Խուբեան, կամ Խուբովեան Գէորգ վարժապետին, որը Խուբովեանց տոհմագրութեան հաստատութեան բուն աշխատողն էր:

Գէորգ վարժապետը լսելով՝ որ հայրս Աշտարակեցի տէր Առաքելի որդին է, յայտնում է վերջինիս իւր խնդակցութիւնը, ցոյց է տալիս հօրս Ռուսաց տէրութիւնից հաստատուած իւր ազնուութեան թերթը, բայց լիովին հաւատ չընծայելով հօրս խօսքերին, վերադարձնում է նրան Աշտարակ՝ բերելու վկայական, որից եթէ երեւար, թէ հայրս՝ Ստեփանը, տէր Առաքել Գանիէլեանի որդին է, ապա ինքը կը տայ նրան արտօնագիր Խուբովեանց գրուելու:

Հեւ—իհեւ շտապում է հայրս Աշտարակ, մի կերպ համոզում է հօրը՝ իրաւունք տալ իրան վերադառնալու, ստանում է Էջմիածնի այն ժամանակուան Բարձրագոյն Հոգեւոր Կառավարութիւնից վկայագիր, բայց խեղճի իզձը փորումն է մնում:

Իւր հայր տէր Առաքելը՝ միակ որդուց չը զրկուելու արգարացի նսլատակաւ՝ հնարքներ է մտածում նրա ոտքն անսարան կապելու. մինչեւ Էջմիածնից վերադարձը՝ տէրտէրն իւր զաւակին նշանում է գիւղի առաջաւորներից մէկի՝ Մէլումենց Մարգարի Փալաք դստեր հետ:

Որդեական պարտքը պահանջում էր հլու հնազանդ լինել հօրը. այդպիսով խեղճ ծնողս զօհում է իւր տոհմական բարձր ծագումը մի աղջկայ:

Երեւի՝ պապիս՝ տէր Առաքելի քահանայական պատիւը, կամ մօրս գէմքի տղեղութիւնն է ստիպել Մէլումենց Մարգարի պէս իշխան մարդուն իւր աղջիկը տալ մի տկլոր աղքատ տղայի:

Մի փոքրիկ այգի միայն պապս թողել է ժառանգութիւն իւր որդւոյն եւ ուրիշ ոչինչ:

Նոր ամուսիններն ապրել են իրանց պտղունցով: Հայրս դերձակ է եղել եւ մայրս նորա օգնականը: Իմ ամենախոր յիշողութիւնը հասնում է մինչեւ հօրս լայնաբերան մկրատը, կիսագազն եւ ընկուղեայ դազգեւանը. (ցած սեղան, որի վերայ գործում են դերձակները):

Խեղճ հայրս անդադար կրկնում էր իւր ազնուական ծագման մասին՝ ինչ որ լսել էր Քէորդ վարժապետ Խուբովեանից, պատմում էր Խուբովեան բառի ծագումն եւ նշանակութիւնը, ասում էր, որ իւր նախնին եղել է «Պոօ թազաւորը», որ նստել է Քառնիումը եւ շինել է Քեղարդայ հռչակաւոր վանքը. ասում էր՝ Պոօ ռուսերէն բառով թարգմանուում է դուր (руба) եւ թէ Ղուբով բառը քաղցրահնչիւն չլինելու համար՝ Քէորդ վարժապետը բարուք է դատել Պոօշեանց բառը վերածել Խուբովի, կամ Խուբովեանցի:

Հօրս ասութիւնը համապատասխանում է վերջերումը դիպուածով ձեռքս ընկած Խուբովենց ցեղի հատտատուած ճիւղագրութեան պատճէնին:

Մի մանէթանոց դրոշմաւոր (гербовая) թեր-

Թը կրում է «Покаленная роспись и родословная о дворянствѣ рода Хубовыхъ. Юня 29 дня, 1818 г. Ճիւղագրութիւն Խուբովեան սերնդի. յունիս 29, 1818 թ.

Տոհմի նահապետն է Պաօշ իշխանը, որ այսպէս է գրուած Ռուսաց լեղուով: «Князь Брошъ, былъ въ провинціи Карни, умре.» Իշխան Բաօշ, էր Գառնի նահանգումը. մեռած:

Ըստ ճիւղագրութեան՝ Պաօշից սերում են իւր երեք որդիքը՝ Պապուկա կամ Պապաք, Ամիր-Հասան եւ Վասակ:

Պապաքից յառաջանում է մեր ճիւղը եւ հասնում է մինչեւ հայրս՝ Ստեփանը, որ վեցերորդն է՝ սկսած Պաօշից:

Այս, իհարկէ, պատմական մեծ սխալ է. Պաօշ իշխանն ապրում էր ԺԲ. դարում, ակնբերել է ուրեմն, որ շատ անուններ են բաց թողուած ճիւղագրութիւնը կազմելու ժամանակ:

Միայն մեր ճիւղը չէ, որ թերի է. նոյն իսկ Գէորգ վարժապետենց ճիւղը՝ Պաօշից սկսեալ մինչեւ ինքը տոհմագրութիւնը հաստատել տուող Գէորգ Խուբովեան վարժապետը՝ եօթը սերունդ են հաշուում. ինքը Գէորգը Պաօշից եօթներորդն է եւ սերուած է Պաօշի Վասակ որդուց:

Յայտնի չէ՝ ինչ աղբիւրներից է քաղել Գէորգ վարժապետն իւր տեղեկագիրը, պարզ է, որ շատ ու շատ անհատներ Պաօշի սերնդից մոռացութեան

են տրուել, բայց մեր ազգի Պաօշի սերնդից շարունակութիւնն անտարակուսելի է:

Ամենահաւանական ապացոյցն աւանդութիւնն է եւ Խորիշանի մահարձանը: Հայրս պատմում էր, որ պապիս մօտ ինքը տեսել է Գառնի գիւղի ֆիրմանը, կամ կալուածագիրը՝ Պարսից շահերից տուած, որով հաստատում են Գառնի գիւղի նախնական սեպհականութեան իրաւունքը: Ինչպէս յայտնի է, Գառնին հռչակաւոր Գեղարդայ վանքի ամենամօտ գիւղն է:

Այդ վկայաթուղթն, իբր թէ, աւանդ է տրուած եղել Ներսէս Ե. Կաթողիկոսի եղբայր՝ Կարապետին, որ 1827 թ. Ռուս—պարսկական պատերազմից յառաջ՝ Պարսից Սարգարների հետամտութիւնից փախուստ է տուել Թիֆլիս:

Կարապետ աղայի հարազատ որդիքն էին Յովակիմ եւ Յարութիւն Շահազիզեանները, որոնց որդիքը՝ Աղէքսանդրն եւ Յովհաննէսը ցայսօր կենդանի են եւ ապրում են Թիֆլիսում:

Վերոգրեալ ճիւղագրութեան զօրութեամբ՝ Խուրովեան տոհմն ընդունուած է Ռուսաց աղնուականների շարքում: պարզ է, ուրեմն, որ մեր ցեղն եւս պէտք է լինէր աղնուական, բայց այդպէս չէ. հայրս չունելով ձեռքին վկայաթուղթ, իբրեւ հոգեւորական միայն հարկից եղել է ազատ, ապա թէ ոչ՝ ես եւ եղբայրս լինելու էինք հարկատու:

Բարւոք եմ համարում ճիւղագրական պատ-

ճէնն արտանկարել այստեղ:

Դրոշմաւոր թերթի չորրորդ երեսին գրուած է ճիւղագրութեան նկարագրութիւնը ուսերէն, որ է այս.

ОПИСАНИЕ РОДОСЛОВНОЙ.

Родъ Хубовыхъ происходитъ отъ древныхъ Аршаковъ, изъ коихъ родоначальникъ нашъ Брошъ сынъ Васака былъ въ послѣдныя времена въ Арменіи Княземъ, въ провинціи Карни; онъ имѣлъ трехъ сыновъ: Папува, Амиргасана и Васака. Наслѣдникъ старшаго сына Брошева, жившій въ городѣ Карни, имѣвшій должность Смотрителя при Монастирскомъ владбищѣ предковъ своихъ, по причинѣ усилившейся власти отъ тирановъ, въ Арменіи, похитившихъ отечество ихъ, переселился въ село Аштаракъ, близъ Уракацорна (?), который имѣлъ внука Данійла, коего сынъ Священникъ Аракель и внукъ Стефанъ и по нынѣ находятся въ томъ же селѣ Аштаракѣ.

А Худабагишъ есть внукъ младшаго сына Брошева Васака, въ 1550-мъ году по рождествѣ Христовѣ, съ потомствомъ своимъ признаваемъ былъ отъ Турковъ Меликомъ, а во время Шаха-Аббаса находился при немъ;

потомъ будучи признаваемъ и отъ Шаха меликомъ, опредѣленъ былъ владѣтелемъ Еривани, гдѣ оной въ семь достоинствѣ и умеръ. Онъ имѣлъ трехъ сыновъ: Давыда Григорія и Эліаза, изъ которыхъ первый т. е. Давыдъ есть дѣдъ мой. Онъ имѣлъ многихъ дѣтей, кои поселились въ разныхъ областяхъ; два только сына его Григорій и Исай, который есть дѣдъ мой, остались въ Еривани. Григорій родилъ тамъ сыновей: Якова, Эліазара и Саркиса, отъ коихъ дѣти нѣкоторые и по нынѣ тамъ въ живыхъ находятся, а дѣдъ мой Исай родилъ отца моего Арутюна. Второй сынъ Худабашха Григорій родилъ Карапета, а сей Мелхиседекъ, Худабашха, Газара и Арутюна, изъ коихъ двое послѣдныя въ юности померли; а Мелхиседекъ имѣлъ двухъ сыновъ: Кеворка и Карапета; изъ нихъ первый живетъ нынѣ въ Кизлярѣ, а второй въ Тифлисѣ.

Всѣ сіе происхожденіе рода Хубовыхъ доказываются свидѣтельствомъ Патріарховъ всея Арменіи Данійла Кафоликоса и Ефрема кавалера, девяти архіепископовъ, четырехъ епископовъ и многихъ дворянскихъ вельможъ, которое подлинникамъ съ доказательствами представлено отъ родственника моего жительствоющаго въ Кизлярѣ, помянутаго Кеворка

Хубова въ Правительствующій Сенатъ, коимъ онъ признанъ россійскимъ дворяниномъ и внесенъ въ дворянскую, по Кавказской Области родословную Книгу.

ՃԻՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.

(Թարգմանութիւն)

Եթուքովեան տոհմը ծագում է նախկին Արշակներից (1), որոնցից մեր տոհմապետը՝ Վասակի որդի Բուօշի (2) վերջերումը Հայաստանի Գառնի գաւառումն իշխան էր: Նա ունէր երեք որդի՝ Պապուկայ (3), Ամիրհասան եւ Վասակ:

Բուօշի անդրանիկ որդու ժառանգը, որ բնակւում էր Գառնի քաղաքումը եւ իւր նախնեաց հանգստարանի վանքի վերակացուի պաշտօնն էր կատարում, իւրեանց հայրենիքը—Հայաստանն աւերող բռնակալների խտասրտութեան շնորհիւ՝ վերաբնակուեց Աշտարակ գիւղը, Ուրակաձորի (4) մօտ:

Նորա թոռն էր Գանիէլը, որի որդի Աւաքել քահանան եւ իւր զաւակ Ստեփանը (5) մինչեւ օրս գտնուում են նոյն Աշտարակ գիւղում:

Իսկ Խուդաբաղիշն է Բուօշի կրտսեր որդու Վա-

(1) Երևի՛ ուզում է ասել Արշակունիք:

(2) Ըստ իս՝ ուղղագրական սխալ է Պուօշ բառի:

(3) Աղճատուճն Պապաք բառի:

(4) Իմ հայրս:

սակի թողը: Նա 1550 թուին (Ք. Յ.) իւր սերնդի
հետ միասին ճանաչուեց Թուրքերից մէլիք, իսկ
Մահ-Աբբասի օրով նա գտնուում էր նրա մօտ:

Այա Մահից եւս ճանաչուելով մէլիք՝ նշանակուեց
Երեւանի տիրապետ եւ մեռաւ նոյն կոչման մէջ:
Նա ունէր երեք որդի՝ Գաւիթ, Գրիգոր եւ Էլիազ.
սրանցից առաջինը՝ Գաւիթն է իմ նախնին (1):
Նա ունէր շատ որդիք, որոնք բնակուեցան զա-
նազան նահանգներում. միայն նրա երկու որդին՝
Գրիգորն եւ Եսային, որ իմ պապս է, մնացին
Երեւանում: Գրիգորն այնտեղ ծնաւ Յակոբին,
Եղիազարին եւ Սարգսին, որոնց որդիքներից մի
քանիսը մինչեւ օրս էլ այնտեղ կենդանի են. իսկ
իմ պապ Եսային ծնեց իմ հայր Յարութիւնին:

Խուրտբաղիչի երկրորդ որդի Գրիգորը ծնաւ
Կարապետին, իսկ Կարապետը ծնաւ Մելքիսեդեկին,
Խուրտբաղիչին, Ազգարին եւ Յարութիւնին, որոն-
ցից երկուսը պատանեկութեան հասակում մեռան:

Մելքիսեդեկն ունեցաւ երկու որդի՝ Գէորգ
եւ Կարապետ. սրանցից առաջինն այսօր բնակուում է
Ազլարումը, իսկ երկրորդը Թիֆլիսումը:

Խուրովեանց տոհմի ծագումն ապացուցուում է
ամենայն Հայոց Կաթողիկոսների՝ Եփրեմ Կաթողի-
կոսի եւ ասպետ Գանիէլի, նոյնպէս եւ ինն արք-
եպիսկոպոսի, չորս եպիսկոպոսի եւ շատ ազնուա-

(1) Ինչպէս ճիւղազրուութիւնից երևում է, նկարագրն անողն է
Յարութիւնի որդի Եսային:

կան իշխանների վկայութիւններից:

Այս ապացոյցների բնագիրն իմ ազգակից Ազլարաբնակ Քէորգ Խուբեանի ձեռքով առաջարկուած է Պետական Սենատը: Սենատումը Քէորգը ճանաչուել է Ռուսաց ազնուական եւ մուծուած է Կովկասեան ազնուականաց տոհմագրական մատենի մէջ:

Այս ճիւղագրութիւնից պարզ երեւում է, որ Պռօշի որդի Վասակի յետնորդներն աշխատելով հաստատել տալ իրանց սերնդին ազնուական, ամենեւին հոգ չեն տարել մեր նախնեաց մասին, որոնք ապրելով Աշտարակ գիւղում, բաւականացել են անշունչ տապանաքարերով եւ չեն մտածել երբէք իւրեանց տոհմական ծագման համար, մինչեւ որ վերջումը հայրս Հաշտարխանում դիպուածով պատահելով Քէորգ վարժապետին, նրա դրդմամբ գալիս է Էջմիածին վկայական տանելու եւ թղթերը ծոցին մնում է Աշտարակում՝ վայելելու ամուսնական քաղցրութիւնը:

Հանգուցեալ ծնողս շարունակ պատմում էր իւր վերջին սխալը, թէ ընչո՞ւ ինքն իւր հօր հրամանաւ զրկուել է «Պռօշ թագաւորի» ժառանգ լինելուց եւ Խուբովեան նշանաւոր տոհմի հետ իշխանական արտօնութիւն վայելելուց: Հէնց այդ երեւակայութեան շնորհիւ էր, որ իւր անդրանիկ որդու անունը կոչելէ Խուբով, որը ցարգ կենդանի է Աշտարակում՝ Տէր Առաքել քահանայ Պռօշեանց մականունով եւ ունի ութ տղայ եւ երկու ամուսնացրած դուստր:

Բ.

Առաջին այբուբենն ես սովորել եմ ըբրանացի՝
Հինգ տարեկան ժամանակս հօրիցս՝ իսկ տառա-
ծանօթութիւնն եղբօրիցս:

Հայրս Երեւանից ուղարկել էր այբբենարանը.
մի ամսից նա վերադարձաւ եւ գտաւ ինձ վարժ կար-
դալուս:

Առսահոգին եւ ուրախացաւ, եւ տրտմեց. նորա
նպատակն էեղել ինձ վարժեցնել տառաճանաչու-
թեան մէջ, բայց արդէն ես ոչ միայն իրանից, այլ
նոյն իսկ իմ ուսուցիչ եղբօրիցս աւելի քաջավարժ էի:

Չը գիտեմ՝ բնական ընդունակութեանս վե-
րագրելու է, թէ դասագրքիս նորաձեւութեան եւ
պատկերազարդութեանը, որ ես երկու շաբաթի
մէջ վարժ կարդում էի:

Դիպուածով, թէ բաղդի բերմամբ՝ ինձ վի-
ճակուեց յոչ այն ժամանակուայ ընդհանրացած
«Քերական, որ է այբբենարան» անուանուած դա-
սագիրքը, այլ ժամանակի համար միանգամայն նոր
դասագիրք:

Որքան յիշում եմ՝ Զմիւռնայի բողոքականաց
տպագրութիւն էր այն՝ տաճկահայ բարբառով եւ
արդի մետոդով ու պատկերազարդ:

Նիւթի գիւրըմբռնելիութիւնն ինձ ստիպում էր
գիրքը ձեռքից չը թողնել, այդպիսով կարճ միջոցում
անգիտակցաբար գրավարժուեցի: Չերկարացնենք,

մի տարուց յետոյ, հօրս շնորհիւ՝ Աշտարակում դպրոց բացող Վաղարշապատեցի Շապուհ Շահնազարեան ուսուցչի 70 աշակերտներէից առաջինն ես էի, առաջինը՝ ոչ թէ տարիներով, այլ կարգալ-գրելով:

Հիմի եմ նկատում, որ մեծ յիշողութեան տէր եմ եղել մանկութեան տարիներում. օրինակ՝ օրական երեք գլուխ Նարեկացու աղօթք առանց դժուարութեան եւ առանց մի բառ անգամ հասկանալու անգիր էի անում:

Դրանով ես չեմ կարող ասել, թէ օրական, ես հինգ անգամ ասեմ, դու տասն ասա՝ բարդի ծառի բարակ եւ թարմ ճղնիկներով չեմ ձաղկուել: Ցամաւոր ճղնիկներ՝ ամէն Աստու տուած օր՝ փշրուում էին աղբրներիս փափուկ մսերի վրայ: Խոտտովանում եմ, ոչ մէկ պատիժը դաս չիմանալու համար չի եղած, այլ չարութեանս եւ տգեղ վայելչագրութեան, չարութիւնս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մանկական անմեղ եւ աշխոյժ խաղեր, իսկ գեղագրութեան մէջ միանգամայն անընդունակ էի:

Գեղագրութեան պատիժը լինում էր լայնաբերան ընկուղեայ հաստ քանոնի սուր կողմով: Մատներիս ծայրերը միացրած՝ քանոնի եզերքով եղունգախառն անդադար ծեծուում էին:

Անխիղճ պատիժները միայն իմ համար չէին, ընդհանրապէս օրական եօթն անգամից պակաս ծեծուողը համարուում էր մեր միջից ամենաերջանիկը: Մնացած պատիժները՝ օրինակ ձեռնամիջին

բանոնով զարկելը, բաց ծնկներով խոշոր աւազի վերայ ժամերով չոքելը, առաւօտեան ժամին «Տէր զի բազում»-ից յառաջ եկեղեցի գալն եւ մինչեւ երեկոյեան ժամի «Օրհնեալ եղբրուքը» լսելը, անսուազ ծով մնալը, համարուում էին փոշետեսակ խաղեր:

Այս ամենից շատ գոհ էինք եւ շնորհ մեծ ունէինք մեր բազմերախտ ուսուցչից, որ յաճախ չէր գործ դնում ամենասարտափելի պատիժը, որը թէեւ ֆալախա չէր, այլ նոյնն էր՝ ինչ որ ֆալախան, Տալախայի եւ մեր ուսուցչի հնարած պատժի զանազանութիւնը միայն ֆալախայի փայտն էր՝ որի վերայ պրկում էին նախկին խալիֆաներն աշակերտաց ոտքերը: Մեր վարժապետը փայտի փոխարէն ուղղակի պարան էր գործ ածում եւ այնքան մահակ էր զարգում ոտքներիս տակին, մինչեւ որ մօտ էր լինում արիւնյուրոտուելուն:

Այդպիսի պատիժները տրուում էին սովորաբար նախ քան զճաշը, այդքան երկար միջոցում հազիւ հնարաւոր էր լինում ծեծուողին ստքի կանգնել եւ տուն գնալ, ի հակառակ դէպս՝ ինչպէս միանգամ պատահեցաւ Բրէենց Ալէքին, հարկաւորուում էր ծնողացը կանչել՝ տուն տանելու, կամ մեծ աշակերտների շալակը տալով՝ տուն ուղարկելու:

Այս ասելով ես չեմ մեղադրում մեր եռանդուն ուսուցչին, նրա համոզմունքն էր, որ ծեծով միայն կարելի է ուսուցանել: Հանգուցեալը միշտ

կրկնում էր, որ իւր ուսուցիչ Թիֆլիսեցի աւագ-
քահանայ Տէր Սահակ Սահառունին էջմիածնի
ժառանգաւորաց դպրոցում աւելի խիստ է եղել,
իսկ այդ խստութեան արդիւնքն էին իւր ժամանակի
էջմիածնում նշանաւոր համարուած վարդապետները՝
Սակո^ւր վարժապետ—վարդապետը (վերջումը
կաթողիկոս), Եղիա^վար եպիսկոպոսը, ինքը մեր
ուսուցիչն եւ այլք:

Շապուհ Շահնագարեանցը՝ բացի իրանից եւ
երկու վերայիշեալներից՝ ուրիշ ընկերների անունն
արժան չէր համարում յիշել՝ իբրեւ երկրորդական
թերուսներ:

Թէ արդարեւ Շահնագարեանցն անկեղծօրէն
համոզուած էր ծեծի ազգեցութեանը, նա պարզ
խոստովանեց աշակերտածնողաց ներկայութեամբ
այն ժամանակուան Երեւանի արքունի դպրոցի
տեսչին. բայց որքան զզջաց խեղճը, երբ վերջինս,
իբրեւ իշխանաւոր, հրամայեց իրան ձեռք քաշել
ծեծից:

Գ.

Արժէր առանց յիշողութեան չը թողնել Երե-
ւանի դպրոցի տեսչի գալուստը:

Ամառն է, յուլիսի տոժտժան շաբերն են, բայց
մենք սովորում ենք: Կրակ էլ որ թափուէր երկնքից,
Շաքօն (այսպէս էր կոչում ուսմկութիւնը մեր

վարժապետ Նապուհին) մեզ արձակողը չէր: Գոնէ պարապմունքը պակասացնէր:—Ոչ, Նապուհի համար ամառ ձմեռ չը կար:

Չմեռներն «Ամենափրկիչ» կոչուած եկեղեցու արեւելա-հիւսիսային խարխուլ աւերակումն էր փոշեխեղդ անում մեզ, ամառը՝ նոյն եկեղեցու հիւսիսային պատի երկարութեամբը, կամ արեւմտեան բակի տերեւաշատնալբանդենի, կամ չինարի կոչուած թեղի ծառի հովանու ներքեւն էր քրտնքախաշ անելով՝ վաղ առաւօտից մինչեւ ուշ երեկոն՝ հոգիներս հանում, դաս տալիս:

Մոռացայ ասել, որ իր գալստեան առաջին ձմեռը «Ռուրը» մականունեալ Ղափանցոնց Ստեփանի գոմի օդումն էր թրքահոտումը մեզ խեղդում:

Զուգադիպութեանն ենք պարտական, որ այն դժոխքից ազատուեցինք: Դէպքն աննշան է, բայց ծիծաղաշարժ լինելու սլատճառաւ՝ պատմելն աղալի եւ արժան է:

Զամչեանի քերականութեան վերայ ենք սովորում, հոլովում ենք «Գետ, գետոյ, գետով»:

Ողորմածիկ «Ռուրը» Ստեփանը նստել է մի անկիւնում եւ ապշած լսում է:

Մէկէլ՝ միամտաբար՝ Նապուհ վարժապետը հրամայում է մէկին հոլովել «Ռուրը», որ նշանակում է մաթ, բաքմազ, խաղողի օշարակ:

Աշակերտներս փռուկացնում, ծիծաղում ենք: Վարժապետը չիմացած բանի էութիւնը, ռաստիկ

բարկանում է եւ հրամայում Ռուք բառը հոլովել:
— Ուղղական՝ Ռուք, սեռական՝ Ռքոյ, տրականն

— Վայ ես ձեր . . .

Աշտարակցու օրհնութիւններ՝ մէկս մէկու ետեւից թափում է ուսուցչի, նրան մեր գիւղը բերողի եւ աշակերտներին հասցէին՝ ծերունի «Ռուք» Ստեփան ամէրը (հայրիկ, պատուանուն) եւ գաւազանի հարուածներով մեզ եւ ուսուցչին դուրս է քշում, ձիւնի երեսն անում:

Եստ ուշ հասկացաւ պարզամիտ վարժապետն իւր սխալը, բայց զուր, նա ոչինչ կերպիւ Ստեփանին չը կարաց համոզել, թէ ինքն անգիտութեամբ, իբրեւ օտարական, չի հասկացել անպատուաբեր բառի ծաղրական լինելը:

Գանք մեր պատմութեան շարունակութեանը:

Չեմ յիշում՝ առաջիկայ թէ երրորդ տարու ամառը՝ յանկարծ մեր վարժապետը լեղապատառներս է ընկնում մեր բացօդեայ ուսումնարանն եւ գոռում. ուղղուեցէք, կարգի ընկէք, փայտի նման տեղներդ չորացէք, վայր թափեցէք. Երեւանի թագաւորական վարժարանի Մեծն եկել է, հէնց հիմի էստեղ կը լինի, ձեզ հարցմունքներ կանի, վայ նրան, ով որ մի տառում սխալուել է, ճիպտի տակին կը մահացնեմ:

Խեղճ Նապուհը տերեւի պէս դողում է, գոյնը գեղին քրքումի (զափրան) է փոխուել, ատամներն

21600



իրար են դիպում:

Մենք, իսկոյն, թուրքերի նամագի եւ յայտնի ժամերին անհրաժեշտ եղած լուլէին կոչուած ծորակաւոր խեցի ջրամաններով, որոնցով ջուր էինք խմում, մերձակայ առուից ջուր հասցրինք, սրսկեցինք: Մեզանից ոմանք էլ աւելները վերցրած՝ եկեղեցու բակը բոլոր մաքրեցինք, գրքերս ձեռք առանք եւ սկսանք ամեն ոք մեր դասերը բարձրաձայն կրկնել:

Վարժապետը բարակ շիւղը ձեռքին ճօճեցներով՝ սրա նրա գլուխն էր թակում, որ ուղղուենք, լաւ նստենք, գրքերս ուղիղ բռնենք եւ այլն:

Ահա, հեւալով տուն ընկաւ գզիրն եւ յայտնեց «աղայի» գալուստը:

Մի քանի բոպէից «աղան» իւր ետեւից Աշտարակի բոլոր առաջաւորներին քարշ տալով՝ մտաւ եկեղեցու բակը, գնաց ժամի դուռը համբուրեց եւ մօտեցաւ մեզ:

Մենք ուսուցչի պատուէրին համաձայն՝ տեղներիցս կանգնեցինք եւ խոր գլուխ տուինք:

Աղան բարեւեց, յետոյ նստեց խալիֆայ Շապուհի միակ հասարակ փայտեայ աթոռի վերայ եւ մատով ինձ իւր մօտ կանչեց ու հարցրեց:

— Ընչի՞ համար դու փոքրիկ ես ու քո հասակակիցներին թողած՝ մեծ տղայոց մօտ, բոլորի ծայրումն ես նստել, երեւի մեծերը քո դասդ սերտացնում են հա՛:

— Մե՛ղք կըլինի, որ ասես՝ ես եմ նրանց չը գիտեցածը գլխի ձգում, ես առաջին աշակերտն եմ, յանդգնաբար սլատասխանեցի ես:

— Ո՞նց թէ դու ես առաջին աշակերտը, դարմացմամբ ու քնքշաբար յառաջ քաշեց, երկու ծնկների մէջ առաւ ինձ ու հարցրեց աղան, դու դեռ մի թիզ չըկաս, ահագին ահագին մազ ու միրքով տղամարդկանց առաջի՞նն ես:

— Կուզես՝ խալֆիս հարցրու:

— Հրաման քեզ (այո՛), ողորմած տէ՛ր, դա մեր առաջին աշակերտն է, հաստատեց Շաբօ խալֆան:

— Ը՛հը, լա՛ւ, ապրի՛ս, գլուխս շոյեց աղան եւ հարցրեց.

— Եթէ դու առաջին աշակերտն ես, ասա տեսնեմ՝ հաց ու պանիր կարդացել ես:

— Հաց ու պանիր ամէն օր ուտում եմ, դու մեծ մեծ բաներ ասա:

— Որ էդպէս է, գնա՛ գիրքդ բեր, տեսնեմ:

— Մի՛թէ դու բերականութիւն ես սովորում, ստուգիւ աչքերը չուեց աղան եւ հարցասիրաբար նայեց ուսուցչին:

— Այո, աղայ, դրա փոքրութեանը մի՛նայէք, Չամչեան բերականութեան առաջին մասը վերջացրել է եւ ամենքիցը լաւ սովորում է, պնդեց վարժապետը:

Աղայի հրամանով եկան եւ իմ երկու դասընկերներս, որոնք, թէ եւ, ինձանից հասակաւոր, բայց համեմատաբար շատերից փոքր էին:

Տարօրինակ էր, բայց ճշմարտութիւն էր, իննը տարեկան էի ես, երեք տարով իմ երկու ընկերներս՝ տէր Գրիգորի տղայ Խաչատուրն եւ Տնտեսեց Գալուստը մեծ էին ինձանից, եւ ահա մենք երեքով, մեր ներքեւը նստած 15—20 տարեկան պատանիների մէջ առաջինն էինք:

Խաչատուր տէր Գրիգորեան, տէր Խաչատրեանցը՝ «Աշտարակցի Խաչիկ» կոչմամբ՝ այսօր եւս լաւ յիշում է մեր երջանիկ մանկութիւնը: Խաչիկի բանաստեղծութեան միջի գոհարները արտատպուած են «Սօխակ Հայաստանի» երգարանի էջերում:

Աղան քառորդ ժամի չափ մեզ հարցմունքներ արաւ, կարգալ, թարգմանել տուեց, մեր գրաբառ կարճ գրութիւնները տեսաւ եւ հրամայեց տեղերս նստել: Մի ժամի չափ բոլորին մի առ մի ըննեց, ամէնքիցս էլ գոհութիւն յայտնեց, վարժապետի էլ ձեռքը բռնեց, շնորհակալութիւն արեց:

Խեղճ ուսուցչի գլխին հարամ եղաւ շնորհակալութիւնը:

Ինչ չարածձի էի. մեղաւորը ես եմ:

Մանկական պարզութեամբ յայտնած խոստովանութիւնս ծեծի մասին՝ տեղի տուեց Արքունի դպրոցի տեսչին երկար հարցուխնդիր լինել ուսուցչից ծեծի վերաբերութեամբ:

Շապուհը չը թագցրեց, պարծանքով յայտնեց, որ ինքն անողորմաբար պատժելով՝ հասել է ցանկալի արդիւնքին:

— Երեխայք, դառնում է աղայ տեսուչը դէպի մանուկներս, եթէ ես խնդրեմ վարժապետից, որ այսուհետեւ ձեզ չը ծեծի, խոստանում էք, որ միշտ դասերդ լաւ պատրաստէք:

— Խոստանում ենք, գոչեցինք միաձայն:

— Դէհ, ուրեմն, միամիտ կացէք, որ այսուհետեւ ծեծը վերանում է ձեր միջից:

Կամեցաւ ուսուցիչն ապացուցանել ծեծի անհրաժեշտութիւնը, բայց զուր աշխատութիւն էր:

Տեսուչ ազան մի ուրիշ նորութիւն եւս սահմանեց. նա զարմացաւ, երբ մեղանից լսեց, որ զրկուած ենք լողալուց:

Նա ինքը նոյն երեկոյեան պահուն մեզ տարաւ գետը, «Աւազագետ» կոչուած լճի մէջ լողացրեց, ինքն էլ մեզ հետ լողացաւ:

Հիանալի լողնորդ է եղած ազան, բայց մենք էլ իրանից պակաս չէինք լողում:

Աշտարակի «Քասախ» գետակը լողալու շնորհն անխնայաբար շուայլել է հաւասարապէս բոլոր աշտարակցիներին. մեծ ու փոքր բաջալարժ են լողալու մէջ:

Երեք օր անգաղար գալիս էր Տեսուչը մեզ այցելութիւն, աչքով չը տեսած ու ականջով չը լսած նորութիւններն էր մտցնում խալիֆայական մահակի ու ռոզգու սովոր աշակերտներին մէջ. նոր նոր խաղեր էր սովորցնում. ինքը խաղում էր մեզ հետ եւ ստիպում վարժապետին հետեւել

իւր օրինակին:

Դու ոչ մեռնիս, ծեծի օգտակարութեան գաղափարով տողորուած ուսուցիչը իւր հեղինակութեան հաստահիմն աշտարակը հիմնայատակ եղած տեսնելով՝ քաշուել էր հեռու անկին եւ կուչ եկել օտար մարդու պէս:

Հասկանալի է, նա մտքով անիծում էր Տեսչի եկած ճանապարհը, եւ անդադար սպասում էր նրա գնալ—կորչելուն, որ վրէժն առնի իւր արգէն երես առած ստահակներից:

Չորրորդ օրն եօթանասուն երեխայք, Նապուհ վարժապետն եւ գիւղի կէսը ոտքով ուղեկցում էինք Երեւանի արքունի դպրոցի մեծապատիւ Տեսչին:

Նա ինքը ցանկացաւ, որ իրան ճանապարհ դնենք երգելով եւ զուարճանալով:

Նա ձի չը հեծաւ, շուրջ առած դպրոցականներիս՝ մեզ խրախուսելով՝ ոտքով էր գնում:

Գետի կամրջովն անց կացանք, ձորը դուրս ելանք:

Եթէ նա մեզ չը կանգնացնէր, մենք պատրաստ էինք մեր սիրելի եւ թանկագին հիւրին ուղեկցել մինչեւ Երեւան:

Ամենքիս մէկ մէկ համբուրելով՝ իւր հրաժեշտը տուեց այս խօսքերով.

— Երեխայք, ձեր վարժապետն ինձ խոստացել է այսուհետեւ ծեծը բոլորովին վերացնել, ամառուան շոքերին՝ միայն առաւօտեան եւ երեկոյեան հով ժամանակը պարապել, միւս ժամանակներն

ազատ էք, խոստացել՝ է ամեն օր երեկոյեան դէմ
ձեզ լողալու տանել, օրական երկու ժամ խաղացնել:

— Բայց երեխայք, եթէ որ եւ է խնդիր ունենաք
ինձ դառնալու, իրաւունք եմ տալիս գրաւոր դի-
մելու. ես երեւանի թագաւորական ուսումնարանի
Տեսուչն եմ, ձեր թուղթն ուղղակի ուսումնարան
ղրկեցէք. մի քաշուէք, ես ինքս էլ գիւղացի եմ,
Քանաքեռ գիւղիցն եմ. իմ անունս է Խաչատուր
Աբովեանց:

— Աստուած կեանք տայ, շատ շնորհակալ ենք,
ձայն ձայնի տուինք մանուկներս:

Նա ձի նստեց եւ հեռացաւ:

Բլրի ետեւն էր անցել Աբովեանցը, իսկ մենք
մեր կեցցէները դեռ չէինք զազարեցրել:

Է Գնաց հայազգի նոր գրականութեան լու-
սատու աստղը— հանրահռչակ Խաչատուր Աբովեանցն
եւ մեր սիրտը հետը տարաւ:

Նա տարաւ եւ մեր վարժապետի հոգու
անդորրութիւնը: Ինչպէս վերն ասացի, այն օրից
Շապուհ Շահնազարեանցի ոգեւորութիւնը մեռաւ:

Յայտնի չէ՝ վախենում էր, որ չը գրենք
Աբովեանցին, թէ իւր խոստումն էր կամենում
սրբութեամբ կատարել:

Իչ այնուհետեւ ծեծը վերջացրեց:

— Ա՛խ, ի՛նչ անեմ ատամները կրճտե-
ցնում էր յաճախ խալփան, երբ անկարգութիւն
էինք անում, կամ դասերս չէինք իմանում, արեւը

վատ տեղն է մայր մտել, թէ չէ ես գիտէի ինչ
անելս:

Էլ չը դիմացաւ Շապուհը, երկրորդ տարին
տուն ու տեղն ուսեց, իւր մատաղ ամուսնոյն
շալակեց, Աշտարակից երեսը շրջեց եւ տեղափոխուեց
Երեւան, ուր եւ վախճանուեց ջահէլ հասակում:

Կարծեմ դեռ Շապուհը չէր գնացել մեր
գիւղից, որ Աբովեանցի կորստեան բօթը հռչակուեց:

Եթէ չեմ սխալուում, 1846 կամ 1847 թուա-
կանն էր:

Ասում էին՝ իբր թէ՛ մի առաւօտ զարթնել
են եւ գտել, որ տան գլուխը չը կայ, ո՛ւր է գնա-
ցել, ո՛վ է տարել, ոչ ոք չը գիտէր: (Մինչի այսօր
եւս չիմացուեց):

Չայն դուրս եկաւ, իբր թէ՛ Աբովեանցի
գլխարկը, կօշկի մի հատն եւ սիւրտուկը գտնուել
են Զանգու գետի ափին: Ոմանք ասում էին՝ թուր-
քերն են սպանել, թաղել եւ հետքը կորցնելու
մտքով արտաքին նշանները գետի ափն են ձգել,
իբր թէ՛ ինքնակամ գետն է ընկել խեղդուել:

Այլք ուրիշ հաւանական եւ անհաւանական
են թաղբուծիւններ էին անում . . . ո՛վ գիտէ, ժա-
մանակից յառաջ ծնած մարդ էր, ամէն բան կարելի
էր գուշակել, բայց հաստատ ոչինչ չիմացուեց:

Հաստատ էր միայն, որ Զանգուն աղեցին,
մաղեցին, ամէն տեղ որոնեցին եւ դիակը չը գտան,
չը գտան ու չը գտան:

Դ.

Յիշատակաց արժանի ուսուցչիս հեռանալուց յետոյ, շատ հաւանական է, որ ես մնալով գիւղումը՝ հօրս մահից յետոյ՝ կը ձուլուէի համաբնակչացս զարգացման բովում եւ կը մնայի մի պարզ գեղջուկ, եթէ հետեւեալ դէպքն ինձ չը խլէր հայրենիքիցս:

1849 թուին՝ հօրս ձեռքով յանձնուեցի մեր դրացի եւ Աշտարակի պաշտպան Մոզնու սուրբ Գէորգի վանքի նոր միաբան Մարտիրոս Մժէժեան Կարնեցի արեղայի նորաբաց վանական դպրոցը, եւ, ինչպէս վստահ էի, շուտով առաջին աշակերտը՝ եւ վարդապետ—վարժապետիս սիրելին դարձայ:

Եթէ մեր բոլոր կուսակրօնները հայր Մարտիրոսի առաքինազգեաց վարքի եւ բարքի տէր լինէին, սուրբ հայրերի վերայ տարապարտուց շարունակ բարձած զրպարտանքներն ու բամբասանքները բաւական էին ապաքէն դասել նրանց հրեշտակաց դասը:

Աւելացրու հայր Մարտիրոսի սրբակրօն եւ անտխեղձ բնաւորութեանն եւ երիտասարդական վառ աշխոյժին՝ նրա ազգի մանուկների կրթութեան գործում ցոյց տուած մեծ արիութիւնը, ապա երանելին մեր ժամանակի անզուգական եւ ընտիր

հոգեւորականներից մէկն էր:

Մօտաւորապէս 70 տարեկան ծերունի էր նա վերջերումն Հառիճոյ վանքում, ուր քանի տարի ապրում էր իբրեւ միաբան եւ այդ զառամեալ հասակում չէր հանգել նրա սրտի կրակը դէպի դասատուութիւնը:

Մի քանի տարի էր՝ Մժէժեան վարդապետը դասատու էր Հառիճոյ Փառանգաւորաց դպրոցում, նա այնտեղ եւ միաբան էր եւ տնտես էր եւ վանահօր տեղակալ էր եւ ամենայն ինչ էր: Օրն ի բուն՝ վաղ առաւօտից մինչեւ ուշ գիշերը՝ ոտքի վրայ գործում էր եւ չէր դադարում, չը նայեցեալ, որ խեղճը յօդացաւ եւս ունէր:

Վերջումը՝ իւր շնչին ստացուածքն ու գրքերը կտակելով Հառիճոյ վանքին, այնտեղ էլ գլուխը դրեց ու հանգստացաւ՝ երկրորդ գալստեանը զարթնելու յուսով:

Ահա այս Մժէժեան վարդապետն էր, որ Տաճկաստանից եկել էր Էջմիածնի միաբան դառնալու փափագով եւ մինչեւ նրա միաբանակցութեան օրինական հաստատութիւնը գալը, ուղարկուած էր Մողնի՝ միաբան սուրբ Գէորգայ վանքին:

Մողնու վանահայրն այդ ժամանակն էր Աշտարակեցի Սիմէօն Շաժումեանցը, կամ Սաժումեանցը:

Սիմէօնը միայն Մողնու կառավարիչը չէր, ներսէս Աշտարակեցի Ե. Կաթողիկոսի հրամանաւ՝ Սիմէօնն Աշտարակում եղած բոլոր վանքապատկան

այգիների վերատեսուչն եւս էր, Կաթողիկոսը նրան էր յանձնել նոյնպէս իւր եղբայր Կարապետ աղայի ժառանգներին մնացած Աշտարակում եղած անշարժ կալուածքները, նրանց պատկանած Ղզլթամիր գիւղն եւ էլի շատ վանքապատկան կալուածներ ու գործեր: Մի ժամանակ Սիմոնի ձեռքին էր մինչեւ անգամ Կարբու, Աբարանու, եւ Թայինու ընդարձակ գործակալութիւնը: Իսկ այս մեծ պաշտօնեան, բացի իւր անունն ստորագրելուց՝ ոչինչ չը գիտէր: Բայց եւ այնպէս Սիմոնը շատ շատերից արդիւնաւէտ գտնուեց իւր գործառնութեանց մէջ:

Ի դէպ, չի կարելի Սաժումեանցի վերաբերութեամբ զանց առնել ժողովրդական առածը. մեզր ծախսողը մատը կը լպստի:

Երկու տարի մնաց Մժէժեան վարդապետը Մողնու վանքում, նրան գրաւում էին ոչ թէ վանքի բազմաթիւ ուխտաւորներն իրանց նուէրներով, ըստ որում վարդապետը միանգամայն անշահասէր էր, ոչ թէ Էջմիածնի միաբանութեան վարթամ կոչումը. — ոչ, Մողնում նրան կապողներն էին շրջակայ գիւղերից հաւաքուած երթեւեկ աշակերտներն եւ նրանց ցոյց տուած յառաջագիմութիւնը:

Եթէ Էջմիածնի Սինօղի անգամ՝ տաճկաստանցի Ղազար գիտնական վարդապետի արկածքը չը լինէր, Մժէժեան հայրը չէր բաժանուիլ իւր սիրելի սաներից:

Ահա, թէ ինչ պատահեցաւ:

Շատ ուշ հասկացուեցաւ, որ հայր Մտէժեանը Տաճկաստանում աշակերտ է եղած յիշեալ Ղազար վարդապետին:

Մտէժեանն իւր ուսուցչի հետքը բռնած՝ հասել է Էջմիածին:

Մի քանի տարի յառաջ էր Ղազար վարդապետն եկել Էջմիածին եւ իւր գիտնականութեան շնորհիւ Սինօզի անդամ դարձել:

Չը գիտեմ՝ ինչպէս է լինում, Սինօզում բացուում են Ղազար վարդապետի գործած զեղծումները, որոնց առթիւ Ներսէս կաթողիկոսի եւ Ղազար վարդապետի մէջ բաւականին տհաճ ընդհարումներ են տեղի ունենում եւ Ղազար վարդապետը բարուք է դատում գլուխն ազատել փախչելով:

Թէ երբ կապուեցաւ Ղազար վարդապետի եւ Մտէժեանի մէջ համերաշխութեան պայմանը, ես չը գիտեմ: Այսքանը միայն լաւ յիշում եմ, որ 1851 թուի աշնանը՝ մի քանի օր Մարտիրոս վարդապետն իմ ուշագրութիւնս հրաւիրում էր դէպի Կ. Պօլիս, Փարէզ եւ այլն:

Մի օր էլ շատ վրդովուած՝ ինձ առանձնապէս յայտնեց, որ ինքը մի քանի օրից մեզնից ընդմիշտ հրաժեշտ կը տայ եւ եթէ ես հաճիմ, կարող եմ հետը գնալ:

— Այդպիսով միայն, ասում էր նա, կարող կը լինիմ հանգուցեալ հօրդ տուած խոստմանս չը

դաւաճանել:

Այդ բանն ես չէի մոռացել: Հայրս եւ Մօէ-
փեանը շատ սիրով բարեկամացել էին:

Կերելի, զգացել էր հանգուցեալ ծնողիս հո-
գին, որ հիւանդութեան մէջ կանչեց վարդապե-
տին, ձեռքս բռնեց, տուեց նրան եւ ասաց. — Հայր
սուրբ, իմ որդուն քեզ եմ յանձնում, քեզ էլ Աստ-
ծուն, կուզես՝ մարդ շինիր, կուզես՝ ջուրը ձգիր:

Երկու օրից յետոյ՝ հայրս չը կար: Այնուհե-
տեւ վարդապետի հայրական հոգածութիւնն իմ
վերայ պարզ տեսնում էի:

— Իսկ ո՞ր պիտի գնաս, հարցրի ես զարմացած:

— Ես գնալու եմ ուղղակի Կ. Պօլիս եւ Տատեան
Պօղոս բէյին, իբրեւ իմ նախածանօթ բարեկամի,
խնդրելու, որ քեզ ուղարկի Փարէզ՝ ուսումը կա-
տարելագործելու:

— Եթէ այդպէս է, ասացի, ուրեմն կը գամ
հետդ:

Ամենից մեծ դժուարութիւնն այս էր, որ
ինչպէս հայր սուրբն ինձ յայտնեց, ինքը ոչ թէ
բաց աշկարայ, օրով ցերեկով էր գնալու, այլ գի-
շերով՝ փախստեայ:

Այդ լուրն ինձ, թէեւ, շփոթեց, այնու ամե-
նայնիւ՝ խօսքիս հաստատ մնացի, միայն թէ՛ ոչ
առանց մօրս համաձայնութեան լինէր փախուստը:

Կասկածանքների առիթ չը տալու համար՝
երկրորդ օրը մօրս բերի «Կաւահանքի» կոչուած ձո-

րակը, ուր տեսակցութիւն նշանակեց հայր Մժէ-
ժեանը:

Շատ համոզեց, շատ յուսալից խոստումներ
արաւ վարդապետը, ես էլ շատ ոտքերս քարերին
զարկելով՝ ցանկութիւն յայտնեցի գնալու, բայց մայրս
բաց է ի բաց մերժեց գաղտնի փախստականին որդի
յանձնելը. իսկ յայտնապէս տանելուն հակառակ չէր:

— Եթէ այդպէս է, ասաց հայր սուրբը, ինձ
աչքով ականարկելով՝ քո որդին քեզ, ես ինձ
ազատ եմ համարում հանգուցեալ ամուսնոյդ տուած
խոստումից, միայն թէ, աղաչում եմ, գաղտնիք
պահիր իմ նպատակս:

Մօրս ապահով խօսքն առնելով՝ հայր Մժէ-
ժեանը դարձաւ Մողնի, իսկ ես բերի ծնողիս
Աշտարակ եւ շտապեցի սուրբ Գէորգայ վանքը:

Միակ ելքը գտանք մօրիցս ծածուկ փախուստ
տալս, բայց թէ երբ, ո՞ւմ հետ եւ ի՞նչպէս, այդ
միանգամայն շփոթեց մեզ:

Անճարացած՝ սպասեցինք Սաղմոսավանքի
տէր Մանուէլի գալուն:

Ե.

Սաղմոսավանք գիւղը եւ նոյն անունի վանքը
երկու ժամով հեռի է Մողնուց:

Տէր Մանուէլի որդի Սարգիսը նմանապէս
աշակերտում էր Մժէժեանի դպրոցում, գիշերե-

լով Մողնի գիւղում:

Վարդապետի գրութեան համաձայն՝ եկաւ տէր Մանուէլն եւ յանձն առաւ ոչ միայն ինձ փախցնել, այլ նոյն իսկ իրան վարդապետին եւս ողջ առողջ ծածկական սահմանն անցկացնել:

Միակ պայմանը տէր Մանուէլի կողմից՝ իւր որդի Սարգսին մեզ հետ ընկերացնելն էր: Իհարկէ վարդապետը խոստանալու էր ծածկաստանում քաշելու եւ Սարգսի կրթութեան հոգսը:

Հայր սուրբն ուրախութեամբ խօսք տուեց:

Պօղոս բէյի համար մեծ դժուարութիւն չէր երկու մանկանց կրթութեան ծախքն իւր վիզն առնելը:

Որոշուեցաւ՝ նախ եւ յառաջ փախցնել վարդապետին, ապա ինձ եւ Սարգիս տէր Մանուէլեանցին:

Նշանակուեց երկրորդ գիշերը փախստեան յարմար միջոց եւ տէր Մանուէլը գնաց գործը կարգի դնելու:

Որոշեալ երեկոյին՝ հայր Մժէժեանը համբուրեց ճակատս եւ պատուիրեց սպասել իւր նամակին:

Միւս առաւօտը՝ ես գործից բոլորովին տեղեակ չեղողի նման՝ գրքերս կռնատակիս՝ ուղում եմ բարձրանալ դէպի Մողնի՝ որպէս թէ՛ ուսումնարան:

Ահա վերեւից շտապով իջնում է վանքի ծառան եւ գիւղում հռչակում վարդապետի փախուստը:

Բօթարեբը վազում է Սիմոն աղային իմաց տալու:

Ես, իհարկէ, զարմացք եմ յայտնում, բայց եւ այնպէս գնում եմ Մողնի եւ գտնում բոլոր աշակերտակիցներին ու Մողնի գիւղի բնակիչներին խռնուած վարդապետի խցի առաջին:

Ընդհանուր սարսափ ու շփոթ է տիրել. ես եւս ինձ ցոյց եմ տալիս շփոթուածներից մէկը:

Սիմոն աղէն, Սիմոն աղէն

Եկաւ Սիմոն աղէն եւ առաջին գործն եղաւ վանքի բանալիներն առնել, վանքը բանալ եւ մատուցներն ու սպասներն աչքի անցնել:

Երեւեցաւ, որ ամէն բան իւր. աեղն է, մի ասեղ չի կորել:

Ամենքս գնացինք մեր տները, իսկ Սիմոն աղէն նստեց իւր սեւ նժոյգն եւ փութաց Էջմիածին՝ զեկուցումն անելու:

Նոյն երեկոյին իմ զարմացքս էլ անկեղծ էր, երբ Սիմոն աղայից իմացայ, որ միեւնոյն գիշերն Էջմիածնից փախել է Ղազար վարդապետը:

Մարտիրոս հայր սուրբն այդ գործն ինձանից ծածկել էր: Վերջը պարզուեց, որ խօսք են կապած եղել, որ Ղազար վարդապետն Իգդիրի կողմից անցնի Ռուսաց սահմանը, իսկ Մարտիրոս վարդապետն Աբարանով գնայ Շիրակի գաւառի Արթիկ գիւղումն իւր հեռաւոր ազգական տէր Ագամի տանը մի քանի օր թագչի, մինչեւ հետքը

սառչի, ապա թէ Ախուրեան գետն անցնի, մի քանի ժամանակ Անու մօտ Ղօշավանքումը մնայ եւ, չըգիտեմ որտեղ, միանան երկու վարդապետներն ու ճանապարհներն ուղղեն Պօլիս:

Երջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսը լսելով Սիմոն աղայից Մարտիրոս վարդապետի փախուստը եւ ստուգելով՝ որ Մողնու վանքից ոչինչ չի տարել, ասում է. էլ ինչո՞ւ էր գիշերով փախչում, նրա կուռն ո՞վ կը բռնէր, եթէ ցերեկով գնար. այլ բան է Ղազար վարդապետը, նա Սինօգի անդամ էր եւ պատասխանատուութեան ներքոյ:

Այդպիսով ՄԺԷժեանին ոչ ոք չը հետապնդեց, իսկ Ղազար վարդապետին երկու շաբաթ որոնում էին, մինչեւ իմացուեց, թէ Իգդիրից վազուց անցել է Տաճկաց սահմանը:

Մարտիրոս վարդապետի հետքն իսպառ մոռացուեց հասարակութեան համար, իսկ իմ համար նա շատ մօտ էր: Շարունակ ութն օր նա ճգնում էր Սաղմոսավանքի եկեղեցու պահարանում:

Տէր Մանուէլը պահեց վարդապետին վանքի մէջ, մինչեւ որ հաւաստիացաւ, թէ ամենայն հետամտութիւն դադարել է, ապա թէ Զ-րդ գիշերն Արթիկցի տէր Ադամի կողմից ուղարկուած հետեւորդների ուղեկցութեամբ վարդապետին ճանապարհ դրեց Սաղմոսավանքից, որոնք առաւօտ չեղած՝ հասան Արթիկ գիւղը՝ Հառիճոյ վանքի մօտ

եւ իջեւանեցին տէր Աղամի տանը:

Այս մանրամասնութիւնն իմացայ ես իմ հոտեւից ուղարկուած տիրացու Ղեւոնդ Արթիկեցուց:

Վարդապետն սպասում էր Արթիկում ինձ եւ տէր Մանուէլի որդի Սարգսին. Ղեւոնդն եկեր էր մեզ տանելու:

2

Աշունք է, այգեկութն Աշտարակում վերջացել է. գիւղացիք այգիներից տուն են հաւաքուել, աշնան լուացքն ⁽¹⁾ արել է մայրս եւ հագուստներս կախել չորանալու, իմ հագին մի քանի հինմին ցնցոտիներ են:

Երեկոյեան ժամից յետոյ է, ես ընկերակիցներիս հետ գիւղի ավում եղած «Ազգենց» կոչուած կալում խաղում եմ: Աչքս բարձրացնում եմ եւ տեսնում տէր Մանուէլի տղայ Սարգսին հեռուում կանգնած:

Նա ինձ ակնարկ է անում, մօտ կանչում եւ յայտնում, որ տիրացու Ղեւոնդը գիւղից վեր, Կաւահանքի ձորակում, Պատաշարի ետեւն ինձ սպասում է: Սարգսիսը յանձնում է ինձ հայր ՄԺէ-

(1) Առաջ Աշտարակում տարեկան երեք անգամ մեծ լուացք կանէին՝ Զատիկն, Զբօրհնէքին եւ աշնանը՝ քաղցուահանին, այսինքն՝ այգեկութից յետոյ:

ժեանի երկրորդ նամակը:

Առաջին նամակն ես ստացել էի Սաղմոսավանքի տէր Մանուէլի ձեռքով, որով հայր Մժէ-ժեանն յուսատրում էր ինձ՝ Սաղմոսավանքից գնացած երրորդ օրն ուղարկել տիրացու Ղեւոնդին իմ եւ Սարգսի ետեւից, որ եւ ահա կատարում է:

Անմիջապէս թողում եմ ընկերներիս, Սարգսին ուղարկում տիրացու Ղեւոնդի մօտ եւ ինքս շտապում տուն եւ խնդրում, ստիպում մօրս հագցնել ինձ արգէն ցամաքած շորերս:

Շատ էլ քարոզներ կարդաց մայրս գլխիս՝ չք հագնել մինչեւ միւս առաւօտ, բայց լսողն ո՛վ էր. ինքնին հագայ եւ դուրս թռայ՝ ասելով. — գնում եմ կալը խաղալու:

Ինչպէս երեւում է, լուսնի 15, կամ 16-ն էր, մութը նոր էր առնում, որ բոլորակ լուսինն իւր լոյսը տարածեց աշխարհի վերայ:

Օգուտ քաղելով պարզ գիշերից, մենք երեքով դաշտակտրուկ քայլում ենք արագ արագ դէպի Սաղմոսավանք:

Ինչպէս գուշակեցի, այնպէս էլ կատարուեց:

Երբ մութն ընկնելուց յետոյ տուն չեմ եկել, մայրս ողջ գիւղը ոտքի է հանել: 40-ի չափ ձիաւոր սփռուել են Սշտարակի շրջակայքն ինձ որոնելու. Կարբի գիւղի մօտ էինք, որ նկատեցինք իմ համագիւղացի Շուխոնց Բէգլարին եւ ուրիշ հինգ հեծեալների:

Իսկոյն պառկեցինք մի փոսում եւ տազ արինք:

— Այ եղբայր, գոչեց Բէգլարը, մենք զուր այս կողմերն եկանք, նա գնացած կը լինի դէպի Երեւան, ամենից լաւն այն է, որ վերադառնանք այն կողմերը:

Այս խօսքերը խօսելու ժամանակ՝ Բէգլարի ձիու սմբակը թաղուելու էր ազդրիս մէջ, եթէ յետ չը քաշուէի:

Նրանք թեքուեցին դէպի Աշտարակ, մենք ապահով վերկացանք եւ մեզ տուինք Արագածի թումբն ու բարձրացանք դէպի Սաղմոսավանք:

Այս գիշեր մօտ կլինէր եւ մենք մտանք տէր Մանուէլի գոմի օդէն ու մրսած անդամներս տաքացրինք գոմի արտաշնչութեամբ ու «գազ» կոչուած փշի փայլուն բոցով:

Միւս առաւօտը տէր Մանուէլը մեզ իւր ձեռքով իջեցրեց Սաղմոսավանքի ձորը, տեղաւորեց վանքի տակի քարայրում եւ ինքը գնաց մեզ որոնելով՝ մեր հետքը կորցնելու:

Է

Թէ ո՞ր գնաց տէր Մանուէլը, չը գիտեմ, երեկոյ եղաւ եւ մենք դուրս ելանք այրից ու գիշերեցինք նոյն օդումը, հետեւեալ առաւօտուն՝ լոյսը չը բացուած՝ դարձեալ այրն իջնելու պայմանաւ:

Ճաշ թեքուել էր. ես, Սարգիսն եւ տիրացու

Ղեւոնդը տէրտէրի մեծ որդու բերած կերակուրը կերել ենք եւ կատակներ ենք անում:

Յանկարծ լսում եմ եղբօրս ձայնը:— Ի՞նչ է այս, երեւոյութիւն:

— Ոչ, զուտ իրողութիւն, եղբայրս գոռում է տէր Մանուէլի վերայ, իբր թէ, ինքն իւր փոքր եղբօր հօտն առնում է այն ձորում:

Տէրտէրն իւր կարգովն երդուում է, որ ինքը ոչինչ չը գիտէ:

Ահա եղբայրս՝ այն ժամանակը Խուբով անուանեալ՝ իսկ այժմ տէր Ս. Աւարելը՝ մօտենում է այրի մուտքին եւ հօտ քաշելով՝ ճչում տէրտէրի վերայ՝ այս խօսքերով.— այ՛ երէց, ես քեզ չասացի՛, որ եղբօրս հօտը գալիս է. կայ, չըկայ՝ իմ եղբայրս այս այրումն է:

Այս խօսքերով մեր Խուբովը ներս է մտնում այրն եւ կանգնում մեր առջեւն ու գոչում ինձ վրայ.— այս տեղ ի՞նչ ունիս, փուչ կենդանի:

Ես լռում եմ:

Եղբօրս ձայնից խեղճ տիրացու Ղեւոնդը սարսափած՝ քաշուեց այրի խորքը:

Եղբայրս տեսաւ նրան ու մտրակով յարձակուեց անպաշտպան տիրացուի վերայ ու անողորմաբար ծեծում էր, հետն էլ սպառնում, որ ինքը կը սպանի իւր եղբօր փախցնողին:

Իզուր տէր Մանուէլը կամեցաւ մտրակը խել եղբօրս ձեռքից, դրանով քահանայն աւելի գրգռեց

եղբօրս բարկութիւնը, եւ եթէ ես չը կանգնէի տիրացու Ղեւոնդի առաջին ու չը գողայի եղբօրս վերայ, ճիշտ որ տիրացուի բանը բուրդ էր:

— Ընչո՞ւ ես անձեղ մարդուն նահատակում, ասացի, նա ընչո՞վ է մեղաւոր, ես յօժարութեամբ եմ գնում, իսկ ես ոչ քո գերին եմ եւ ոչ որդիդ, մի եղբայր դու ես՝ մի եղբայր ես, էլ չեմ ցանկանում հետդ ապրել, հեռանում եմ, որ ինձ խոտհնձուոր չը շինես:

Մի անգամից զինաթափ արի եղբօրս, նա լալով հարցրեց իմ փախչելու պատճառը, եւ երբ իմացաւ, որ գնում եմ Կ. Պօլիս ուսում առնելու, նեղացաւ ինձանից, որ իրանից ծածուկ եմ գնում:

— Այժմ ապահով եմ, վերջացրեց եղբայրս խօսքը, ես եւ տէր Մանուէլ հայրը կը վերադառնանք Աշտարակ, մօրդ կը միամտեցնենք ու լուսադէմին կը գանք, մեր ձեռքով ձեզ երկուսիդ կը տանենք, կը յանձնենք վարդապետին Արթիկումն եւ կը վերադառնանք:

Իսկ տիրացու Ղեւոնդին եղբայրս պատուիրեց հաւախօսին միայնակ ճանապարհ ընկնել հետիոտս՝ առանց իրանց սպասելու:

Ողորմելի մարդը նոյն երեկոյին՝ քարայրը թողնելուց յետոյ՝ ուղի ընկաւ: Օձի միս էր կերել, որ սպասէր եղբօրս վերադարձին, հերիք չէր կերած ծեծը:

Ը

Շատ շուտ պարզուեց հանելուկը: Բանից դուրս եկաւ, որ տէր Մանուէլն իրանից կասկածելով՝ հեծնում է ձին եւ առաջին օրը Աբարանի մերձակայ գիւղերումն է հռչակում իւր որդու փախուստը, իոկ երկրորդ օրն, իբր թէ լսելով, որ Աշտարակից էլ անհետացել է դերձակ Ստեփանի փոքր որդին՝ այսինքն ես, իջնում է Աշտարակ՝ մանրամասնութիւններ իմանալու:

Բայց դեռ տէր Մանուէլը չեկած՝ եղբայրս մեր հարեւան Շաժումենց Աղօյի—Սիմոն աղայի եղբոր շնորհիւ իմանում է իմ տեղս:

Աղօն ընչո՞վ էր մեղաւոր, ես եմ եղած անշնորհք ու անփորձ. փոխանակ պատասխանելու, կամ զգոյշ պահելու հայր Մժէժեանի առաջին նամակը, գրպանիցս վայր եմ ձգել կորցրել:

Շաժումենց Աղօն գտել, կարգացել, է եւ ծածկել, սպասելով վախճանին:

Իմ կորչելու երկրորդ օրը՝ Աղօն խղճալով մօրս արտասուքներին եւ եղբօրս չարչարանքներին, թագուն յայտնում է եղբօրս եղելութիւնը:

Նոյն միջոցին տէր Մանուէլն է երեւում գիւղը մտնելուս:

Եղբայրս յարձակուում է տէր Մանուէլի վերայ եւ պահանջում իւր եղբօրը:

Տէրտէրն խկոյն խոստովանում է եղելու-
թիւնը եւ եղբօրս ձի հեծացրած՝ բերում է Սաղ-
մոսականք ու իջեցնում ձորը, ուր նա, շնորհիւ իւր
սուր հոտառութեան՝ գտնում է իւր կորուստը:

Եղբայրս պահեց իւր խօսքը. հաւախօս չեղած՝
տէր Մանուէլի հետ վերցրին մեզ իրանց ձիանց
գաւակն եւ ճանապարհ ընկան. տանում են, իբր
թէ, Մարտիրոս վարդապետին յանձնելու:

Լոկ խաբեբայութիւն, լոյսը բացուեց ոչ թէ
Արթիկում, այլ Աբարանու գիւղերից մէկում՝
Թաքառլու գիւղում, ուր տէրտէրն ու եղբայրս
տարածեցին, որպէս թէ իրանք խել են մեզ քրդերի
ձեռքից ու վերադարձրել:

Այդպիսով իմ ճանապարհորդութիւնս յետ
մնաց. ես ծաղր ու ծանակ՝ փակուած ընկած էի
տանը, մինչեւ որ իմ հայրապատիւ ուսուցիչ Շա-
պուհ Շահնազարեանը տէրտէրացած՝ եկաւ Սուրբ
Գէորգ ուխտ եւ լսելով իմ արկածքը, մի ապտակ
տուեց ինձ ու առաւ իւր գաւակը, տարաւ Երե-
ւան՝ արքունի դպրոցը տալու:

Մի ամսաչափ մնացի տէր Սահակ Շահնա-
զարեանցի տանը, երթեւեկում էի արքունի դպրոցը,
մինչեւ մի օր էլ էջմիածնից թուանքչի Սարօն
եկաւ եւ ներսէս կաթողիկոսի հրամանաւ ձիու
վրայ դրեց ինձ ու տարաւ:

Թ

Իջանք Ղազարապատի դրանը ձիուց եւ մտանք
Էջմիածնի վանքի բակը:

Առաջին մարդը, որ աչքովս ընկաւ, տէր
Մանուէլն էր:

Նա կանգնած էր զանգակատան կամարի
ներքոյ:

Ես սառւը ողջոյն տալով քահանային՝ համբու-
րեցի տաճարի դուռը:

Տէրտէրը մօտ եկաւ եւ ինձ ասաց. եթէ դու
իմ տունը կը քանդես եւ ճշմարտութիւնը կը յայտ-
նես, այս սուրբ տաճարը քեզ պատժի. ինձ հար-
ցրել են, ասել եմ՝ քրդերն էին փախցրել, դու էլ
նոյնն ասա:

Տէրտէրը կամենում էր դարձեալ շարունա-
կել, բայց Սարօն մօտ եկաւ եւ բարկացաւ ու ինձ
հրամայեց հետեւիլ իրեն:

Ես նշանացի ապահովացրի տէր Մանուէլին
եւ Սարօյի հետ բարձրացայ մոմատան սենեակն
ու ներկայացայ մի կրակոտ քահանայի:

Դա Թիֆլիսեցի տէր Ստեփան Մանգինեանցն
էր՝ Ներսէս կաթողիկոսի քարտուղարը—վերջումը՝
«Մեղու Հայաստանի» լրագրի անդրանիկ խմբագիրը:

—Տօ, դուն իս Պռօշեանցը, առանց «Աստուած-
օրհնեսցէով» աջ տալու, հարցրեց հայր Մանգի-

նեանցը, եւ երբ իմացաւ, որ ես եմ, գոչեց.
գժուիլ էիր, որ մի կռօ վարդապետի քամակից
ընկած կորչում էիր:

Երբ տէր Մանգինեանցն իւր մի քանի հար-
ցերին ոչ մի պատասխան չստացաւ, առաջ ընկաւ
դէպի վեհարան եւ ինձ հրամայեց իւր ետեւից
գնալ:

Հայր Մանգինեանցի նման չը վարուեց մեծա-
գործ Հայրապետը:

Մեծն ամեն բանի մէջ մեծ կլինի: Տէր Ստե-
փանի բանաւոր զեկուցումից Կաթողիկոսն իմացել
էր, որ իւր առաջ ներկայացողը մի մանուկ է
լինելու:

Եւմբը մտայ եւ տեսայ ոչ թէ մի ահեղասաստ
գատաւոր, որի անունը սարսափ էր ազգում խիղճն
անմաքուր մարդկանց, այլ մի քաղցրագութ հայր, որ
վաղուց փափագելով իւր օտարութեան մէջ եղած
որդուն տեսնելու, պատրաստ է գրկել նրան խան-
դադատանօք:

— 066 . . . դու բարով հազար բարի, սա ինչ
չաւ տղայ է . . .

Այս բաջալերիչ խօսքերով մեծ ներսէսն աջը
մեկնեց ինձ եւ միւս ձեռքով յառաջ քարշեց
իւր ծնկների մէջ:

Նա հարցրեց անունս, հօրս անունը, եւ երբ
իմացաւ, որ տէր Առաքելի որդի դերձակ Ստե-
փանի տղան եմ, գոչեց.

— Հա՛, դու իմ սիրելի Ստեփանի որդի՛ն ես, քո հայրդ իմ լաւ բարեկամն էր, ուրեմն դու էլ իմ գաւակն ես, ապրիս, ապրիս.:

Ես աչքս յետ թեքեցի, որ տեսնեմ, թէ ինձ խիստ ընդունող Կէրտէրի քէֆն ինչպէս է:

Քահանայն դրան մօտ կանգնած էր զարմացական հայեացքով: Ես ժպտացի դառն հեզնութեամբ եւ սառնօրէն երեսս շրջեցի նրանից ու նայեցի Կաթողիկոսին:

— Ասա ինձ, գառնո՛ւկս, հարց տուեց ժպիտն երեսին Ներսէս Ե. էն վարդապետը քեզ ո՞ւր էր տանում:

— Ստամբոլ:

— Ընչի՛ համար:

Այդ տեղ ես համառօտիւ պատմեցի Կաթողիկոսին հօրս բարեկամական յարաբերութիւնը հ. Մժէժեանի հետ, հօրս կտակը վարդապետին իմ կրթութեան մասին եւ հայր Մարտիրոսի դիտաւորութիւնը. ասացի, որ Մժէժեանը թէւ միայն ինձ միտք ունէր տանելու, իսկ ես լինելով Սարգէս տէր Մանուէլեանի մօտ ընկերը, չուզեցայ առանց նրան գնալ, որով եւ վարդապետը, թէ եւ ակամայից, յանձն առաւ Սարգսին էլ ինձ հետ վերցնելու:

Իսկ տէր Մանուէլի մասնակցութիւնը միանգամայն ուրանալով ստեցի, որ եղբայրս եւ տէր Մանուէլը մեզ հասան ձիւլի լճի ափին եւ սպառ-

նալիք տալով՝ փախացրին մեր ետեւից եկած հինգ տաճկաստանցի հայերին, փախցրին նրանց ու մեզ առան ու յետ եկան:

Կաթողիկոսի հարցին, թէ տէրտէրի ասու-
թեամբ քրդեր էին մեզ փախցնողները, ես պա-
տասխանեցի, որ քրդի շորով հայեր էին:

— Իսկ թէ դու ինձ խաբում լինիս, ականջներդ
մի լաւ քօքեմ, ժպտալով դարձաւ ինձ վեհ Հայ-
րապետը:

— Քո ձեռքին չէ՞, կուզես ծեծիր էլ:

— Որ էդպէս է, դարձաւ Կաթողիկոսը տէր
Ստեփանին, տար սրան միւս սենեակը, թող այն-
տեղ սպասի, մինչեւ կրկին կը կանչեմ. նայիր, ձայն
տուեց ետեւից՝ երեխային միայն չը թողնես, մօտը
մի խօսակից դիր:

Տէրտէրն աւելի խիստ էր, ինձ հրելով ձգեց
մի սենեակ եւ դուռը վրաս կողպեց ու գնաց:

Ես մ'նացի ծործրակս բերելով մի ժամից աւել:

Երբ շաթիրն ինձ իւր ետեւը ձգած գնում
էր դէպի Կաթողիկոսի ննջարանը, ուր մահճակալի
վրայ նստած ընդունում էր ամէնքին Հայրապետը,
դահլիճումն ես կանգնած տեսայ տէր Մանուէլին
եւ երկու ուրիշ քահանաների:

Երկու խօսքով տէր Մանուէլն ինձ ասաց,
որ ինքը, իբրեւ քահանայ, չէր կարող սուտ խօսել
եւ թէ ինքը բոլորը մի առ մի Կաթողիկոսին խօս-
տովանեց:

— Եթէ այդպէս է, իզուր էիր ինձ վանքովն երգում տալիս, փնթփնթացի ես ու մտայ Վեհի սենեակը:

— Խաբեբայ Աշտարակցի, կիսաժպիտ ճշաց Հայրապետը, ձեր գիւղացիք բոլորն են ստախօս, թէ միայն դու ես:

Այդ դու ինքդ ինձանից լաւ պէտքէ իմանաս, վստահօրէն պատասխանեցի ես, Աշտարակցու մեծը դու ես:

— Ես սուտ խօսող Աշտարակցի չեմ:

— Ես էլ չեի, բայց տէր Մանուէլի երգումն ինձ ստախօս շինեց:

Ապա պատմեցի տէր Մանուէլի հանդիպումն Էջմիածնի դրան մօտ եւ տուած երգումն:

— Ուրեմն դու լաւ տղայ ես, եւ եթէ այդպէս է, հիմի պատմիր ինձ բոլոր եղելութիւնը մանրամասնօրէն սկզբից մինչեւ վերջը:

Ամէն բան մի առ մի պատմեցի, հաւատացնելով որ Ղազար վարդապետի փախստեան եւ Մարտիրոս վարդապետի հետ ունեցած յարաբերութեան մասին ոչինչ չը գիտէի:

— Իսկ քո գնալուդ գլխաւոր պատճառն ի՞նչ էր, դարձեալ հարցրեց Կաթողիկոսը:

— Այն՝ որ հայրս իւր կենդանութեան ժամանակ թոյլ չէր տալիս ինձ մի բաժակ ջուր լցնել խմելու, ինքն էր ծառայում ինձ, միայն թէ ես կարդայի, իսկ եղբայրս՝ հօրս մահից մի քանի օր

յետոյ՝ էտոցը (այգեպանի կեռակտուց դանակ) ձեռքս տուեց եւ տարաւ այգին բանացնելու, սպառնաց մինչեւ անգամ իմ համար մի փոքրիկ մանգաղ պատուէր տալով՝ խոտ հնձելու համար:

— Հապա դու ուզում ես անգործի մէկը դառնալ, հարց տուեց Կաթողիկոսը:

— Ոչ, ես ուզում էի հօրս սրտի ցանկութիւնը կատարել, ուզում էի ուսում առնել եւ վարդապետը խոստանում էր ինձ Պօղոս Բէյին յանձնելու՝ Փարէզ ուղարկելու համար:

— Կուզե՞ս, որ ես քեզ ուղարկեմ ուսումի:

— Ոտքդ էլ չեմ պաշխի:

— Եթէ այդպէս է, գնա պատրաստուիր, մի ամսից ես գնալու եմ Թիֆլիս, քեզ հետս կը տանիմ իմ ուսումնարանը: Տէր Ստեփանն, հրամայեց նա, կանչել տուր հանդերձապանին, յանձնենք՝ երեխայի համար հագուստ պատրաստի, իսկ մինչեւ մեր գնալը՝ սրան քո մօտ պահիր քո յատուկ հսկողութեան ներքոյ:

— Ոչ, ես տէրտէրի մօտ չեմ կենալ, գիւղումը բարեկամ ունիմ, Բոյաղչոնց ներսէսն իմ փեսէն է, նրանց մօտ կը մնամ, խօսեցայ ես:

— Էդ լաւ եղաւ, ուրեմն դու ճանաչում ես մեր Աննայի տղայ Մկրտչին:

— Ի՞նչպէս չէ, իմ խաղընկերն է եւ մեր բարեկամի տղէն:

— Ուրեմն մենք էլ բարեկամ ենք, ուրախացիր,

միայն չես գնալ Թիֆլիս, մեր Մկրտիչն էլ քեզ հետ կը լինի, Մկրտիչն իմ քրոջ թոռն է:

— Գիտեմ, յանդնգնեցայ պատասխանել ես, Աննայի մայր Գեարանը քո քոյրն է:

— Ուզում ես ասել Գայիանէն, բայց դու Աշտարակցի ես, բառի կէսը կուլ կը տաս. վնաս չունի, Գեարան կամ Գայանէ երկուսն էլ մին է. դու գնա՛ Բոյաղչոնց տանը կաց, միայն ճաշիր մեր սեղանատանը:

Դեկտեմբերի կէսն էր՝ Ներսէս կաթողիկոսին ներկայացայ, մի ամիս մնացի Վաղարշապատ, երեք օր միայն գնացի Աշտարակ՝ մօրս տեսնելու եւ վերադարձայ:

1852 յունուարի կէսն էր, որ ճանապարհ ընկայ Կաթողիկոսի քրոջ թոռը Մկրտչի ընկերակցութեամբ դէպի Թիֆլիս:

Թիֆլիսում երեք օր վեհարանում մնալուց յետոյ՝ մենք տարուեցանք Ներսիսեան դպրոց եւ մտանք որդեգրաց շարքը:

Ժ

Վերը մոռացման էի տուել մի դէպք:

Աշտարակում՝ Շապուհ Շահնազարեանցի ուսուցչութեան ժամանակ՝ մեր գիւղական դպրոցն այցելութեան եկան Ներսէս կաթողիկոսի եղբօր որդի Թիֆլիսաբնակ Յովակիմ աղայ Շահազիզեանցն:

եւ սինօզի բժիշկ՝ վերջը պրօկուրօր՝ Կարապետ
Վասակեանցը:

Համառօտ հարցաքննութեան ժամանակ՝ Վասակեանցը հաւանեց իմ սրամտութիւնն, ընդունակութիւնն եւ վստահութիւնն եւ ինձ որդեգրեց՝ խոստանալով հայթայթել իմ ուսումնական պիտոյքս եւ վճարել ուսուցչի տարեկան երեք մանէթ վճարքը, որ եւ կատարեց:

Տարեկան երկու անգամ հայրս ինձ տանում էր Էջմիածին Վասակեանցի մօտ. հանգուցեալը սիրով ընդունում էր մեզ, թէյ էր խմացնում, գրքեր էր բաշխում, թուղթ ու գրիչ էր տալիս, ուսուցչի վարձն էր հօրս յանձնում եւ քաղցրութեամբ ճանապարհ դնում:

Շապուհ վարժապետի Աշտարակը թողնելուց յետոյ՝ Վասակեանցը կանչեց ինձ Վաղարշապատ եւ կամեցաւ տալ սուրբ Էջմիածնի վանական դպրոցը:

Ներսէս կաթողիկոսն այդ ժամանակ Թիֆլիսումն էր, վանքի տէրն էր տեղակալ Ղուկաս Արք եպիսկոպոսը:

Վասակեանցն ինձ ներկայացրեց տեղակալին եւ խնդրեց ընդունել դպրոցում. եւ որովհետեւ Սրբազան տեղակալի առաջարկութիւնն ես միանգամայն մերժեցի, վարդապետանալու խօսք չը տուի, նա էլ ինձ չընդունեց, որով մեծապէս սրտնեղութիւն սպառնառեց Վասակեանին:

Այդ օրից մինչեւ ներսէս կաթողիկոսին ներկայանալս՝ ես չէի տեսել իմ բարերար Վասակեանցին:

Վերջին անգամ ես տեսայ նրան գանձապետ Ստեփան Սամուէլեանցի սենեկում՝ մեր Թիֆլիս ուղեւորուելու օրը:

Բարերարս յայտնեց իւր ուրախութիւնը՝ իւր աշխատանքը իզուր չը կորչելու համար. յորդորեց արի լինիլ, խելօք լինիլ եւ ապա քսակը բանալով՝ ցաւեց, որ բացի մի վրացական քառասուն կոպէկանոց ջխտանոց կոչուած փողից, ուրիշ գրամ չունի մօտը:

— Այսքանը քեզ հերիք է, ասաց, երեխային փող տալը վնաս է, քեզ համար չամիչ կառնես, կուտես:

Այդ փողովն ես չամիչ չառայ, այլ զուրգել եւ խաւիար:

Յիշեալ կերակուրներն իմ եւ Մկրտչի համար նոր բաներ էին, դեռ դպրոց չը մտած, մենք շաթիրի հետ գնացինք փողոց եւ կէս ֆունտ զուրգել, նոյնքան էլ խաւիար առանք:

Զուրգելի ֆունտն արժէր տասնեւհինգ կոպէկ, իսկ խաւիարինը երեսուն կոպէկ:

Ոչ մինը կարողացանք ուտել եւ ոչ միւսը, երկուսիցն էլ զզուեցինք:

ԺԱ.

Երկրորդ օրը մեզ տարան տեսուչների սենեակը. երկու հոգի էին նորա. մինը Ռուսաց լեզուի եւ առարկաների համար էր տեսուչ, միւսը Հայոց:

Առաջինը Միքայէլ Պատկանեանցն էր, երկրորդը Յակովբ վարժապետ Կարենեանցը: Դեռ Մկրտչին քննեցին եւ գտնելով՝ որ ոչինչ չը գիտէ, վերակացուն յանձնեցին առաջնորդել դէպի փոքր պատրաստականը, կամ կիսի կէս կլասը:

Իմ ձեռքը տունն աւետարան: Ես սուար եւ անսխալ կարգացի ու առանց նրանց կողմից հրամանի, թարգմանեցի ու դարձայ հարցրի. վերլուծեմ էլ:

Յակովբ վարժապետը զարմացմամբ երեսոս նայեց եւ քերականական կանոններ հարցրեց, ու երբ անսխալ պատասխաններս լսեց, գուլեց ու ասաց. էս տարի երկրորդ դասատանը կը նստես, եկող տարի կը փոխենք երրորդը:

— Պատկանեանցը Կարենեանցի հետ ռուսերէն մի երկու խօսք խօսեց ու մի ռուսերէն գիրք տուեց ձեռքս կարգալու, եւ երբ իմացաւ, որ տառերը միայն ճանաչում եմ, ասաց. ափսոս, մատակ, ափսոս, դու էլ պիտի գնաս ընկերիդ մօտ:

Երեւի թէ Յակովբ վարժապետը տհաճ

գտնուեց, բաւական ժամանակ ռուսերէն տաք վիճաբանութիւնից յետոյ՝ վերակացուի ձեռքով ինձ՝ եւս տարան Մկրտչի մօտ նստացրին:

Էջմիածնումն ինձ եւ Մկրտչին միատեսակ հագուստ կարեցին, մի տեսակ երկար կապայ էր կապուտ ղաղաք կոչուած կտաւից, ժամանակի համեստ հագուստն էր համարուած, կիսահոգեւորականի, կիսաշխարհականի տարազ, այժմ՝ շատ եմ աչք ածում, բայց ոչ մի տեղ չեմ տեսնում նոյն ձեւի հագուստ: Բոլորեքեան մեր վերայ ծիծաղում էին:

Չեմ մոռացել, այդ օրը թուաբանութեան դաս էր, հանդուցեալ Սողոմոն Աբամելիքեանցն էր ուսուցիչը:

Նա ծուռն աչքով նայեց մեզ, գլուխը սլտտեց ու լռեց, իսկ երբ վերակացու Երեմիա Իսահակեանը դուրս գնաց, Աբամելիքեանցը տեղիցը վեր կացաւ, ծանր ծանր, ուղտի վրայ նստած մարդու նման կուզը դուրս ձգած՝ ուղտաքայլ մօտ՝ եկաւ մեզ. մի քանի րոպէ առաջներիս կանգնած՝ աչքով չափ ուձեւ արեց երկուսիս եւ դառնալով ինձ՝ հեզնօրէն հարցրեց:

— Աղգդ ի՞նչ է:

— Պաօշեանց:

— Էլ սրան ի՞նչ հարցնեմ, (ցոյց տալով Մկրտչին), սա էլ Քնթեանց կը լինի անշուշտ:

Ասաց ու յետ դարձաւ.

Բոլոր դասարանը հռհռաց, իսկ մենք շրթունքներս ուռցրինք բարկութիւնից:

Մի քանի ժամանակ Պռօշեանցն ու Քնթեանցն էին ընդհանուրի խօսակցութեան առարկան, եւ եթէ Մկրտիչը չսպառնար, որ ինքը կերթայ Կաթողիկոսին կասի, գուցէ երկար շարունակուէր:

ԺԲ.

Ի՞նչ խիստ տեսուչներ ենք ունեցել, սրանց վարմունքից ես յիշեցի իմ երախտաւոր ուսուցիչ Շապուհ Շահնազարեանցին, օրն ի բուն ոռզգի էր, որ դիպչում էր աշակերտներին:

Այն ժամանակը դպրոցը գտնուում էր Ներսիսի շինած տներում, հին ուսումնարան կոչուած շէնքում: Սանդուխքների գլխի լայն տեղումը, բոլոր աշակերտաց ներկայութեամբ էին ոռւս ծառաները ոռզգի տալիս, իսկ չօքեցնել, մինչեւ երեկոյեան ժամն անձաշ թողնելը սովորական երեւոյթներ էին:

Բարեբաղդաբար՝ ես եւ Մկրտիչը ոռզգի չք կերանք, չք գիտեմ Կաթողիկոսի ահլից, թէ մեր առանձին արժանաւորութիւնիցն էր:

Առաջին պատճառն աւելի հաւանական էր՝ մանաւանդ Մկրտչի վերաբերութեամբ, նա շատ ծոյլ էր, չար ու խորամանկ, ուստի եւ շուտ շուտ քանաւոր յանդիմանութիւններ էր լսում: Ես ընդ-

հակառակն արիաջան էի եւ խոհեմ, դասերս հօ՛ միշտ գիտէի, ըստ որում, հայերէնի կարիք չունե՜ նալով՝ բոլոր ոյժս թափում էի առարկաների եւ ուսուցիչն լեզուի վերայ:

Ինչպէս ուսուցիչները, նոյնպէս եւ վերակա՜ ցուն ու տեսուչներն ինձանից գոհ էին:

Վարչութիւնն աւելի բարեհաճ էր լինում մեզ հետ՝ շաբաթ օրերը ճաշից յետոյ:

Լի օրերը ճաշերից յետոյ էլ դաս կար, 12-ին գնում էին ճաշելու, երկուսին վերադառնում, իսկ շաբաթ օրերը ճաշից յետոյ՝ ամենեքեան ազատ գնում էին իրանց տները, իսկ ես ու Մկրտիչը շտապում էինք վեհարան եւ վերադառնում երկու՜ շաբաթի առաւօտը՝ Կաթողիկոսի տնօրէնութեամբ:

Վարչութեան բարեհաճութեան պատճառը մեր այս արտաքոյ կարգի արտօնութիւնն էր:

Կաթողիկոսը մեզ երես էր տալիս եւ այդ գիտէր ամբողջ դպրոցական կազմակերպութիւնը:

Նոյն իսկ հոգաբարձութեան ամենից ներգործական անդամ Դաւիթ Խերողինեանցը, որ ամենքի վերայ միշտ բարկանում էր, մեզ հետ ժպիտն երեսին էր խօսում:

Երեք էին այն ժամանակ Հոգաբարձուք. Դաւիթ Խերողինեանց, Դաւիթ Թամամշեանց եւ Եագոր Մանդինեանց:

Թամամշեանցը նոյն տարին վախճանուեց, տեղն եկաւ Աղէքսանդր Թայիրեանցը:

Այն ժամանակն ընտրողական դրութիւն տեղի չէր ունենում, ինքը Ներսէս Կաթողիկոսն էր ցանկացած անձերին կարգում հոգաբարձու, նոցա՝ որոնց վրայ համարմունք ունէր:

Ամենքից մօտիկ հոգաբարձուն թէեւ Դաւիթ Խերողինեանցն էր, բայց երեւեց, որ Կաթողիկոսը շատ սիրում էր եւ Դաւիթ Թամամշեանցին:

Նորա մեռած երկու երեք օրը Կաթողիկոսը ինձ ու Մկրտչին իւր մօտ չընդունեց, այսինքն մենք, ըստ սովորականին, շաբաթ ճաշից յետոյ՝ եկանք վանքը եւ առանց սարկաւազներից, կամ շաթիրներից իրաւունք հարցնելու՝ վազեցինք ներս, սպասելով՝ որ Կաթողիկոսը կը հրամայի կանչել սարկաւազ Գրիգոր Բերոյեանցին եւ միրգ տալ մեզ:

Այդ անգամ մեր խօփը քարին առաւ, խոժուռագէմ ծերունին, առանց երեսներին նայելու, նշանացի հրամայեց դուրս գնալ. երկու ձեռքով ճակատը բռնած՝ յենուած էր սեղանին:

Դուրսը վեհարանականաց սեղանի վերայ մենք իմացանք, որ կաթողիկոսն եւ տխուր է եւ բարկացած:

Ահա թէ ինչո՞ւ:

Դաւիթ Թամամշեանը Վերայի Հանգստարանում իւր ծախքով եկեղեցի էր շինել եւ Մոսկուայից հրաւիրել մի ոմն տէր Յակոբի քահանայութեան, վճարելով տէրտէրին ամսական թոշակ:

Եկեղեցին ծածկուած էր. հաստատ չը գիտեմ, օժուած էր, թէ «պղծեալ տաճարի» կարգալով՝ հրամայուած էր ժամասացութիւն անել: Այսքանը ճիշդ է, որ ժամ ասում էին:

Յանկարծ մեռաւ Դաւիթ Թամամշեանն եւ իւր ազգականաց ցանկութեամբ՝ պիտի թաղուէր եկեղեցու մէջ:

Երեք օր շարունակ քաղաքի առաջաւոր մարգիկը փորձեցին առնել Վաթողիկոսի հաճութիւնը, չեղաւ:

Աւանդապահ Հայրապետն իսպառ մերժեց հակահայկական նորամուծութիւնը:

— Ես Դաւիթ աղային իմ հոգու պէս էի սիրում, ասում էր նա եկողներին, նրա արժէքը դուք իմ չափ չէք կարող գնահատիլ, բայց իմ եկեղեցին ամեն բանից բարձր է իմ համար, ես չեմ կամենալ, որ ապագան իմ սիրելի Դաւիթին կուռք շինի եւ պաշտի, մի օր էլ մարմինը կը հանեն, եւ իբրեւ սուրբ, երկրպագութիւն կը տան: Վերջապէս՝ ինչ կարիք կայ գէշն եկեղեցու մէջ թաղել: Առաւել լաւ է, թաղեցէք եկեղեցուց դուրս, ես ինքս անձամբ կը գամ գերեզմանատուն եւ հանդէսն աւելի փառաւոր կանեմ:

Թուի, թէ Վաթողիկոսը թաղման պատարագին՝ Քամոյենց եկեղեցում՝ քահանաների մէկից իմացել էր Թամամշեանցի ազգականների խարդախութիւնը, որ ժամից յետոյ, ըստ իւր խոստման,

չը յուզարկաւորեց հանգուցելոյն, մի եւ նոյն ժամանակը պատուիրեց պատարագիչ Վեհապետեան Աշտարակեցի Գէորգ արք եպիսկոպոսին, որ ուղեկցէ մինչեւ գերեզմանատուն եւ երբ կը գտնի, որ գերեզմանն եկեղեցումն է փորած, առնի ամբողջ հոգեւորականութիւնն եւ վերադառնայ:

Գէորգ եպիսկոպոսը ճանապարհի կիսին հաւաստիանալով որ Թամամշեանցն եկեղեցու մէջ է թաղուելու, խոհեմութիւն համարեց յետ գալու՝ առանց յայտնելու հոգեւորականութեանը Կաթողիկոսի հրամանը:

Այդպիսով Թամամշեանը թաղուեց հոգեւորականաց ձեռքով:

Թաղման երկրորդ օրը՝ Կաթողիկոսի հրամանաւ եկեղեցին փակուեցաւ, արգելուեց ժամերգութիւնը, մինչեւ որ Ներսէս Ե.-ի յաջորդ Մատթէոս Կաթողիկոսն իրաւունք տուեց ժամասելու:

ԺԳ.

Ճիշդ Իսկիթ Թամամշեանի նման դէպք պատահեցաւ իշխան Մովսէս Զաքարեան Արղուսթինսկի-Իաղստանը սասանեցնող գեներալի թաղմանը. չեմ յիշում միայն, Թամամշեանից յառաջ, թէ յետոյ էր Արղուսթեանի մահը:

Հաւանական է, որ յառաջ լինէր, ըստ որում,

որքան յիշում եմ, Վորոնցովի փոխարքայութեան
ժամանակն էր:

Արդութեանի մահը պատահեցաւ մեծի պա-
հոց մէջ, երբ ըստ ծիսի Հայաստանեայց սուրբ
եկեղեցւոյ, շաբաթ եւ կիրակէ միայն կը լինի
պատարագ՝ այն էլ՝ վարագոյրը ծածկուած:

Արդութեանի բարեկամներն եւ ամբողջ Թիֆ-
լիսի հայութեան պատուասիրութիւնը պահանջում
էին հանգուցեալի յուղարկաւորութեան շքեղու-
թիւնը: Թիֆլիսում լինելու էր միայն յուղարկա-
ւորութիւն, թաղումը կատարուելու էր Սանահնու
վանքում: Ստիպողական էր, ուրեմն, չուշացնել
մարմինը Թիֆլիսում:

Ամենայն խնդիրք եւ միջնորդութիւն՝ սկսեալ
վերջին հայից մինչեւ առաջինը՝ մնացին անհե-
տեանք. ամէն մի եկողի ներսէս Կաթողիկոսը
յանդիմանում էր եւ ճանապարհ դնում:

Եւ մերժեց նմանապէս փոխարքայի միջա-
մտութիւնը, խնդրելով՝ չը խառնուել հայ եկեղեցու
կրօնական նրբութիւնների մէջ:

— Միակ զիջումը, որ կանեմ, ասաց ներսէս
Ե. ճաշուայ ժամին վարագոյրն յետ քաշելը կը լինի,
իսկ շքեղութեան մասին միամտեցրեց ամենքին
Վեհապետեան Գէորգ արք Եպիսկոպոսի ամենա-
փառաւոր օրինակատարութեամբ:

Եւ արգարեւ, հանդիսադիր սրբազանը՝
պճնուած իւր թանկագին եպիսկոպոսական զգես-

տով եւ շքանշաններով՝ սքանչացրեց հազարաւոր հայազգի եւ օտարազգի մեծամեծներին, նրա վսեմ գէմքն ու նազաճեմ քայլուածքը, նրա հրեշտակային ձայնը ցանկալին տպաւորութիւն գործեցին յուզարկաւորող բազմութեան վրայ, նոյն իսկ Փոխարքան ապշած՝ ամենայն երկիւղածութեամբ աչքը յառած սրբազան Վեհապետեանի վերայ՝ զգացուած էր:

Հանդիսի փառաւորութիւնը կատարեալ եղաւ մեծագործ Հայրապետի խօսեցած դամբանականով. կէս ժամու չափ նա թուում էր Արղութեան իշխանի յաղթական սիրագործութիւնները եւ բոլոր ժամանակն ամենքի աչքից արտասուքը հոսում էր. իսկ ինքը Վեհափառ ատենախօսը լաց եղաւ վերջումը, երբ իբրեւ հայ էր կշռագատում Արղութեանին:

Հոգեհանգստից յետոյ՝ Կաթողիկոսն անձամբ ճանապարհ գրեց Արղութեանի մարմինը մինչեւ քաղաքի դուռը:

Ահա այսքան նախանձախնդիր էր Ներսէս Ե. Հայաստանեայց եկեղեցւոյ աւանդապահութեանը. իւր երկու սիրելիներից եւ ոչ մէկի համար չը խախտեց հայ կրօնական ծէսերը:

ԺԴ.

Երջանիկ էինք ես ու Մկրտիչը, շատ չըտեւեց, Ներսիսեան դպրոցում մի հիմնական յեղափոխութիւն տեղի ունեցաւ. փոխուեցին յիշեալ երկու տեսուչները՝ մնալով միայն ուսուցիչներ, իսկ տեսուչ կարգուեց Մոսկուայի համալսարանի նախկին ուսանող, երիտասարդ Պետրոս Սամուէլեան Շանշեանցը։

Շանշեանցի տեսչութեան երկրորդ շրջանն էր այս։ Մի անգամ նրա տեսչութիւնը շատ կարճատեւ է եղել, կարծեմ 1849 թուին։

Այս երկրորդ անգամը մեծ դժուարութեամբ համոզուել է Շանշեանցը յանձն առնուլ տեսչութիւնը, զիջանելով Կաթողիկոսի բարի ցանկութեանը։

Շանշեանցի տեսչութեամբ Ներսիսեան դպրոցը կարող է ընդ միշտ պարծենալ։

Թէպէտ այս անգամ դարձեալ Շանշեանցը շատ երկար չը մնաց Ներսիսեան դպրոցում, ընդամենը հինգ տարի կարելի է համարել նրա կանոնաւոր գործողութիւնը, բայց հէնց այս հինգ տարին է, որ մինչեւ այսօր էլ, ամենայն իրաւամբ, կոչուում է Ներսիսեան դպրոցի ոսկի դարը։

Ոսկի դար՝ ոչ այնքան ուսման եւ առարկաների վերաբերութեամբ, որովհետեւ ընդ ամէնը երկու պատրաստական եւ երեք հիմնական դասա-

րան էին, այլ այն լուսաւոր գաղափարներով եւ բարձր բարոյականութեամբ, որով փայլեցաւ Ներսիսեան դպրոցը:

Շանչեանցի ոտնամուտի առաջին իսկ օրը մինոր կերպարանափոխութիւն եղաւ դպրոցում, պատիժը վերացաւ, պաշտօնական յարաբերութիւնները տեղի տուին պարզ մտերմականին եւ ընտանեկանին. ուսուցիչները թողին իրանց բիրտ վարմունքն եւ բարոյապէս սկսան ազդեցութիւն գործել իրանց սաների վերայ, վերջուեցին պատերի վրայ կախուած բոլոր ազդարարութիւններն ու կանոնները, որոնք գուցէ կախուելու առաջին օրն աչքի անցրած լինէին մի քանիսից ու իսկոյն մոռացման տրուած:

Մինչեւ անգամ ուսուցչական մատեանների նշանակութիւնը կորածի պէս եղաւ. յառաջագիժմութեան թուանշաններն արհամարհուեցին եւ մատենի մէջ մ'նաց միայն նշանակելու աշակերտաց բացակայութիւնը:

Շանչեանցն ամէն մի դասարանում յայտնեց, որ իւր համար թուանշանները զօրութիւն չունին եւ թէ թուանշանների համար սովորող աշակերտը լաւ կանի, որ օր յառաջ դպրոցը թողնի. ինքը ցանկանում է, որ աշակերտն ուսման կարեւորութիւնը ճանաչելով դպրոց յաճախի:

Աշակերտներից աւելի գուցէ ուրախ եղան դպրոցական ծառաները. էն ինչ տանջանք էր, որ խեղճերը կրում էին ծեծուելու բերուած աշակերտ-

ներից, մինչեւ երեք հոգւով մէկին գետին կը տապալէին եւ ոտ ու գլուխը կը բռնէին, իրանց հոգիները դուրս կը գար. անձնապաշտպանութեան յարգելի սկզբունքով՝ պատժի ենթարկուողը շատ անգամ իր դահճի դունչ ու մռութն էր արիւնոտում եւ սիրտը հովացնում. եւ ի՛նչ փոյթ, թէ տասի փոխարէն քսան մահակ պէտք է ուտէր:

Կանոնաւորապէս որոշուած էր՝ շաբաթուայ մէջ զրօ ունեցողը շաբաթ ճաշից յետոյ նախ պէտքէ ձաղկուէր եւ ապա ծործրակը քերելով՝ տուն գնար. մի զրօյից աւելին ունեցողը ծեծից յետոյ մինչեւ երեկոյեան ժամն անհաց էր մնալու:

Շանշեանցի բոլոր կարգադրութիւններից առաւել՝ պատժի վերացումն աղմուկ բարձրացրեց. ուսուցիչների տրտունջը մեծացաւ, տեսչի երեսին ոչինչ չէին կարողանում ասել, իսկ Հոգաբարձուների ականջումն ամեն օր յեղյեղում էին:

Սկզբումը՝ հոգաբարձուք մեծ յոխորտանքներով պարծեցել էին բողոքարկուների առաջ՝ սանձել դպրոցի կարգերը խանգարող տեսչի կամայականութիւնը, բայց խեղճերը կիսաձանապարհին կանգ առան:

Կաթողիկոսը բացէ ի բաց արգելել էր հոգաբարձուներին խառնուել տեսչի ներքին կարգադրութեանց մէջ:

Այս լուրը մի կայծակի հարուած էր, որ իջաւ պատժելու սովոր ուսուցիչների գլխին:

Մեղադրուելու չէին ուսուցիչները, այնուհետեւ նրանց համար դժոխք մտնելն աւելի սիրելի էր, քան դասարանը, ընչէր չէին խաղում երես առած աշակերտները խեղճերի գլխին:

Ետ լաւ յիշում եմ ուսաց լեզուի ուսուցիչ հանգուցեալ Ա. Չ...կեանցի դէպքը՝ մի աչքով կոյր Բաղալեանց աշակերտի հետ:

Երբ վերջինս իւր անտանելի չարութիւններով եւ բարձրացրած աղմուկներով ուսուցչի կիրքը գազաթնակէտին հասցրեց, պ. Չ...կեանը տեղից վեր թռաւ, մօտ վազեց Բաղալեանցին, եւ ըստ իւր վաղեմնի սովորութեան, ականջից բարշ տալով՝ բերեց անկիւն եւ հրամայեց ծնկի վերայ չոքել:

Հնար կայ, Բաղալեանցն այն պտուղն է, ընկերներս մինչեւ անգամ վաղուցուան այրուածն էինք: Յանգուգն տղան արձանի նման կանգնել էր եւ աչքերը տնկել ուսուցչի երեսին:

Երբ ուսուցիչը շատ «չոքել, չոքել» կրկնելով՝ չը կարողացաւ իւր հրամանը կատարել տալ, սկսեց աջ ու ձախ մի քանի ասլոակ խփել. այդ էլ որ ազդեցութիւն չը գործեց, ըստ որում անպատկառ տղան զինուորի նման անշարժ մնացել էր, վարժապետը Բաղալեանցի մազերը բռնեց ու ցած քարշեց՝ հրամայելով անպատճառ չոքել:

Այդ ճգնաժամին՝ յանկարծ դուռը բացուեց եւ Շանշեանցը ներս մտաւ իւր սովորական հանդարտ քայլերով ու կանգնեց դասարանի կեդրո-

նում:

Ամենքս վերկացանք ու տեսչի նշանացի հրամանին համաձայն՝ տեղներս նստեցինք:

Խղճալի ուսուցիչը ոչինչ չիմացաւ, նա պարպած էր ստահակ աշակերտի հետ, իջեցրած հարուածների հետ թափում էր Բաղալեանի գլխին իւր նախկին գործ ածած յանդիմանական հայհոյանքները. «мерзкій, скверный, подлый, слѣпой, кривой, косою, шарлатанъ, безсовѣстный» եւ այլն՝ մի կարգ անգիր արած խօսքեր:

Անպիտան Բաղալեանցն այնքան չը չոքեց, մինչ ուսուցիչն արտասանեց բոլոր խօսքերն եւ ապա խօսոյն չոքեց, որից յետոյ 2... կեանը դարձաւ իւր տեղը գալու եւ մ'նաց սարսափած՝ տեսնելով տեսչին իւր առաջ սառնադէմ կանգնած:

— Петръ Самойловичъ! не могу, убейте не могу, գոչեց ողբաձայն 2... կեանը:

Առանց վարժապետին պատասխանելու՝ Շանշեանցը հրամայեց Բաղալեանցին հետեւել իրեն ու ինքը դուրս գնաց դասարանից:

Յաւակցութեան արժանի էր ուսուցչի վիճակը, շտապով ընկաւ աթոռի վերայ ու գլուխը բռնած՝ կորացաւ սեղանին եւ այլեւս չը բարձրացրեց գլուխը՝ մինչեւ զանգակը տալը. թէպէտ հինգ ըսուէից Բաղալեանցը վերադարձել, կանգնել էր առաջին եւ բարձրաձայն ներողութիւն էր խնդրում:

Խորին լռութիւնը տիրել էր դասարանում:

Վերջապէս Չ...կեանցը գզգզուած մազերով վեր կացաւ տեղից, ձեռքը Բաղալեանցի գլխին դրեց, սրտաբեկ խօսքերով ներեց նրան ու դուրս գնաց արտասուալից աչքերով:

Թէ ինչ խօսեցաւ, ինչպէս աղգեց Շանշեանցը Բաղալեանցի վրայ, մեզ յայտնի չէ, այսքանը միայն հաստատ է, որ դպրոցի ամենաչար աշակերտներից մինն այն օրից համեստութեան օրինակ համարուեց ամբողջ ուսումնարանի մէջ:

Իսկ խեղճ ուսուցիչ Չ...կեանցն անճաշ մնաց:

Այսպէս պատահեց, դասարանից դուրս գալուց յետոյ՝ Չ...կեան ուսուցիչը լսում է վերակացուից տեսչի պատուէրը՝ չը հեռանալ ուսումնարանից մինչեւ իւր վերադարձը:

Շանշեանցի կացարանը գտնուում էր դպրոցի հանդէպ, ճիշդ այնտեղ, որ այժմ Թիթեղնագործների խանութներն են: Երկիցս, երիցս, չորիցս Չ...կեանցն իմաց է տալիս տեսչին իւր սպասելը եւ միշտ միեւնոյն պատասխանն է ստանում.— Թող համբերէ, իսկոյն գալիս եմ:

Երեկոյեան զանգակները տալիս են եւ Շանշեանցի ծառան գալիս յայտնում է Չ...կեանին, որ այժմ կարող է տուն գնալ:

Բանից դուրս եկաւ, որ տեսուչը փոխանակ աշակերտի, ուսուցչին է պատժել:

Միւս օրը դպրոցում լուր տարածուեց, թէ տեսուչը հրամայել է Չ...կեանին դադարել դպրոց

յաճախելուց, մինչ ինքը չը գիտէ բարոյապէս ազգել իւր սաներին:

Չ...կեանցը ներողութիւն է խնդրել՝ չոքելով տեսչի առաջին եւ խոստանալով այսուհետեւ բարոյական դաստիարակութեամբ ազգել:

Դժուար էր սկզբումը, բայց կատարուեց. Շանշեանցի մուտ գործելուց մի ամիս չանցած՝ իրանք ուսուցիչները զարմանում էին այսքան արագ փոփոխութեան վերայ:

Համեմատաբար՝ ծուլութիւնը, անուշադրութիւնն ու չարութիւնը շատ ու շատ նուազել էր:

ԺԵ. Կ

Շանշեանցի դաստիարակչութեան մետօզը միանգամայն չէր համապատասխանում այն ժամանակուան ընդունուած սիստեմային:

Ի՞նչ թէ այն ժամանակուան՝—ներկայումս էլ լսողների համար միանգամայն անհաւատալի է թուում: Բանից դուրս է գալիս, որ նա մի ինքնուրոյն անհատ էր:

Նորա համար չը կային ծոյլ ու չար աշակերտներ, նրա համար շտապելը, ուսումը որոշ ժամանակի ներքոյ դնելը, դասարանափոխութեան կարգերը նշանակութիւն չունէին: Հերիք էր, որ անընդունակ աշակերտն օրական երկու բառ սովորէր, հերիք էր, եթէ ծոյլերը քիչ աշխատասի-

րութիւն ցոյց տային եւ նա այգպիսիներից իր յոյսը
չէր կտրում:

Իսկոյն ինքն էր ձեռք առնում այգպիսիներին
ուղղելը:

Չարերը հրաւիրուում էին իւր մօտ, մրգեղէն
էին ստանում եւ այն օրուանից փոխուում էին, կար-
ծես էլ նոյն տղան չը լինէր: Պատարաններում
շարունակ հրամայում էր ծոյլերին իւր ներկայու-
թեամբ դասի կանչել. ինքն էր հարցնում, եւ երբ
մի հատ քառ պատասխանում էին, գգուում,
գուրգուրում էր, գովում էր, խոստանում էր հե-
տեւեալ օրը դարձեալ գալ եւ նրանց դաս հարցնել,
եւ արդարեւ, գալիս էր ու դուրս կանչում դար-
ձեալ նրանց:

Եւ ի՛նչ, ուսուցիչն ու ամբողջ դասարանը
զարմանում էին:

Ամիսներով դաս չը գիտեցող տղան հիանալի
գիտէր իւր գասերը:

Յառաջագէմ աշակերտը նոյնպէս չէր մնում
առանց խրախուսանքի:

Հերիք էր, որ այգպիսիները մօտենային եւ
յայտնէին իրանց ցանկութիւնը վերին դասարանը
փոխուելու ու խոստանային այն դասարանի թողած
դասընթացը տանն առանձնապէս պատրաստել:
Շատերը նախապէս պատրաստում եւ այնպէս էին
դիմում:

Եթէ այգպիսիների համար ուսուցիչների կար-

Ծիբը նպաստաւոր էր լինում, նոյն բոպէին Շան-
շեանցը հրամայում էր գրքերը վերցնել եւ իրան
հետեւիլ. լինէր այս բանն ուսումնական տարուայ
առաջին, երկրորդ, թէ երրորդ քառորդին:

Այդ զիջողութեան շնորհիւ՝ ես եւ վերոյիշեալ
կոյր Բաղալեանցը մի տարուայ մէջ պատրաստա-
կանները մէջ տուինք եւ անցանք առաջին դասա-
րանը:

Վեց ամսից ես Բաղալեանցին թողի առաջի-
նումն եւ անցայ երկրորդը:

Մենք գիտէինք այս քայլի վտանգաւորութիւնը՝
Շանշեանցն օրին մէկը յանկաժ կանչում էր եւ լոք
տուած դասարանի գասընթացից հարցաքննում:

Այդ պատճառաւ՝ մինչեւ մեր անձը չը պատ-
րաստէինք, չէինք յանդգնում դիմումն անել,
թէպէտ այն եւս գիտէինք, որ եթէ տկարանայինք
անգամ պատասխանների մէջ, կրկին բարկանալու
չէր: Սյսքանը կասէր, թէ գնացէք պատրաստեցէք,
ուրիշ անգամ կը հարցնեմ:

Լաւ էր այդպիսի աշակերտի համար գետինը
պատառուէր ու իրան կալ տար, քան թէ Շան-
շեանցի սառը խօսքը:

Մարդ ապշում է այն մարդի արարքը յիշե-
լով. ոչ թէ ուսուցիչը, ոչ թէ տեսուչը, ծնող հայրը
չի կարող իւր հարազատի կողմից այն աստիճան
համակրանք եւ անկեղծ սէր վայելել. — անկեղծ
սէր, ասում եմ, համեմած պատշաճաւայել

պատկառանքով:

Խաղալիս, վազելիս, դաս սովորելիս, մեր ուրախութիւնը կատարեալ էր, երբ յանկարծ Շանշեանցը մէջներս կը բուսնէր, կը մասնակցէր մեր պարապմունքին անոյշ ժպիտն երեսին եւ իւր ներդաշնակ ձայնով, Թիֆլիսի բարբառով կը խօսակցէր մեզ հետ ու կը խրատէր, կամ նոր խաղեր կը սովորցնէր:

Նա մեծերի հետ մեծ էր, փոքրերի հետ փոքր, ամենքին իւրեանց հասկացողութեան եւ զարգացման աստիճանին համապատասխան ոգի էր ներշնչում:

Իրանք՝ նախկին տեսուչների ժամանակից մնացած աշակերտները խոստովանում էին, որ այժմ միայն նրանք զգում են իւրեանց կոչումն ու պարտականութիւնը դէպի աւետարանի ճշմարտութիւնները, դէպի ազգայնութիւնն եւ դէպի ընդհանուր մարդկութիւնը:

Նշանաւորն այս է, որ տեսչի հետ փոխուեցան եւ վարժապետներն իրանք, այսինքն՝ ոչ թէ հները գնացին ու նորերն եկան, այլ նոյն հներն իրանք իրանց համոզմունքով վերանորոգուեցին:

Մինչեւ Շանշեանցի գալն ազգայնութեան գիտակցութիւնը շատ թոյլ է եղել, ազգային ուսումին գերակշռութիւն տալու նշոյլն անգամ գոյութիւն չի ունեցել, զանազան տիղերի օտարախօս հայերի վերայ մտածելու կարիքը ոչ ոքի մտքով չի

անցել:

Չեմ մեղանչիլ, գուցէ մեծահանճար Ներսէս Կաթողիկոսը վաղուցուան ունեցած իւր դիւաւորութիւնը զուգագրիպութեամբ միայն Շանշեանցի օրումն է իրագործել:

Մտաւ Շանշեանցը Ներսիսեան դպրոց, եւ ահա Կաթողիկոսի հրաւիրանօք ուտիախօս ու չերբեզախօս հայերից ուղարկուեցան մանուկներ:

Հինգ չերբեզահայ, նոյնքան եւ ուտիահայ տղայք իրանց լեռնական խնցրեկ լեզուով սկըզբումը մեր ամենքիս ծիծաղն էին շարժում, վերջերումը մեր ընկերական սէրն էին վայելում:

Չերբեզահայերից երկուսը կոչուեցան Էջմիածնից, Վարդանին ու Գաւթին Կաթողիկոսը երկու տարի յառաջ էր դեռ Էջմիածին տարել:

Ժ. 2.

Եթէ, ըստ ամենայն հաւանականութեան, օտարախօս հայերի, նմանապէս եւ հոգեւորականութեան կատարելութեան հոգսը մեծ Ներսէսի ուղեղի ծնունդ էր, այդ դէպքերում եւս Շանշեանցի մասնակցութիւնը մեծ էր:

Կաթողիկոսի հրամանով Ներսիսեան դպրոցի ներքնայարկում մի մեծ սենեակ յատկացրուեց Ղազախի, Շամշադնի, Գանձակի, Լոռու, Վրաստանի եւ ուրիշ տեղերի հասակաւոր տիրացուների

Համար:

Հերարձակ, մեծամօրուա, ընտանիքի տէր տիրացուքը հաւաքուեցին դպրոց եւ սկսան յաճախել կրօնի, երգեցողութեան եւ հայոց լեզուի դասերին:

Խորթ էր աչքի համար տեսնել մատաղ մանուկների շարքում առանձին նստարանների վերայ գիրքը ձեռքին բազմած, կնոջ ու որդոց տէր մարդկանց, խորթ էր, բայց սիրելի էր:

Ուրիշ առարկաների ժամանակ՝ այդ մարդկանցը կը տեսնէիր իրենց սենեկում՝ իւրաքանչիւրը մի վերին դասարանի աշակերտից դաս առնելիս:

Դեռ ոչ մի մազ չէր բուսել երեսիս, երբ ես ուսուցանում էի մազով—միրքով Եագորին. խեղճն ինչ դժուարութեամբ կիսահայերէնով, կիսավրացերէնով կարողանում էր թարգմանել աւետարանը:

Այսօր նա Թելաւի գործակալն ու աւագ քահանան է եւ միշտ յիշում է իւր պատլիկ ուսուցչին:

Ղազախից եկածների թիւը կրկնակի էր: Այն ժամանակուայ հոգեւոր գործոց վերատեսուչ Ս. աղան իւր վիճակի տիրացուներից տարեկան մէկին, երկուսին տաւարի պէս քշում էր դէպի Ներսիսեան դպրոց:

Ի դէպ՝ մի քանի խօսք Ս. աղայի մասին:

Մանկական վաղեմնի յիշողութիւնիցս եւ մեծերի պատմելուց գիտեմ, որ մինչեւ Ներսէսի

Կաթողիկոսանալը բոլոր հոգեւոր գործերը կատարում էին վարդապետները:

Եկաւ Ներսէսն եւ ամենայն տեղ վանքերի վերատեսչութիւն, գաւառների գործակալութիւն, վանական կալուածների հսկողութիւն յանձնեց աշխարհականներին:

Վերջիններիցս մէկն էր Ղազախեցի Ս. աղան:

Ես չը գիտեմ՝ որքան օգտաւէտ էր նա իւր պաշտօնի մէջ եւ ի՞նչ աստիճան հաւատարիմ էջմիածնին, կամ իւր գրպանին, բայց ինչքան յիշում եմ, այն մարդին ոչ ոք չէր սիրում, ամենայն զզուանքով էին յիշում նրա անունը:

Մի անգամ անց կացայ ես Ղազախովը: Ինչպէս Կաթողիկոսի որդեգիր, իջեւանում էի տէրտէրների տներումը. ընդհանրապէս բոլոր տեղերում՝ թէ քահանայք եւ թէ ժողովուրդը հայհոյում էին Ս. աղային:

Խեղճերը հետն էլ աղաչում էին, որ բերանիցս բաց չը թողնեմ իրանց անունը:

Լսածներիցս դատելով, չեմ կարծում, թէ որ եւ է մի առաջնորդ Ս. աղայի չափ հնազանդութիւն պահանջէր իւր քահանայից:

Ասում են՝ ժամերով թշուառ քահանաներին փիլոնաւորուած՝ դուրսը սարսափելի ցրտումը, կամ կիզիչ արեւի տակ սպասել է տուել եւ չէ ընդունել:

Մի կատարեալ բռնակալ խանի պէս է վերա-

բերուել իւր տեսչութեան ներքոյ եղած հոգեւորականների հետ:

Լինելով գծուծ, ժլատ եւ շահասէր, լայն ասպարէզ է տուել սիմոնականութեանը, տէրտէրների փիլոնն առնել, քահանայագործութիւնից զըրկել, տեղէց—տեղ անել, չհամներ թոյլատրել՝ սովորական երեւոյթներ են եղել Ս. աղայի օրով:

Այդ ամենայն զեղծումներն երկար ժամանակ անպատիժ են մնացել:

Մեղաւոր չէր ներսէս Կաթողիկոսը, Ս. աղայիցոյց տուած արդիւնքը՝ նախկին վարդապետների հետ համեմատած՝ կրկնապատիկ է եղել, իսկ անբաւականութիւն եւ գանգատ ոչ ոքից չի ներկայացուել: Ո՞վ կը համարձակուէր Ս. աղայի ստուերի դէմ անգամ տրտունջ յայտնելու, բոլորեքեան հաւատացած են եղել, որ այնպիսին գլխից պէտքէ ձեռք բաշէր:

Շատ ուշ հասու եղաւ ներսէս Կաթողիկոսը Ս. աղայի զեղծումներին եւ անմիջապէս արձակեց ու անիծեց:

Ասում են՝ Կաթողիկոսի անէծքը բռնել է. պատմում են, որ Կաթողիկոսի անիծելուց յետոյ՝ Ս. աղան կուրացել է: Թէ որքան իրաւ է, չը գիտեմ. լսողանց եմ ասում:

Ներսիսից կարգուած հոգեւոր գործերի վերատեսուչ աշխարհականներից աչքի ընկնողներն էին. Աղէքսանդրապօլում՝ Սիրեկան աղայ Գօ-

բոյեանցը, Նոր-Բայազիդում՝ Բարսեղ աղայ Արծրունին, Տաթեւի վանքում՝ Գալուստ Շերմազանեանցը, Աշտարակում՝ Սիմոն Շաժումեանցն եւ այլք:

Թէ ի՞նչ արգիւնք են տուել վերոգրեալները՝ կամ որքան անյարմար են եղել, չը գիտեմ, բայց եւ ոչ մէկը Ս. աղայի չափ բռնակալ ու կաշառակեր չէ եղել:

ԺԷ.

Կճուճը գլորուել էր ու խուփը գտել, շատ լաւ էին հանդիպել միմեանց Կաթողիկոսն ու Շանշեանցը, շաբաթի մէջ ամենաքիչն երեք անգամ ճաշերին գտնուում էր վերջինս Կաթողիկոսի մօտ:

Ընդհանրապէս՝ Կաթողիկոսը ճաշում էր ժամը 12-ին: Թնդանօղն արձակուեց թէ չէ, էլ շաթիրների իմաց տալուն չէր սպասիլ, իսկոյն դուրս կը գար սեղանատուն, ուր պատրաստ սպասում էր Ռուսաց «Սիօնի» մայր եկեղեցու վրացի Գաբրիէլ հայախօս աւագ քահանան:

Չը գիտեմ՝ որ ժամանակից եւ ի՞նչ առիթով էր մնամ (հայր) Գաբրիէլը մտերմացել Ներսէս Կաթողիկոսին, բայց որ ամէն Աստծու օր, սակաւ բացառութեամբ՝ ճաշերին Կաթողիկոսի մօտ էր լինում:

Ինչպէս երեւում էր, վերջերումը ձանձրալի

էր դարձել հայր Գաբրիէլի ներկայութիւնը, բայց նրա պնակը դրուած էր միշտ:

Պատահում էր, որ Շանշեանցն ուշանում էր, այն ժամանակը Կաթողիկոսը ողջոյն էր տալիս վրացի քահանային եւ դարձեալ մտնում իւր սենեակն՝ ասելով. տէրտէր, էս Պետրէն (Շանշեանցը) ուզում է մեզ քաղցած պահել: Մի օր պէտքէ նրան պատժենք. շուտով ճաշենք, վերջացնենք, որ գայ՝ ասենք հիմի առանց մեզ հաց կեր: Բայց ոչ, տէրտէր, Պետրէն էն մարդը չի, որ պատժենք, շատ կան թէեւ ձանձրալի ճաշընկերներ, բայց Պետրէի հետ կերած ճաշն ախորժանօք է լինում:

— Այո՛, Վիհափան, Պետրէն յաւ նընգիր (ընկեր) է, իս շատ իմ սիրում նրան, ժպտալով հաստատում էր կանդելլակին (աւագ քահանան):

Կաթողիկոսի խօսքերն անկեղծ էին. մի օր մինչեւ անգամ գործով ցոյց տուեց:

Ամէն զատկի ու ջրօրհնէքի նաւակատիկ երեկոներին՝ ներսիսեան դպրոցի որդեգիրներս թաթախում անում էինք հոգաբարձու Խերողինեանցի տանը. Շանշեանցն անպատճառ մեզ հետ էր լինում:

Մի անգամ՝ սեղանի կիսին՝ յանկարծ դուռը բացուում է եւ ներս է մտնում Կաթողիկոսը:

Ամենեքեան շփոթում են, ոտքի են կանգնում, բայց Կաթողիկոսը ձեռքով նշանացի է անում, որ հանգարտուեն եւ իւր քայլերն ուղղում է

դէպի Շանշեանցն՝ ասելով:

— Թէպէտ ես արդէն ընթրել եմ, բայց ախորժակով չեմ կերել. առանց Պետրէի ճաշը համեղ չէ, ուզում եմ ես էլ, Պետրէ, այս երեկոյ քո եւ աշակերտներդ հետ միասին ուրախ ճրագալոյց անել:

— Ի՞նչ լաւ կուէր, Վիհափառ, աջը համբուրելով ասաց Խերողինեանցը, մէ քիչ շուտ գայիք, կոյսիրն եկան, «Ղամբարափայլ» ասին ու գնացին:

— Վնաս չունի, մեր երեխայքը (ցոյթ տալով մեզ) ասաց Կաթողիկոսը, կոյսերից պակաս չեն երգիլ:

Կաթողիկոսն իրաւ էր ասում, ամէն Զրօրհնեաց ճրագալոյցի գիշերն ես լսում էի Խերողինեանցի տանը կոյսերի «Ղամբարափայլ» երգը, բայց եւ ոչ մի անգամ դիւր չէր գալիս ինձ, խիստ նեղանում էի իմ մէջ, որ իմ սովորած «Այսօր տօնէն» չեն երգում: Ափսոսում էի Խերողինովի տուած 25-ական մանէթներին:

Կ

ԺԸ.

Կաթողիկոսի անմիջական սեղանակիցներն էին բացի կանդելլակից, Շանշեանցից եւ Գէորգ Վեհապետեան արք եպիսկոպոսից (իհարկէ Թիֆլիսում եղած ժամանակ՝) նոյնպէս Կոնստանտնուպոլիսի երկու անդամները՝ Սահառունի տէր Սահակ եւ Սայաթնեան տէր Մովսէս աւագ քահանայքը, երբեմնա-

պէս գալիս էր եւ Վանքի տէր Մկրտիչը, որ նոյնպէս անդամ էր:

Ընդհանրապէս՝ ներսէս Կաթողիկոսը սիրում էր ընկերակցութեամբ ճաշել, մարդ սակաւ եղած ժամանակ՝ կանչել էր տալիս Կոնստնտնոյի ատենագալիք ներսէս Եագօրիչին:

Սիրում էր մանաւանդ ճաշել եւ գաւառացի հայերի հետ, որոնք յաճախ էին գտնուում մօտը:

Երբեմնապէս ուղարկում էր փողոց եւ որոնել էր տալիս աշտարակեցիներ, կամ եթէ չը կան, գոնէ Օշականցիներ եւ Վաղարշապատցիներ եւ իւր հետ ճաշի նստացնում:

Այդպիսի օրերը՝ Կաթողիկոսը մի տեսակ ուրախ տրամադրութեամբ էր ճաշում, առաւել աշտարակեցիների ներկայութեամբ, որոնց հետ խօսում էր Աշտարակի նիստ ու կացի, իւր ժամանակակիցների, տների, այգիների, ձորերի, պտուղների, մեծերի, փոքրերի եւ ամէն նշանաւոր եւ աննշան բաների մասին:

Մի անգամ, չեմ մոռանում, ճաշի պահեց Տաթեւացի Օրբելեան Մանուչար Բէգին:

Խեղճը չէր ուզում մնալ, կերելի ամաչում էր: — Եթէ դու չես մնալ, Մանուչար Բէգ, ասաց Կաթողիկոսը, ինձ կը զրկես մի հաճոյքից. վաղուց է զգուել եմ դանակ-չանգալից, ուզում եմ այսօր քեզ հետ միասին մեր հին պապական սովորութեամբ՝ ձեռներով, առանց դանակ-չանգալի հաց

ուտել:

— Այդ մատաղ, դէ հէնց ես էլ դրա համար չէի մնում, պատասխանեց Սանուչար Բէգը, միտք էի անում, թէ ես ինչպէս ճաշեմ դանակ-չանգալով, որ ծաղրի տեղ չը դառնամ, հիմի որ լսեցի, թէ առանց դանակ-չանգալի պիտի ճաշենք, դուրս էլ անես՝ գնացողը չեմ:

Բացի սովորական հիւրերից, Կաթողիկոսն երկու շաբաթը մի անգամ մեծ ճաշկերոյթներ էր տալիս հայազգի եւ օտարազգի մեծամեծներին, տարին մի երկու անգամ Փոխարքան էր հրաւիրուում:

Օր չըլինէր, որ Կաթողիկոսին մեծամեծ իշխաններ չայցելէին, յաճախում էին նմանապէս եւ իշխանուհիք ու ազնուական օրիորդներ:

Նոցա գալուստը լսելուն պէս, Վեհը վեղարը գլխին էր դնում եւ արագ արագ ընդառաջ վազում մինչեւ դուռը, համբուրուում էր տիկնանց եւ օրիորդների հետ եւ թեւանցուկ արած բերում, թեւանցուկ էլ ճանապարհ էր դնում:

Իշխանուհի Վօրոնցոյվան, Փոխարքայի կինը՝ մանաւանդ՝ շաբաթը մի երկու անգամ գալիս էր:

Վօրոնցոյի կինն երբեմնապէս այցելում էր եւ Կաթողիկոսի սպասաւոր տիրացու Գրիգոր Բէրոյեանցին, որը թէպէտ սոսկ աշխարհական էր ֆարաջէն հագին, բայց արքեպիսկոպոսից աւելի նշանակութիւն ունէր եւ յարգանք էր վայելում:

Մի պատուական, ազնուասիրտ, քաղցրաբարոյ, հաճոյախօս, գեղեցիկ ու բարձրահասակ զարգացած երիտասարդ էր Բէրոյեանցը:

Անունն, իբրեւ թէ, Կաթողիկոսի սպասաւորն էր, բայց տանն եւ դուրսն ամենքի մօտ աչքի ընկնողն ու իրաւունքի տէրը, որպէս եւ բացարձակ հրամանատարը նա էր:

Ունէր իւր առանձին ընդունարանն, աւելի շքեղ կահաւորուած, քան թէ Կաթողիկոսինը: Կաթողիկոսին այցելողներէց շատերը վեհարանից իջնում էին երկրորդ պատշգամբն եւ այցելում Բէրոյեանցին:

Նրա սենեակները գտնուում էին վեհարանից դէպի արեւմտեան կողմը, գետափին, ուր այժմ Լօռիս-Մելիքեանի եւ այլոց մահարձաններն են:

Տիկին Վօրոնցուլան մի ժամով, կէս ժամով մնում էր Բէրոյեանցի մօտ եւ ապա թեւանցուկ արած, նստացնում իւր կառքն ու տանում պալատ:

Քանի Բէրոյեանցը Թիֆլիզումն էր, միակ ինքն էր ընդհանուր կարգադրիչը, նրա գնալուց յետոյ՝ ոչ ոք նրա տեղը չը բռնեց:

Շատ խրատեց, շատ ստիպեց Կաթողիկոսը Բէրոյեանցին չը հանել Փարաջէն, վարդապետ դառնալ եւ իւր մօտ մնալ, անհնար եղաւ:

Վերջը ստիպուեց 1500 մանէթ փող եւ Յովհաննէս Կաթողիկոսի կառքն ընծայել նրան եւ ցաւած սրտով ճանապարհ դնել դէպի Ռուսաստան:

Խեղճի վիճակն այնտեղ անաջող անցաւ. Գիշ-
նեւուամն ամուսնացաւ ու դարձաւ Կոնսիստորիայի
ատենադպիր, ուր կարծեմ, ամուսինը կորցնելուց
յետոյ՝ խեղճութեան մէջ մեռաւ:

Բացի Բէրոյեանցից՝ Կաթողիկոսի մօտ էին
իբրեւ սպասաւորներ եւ գրագիրներ՝ Բաղդասար,
Գրիգոր (Ալխազեան), Եսայի եւ Գէորգ աւագ
սարկաւազները:

Վերջին տարին Ալխազեան Գրիգորն էր իշ-
խում, թէ եւ ոչ Բէրոյեանցի չափ: Սրանից մի
քանի ժամանակ առաջ՝ Բաղդասար սարկաւազն էր,
որին Կաթողիկոսը տարաւ Էջմիածին եւ այլեւս
յետ չը բերեց: Բաղդասարը դարձաւ Քանիէլ
եպիսկոպոս եւ եղաւ Շամախու Վիճակաւոր, ուր
եւ մեռաւ:

ԺԹ.

Չարմանալի մարդ էր Ներսէս Կաթողիկոսը,
նրա աչքում մեծ, փոքր, հարուստ, աղքատ, իշխան,
ռամիկ, հասակաւոր, մանուկ՝ ամենեքեան միապէս
հաւասարաչափ արժէք ունէին:

Յանկարծ գալիս է մի բարձրաստիճան անձն,
այն ժամանակը՝ երբ մօտը մի գեղջուկ՝ տրեխներով
նստած՝ քաղցր զրոյցի մէջ է: Չէր թոյլ տալիս
Կաթողիկոսն իւր նախկին այցելուին հեռանալ, նրա
ներկայութեամբ կընդունէր մեծաւորին եւ խօսակ-

ցութիւնն այնպէս կընդհանրացնէր, որ գիւղացին կարողանայ մասնակցել:

Պատահել է, որ միաժամանակ սեղանակցել են նրան գիւղացին ու մեծաւորը:

Եւ ո՛վ չունէր նրա մօտ ընդունելութիւն, մանաւանդ՝ որոնք երբ եւ իցէ իրեն մի ծառայութիւն արել են, երբէք չէր մոռանում եւ հատուցանում էր:

Նոյն այդ սկզբունքով պահում էր մօտը Աշտարակից ոչ հեռու գտնուած «Պոտի» գիւղացի, պարսիկ Սէլիմ-խան-Սուլթանի տղայ Աբբասին:

Ամէն հնարք գործ դրեց Ներսէսը, որ Աբբասին ուսում տայ, բայց նա իւր անընդունակութեամբն ինչպէս սկսեց, այնպէս էլ վերջացրեց:

Աբբասին մի ժամանակ Կաթողիկոսն Էջմիածին էր պահում վեհարանում, յետոյ հետը բերեց Թիֆլիս եւ տուեց արքունի գիմնազիան, որտեղից իմ եւ Մկրտչի նման ամէն շաբաթ օրերը ճաշին արձակուում էր եւ երկուշաբաթի առաւօտ գնում, բայց բոլորն իզուր անցաւ:

Սէլիմ-խանը Ներսէսի նախածանօթն էր եւ Ռուս-Պարսկական պատերազմին՝ արշաւանքների ժամանակ՝ ծառայել էր Արհուն իբրեւ համբաւաբեր, կամ լրտես, որին ի վարձատրութիւն՝ պրապօրշչիկի աստիճան էր բերել տուել:

Այս Սէլիմ-խանը մասնակցում էր եւ 50-ական թուականների Ռուս-Տաճկական պատերազմին

Բէհրուդեանի զօրավարութեան ներքոյ:

Այլքսանդրոպօլի մօտ Սէլիմ խանը դաւաճանել էր մի քանի իւր նման պարսիկ սպաների հետ, կահեցել էին իրանց վաշտերով անցնել Տաճկաց կողմը՝ ջարդելով ռուսական ղրազուններին:

Սէլիմ խանի ընկերները յաջողեցրել են գլխներն ազատել Տաճկաց բանակում: Իսկ Սէլիմ խանը լաւ է համարել Թիֆլիս փախչել, ուր ներսէս Կաթողիկոսն էր եւ ապաստանել նրա հովանու ներքեւ:

Մի օր՝ երբ Սէլիմ խանը նստած Կաթողիկոսի մօտ խօսում էր, յայտնեցին, որ Բէհրուդեանը եկել է այցելութիւն: Այդ ժամանակը փոխարքան էր Մուրաւեյը, որ Կովկաս գալուն պէս՝ փոխադրեց Բէհրուդեանին իբրեւ ընդհանուր հրամանատար:

Սէլիմ խանը դողաց, գունատուեց եւ մնաց աթոռի վերայ:

— Քաջացիր, ասաց Կաթողիկոսը, արի եղիր:

— Ինձ այսօր իսկ կախել կը տայ, կակազեց Սէլիմ խանը:

— Մազլիգ չի կարող մերձենալ, հետս եկ եւ կանգնիր միւս սենեկի անկիւնում:

Կաթողիկոսը կանգնացրեց խանին ընդունարանի անկիւնում եւ դիմաւորեց պատշգամբում Բէհրուդեանին ու թեւանցուկ ներս բերեց, անց կացրեց ընդունարանով եւ տարաւ իւր պարապելու սենեակը, ուր սովորաբար ընդունում էր հիւրերին:

Կէս ժամի չափ տեւեց տեսակցութիւնը: Օրը կիրակի էր, ես ու Մկրտիչը Ալիազեան սարկաւազի հետ կանգնել էինք ընդունարանի միւս անկիւնում:

Մէկէլ գուրս է գալիս Կաթողիկոսը Բէհբուզեանի ձեռքը բռնած, կանգնում սենեկի մէջ տեղումը եւ մատը մեկնելով դէպի Սէլիմ խանը, այս խօսքերն է ասում իշխանին. ճանաչում ես այս մարդին:

— Վահ, շուն Սէլիմը էստի, աշխարքը տակն ու վրայ իմ արի՛ սրան պտուտիլ տալով. օօօ . . . ատամները կրճտեց Բէհբութեանն եւ յարձակուեց դէպի Սէլիմ խանը:

Խանի ոտքերը կասեցան եւ տեղն ու տեղը վայր ընկաւ անկիւնում:

— Կէս ժամից կախաղանից քարշ կը գաս, անպիտան շուն ծղրաց թիֆլիսեցու պարսկերէնով Բեհբուզեանը եւ ուզում էր պատառ պատառ անել իւր ձեռքով, եթէ Կաթողիկոսը յետ չը քաշէր նրան:

— Թո՛ւղ, Հոգիւուր Տէր, դուն չիս գիգի սա փվ է, սրա ձեռնեմէն մէ պօլկ դրագունն երկուսհաթում վունչչացաւ:

— Կաց, ո՛ր ես գնում, ճչաց իւր սուր ձայնով Ներսէս Ե. եւ կանգնեց Բէհբուզեանի եւ նրա զոհի մէջ տեղն ու աչքերը կուչ ածած՝ իւր մագնիսական հայեացքը ձգեց իշխանի երեսին:

Ներսիսի այդ հայեացքի առաջ ոչ մի ազամորդի չէր գիմանալ, ամենամեծ կամքի տէր մարդն ընկճուում էր. այն հայեացք չէր, այն մի կայծակի շանթ էր, որ շեշտում էր Ներսիսի հակառակորդների սրտումը. հնար չը կար այդպիսի ժամանակում Ներսիսի երեսին նայել, ամէն ոք ստիպուած էր վնասւմ աչքերը գետինը ձգել:

Բէհբուդեանը մխուած մնաց տեղը. այն առիւծ հրամանատարը, որի առաջին հարիւրաւոր զօրապետներ էին խոնարհում, միանգամայն դարձաւ մի տկար արարած:

Նա գլուխը խոնարհեցրեց եւ նուազ ձայնով ասաց:

— Հոգիւոր տէր, դուն մի դաւաճան իս պահում տանդ: (Իաւաճան բառը ռուսերէն ասաց. ИЗМѢНИКЪ):

— Ո՛չ, սխալուում ես, Բարսեղ, պատասխանեց Կաթողիկոսը, սա այնքան դաւաճան է, որքան ես եւ դու:

— Ախար սա մէ պօլկ դրագուն կոտորիլ տուից:

— Ախար սա մի աշխարհք Ռուսին տուեց, դու մոռացել ես՝ սրա շնորհիւ Ռուսը հիմի տիրապետում է Երեւանի նահանգին, սա էր իմ լրտեսը, սրա ձեռքով եմ գործել ես Երեւանի առման ժամանակ, սա դաւաճանեց իւր ազգին եւ գործիք դարձաւ մեզ, գլուխը յետ դրեց, արիւնն աչքի տակ առաւ եւ մեզ Պարսից բանակից կարեւոր

տեղեկութիւններ հաղորդեց. ի՞նչ ստացաւ բացի իւր ուսերի պրապօրշէիկութեան էպոլետներէց, սա էս օր քաղցած զկռտում է. ի՞նչ կօզնեն փայլուն ջները, եթէ փորդ կուշտ չէ: Եղ պարգեւներդ, ես հասկանում եմ, քեզ համար նշանակութիւն ունին, որ կուրծքդ լցրել ես ու եկել ինձ ցոյց տալու, ըստ որում հաց ունիս ու տելու:

Բէհբուդեանն այդ ժամանակ փայլում էր իւր բոլոր շքանշաններով, որոց պսակն էին Անդրէաս Նախակոչի երկնագոյն ժապաւէնը եւ պարանոցից՝ կախած՝ ձեռքի մեծութեամբ՝ սուրբ Գէորգի երկրորդ աստիճանի սպիտակ խաչը:

— Չէ, չէ, սիրելի Բարսեղ, դու իրաւունք չունիս մի տգէտ թուրքի դատապարտելու, ես եւ դու սրանից աւելի արժանի ենք քննադատութեան, լաւն այն է, լռութեան տանք, ապագան մեր երկուսի վրայ էլ դատաստան կը կատարի, առաւել լաւ է՝ հրամայես Սէլիմ խանին վերկենալ, մեղք է, ծեր մարդ է, թող գայ ձեռքդ համբուրի եւ դու ներիր:

— Հոգիւտը տէր, սա . . .

— Հերիք է, հասկացանք, հրամայի՝ թող վեր կենայ:

— Ախար իս սրա գլուխը գնահատիլ իմ:

— Շատ էլ լաւ ես արել, սրա գլուխը Ռուսաց տէրութեան համար, շատ թանգ արժէ:

— Ասումիս ու ի՞նչ անիմ, ուսերը վեր քաշեց

իշխան Բէհբուդեանն եւ յետ նայելով դէպի մեզ, կասկածական աչք ձգեց ու ասաց. էս էրէ-խէքը

— Երեխայքը մերն են, օտար մարդ չըկայ, միամիտ կաց, ապահովացրեց Կաթողիկոսը:

— Չորէ չոր մօտացիր, Խալիֆի ոտը համբուրիր, գլուխդ սրան բաշխեցիր, գլուխդ գետինը մտնի՛, հրամայեց Բէհբուդեանը:

— Ոչ, թող վեր կենայ եւ քո ձեռքը համբուրի, ասաց Կաթողիկոսը, քո դէմ է մեղանչել եւ ոչ իմ:

Կաթողիկոսը դարձաւ եւ պարսկերէն ասաց Սէլիմ-խանին, վեր կաց, իշխանի ձեռքը համբուրի՛ր:

— Ոչ, չոր է չոր արի Խալիֆի ոտքը լիզիր, դարձեալ կրկնեց Բէհբուդեանը:

Խանն երկար չսպասեց, ծնկաչոր մօտեցաւ նախ Բէհբուդեանի ոտքը համբուրեց եւ յետոյ ուզում էր Կաթողիկոսինը պաչել:

Ներսէսը կռնիցը բռնեց եւ վեր կացրեց:

— Ի՛նչ ուզենաս, Հոգիւտը տէ՛ր, որ չանխս, ասաց Բէհբուդեանը քայլերն ուղղելով դէպի դուրս:

— Ոչ, Բարսե՛ղ, ոչ, այդ բանումն էլ սխալուում ես, ուղեցայ եւ չը կարողացայ կատարել, դու այդ շատ լաւ գիտես: Ե՛հ, ինչ եւ իցէ, այդ թողնենք, Սէլիմ-խանի պատճառաւ ես այսօր քեզ հետ հաշտուում եմ:

Կաթողիկոսը կռուած էր Բէհբուդեանի հետ:

Կաթողիկոսը տարաւ Բէհբուդեանին մինչեւ պատշգամբի գլուխն եւ վերադարձաւ:

Ի.

Ես արդէն ստորին դասարաններից գրաւել էի իշխանաւորներիս ուշադրութիւնը, բայց քանի բարձրացայ, այնքան առաւել աչքի ընկայ:

Համարուում էի դպրոցի լաւ աշակերտներից մինը, բայց ոչ առաջինը:

— Առաջին աշակերտն եւ դպրոցի ծաղիկն ու ընդհանուրի սիրելին էր Գարեգին Մուրատեանցը, այսօր Մելքիսեդեկ եպիսկոպոս:

— Ես Գարեգնի աշակերտութեան առաջին տարիներից տեղեկութիւն չունէի, ես ընկերացայ նրան վերին կոչուած երրորդ դասարանում, բայց որքան լսել եմ ընկերներիցս, Գարեգինը դպրոց մտած օրից՝ ընդհանուրի սէրն է վայելել:

Ով էր, որ չէր սիրում նրան, ամենքի բերանում Գարեգին անունն էր յեղ յեղուում:

Մելքիսեդեկի անունը Գէորգ էր, մի ժամանակ ամենքը նրան Գեօրգի էին կոչում, միայն Յակովբ վարժապետն էր, որ էն գլխից Գրիգորով սկսել էր, Գրիգորով էլ վերջացրեց, թէ ընչո՞ւ էր նա Գրիգոր կոչում, իրան էր յայտնի, գուցէ Գէորգ եւ Գրիգոր բառերի մերձաւոր նմանութիւնից:

Գարեգին բառը մեր ընկերական խումբը

յատկացրեց Գէորգ կամ Գեօրգի Տէր Գրիգորեան Մէլիք Մուրադեանցին, վերջումը՝ սոսկ Գարեգին Մուրադեանցին:

Այս եղաւ դպրոցական ներքին յուզմունքի ժամանակ՝ Երեմիա Իսահակեանց վերակացուի եւ ստորին գասարանների հայերէնի վարժապետի պատճառաւ:

Երեմիէն ներսիսեան դպրոցի համար մի չարիք էր, որ երկար տարի էր բնակալել էր եւ հնար չէր լինում արմատահան անելու:

Բացի Երեմիայից՝ վերակացու էր եւ Անդրէաս վարդապետ Գօրեցին, որ մի բարի եւ պարզ փեշղռեր էր եղած: Անդրէասը հայերէն գիտէր՝ ինչքան կարելի էր պահանջել մի Գօրեցուց, այսինքն՝ հասարակ գրավարժութիւն՝ Վրաստանի արտասանութեամբ, շատ քիչ խօսել՝ նոյնպէս «կուլի, կօսէ ներով» դէմքերը միմեանց փոխարէն գրած՝ ուրիշ ոչինչ:

Ինչպէս լսել եմ, Անդրէասին վարդապետացրել է ներսէս Կաթողիկոսը՝ Շանշեանցի յատուկ միջնորդութեամբ:

Շանշեանցը գտնելով Երեմիայի տեղը շատ պինդ եւ հաւաստիանալով, որ նրանով անբարոյականանում է դպրոցը, կամեցել է մի բարոյական տարր ներս բերել, լինէր այդ մարդը տգէտ, թէ ուսեալ, միայն թէ այդ նոր անձնաւորութիւնն իւր սեպհական օրինակներով մրցէր երեմիական

վտանգաւորութեան դէմ:

Ոչ միայն Անդրէաս վարդապետն էր վերակացու.— Ներսէս Կաթողիկոսի երկար տարուան բազմափորձ հաւատարիմ Ամրիկեան ծերունի Յովհաննէս աղան էլ կարգուեց նոյն պաշտօնին, բայց Երեմիայի ցանած սերմը հեշտ չ'ոչնչացաւ, քանի ինքն Երեմիան այն տեղ էր:

Երեմիան իւր թովիչ լեզուովը կարողացել էր իւր թակարդի մէջ խճճել դպրոցի ամենից գործունեայ հոգաբարձու եւ Կաթողիկոսի շատ սիրելի Գաւիթ Խերողինեանցին:

Երեմիան դաս էր տալիս Խերողինեանցի դաստերը, որ վերջումը Լազարեւի գեներալի կինը դարձաւ:

Երեմիայի ստացած ռոճիկը շահեցնուում էր Խերողինեանցի վաճառականական ձեռնարկութեանց մէջ:

Թէ ինչ գործով էր պարապում Խէրողինեանցը, ես չը գիտեմ, միայն ամենեքեան, իբրեւ հաստատ իրողութիւն, պատմում էին, թէ Երեմիայի փողերն աճում էին Խէրողինեանցի ձեռքով եւ շնորհիւ:

Վերջերումն այն էլ ականջովս ընկաւ, իբր թէ Խէրողինեանցը լրիւ չի հատուցել Երեմիային իւր պարտքը: Մեղքը ասողների վիզը, ես ձեռքնպահ եմ:

Այսպէս թէ այնպէս, բայց եւ այնպէս Երեմիան իւր թիկունքը յենել էր Խերողինեանցին եւ

խռովում ներսիսեան դպրոցի խաղաղութիւնը:

Նա ունէր աշակերտների եւ ծառաների մէջ իւր լրտեսներն եւ իւր շատ մերձաւորները. ոչ մի, այլ մի քանի փոքրիկների (ըստ Քրիստոսի) նա գայթակղութեան եւ փչանալու պատճառ էր դարձել, շարունակ միմեանց դէմ լարուած դրութեան մէջ էր պահել աշակերտներին, միմեանց դէմ էր յարուցել երկար տարիներից հետէ:

Երբ Շանշեանցը ոտ դրեց ներսիսեան դպրոց, Երեմիան իւր տեղը խախտուած համարեց: Իրաւունք ունէր. այսօր—վաղը Շանշեանցը կը լսէր իւր արած բազմադիմի զեղծումներն ու իւր անբարոյական վարք ու բարքն եւ կը վռնտէր:

Այդ իսկ իւր համար նպաստաւոր հիմունքով՝ նա սկսեց ծակամուտ յարաբերութիւններով աշխատել Շանշեանցի վարկը վայր ձգելու:

Երեմիան ուշացել էր, շատ վաղ պէտքէ սկսէր իւր խարդաւանքները, աւելի վաղ՝ քան Շանշեանցի պաշտօնակալութիւնը:

Գուցէ այնպէս էլ կանէր, եթէ նախածանօթ լինէր Շանշեանցի մաքուր բնաւորութեան հետ: Եթէ անէր՝ կը յաջողեցնէր:

Խէրողիներեանցի մի խօսքն երկու չէր լինում Վաթողիկոսի մօտ, հերիք էր «Ռաւիթ աղային» մի երկու աննպաստ խօսք բաց թողնել բերանից նոր կոչուելիք տեսչի մասին եւ ահա կը խափանուէր նրա գալուստը:

Լաւ եւ բարի մարդ էր Խէրողինեանցը, բայց մի անգամ խաբուել էր եւ դպրոցի ամբողջ վիճակը յանձնել Երեմիային:

Ամէն ինչ էր վերջինս դպրոցի համար՝ վերակացու, վարժապետ, գրադարանապետ, հանդերձապետ, տնտեսապետ եւ այլն. չեմ սխալուում, եթէ ասեմ հոգաբարձու, հոգաբարձութեան քարտուղար եւ տեսչի օգնական. առաւել լաւ՝ ասեմք տեսուչ ու վերջացնենք:

Բոլորեքեան Երեմիայի ձեռքի խաղալիքն էին:

Նրա ատամները բութ գունուեցան Շանշեանցի օրով, որովհետեւ աշակերտներս առաջին օրից սիրեցինք մեր նոր տեսչին, եւ որքան առաւել մօտ էինք ճանաչում, որքան շուտ շուտ էինք լսում նրա պարզ եւ անկեղծ վարդապետութիւնները, որքան նկատում էինք նրա հոգու մաքրութիւնն եւ Քրիստոնէավայել պարկեշտութիւնն ու եռանդուն ազգասիրութիւնը, այնքան մենք սաստկացնում էինք մեր ատելութիւնը՝ ատելի եւ գող ու բարոյականութիւնը խանգարած մարդու դէմ:

Գող՝ բառի բուն նշանակութեամբ. բացի մթերքներից, ծախքերից, ուխտատեղիներից եկած գանձանակներից, Երեմիան հետզհետէ չքացնում էր գրադարանի թանգազին գրքերը:

Ոչ ցուցակ կար, ոչ հաշուէտուութիւն եւ ոչ վերահսկողութիւն, ինչ կամենում էր՝ անում էր: Իմ աչքովս եմ տեսել բազմաթիւ Վենետիկեան

փառակազմ հրատարակութիւններ, որոնց կէսը չի երեւում ներկայ գրադարանում:

Ի թիւս Երեմիայի ուրիշ արդիւնքների, Շանշեանցը կամենում էր խլել նրանից եւ դրադարանը եւ յանձնել մեծ աշակերտներին:

Այս կռիւներն էր, որ մղում էր Երեմիան Շանշեանցի եւ աշակերտների դէմ, որոնք արդէն՝ երես էին թեքել նրանից եւ պատրաստուում էին ծեծել, կիսամեռ անել եւ այնպէս դուրս ձգել տալ:

Աննախանձելի էր այդ ժամանակ Երեմիայի դրուժիւնը, իւր նախկին մոլորեցրած աշակերտներն ու Հասկանալով իւրեանց մոլորութիւնը, կատաղել էին իրանց փչացնողի դէմ եւ պարզ խոստովանելով իւրեանց սխալմունքները ընկերական շրջանում, միացել էին ընդհանուր աշակերտութեան:

Այդ ժամանակներն էր, որ Եղիշէի պատմութիւնը Շանշեանցի խորհրդով, համարեա, կուլ էինք տուել. մենք մեր բարոյական պատերազմում Երեմիային անուանել էինք Վասակ եւ աւագներիցս ամէն մէկս միաբանական խորհրդակցութեամբ մի մի անուն սեպհականացրել Վարդանանց հերոսների անուններից:

Մեզնից միայն Գարեգինը պահեց իւր նոր անունը:

ԻԱ.

Մի ուրիշ վերակացու եւս կար Ներսիսեան գպրոցում. նա էր աւագ սարկաւագ Ստեփաննոս տէր Ստեփանեանց, որը եւ վայելչագրութեան ուսուցիչ էր:

Սարկաւագը խռով էր շարունակ Երեմիայի հետ. մենք օգտուելով այդ հանգամանքից՝ մտադիր էինք նրա խորհուրդներին դիմելու, բայց յանկարծահաս հետեւեալ դէպքը փութացրեց փոթորիկը:

Երեկոյեան մեծ աշակերտներս միտոեզ ժողոված՝ լսում ենք մի ընկերի սազի վերայ նուագելը. փոքրիկ սազ էր:

Երեմիան ներս մտաւ, սազը խլեց ու տարաւ: Հասաւ նպատակին, վաղը հոգաբարձուաց յայտնելու էր:

Երեկոյեան ընթրիքից յետոյ՝ ամենքս միաձայն հաւաքուեցինք վերակացու Ամրիկեանի սենեկի դուռը, ուր նստած էր Երեմիան եւ բարձրաձայն սազը պահանջեցինք:

Սազը գտնուում էր վերի յարկումը՝ մատենադարանումը, ուր քնում էր Երեմիան. աշակերտական ննջարաններն էլ վերնայարկումն էին:

Մենք ճչում ենք, գոչում ենք, սազն ենք պահանջում, կամ Երեմիային ենք դուրս կանչում՝ բա-

ցատրութիւն տալու:

Առաջ դուրս եկաւ սարկաւազն եւ համոզում էր մեզ սպասել մինչեւ առաւօտ:

Լսել անգամ չենք կամենում:

Դուրս եկաւ Ամրիկեանցն, եւ խնդրեց մեզ վեր բարձրանալ, հանդարտուիլ, մինչեւ ինքը սազն իւր ձեռքով վերեւ կը բերէր:

Դարձեալ կամակորութիւն:—Այս ըոպէիս մեր սազը տուէք:

Յովհաննէս աղան խելացի էր վարուել. մեզ խօսեցրել էր, բայց միւս դռնով Երեմիային վեր էր ուղարկել եւ սազը բերել տուել:

Արդարեւ, Յովհաննէս աղան հազոցի ձայն լսեց իւր սենեկից, ներս գնաց եւ դուրս բերեց սազը:

Առանք եւ վեր բարձրացանք:

—Արդէն կռիւն սկսուել էր, տեղի տալը պարտութիւն էր. մտածեցինք նոյն իսկ երեկոյին իրագործել մեր նպատակը՝ Երեմիային գանակոծել եւ դուրս ձգել:

Փոքր որդեգիրներին ստիպեցինք անկողին մտնել, մեծերս 25 հոգու չափ (70 որդեգիր էինք) մեր անկողինների սաւաններում փաթաթուած՝ մի մի փայտ ձեռներիս՝ պահուեցանք լայն քառակուսի սիւնների ետեւը, դահլիճի դրան մօտ, որտեղից Երեմիան մտնելու էր մատենադարանը:

Մօտ տասն եւ մէկ ժամին լսում ենք սանդուխների վրայից Երեմիայի ոտնաձայնը: Նա

միայն չէր, վրացերէն խօսում էր ուրիշների հետ, խելօք էր Երեմիան, նա գալիս էր վրացի Գատիկո խոհարարի ուղեկցութեամբ: Գատիկոն դաշոյնը հանած՝ ձեռքին բարձրացրած՝ միամտեցնում էր «բասոնս» (տէր) ուշետելոյին, որ մօտ եկողի փորը կը թափի:

Խոհեմութիւն համարեցինք արեանհեղութեան տեղի չը տալ, այլ սպասել դիպող ժամանակի:

Միւս օրը միաժամանակ Խերողինեանցի շեմքն անցան՝ կանուխ առաւօտեան՝ Երեմիան եւ իւր գայթակղեցրած փոքրիկներից մէկը:

Երեմիայի ներկայութեամբ՝ մեր ընկերակից Գ. Խ. շատ քստմնեցուցիչ դէպքեր է պատմում Խերողինեանցին, նա գանգատուում էր Երեմիայից:

Աղայ Հոգաբարձուն բարկանում է որդեգրի վրայ եւ արձակում՝ սպառնալով դուրս ձգել նրան:

Այն տեղից Գ. Խ. աշակերտը մտնում է Շանշեանցին եւ ամէն բան յայտնում,

Շանշեանցը վրդովուած՝ դիմում է կաթողիկոսին:

ԻԲ.

Նոյն երեկոյին հոգաբարձական ժողով է ներկայ են երեք Հոգաբարձուքն եւս, նախագահել է Թայիրեանը:

Ներս են կանչում Երեմիային:

Այն տեղ է եւ Շանշեանցը:

Թայրեանը տեսնելով Երեմիային, չի կարում զսպել իւր բարկութիւնը եւ սառը մնալ:

— Անպիտան սիբիրական, գոչում է Թայրեանը, եթէ իսկոյն եւ իսկ դուրս չես կորչիլ դպրոցիցս, վաղը դու կը մատնուիս քրէական ատենի:

Մենք փափագներիս հասանք:

Մենք ականջ էինք դնում դուրսը պատշգամբի լուսամտի տակին. մտադրուել էինք ներս մտնել եւ ամէն բան պարզելուց յետոյ՝ խմբովին թողնել դպրոցը, եթէ Հոգաբարձութիւնը պաշտպան հանդիսանար Երեմիային: Այժմ յաղթութիւնը մեր կողմն է:

— Դուրս, Երեմիա, աղաղակում է Թայրեանը:

— Ի՞նչ եմ արել, ի՞նչ է յանցանքս, ոչորմած Տէր, Ալէքսանդր Լազարիչ, բոլորը զրպարտութիւն է, իմ թշնամիների լարած որոգայթն է, աշակերտներին գրգռել են իմ դէմ:

— Լուիր подлецъ (անպիտան), եւ մի համարձակիր ուրիշների պատուին ստուեր ձգել, այս րոպէիս դուրս կորի՛, եթէ ոչ, ծառաներին կը հրամայեմ վզիդ տալով՝ սանդուխքներից ներքեւ գլորել. եւ Թայրեանը կանչեց. сторожъ! (պահպան):

Պահպանը հսկում էր հոգաբարձական խորհրդարանի դրանը, որպէս զի ականջ դնող չը լինի: Նա իսկոյն ներս մտաւ:

— Պէտք չ'ես, հրամայեց Խերոզինեանցը ծառային, դուրս գնա՛:

Այս խօսքի հետ ինքը տեղից վեր կացաւ, Երեմիայի թեւից բռնեց՝ ասելով.

— Եթէ սա դուրս կերթայ, ես էլ այստեղ չեմ մնալ. արի, Երեմիա, գնանք:

— Դաւիթ Գրիգորիչ, ասաց Թայրեանը, իզուր դուք վշտանում էք, ձեր պատուին ոչ ոք չի դիպչում, ընչո՛ւ էք դուք անզգամին ու աւազակին պաշտպան կենում:

— Չէ, դուք ինձ էք դուրս անում, արի Երեմիա՛:

Խերոզինեանցն ու Երեմիան դուրս եկան հոգաբարձական խորհրդարանից եւ գնացին:

— Էս չէլաւ, իս իմ հին ննգիրին մենակ չիմ թողի, էտէնց չիս պիտի անէիր, Ալէքսանդր Լազրիչ, ասաց Մանդինեան հոգաբարձուն եւ վեր կացաւ, գլխարկն առաւ, կամենում էր դուրս գնալ:

— Ես միտք չունիմ ոչ ձեզ եւ ոչ ձեր հին ընկեր Դաւիթ Գրիգորիչին վիրաւորելու, Եագօր Ռօմանիչ, սրտաբեկ պատասխանեց Թայրեանը, իմ միտքս է չարը մէջ տեղից հեռացնել, դուք ինձ չէք հասկանում:

— Թէ էտէնց է, մինք պիտինք Երեմիին էլ պահել, թէ չէ Խերոզինովն առանց նրան յիտ չի գայ, իս կ'էհամ երկուսին էլ յիտ կու բերիմ:

Եւ Մանդինեանցն շտապով դուրս գնաց դպրոցից:

Մենք պատշգամբից նայում էինք, թէ եւ գիշեր էր, բայց աղօտ վառուող հատուկտոր ձիթի լապտերների լուսով ստուերներն երեւում էին:

Երեւի, Խէրողինեանցը լաւ էր ճանաչում իւր ընկեր Մանգենեանցին, նորա շատ ծանր էին յառաջ շարժուում:

Մանգենեանցը հեռուից ձայն տուեց Խէրողինեանցին, որը մթութեան միջից պատասխանեց:

— Ո՛ւր ես գնում, ասաց Մանգենեանցը Թիֆլիսի արտասանութեամբ, թշնամուն ուրախացնում ես, երկու օր է եկել է էդ պրիստաւը (Թայրեանը) ուզում է մեր ոտքը կտրել. այս բոլորը Շանշեանցի արածն է, չի հաւանում հին հին կարգերին, նոր օրէնքներ է դնում, աշակերտներին գլխին նստացրել է, արի յետ դառնանք եւ միացած ուժով գործենք:

— Դու հիմի ընչո՞ւ դուրս եկար, ի՞նչ ասացիր, հարցրեց Խէրողինեանցն եւ ձայնն իջեցնելով՝ ասաց:

— Իզուր ենք բարձր խօսում, աշակերտները սատանէք են, նրանք պատշգամբի վրայ կարող են ականջ դնել:

— Այդքան էլ չէին համարձակուիլ, ասաց Մանգենեանցը, արի, միամիտ եղիր, ես ասել եմ՝ եթէ Դաւիթ Գրիգորիչը չը գայ, ես էլ կը գնամ:

— Յետո՞յ:

— Յետոյ Թայրեանցը կատու դառաւ ու ինձ

ուղարկեց, որ ձեզ համոզեմ վերադառնալ:

— Եթէ այդպէս է, դառնանք:

— Գիտէք, աղայ, մէջ մտաւ Երեմիան, շատ ուղիղ էք ասում, աշակերտները լրբեր են, պատշգամբում ականջ կարող են դնել եւ վաղն ամէն բան տարածել:

— Հէնց հիմի ծառայ կը կանգնացնեմ պատշգամբի դրանն, ասաց Խէրողինեանցը ու վերադարձան:

Մինչեւ նրանց սանդուխքներից վեր բարձրանալը մենք մեզ ձգեցինք ննջարան:

Թէ ինչ եղաւ, ընչով վերջացաւ, մենք ոչինչ չիմացանք. միւս օրն Երեմիան դարձեալ իւր պաշտօնին էր:

Երեկոյեան Նանշեանցն ընթրիքից յետոյ ներս մտաւ մեծերիս ննջարանն եւ ասաց:

— Եթէ ինձ սիրում էք, եթէ դպրոցի գոյութիւնն եւ նշանակութիւնը ձեր համար բարձր է, առանց իմ գիտութեան ոչինչ մի անէք, դպրոցին վտանգ է սպառնում, համբերութեամբ պէտքէ յառաջն առնել, Կաթողիկոսին դժուարութիւնների մէջ չը դնենք, նա երկու ջրի մէջ տեղն է մնացել, չարերին լաւ ճանաչում է, բայց սրտերը չի կամենում կոտորել:

Մենք հասկացանք, որ ակնարկը Խէրողինեանցին եւ Երեմիային է վերաբերում: Լուեցինք:

— Հա, էն էի ասում, հանդարտուեցէք

մինչեւ տեսնենք:

Ասաց Շանշեանցն ու գնաց՝ առանց մեզանից խօսք առնելու: Նա գիտէր, որ իւր հրամանը մեր համար սուրբ է:

ԻԳ.

Բացի Կաթողիկոսարան գնալը՝ ես մի ուրիշ արտօնութիւն էլ ունէի, որ ընկերներս չունէին, որով եւ ընկերակիցներիս նախանձն էի շարժում:

Դպրոցի ծախսարարն էր ծերունի Եսայի Աբխտղոսեանց, մի մարդ՝ որ երեւելի վաճառականութիւնից սնանկացած՝ հոգաբարձու Խէրողինեանցի շնորհիւ՝ ամսական 10 մանէթով ընդունուել էր դպրոցում:

Եսայի բիձէն իր հաշիւներն ինքն էր գրում վրացերէն լեզուով, բայց վրացերէնը հայ դպրոցի համար չէր, հարկաւոր էր մինը, որ Եսայի բիձի հաշուէմատեանը հայերէնի վերածէր:

Արագագրութեանս եմ պարտական՝ այդ նախանձելի տեղին արժանանալով:

Որդեգիր էի, ազգի հացն էի ուտում, պարտական էի, վճարքի մասին ուրեմն մտածել յիմարութիւն էր. բայց Եսայի բիձէն առանց վճարքի չէր թողնում աշխատութիւնս. օրական ամենաքիչը մի թերթ գրելու պէտք էր լինում:

Եւ ինչ սիրով էի որոշեալ ժամերին մտնում:

մառանառունը, ուր սուլորաբար թելադրում էր
Նսայի բիձէն իւր հաշիւները:

Փափուկ եւ փղպուջ, թարմ հաց՝ որքան սիրտս կը
ցանկանար, մի կտոր պանիր, երբեմն մրգեղէն,
գրպանս գրած՝ գուրս էի բերում:

Ոչ պանիրն եւ ոչ մրգեղէնն էր, որ գրգռում
էին ընկերներիս նախանձը, մենք գիտէինք, որ
մրգեղէն եւ այլ շուայլութիւններ մեր համար չէին.
Թարմ հացն էր, որ թխուում էր շաբաթը մի ան-
գամ, բայց մենք երբէք թարմ չէինք ստանում.
միշտ հնացած, միշտ չոր, երբեմն բորբոսնած,
այնպիսի հաց, որ այսօր ոչ մի քաղաքական վա-
ճառանոցում չես գտնիլ, հաց հօ՛ չէր, գիւղացոնց
ձմեռային այրելիք տարթից (անասնոց աղբ) ոչնչով
չէր զանազանուում: Զինուորների հացը գոնէ մի
տեսակ ախորժ համ ունի եւ առաւել սակաւ է
պարունակում աւաղի եւ կրի խառնուրդ, ծամելիս
խճերն ատամներիս արանքումը մնում էին, գարու
քիստերը կտոր կտոր միջից ընտրում էինք:

Զեմ մեղանչիլ, եթէ ասեմ, որ այս բանում եւս
Ս. աղայ Վ.եանցի մատն էր խառը: Շաբաթ
չանցնէր, որ Ղազախից բեռներով ալիւր չը գա-
տարկուէր գպրոցի մառանում:

Այդ ալիւրն էր, որ մեր խնամակալ հոգա-
բարձուքը մեզ ուտացնում էին:

Ասում էին՝ որ Ս. աղան Ղազախի գա-
ւառի ակթոռապատկան պտուղները հաւաքում է,

լաւն իւր համար է պահում, իսկ իւր վատը մեզ է ուղարկում:

Քանի քանի անգամ Շանշեանցն արիւն է պղտորել մեր ապրուստի համար եւ չի յաջողեցրել բարւոքել:

Կաթողիկոսն այս մասումն ըստ ամենայնի համաձայն էր «աղայ հոգաբարձուների» կարծիքին. «որդեգիրներս առաւելապէս գիւղացիներ էինք եւ գիւղական քահանաներ պիտի պատրաստուէինք, չարքաշուժեան ու ժուժկալուժեան վարժուելու էինք մանուկ հասակից»:

Սակայն՝ ինչ որ չը յաջողեցրէց Շանշեանցը, կատարեցինք մենք՝ այսինքն ես ու Մկրտիչը:

Չը գիտեմ, քանի ամսից հետէ՝ իմ արկղում փոխնորդներիս տակին մնացել էր մի ձեռնաչափ հաց եւ չորացել, քարի պէս պնդուել:

Միջանկեալ ասենք, որ հաց առանց բացառութեան կարելի էր գտնել բոլոր աշակերտների արկղներում:

Օրական երկու անգամ էինք ուտում՝ ժամի մէկին՝ ճաշին եւ երեկոյեան Գ-ին:

Տասն եւ մէկ ժամին էլ ստանում էինք կէս ձեռնաչափ հաց եւ մի փոքրիկ կտոր պանիր, բայց մենք այդքանով չէինք բաւականանում, սեղանի վրայից մի կտոր հաց թռցնել, գրպանը դնելը ներելի յանցանք էր համարուած:

Գուցէ չը ներէին, եթէ տեսնէին:

Էն էի ասում, արկղիցս դուրս եկաւ չոր հացի կտորն եւ մի լուսաւոր միտք ծագեցրեց մէջս:

Հացի կտորը ցոյց տալ Կաթողիկոսին եւ աշխատել հաւատացնել, որ այսպիսի հացով են մեզ կերակրում:

Ընկերներս հաւանութիւն տուին հնարագիտութեանս:

— Եթէ այդպէս է, ասաց Մկրտիչը, մի տփով էլ թախտաբիթի տաններ:

Թախտաբիթի, մլուկ, կամ բաղլինջ ասուած միջատների ձեռքից ամառ ձմեռ քուն չունէինք:

Նոյի տարուան հին հին հասարակ փայտեայ անկողնակալների վրայ էինք քնում, որոնք չորացել եւ ճեղքերն յետ էին բացուել:

Այդ ճեղքերի մէջ, տախտակների տակին, անկիւններում, բարձերիս ծալքերում, մահիճներիս կարերում միմեանց վերայ դարսուած էին մեր արիւնով գիրացած մլուկները, անթիւ ու անհամար:

Անկողին մտնել՝ մահ տեսնել՝ միեւնոյն էր մեր համար, այնքան քերել էինք մարմիններս, որ կաշիներիս վրայ ողջ տեղ չէր մնացել:

Ահա, այդ մլուկներից 100-ից աւել փակեցինք Եսայի բիձու քթախոտի տփի մէջ եւ իմ հացի հետ շաբաթ օրը տարանք վանքը:

Խեղճ Եսայի բիձու տուփը սեղանի վրայից անյայտացաւ, երբ ես հաշիւ էի գրում. Մկրտիչն էր մօտս կանգնած, նա թռցրեց:

— Հը, եկա՞ք, հարցրեց Կաթողիկոսն, երբ ներս մտանք աջն առնելու. գնացէ՞ք սարկաւագին կանչեցէ՞ք, թող գայ ձեզ միրգ տայ:

— Ի՞նչ նշանակութիւն ունի էստեղ միրգ ուտելն, իսկ դպրոցումը չոր հացի ձեռքից ատամնահան լինելն ու թախտաբիթու ձեռքից տանջուելը, լացակրկնած պատասխանեց Մկրտիչը:

Առհասարակ Մկրտիչն իբրեւ մերձաւոր ազգական, ինձանից աւելի էր թոյլ տալիս իրան:

— Ի՞նչ, զարմացած հարցրեց Կաթողիկոսը:

— Առ տես ի՞նչ, մղկտալով հացն եւ տուփը դրեց Մկրտիչը սեղանին:

Կաթողիկոսը ձեռքն առաւ հացը, շուռ է շուռ տսւեց, մի երկու անգամ սեղանին զարկեց եւ գլուխը պտտեց:

— Մի՞թէ այս է ձեր կերած հացը, հարցրեց նա:

— Դեռ այդ ողորմութիւն է, շատ անգամ աւելի վատ ու աւելի չորն է լինում, բայց հացը դեռ ոչինչ, էսնայիր, եւ Մկրտիչը յառաջ մղեց տուփը:

— Էս ի՞նչ խայտառակութիւն է, զզուելով ու երեսը ծռմուռելով գոչեց Կաթողիկոսը: Նա յանկարծ բաց արեց տուփն ու կէս վայրկենաչափ նայեց եւ կրկին փակեց:

Եթէ չէր փակել, մլուկները կը տարածուէին սեղանի վերայ, տուփը բացեց թէ ոչ, ամէն կողմից վեր բարձրացան:

Ի՞նչ է այս, կրկնեց ճշալով Կաթողիկոսը:

— Ի՞նչ պիտի լինի, այդ օրումն ենք մենք, էդ-
քանը միայն մի բնից ենք ժողովել, իսկ ամէն
մի անկողնակալի վրայ հազարաւոր բներ կան:

Ասաց Մկրտիչն ու լաց եղաւ:

Ես էլ աչքերս տրորեցի:

— Եւ դուք իրաւ էք ասում:

— Մեզ ո՞ր ես հաւատում, ինքդ արի եւ տես:

— Հասկանում եմ, ձեզ գրգռել են, մի քանի ան-
գամ Պետրէն էդ մասին ինձ հետ խօսեցել է,
բայց Դաւիթ աղան հակառակն է պնդում:

— Մեզ ոչ դք խելք չի սովորցրել, ասաց Մկրտիչը,
վաղուց ուղում էինք ամէն բան քեզ ասել, բայց
ամաչում էինք, մեր ոչ կերածն է կերած, ոչ
ապրուստներս է ապրուստ, ամենից լաւն այն է,
մի օր ինքդ մտնես ու բարի աչքովդ տեսնես:

— Լաւ, կանչեցէք սարկաւազին՝ ձեզ միրգ տայ,
ես անձամբ կը գամ եւ կը ստուգեմ:

Ես դուրս գնացի եւ սարկաւազին կանչեցի:

Միրգ առանք ու դուրս ելանք ուրախ ուրախ:

Կէս ժամ չանցած՝ Կաթողիկոսի մօտ եկաւ
Դաւիթ Խէրողինեանցը, շաթիրը գնաց եւ խիստ
շտապաւ կանչեց:

Ես ու Մկրտիչը ոտքերէ՛ս մատների վրայ
գնալով՝ կանգնեցինք դրան ետեւը՝ սեղանատանը:

— Ի՞նչ է այս, Դաւիթ աղայ, լսում ենք Կաթո-
ղիկոսի սուր եւ բարձր ձայնը:

— Ի՞նչ է, հոգիւուր Տէր, պատասխանեց Խէրո-

դինեանցը:

— Առ տես, մենք խայտառակուել ենք, այն տեղը հասցրինք, որ երեխէքն երես առան. աշխարհքի չորս ծայրից երեխայք ենք հաւաքել, որ քաղցած կոտորենք, մլուկներով արիւնները քամենք ու կենդանի նահատակ անենք:

Տասն րոպէաչափ բարկացած խօսում էր Կաթողիկոսը:

Խէրողինեանցը լուռ էր. ներսէս Կաթողիկոսին այդ դրութեան մէջ ամենաճարտար փաստաբանն անգամ չէր զօրիլ մի խօսք ասել, ո՛ւր թէ Խէրողինեանցը:

— Քո պատիւդ ինձ համար թանգ է, Գաւիթ աղայ, ասաց լրջօրէն Կաթողիկոսը, քեզ անպատուութիւն չը բերելու համար՝ ինքս չեմ ուզում գալ տեսնել. գնա եւ արա՛ ինչ որ հարկաւոր է:

— Առաջիկայ շաբաթը, մի օր՝ ես յանկարծ կը մտնեմ՝ եւ աշակերտաց ներկայութեամբ շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզ: Գնա, թող մեր երեխայքը չիմանան, որ դու այստեղ ես եղել:

Երեխայքն ես ու Մկրտիչն էինք, որ դրան հետեւից լսում էինք:

Ծառայիմ, Վիհափան, հիմիսկեւէտ կէհամ ու կը կարգադրիմ, ասաց Գաւիթ աղան եւ սկսեց քայլել:

Մենք քամու նման սլացինք շաթիրների սենեակը:

Երկուշաբթի առաւօտն ընկերներս բոլորեքեան մեզ օրհնում էին, բոլոր մահճակալներն եռման ջրով խաշուած էին, յատակը նոյնպէս տաք ջրով սրբուած էր, անկողիներն երեսահան արած էին եւ տրուած էին լուանալու, դպրոցում ոչ մի մլուկ չէր մնացել:

Հացի ու կերակրի մէջ եւս մեծ վերանորոգութիւն եղաւ. կարգադրուած էր՝ Ղազախից եկած ալիւրները վաճառ հանել, տեղը մաքուրը գնել, մթերքներն ազնուացնել, մսի թարմութեանը հետեւիլ եւ պահոց օրերը դառը ձիթի վոխարէն՝ քնջութի ձէթ, կամ շիրբախտ գործ գնել:

— Դուն էդ Մկրտիչից հեռու կաց, դուն ախտու իս, նա չար տղայ է, խրատեց ինձ Եսայի բիձէն, երբ իմացաւ, որ իւր քթախոտի տուլիը նա էր գողացել:

ԻԴ.

Լինելով վեհարանական, ես միշտ միջոց էի ունենում հասու լինելու Ներսէս Կաթողիկոսի կեանքի գոնէ արտաքին գծերին: Եթէ անհնար էր լսել առանձին խօսակցութիւնները, եթէ իբրեւ դեռահաս մանուկ՝ չէի կարող դիտել Հայրապետի քաղաքական կապերը, այսու հանդերձ՝ ես միշտ տեսնում էի նրա արտաքին յարաբերութիւնները եւ լսում յայտնի խօսակցութիւնները:

Չորօրինակ՝ տեսնում էի, թէ ինչպէս նա շաբաթի մէջ առնուազն չորս օր երեկոյ առաւօտ ժամ էր գնում. ինչպէս տանջուում էին խեղճ տէրտէրները կարճահասակ, լղար եւ ցամաքած, նեղերես ու սրահայեաց Ծերունու ձեռքից, երբ ըստ պաշտօնի՝ ստիպուած էին լինում գալ փիլոնը ծածկած եւ Կաթողիկոսին ժամ տանել:

Որքան եւ շտապում էին քահանայքը Հայրապետի առաջից գնալուս, դարձեալ նա հասնում էր եւ ճշում վրաները.— ի՞նչ էք պտտի հարսի պէս պսակ գնում:

Հասարակ օրերը շատ անգամ ուրախանում էր Կաթողիկոսը, երբ միայն Կոնստանտնուպոլի անդամ «սատանի չաքուչ» մականուանեալ տէր Մկրտիչն էր իրան առաջնորդում:

Այս տէրտէրը Կաթողիկոսից մի աստիճան պակաս էր արագագնացութեան մէջ:

Ամենից ցաւալի էր Վեհապետեանի դրութիւնը: Որքան իւր մարմնի հաստութիւնն էր, կրկնապատիկը հագնում էր թաւիշներ ու մետաքսեղէններ, զարդարուում էր իւր շքեղաշուք շքանշաններով, եպիսկոպոսական պնակէով ու վարդապետական ականակուռ խաչով եւ հանդիսաւոր օրերին ուղեկցում Կաթողիկոսին ժամ գնալուս:

Ի բնէ Վեհապետեան Գէորգ արք եպիսկոպոսը պճնասէր մարդ էր, ծանրաբարոյ, նազաքայլ եւ ցուցամոլ. ընդհակառակն Կաթողիկոսը,

Եթէ հնար ունենար, կը փախչէր ամենայն պա-
ճուճանքներէից եւ ցուցամուտութիւններէից: Լինելով
ամէն գործողութեանց մէջ փութաջան՝ իւր գոր-
ծառութեանցը յարմարեցրել էր եւ քայլուածքն ու
խօսակցութիւնը:

Հէնց որ կը տեսնէր, որ Վեհապետեանը քա-
կումը պատրաստ իրան սպասում է ժամ գնալու,
մազձը խառնուում էր. մի ակնթարթում միանում
էր ուղեկցող հոգեւորականութեանն եւ կանգ առնում:

Քահանայքը գիտելով Կաթողիկոսի քնու-
թիւնը, շտապում էին յառաջ գնալու. Գէորգ
Եպիսկոպոսը մնում էր մէջ տեղը յամբ քայլեր
փոխելով, իսկ Կաթողիկոսը գաւազանը սին տուած՝
սպասում էր՝ մինչեւ Վեհապետեանը հասնէր քա-
հանայից դասին եւ ապա կաքաւաքայլ արագու-
թեամբ՝ մի րոպէում հասնում էր նրանց ու դար-
ձեալ կանգնում:

— Էս մեր օրհնած Գէորգ Եպիսկոպոսն իր սի-
րամարգութիւնը չի կարողանում մոռանալ, երբեմն
տրտնջում էր ներսէսն՝ ինքն իրան խօսելով:

Վերջապէս՝ մի օր էլ վճռեց, որ կամ Գէորգ
Եպիսկոպոսն իրանից շուտ ժամ գնայ եւ կամ
իրանից յետոյ:

Մի բան, որ չէր նեղանում, այդ այն էր, որ
ժամով կսպասէր ուրախութեամբ՝ մինչեւ ժամից
յետոյ ցանկացողը գայ, աջ առնի, սակայն վայ էր,
եթէ մէկը թոյլ տար իրան չօրել եւ այնպէս աջը

համբուրել. այնպէս էր ծղրտում, որ ամենքը սարսափում էին:

— Ես հօ Աստուած չեմ, որ իմ առաջին ծունր էք դնում. գոչում էր նա, ես էլ ձեզ պէս մարդ եմ:

Մի օր՝ երբ շատ ստիպեց մի կնոջ՝ վեր կենալ չորած տեղից ու նա հրամանը չը կատարեց, Կաթողիկոսը ոտքով խփեց ու վերկացրեց:

Աջ տալու ժամանակ՝ որքան եւ կարելոր դէպք լինէր, նա արհամարհում էր:

Յիշում եմ՝ երբ ճաշուան պատարագից յետոյ ժողովրդին աջ էր տալիս վեհարան դառնալիս, աչքը ձգեց իւր պատշգամբում սպասող փոխարքոյ Վօրոնցովին եւ կնոջը, որոնք եկել էին այցելութեան:

Ներքեւից գոչեց ռուսերէն առածը. «Терпи казакъ, атаманъ будущее» (համբերիր զազախ, որ ատաման (զօրավար) դառնաս):

Նրանք ուրախ ժպտով գլուխները շարժեցին՝ յօժարութեան նշան:

Աջ տուեց, վեր բարձրացաւ ներսէսը, գրկեց նախ իշխանուհուն, ապա փոխարքային եւ ասաց.

— Ժողովուրդն ինձ համբուրեց, ես էլ ձեզ եմ համբուրում, ես բերում եմ ձեզ իմ երախտագէտ ժողովրդի օրտագին եւ անկեղծ ողջոյնը:

Ապա աջ կողմից կնոջը, ձախից մարդուն թեւանցուկ արեց եւ ներս տարաւ:

Կաթողիկոսը Վօրոնցովին շատ էր սիրում,

երկու կողմից իրարու այցելութիւնները պաշտօնականութիւնից հեռի էին, երեկոյ, առաւօտ, ճաշ երբ մտքերն էր ընկնում, յաճախում էին միմեանց մօտ եւ ժամերով ընտանեկան գրոյցների մէջ մտնում: Գոնէ այսպէս էր վեհարանումը, հաւանական է, որ պալատումն եւս նոյնը կըլինէր:

ԻԵ.

Յաւ մեծ եղաւ Կաթողիկոսի սրտին Վօրոնցովի փոխուիլը, մանաւանդ, երբ լսեց, թէ նրան փոխարինելու է Մուրաւեյը:

Զը գիտեմ, ինչ հանդիպում են ունեցել երբ եւ իցէ ներսէսն ու Մուրաւեյը, Կաթողիկոսը սրա նրա մօտ կասկած էր յայտնում իւր եւ Մուրաւեյի մէջ նախկին բարեկամութիւնը կրկնուելուն՝ իրան յայտնի դէպքից յետոյ:

Այդ էր պատճառը, որ մի օր, 1885 թուի փետրվարին էր, որ վաղ առաւօտ, ժամը 6-ին, թէ 7-ին, մեծ զարմանք յայտնեց, երբ լսեց, որ Մուրաւեյն եկել է իւր մօտ:

Կրկնակի հասկանալի էր Կաթողիկոսի զարմացքը. նախ՝ որովհետեւ յանկարծհաս լուր էր. առաջին օրն էր, որ Մուրաւեյը Թիֆլիս էր մտնում եւ այն՝ ծածուկ. երկրորդ՝ որ առաջին այցելութիւնն իրան էր անում:

Ահա ինչպէս եղաւ. օրը կիւրակի չէր, բայց

տօն էր, մենք դաս չունէինք եւ վանքումն էինք:

Ես պատշգամբում միայն էի:

Կառքը կանգնեց: Զանգակատան դռնից ներս եկաւ մի կարճ ու հաստ, խոժողադէմ գեներալ: Իմ պատասխանին, թէ Կաթողիկոսը տանն է եւ արթուն, հրամայեց յայտնել Նորին Վեհափառութեանը գեներալ Մուրաւեյի գալուստը:

— Ի՞նչ, Մուրաւեյը, ճիշտ արձակեց Կաթողիկոսն եւ վեղարը պահանջեց ու անվեղար դուրս վազեց:

Սարկաւագ Ալիսաղեանը պատշգամբումը հասցրեց վեղարն եւ թիկունքի կողմից գլխին դրեց՝ գրկախառնութիւնից մի բոպէ յառաջ:

— Փառք Աստուծոյ, փառք Աստուծոյ, ուրախ եմ, որ իմ վաղեմնի բարեկամին համբուրում եմ՝ դարձեալ ինչպէս բարեկամի, ասաց Կաթողիկոսը:

— Ես իմ մէջ միշտ բարեկամութիւն եմ տածել գէպի Ձեզ, Վեհափառ Տէր, պատասխանեց Մուրաւեյը, եւ ահա ապացոյցը, որ Թիֆլիս մտնելու մի ժամ չըկայ եւ ոչ ոքի չը հանդիսւած, դեռ պաշտօնի մէջ չը մտած՝ եկել եմ Ձեր օրհնութիւնն ստանալու:

— Աստուծոյ օրհնութիւնը . . .

Կաթողիկոսն ընդգրկած Մուրաւեյին՝ ներս տարաւ. գնում էր ու շուտ շուտ երեսին խորագննին աչքով մտիկ տալիս:

Ի՞նչ է այս, սիրելիս, քեզ տխուր եմ տեսնում, չը համբերեց, հարցրեց Կաթողիկոսը՝ իւր

ընդունարանը ներս չը գնացած:

— Տրտմութիւն եւ մեծ տրտմութիւն, ընդհանուր վիշտ, լացակրկնած ասաց Մուրաւեիլը, դեռ ներս մտնենք, կ'ասեմ:

Երբ մտան եւ դուռը պինդ ծածկեցին:

Սարկաւագներն ու ես եւ Մկրտիչը դրան ետեւը կանգնած՝ ուզում ենք լսել խօսակցութիւնները:

Յանկարծ Կաթողիկոսն իւր սուր ձայնով ճաց. ի՞նչ . . . Թագաւորը վախճանուել է . . . ի՞նչ ասացիր, ականջիս չեմ հաւատում:

— Դժբախտաբար, այո՛, մենք որբացանք, հեկեկաց Մուրաւեիլը:

Մէկ էլ՝ լսում ենք Կաթողիկոսի հառաչն ու լացը:

Երկու բոպէից նա արդէն «Հոգւոցն հանգուցելոց» մաղթանքն էր մրմնջում:

Այդ իսկ ժամին՝ տուն մտաւ Յակոբը վարժապետ Կարենեանցը, որ Կաթողիկոսի յաճախակի այցելուներից մինն էր:

Մենք յետ քաշուեցինք, իսկ սարկաւագը յայտնեց Կարենեանցին տխուր լուրը:

Վարժապետը շփոթուեց, ականջը դէմ տուեց քանալու ծակին եւ մի բոպէաչափ լսելուց յետոյ՝ յետ դարձաւ ու մեզ ամենքիս ասաց. Կաթողիկոսին չասէք, թէ ես եկել գնացել եմ, ես շուտով կը դառնամ:

Ստեց վարժապետը, այն օրը նա վեհարան
չեկաւ:

Քառորդ ժամից Մուրաւելը դուրս եկաւ եւ
գնաց՝ խնդրելով Կաթողիկոսից ոչ ոքի չը յայտնել
այն բօթը, մինչեւ ինքը պաշտօնապէս չը հրա-
տարակէ:

Նոյն օրը՝ տասը ժամին առաւօտեան՝ Թիֆլի-
սում տարածուեց Մուրաւելի գալուստը:

Լսողի աչքերը բաց էին մնում, եկողը Կով-
կասի փոխարքան էր եւ ոչ ոք նրա գալստեան օրի
մասին տեղեկութիւն չունէր:

Նոյն իսկ քաղաքի վարչութիւնները, իւր օգ-
նականն անգամ չը գիտէին գալու ժամանակը,
եւ ահա, այդ առաւօտը շատ կանուխ մտնում է
Մուրաւելը Թիֆլիս՝ իւր հետ բերելով բօթատու
սուրհանդակին, որը հանդիպել էր նրան Կովկասեան
լեռների մէջ:

Այս բանը Մուրաւելին ինքը պատմեց Կա-
թողիկոսին ընդունարանից դուրս գալուս. ինքը
կենդանի թողել էր Նիկողայոս Կայսերն ու ճանա-
պարհ ընկել, իւր ետեւից սուրհանդակը՝ դեռ
Թիֆլիս չը մտած՝ Կայսեր մահն է գուժում:

Ժամը 11-ին Թիֆլիսի ամբողջ զինուորակա-
նութիւնն իւրեանց գնդերով, վաշտերով, սպաներով
ու զօրավարներով հաւաքուեցին «ղաւախ» կոչուած
հրապարակը, ուր այժմ Ալէքսանդրեան այգին է
ժողովուած են եւ հազարաւոր հետաքրքիր ժողո-

վորդ ու խուժանը:

Ամենքի բերանին Մուրաւելն է, որ առանց որ եւ է շքանշանի, միակ գեներալական ուսադիրներով բոլորից վերջն երեւեցաւ:

Չինուորականութիւնը տուեց պաշտօնական ողջոյնը, թնդացին երաժշտական նուագածութիւններն եւ դադարեցան Մուրաւելի ձեռնբարձհրամանով:

Այն տեղ էր եւ զինուորական աւագ քահանան՝ փորուրարը կրծքին:

Քահանայի ներկայութիւնը նոյն իսկ քահանայի համար գուցէ շփոթման եւ տարակուսութեան դէպք էր, բայց մի երկու պատանու համար շատ պարզ էր:

Այդ ես ու Մկրտիչն էինք, որ լսել էինք Կաթողիկոսարանում Մուրաւելի բերանից, որը քչիչում էր Վեհի ականջին, թէ ինքն այսօր երգուեցնելու է գօրքին նոր Կայսեր անունով:

Մենք մեր գաղտնիքը ոչ ոքի չը հաղորդեցինք: Կաթողիկոսը հասկացել էր, որ մենք լսել էինք Կայսեր մահն եւ խստիւ պատուիրեց լռապահ լինիլ, որ եւ կատարեցինք:

Եւ արդարեւ, ահա Մուրաւելը հրամայեց խորին լռութիւն պահել. նա այնտեղ գտնուած փոքրիկ հողակոյտի վերայ բարձրացաւ ու թաշկինակն աչքերին հեկեկալով՝ յայտնեց Կայսեր մահուան դառն համբաւը:

— Ողբացէք, մանկո՛ւնք եւ բոլոր զինուորակա-
նութիւն, գոչեց հաստ եւ ողբաձայն Մուրաւելը,
մենք այսօր որք ենք:

Լաց, սուգ, աղաղակ, հառաչանք հինգ բո-
պէաչափ համակել էին բոլորեցունց, զինուորները
մի ձեռքով հրացանն էին բռնել, միւսով արտասուք-
ներն էին սրբում:

Ապա Մուրաւելը ձայն տուեց:

— Մանկո՛ւնք, թողէք ձեր տխրութիւնն, եւ
գոչեցէք միաձայն.

— Կեցցէ՛ նորին Կայսերական Մեծութիւն Ռու-
սաց գաշի արժանաւոր ժառանգ ԱԼԷՔՍԱՆԴՐ
Նիկոլայեվիչ ամենողորմած Կայսրը:

— Ուռայ, կեցցէ՛, թնդում էր երկար ժամա-
նակ օգը:

Հէնց այստեղ հրամայուեց բոլորեցունց՝ երեք
մատն իրար սեղմած՝ ձեռք բարձրացնելու երգուել:

Քահանան կարգում էր երգմնագիրը:

Հանդէսը վերջացաւ: Մենք երկրորդ օրը
միայն դասարանումն իմացանք Յակոբ վարժապե-
տից վեհարանը թողնելու էական պատճառը:

— Գիտե՛ս, Պա՛օշ, դարձաւ դէպի ինձ Յակոբը
վարժապետը, ընչի՞ շտապաւ հեռացայ վանքից եւ
էլ չերեւացի:

Ոչ թէ Կաթողիկոսին տեսնելու, քիթս սրբե-
լու էլ ժամանակ չունէի:

Այն օրը քսան մարդ խանութէ խանութ

էի ձգել եւ ժողովում էի բոլոր սեւ զմուռները։
Սեւ զմուռի կարեւորութիւնը մեծ չէ, շատ
հազիւ է պատահում, երբ մի սգաւոր իւր նամակ-
ները կնքում է սեւ զմուռով. նրա գործածու-
թիւնը մեծ մասամբ Կայսերական տան որ եւ է
անդամի մահուան առիթովն է լինում։

Այդ պատճառով՝ մեր վաճառականները սեւ
զմուռի չնչին պաշար են պահում։

Ես այն օրն իմ մարդկանց ձեռքով, չնչին
գնով, ֆունտը 35—50 կոստէկով բոլոր տեղերի
սեւ զմուռները ժողովեցի։

Երեկ բոլոր դիւանատների ծախսարարները
դռներս կոտրատում էին եւ դեռ երկու երեք
ամիս պիտի կոտրատեն՝ մինչեւ մեր վաճառական-
ները, խելքի գան եւ սեւ զմուռ պատուիրեն։
Այսօրուանից մինչեւ մի տարի՝ բոլոր դիւանական
թղթակցութիւնները կնքուելու են՝ ի պաշտօնէ սեւ
զմուռով։ (Այն ժամանակը ոչ հեռագիր կար եւ
ոչ կանոնաւոր հաղորդակցութիւններ)։

Այդպիսով, ասաց Կարենեանցը, երեկ եւ
այսօր 3000 մանէթի սեւ զմուռ եմ ծախել՝
ֆունտն երեք մանէթով։

Ահա ձեզ մի լաւ ապացոյց Յակովբ վարժա-
պետի ընդունակութեան եւ ճարպիկութեան։

Ի Զ.

Եթէ Արխտողոմեանց Եսայի բիձի հաշիւները հայացնելու համար ես ուրախ էի, ընդ հակառակն շատ տհաճութեամբ էի կատարում երեք չորս ամիս սարկաւազ վերակացուի յանձնարարութիւնները:

Վերին դասարանումն էի, երբ մի օր սարկաւազն ինձ պատուիրեց արտագրել մի ծալք թղթեր 100 թերթից աւելի:

Հոգաբարձական խորհրդարանի գործերն էին:

Սարկաւազը մի ժամանակ վարում էր Հոգաբարձութեան քարտուղարի պաշտօնը:

Իշխանաւոր էր, յանձն առայ:

Սարկաւազը շարունակ քնում էր որդեգրաց ննջարանի գրասեղանի վերայ: Սենեկի կեդրոնում սեղանն էր՝ իսկ չորս կողմից՝ պատերի տակին՝ որդեգրական մահճակալները:

Ամէն գիշեր՝ ճիշդ ժամը չորսին, առաւօտադէմ՝ սարկաւազը կը զարթացնէր ինձ եւ կը պատուիրէր գործի նստել ու ինքը կրկին կը խորդար մինչեւ 6¹/₂ ժամը, երբ հարկաւոր էր զարթնացնել բոլոր որդեգիրներին:

Քնի այդ ամենանուշ ժամերին՝ ձմեռուան գիշերները՝ ես ստիպուած էի սարկաւազի հաստածալ գործն արտագրել:

Ուրախ էի, որ գործի տետրակն աւարտեցի:
Միւս գիշերը դարձեալ անունս տուեց սարկաւազն ու զարթեցրեց:

Մի աւելի հաստ գործ պէտք է դարձեալ ծայրէ իծայր արտագրէի:

Ես յանդգնեցայ մերժել. գերի հօ չեմ, ասացի, ինձանից աւելի արագագիրները կան, տուէք նրանց:

— Ապաշխարանքը մեղաւորի եւ ոչ արդարի վզին են դնում, պատասխանեց սարկաւազ Ստեփաննոսը:

— Ի՞նչ է յանցանքս:

— Ձե՞ս յիշում անցեալ տարուան հայելին:

Փուշա թողի, ծործորակս բերեցի եւ գլուխս կախած՝ նստեցի գործի:

— Էհ, ասաց, էլ բաւական է, իմ միտքս էր՝ մեղքդ քաւել տալ եւ կատարեցի, ամենեւին կարիք չը կար եւ ոչ մի թերթ արտագրելու, պառկիր, քնիր:

Քնն կը տանի: Ոչ թէ այն գիշերը, այնուհետեւ կեանքիս բոլոր շարունակութեան մէջ, մինչեւ այսօր էլ՝ ձմեռները ժամը չորսը զարկում է՝ արթնանում եմ, սարկաւազն ականջումս ձայն է տալիս:

Սարկաւազին եմ պարտական, որ իմ բոլոր գրաւոր աշխատութիւններս կատարել եւ կատարում եմ գլխաւորապէս ձմեռները՝ առաւօտեան չորս ժամից մինչեւ լոյսը բացուելը:

Իսկ թէ ի՞նչ էր յանցանքս, թող ընթերցողը կարգայ եւ իւր վճիռը տայ:

Դեռ երկրորդ դասարանումն էի, որ մի օր սեղանատանը սարկաւազը, ճաշից յետոյ, կանգնեց հայելու առջեւը, սանտրում էր իւր ոսկեգոյն, քանգուր ու երկայն մազերը:

Նս պատրաստուում էր տեղ գնալու:

Առանց չար եւ յետին մտքերի, ես կանգնեցի սարկաւազի ետեւը եւ զանազան ձեռնաշարժութիւններ եմ անում. ապտակ եմ ցոյց տալիս, բռունցք եմ բարձրացնում, մազերը մէկ մէկ քաշելու ձեւեր եմ անում, երկու մատով աչքերն եմ ուզում հանել, կատաղի աչքեր եմ ոլորում վրան. եւ այսպէս շատ անմտածել շարժումներ:

Սարկաւազն երեսը հայելու մէջ սառնութեամբ սանտրում է մազերն եւ աչքերն աչքերիս մէջ սեւեռած՝ երեսիս է նայում, ոչ մի դէմքի շարժումածք, ոչ մի տհաճութեան նշան, ոչինչ խոժոռ հայեացք: Անդադար սանտրում է:

Վերջապէս պրծաւ ու գնաց:

— Գժուեցիր, ամէն կողմից յարձակուեցան զրաս ընկերներս:

— Ընչո՞ւ:

— Ո՞նց թէ ընչու. դու քո հացը կերար, կաթովիկոսն էլ չի կարող քեզ փրկիլ, այսօր եւեթ դու կարտաքսուիս դպրոցից. սարկաւազն ուղղակի կերթար Խերողինեանցին:

— Մի թէ նա տեսաւ, յիմարաբար հարց տուի ետ։
Միրանեանցը քարշ տուեց ինձ, կանգնացրեց հայելու առաջին, միւսներն ետեւիցս՝ որն աչքերն է վրաս չուում, միւսն ատամներն է ցոյց տալիս, երրորդն ուրիշ ծամածուծիւններ է անում, իսկ ես այդ ամէնը հայելու միջից տեսնում եմ եւ գլխիս վայ տալիս։

Օր ու գիշեր հանգիստ չունէի. մտածում էի՝ ահա, ահա, տուն կը մտնի Երեմիէն եւ կռնիցս քարշ ածելով՝ դպրոցից գուրս կը շպուտի, կամ Կաթողիկոսը կը նախատի եւ կամ սարկաւազը մի սառը խօսք կասի։ Ոչ այս եւ ոչ այն պատահեցաւ. բարեսիրտ սարկաւազը վերոյիշեալ բարոյական սլատժով ինձ յաւիտեանս պարտաւորեցրեց։

Վերջումը մենք շատ լաւ բարեկամացանք, դպրոցումն եւս միմեանց դէմ ոչինչ քէն չունէինք, տղայական թեթեւամտութիւն էր արածս, ուրիշ ոչինչ։

Ընդհակառակն, Ներսիսեան դպրոց մտածօրիցս՝ մինչեւ գուրս գալս, բոլոր ուսուցիչներիս յարգել ու սիրել եմ ու փոխադարձօրէն սիրուած եմ եղել։

Միակ Երեմիէն էր, որի կռիւը մեր բոլորիս դէմ գաղափարական էր. Շանշեանցն էր նրա աչքի գրողը, իսկ մեր կողմից հարիւրաւոր Երեմիաներ մեր պաշտելի անձնաւորութեան առաջին թող չքուեն ու հալածուեն։

Ոչ միայն ուսուցիչներ, վերակացուք ու հոգաբարձուք՝ իմ ընկերներս էլ ինձ սիրում էին։ Քամոյենց եկեղեցու քահանայքը՝ Սեւ տէր Գէորգը—Վաքս մականունեալ եւ Արամեան տէր Գէորգը, որ վերջը այրիացած վարդապետացաւ, նրանք էլ իմ եւ ընկերներիս մէջ մի տեսակ գերակշռութիւն էին դնում։

Մենք Շանշեանցի օրով Քամոյենց եկեղեցին էինք յաճախում, կիւրակի եւ տօն օրերին՝ Ներսիսեան դպրոցի որդեգիրներս էինք Քամոյենց եկեղեցում ժամ ասում։

Ես թէպէտ երբէք լաւ ձայն չեմ ունեցել, բայց ամբողջ ժամերգութիւնն ու շարականը բերան գիտէի, տօնացոյց բանալ, ընկերներիս ժամերգութեանց մէջ ղեկավարել՝ այդ ամէնն իմ գործն էր։ Շատ անգամ էին տէրտէրները դիմումն անում ինձ այս եւ այն թերութիւններն ուղղելու, ուստի եւ միշտ բարեհաճ էին դէպի ինձ։

Եթէ երգեցողութեան մէջ բաղաձայն էի եւ մի կողմը քաշուած, սպառաւորութեան, փոխ ու քարոզ ասելու եւ ճաշու գիրքը կարդալու գործում ես առաջինն էի։

Գիրքն այնքան պարզ առոգանութեամբ կը կարդայի, որ քիչ ու շատ հայերէն խօսողը կը հասկանար։

Մի կիւրակէ՛ մինչեւ անգամ, արժանացայ իշխան Յովհաննէս Զաքարեան Արղութինսկու առ

դայական ուշադրութեանը:

Իշխանը Լեգզիստանի հերոս Մովսէս Արղու-
թինսկու եղբայրն էր եւ քաղաքի ականաւոր-
ներից մինը:

Ոչ միայն նա, բոլոր քաղաքիս բարձր դասա-
կարգը կիւրակի օրերը ժամաւոր էին Քամոյենց
եկեղեցում, այն օրից՝ որ Ներսիսեան դպրոցի
որդեգիրներս էինք երգում:

Քամոյենց եկեղեցին այն ժամանակը մի կռուա-
ծաղիկ էր տէրտէրների համար, անձուխ եկեղեցի՝
գէպի իրան էր գրաւել արդիւնաւէտ ժողովրդին:

Ահա այդ իշխան Արղութինսկին՝ գիրքը կար-
գալուց յետոյ՝ ինձ իւր մօտ կանչեց, շնորհակալու-
թիւն արեց եւ ասաց. քեզ Տի գիրք կը բաշխեմ:

Իշխանը կատարեց իւր խոստումը, բայց շատ
ուշ. երկու տարի յետոյ՝ մեր աւարտման հարցա-
քննութեան ժամանակ:

Հաւանելով իմ սուր պատասխանները, նա
հրամայեց ինձ ճաշից յետոյ իւր մօտ գնալ:

Գնացի եւ ընծայ ստացայ Նարեկացու մա-
տենագրութիւնը:

ԻԷ.

Այժմ եմ մտնում Շանշեանցի դրութեան
մէջ եւ ցաւում: այն ի՞նչ բարոյական կռիւ էր, որ
նա մղում էր եւ կարող եղաւ հազարաւոր արգելք-

ներին յաղթելով՝ գլուխ դուրս տանել:

Միայն Խէրողինեանցն ու Երեմիան չէին, որ հակառակ էին Շանշեանցին. հետզհետէ Թայիրեան հոգաբարձուի աղայական ազդեցութեամբը՝ ուսուցիչներից ոմանք էլ խմորուեցին:

Իւր տեսչութեան երկրորդ տարին էր, որ Շանշեանցը գրեց դպրոցի համար նոր կանոնագրութիւն եւ առաջարկեց Վաթողիկոսին ի հաստատութիւն:

Նոր կանոնագրութեան զօրութեամբ՝ մտնում էին նորանոր առարկաներ ու գիտութիւններ, որոնց իւրաքանչիւրի համար պէտք էին առանձին ուսուցիչներ եւ ծախքեր:

Ահա Երեմիայի համար յաջող ասպարէզ՝ իւր խարդախութիւնները գործ դնելու:

Երեմիան Խէրողինեանցին, Խէրողինեանցը Մանդենեանցին, երկուսը միասին Թայիրեանցին, երեքով համախմբուած՝ Վաթողիկոսին:

— Ընչի՞ են պէտք, Վեհափառ տէր, մեր դպրոցում սատանական ուսումները, մեր աշակերտները տէրտէրացուք են, ի՞նչ կարիք ունենք զանազան բնական եւ անբնական գիտութիւնների, մենք որ ոչ մինը գիտէինք եւ ոչ միւսը, մարդ չենք դարձել եւ այլն եւ այլն:

— Դիցուք այդ բոլորը լաւ լաւ եւ պիտանի գիտութիւններ են, ասում է Վաթողիկոսը, բայց ունենք մենք բաւականացուցիչ նիւթական միջոց:

— Ո՞ր է փող, ո՞ր է եկամուտ, Շանշեանցը մտած օրից ծախքերի դռները լայնացրել է, աշակերտներին սպիտակ հաց է ուտացնում, կերակուրներն է շռայլացրել, մահճակալներից շատերն է նորոգել տուել, առանց մեր եւ ձեր կամքը հարցնելու՝ Խատիսեանցի դասերն է մտցրել եւ այլն։

— Համբերեցէք՝ տեսնենք, ասում է Կաթողիկոսը։

— Պետքէ, ասում է մի օր Ներսէսը Շանշեանցին, ըս գրած կանոնադրութիւնը շատ պատուական բան է, բայց մեր աղաները դժուարանում են կատարել, մեծ ծախք է պահանջում։ Սպասիր մի քանի ժամանակ, մինչեւ կը վերջացնեմ իմ կանոնադրութիւնը, յետոյ խելք խելքի տուած՝ երկու ծրագրից մի ուրիշը յառաջ կը բերենք։

Շանշեանցը զարմանում է, բայց տարաբախտաբար այնպէս էր, երկու տարի ձգձգեց Կաթողիկոսն իւր գրելիք կանոնադրութիւնը եւ վերջն ուղարկեց Հոգաբարձութեանն եւ տեսչին քննելու մի անվերջ ու անծայր ծրագիր՝ անհամապատասխան միանգամայն մանկավարժական պահանջին։

Այդպիսով՝ իւր հինգ տարուան պաշտօնավարութեան ժամանակ՝ Շանշեանցն ստիպուած եղաւ միակ իւր անձնական օրինակովը դաստիարակ վիճել դպրոցին։

Գիտութիւններից միայն յաջողեցրեց մտցնել եկեղեցական պատմութիւն եւ բնական պատմութիւն։

Առաջինին ուսուցիչ կարգեց համալսարանա-

կան Համբարձում Փափազեանցին, որ քահանայացաւ ու կնոջ մահից յետոյ վեղար կրեց՝ կոչուելով Գալուստ վարդապետ, իսկ ընական պատմութեան համար բերեց Գաբրիէլ Խատիսեանցին՝ նոյնպէս բարձր ուսման տէր:

Ահա մի ուսուցիչ, որին բոլոր աշակերտները հոգւով սիրում էին իւր քաղցրաբարոյութեան եւ եռանդուն աշխատութեան համար:

Մի մարդ, որ Շանշեանցի բարոյակրթական ուղղութեան միանգամայն համապատասխան էր:

Պատուական մարդ էր եւ Փափազեանցը, բայց գանդաղ էր եւ քնոտ: Այդ պատճառաւ նրա դասերը կաղի կաղ էին ընթանում:

Միւս ուսուցիչները՝ Յակովբ վարժապետ Կարենեանցն եւ Միքայէլ Պատկանեանցը, թէպէտ հայրաբար էին վարուում մեզ հետ, բայց երբեմնապէս համակերպուում էին Հոգաբարձութեանը:

Մանաւանդ Կարենեանցը, որ Թայիրեանի հետ միացած՝ արգելք եղաւ Շանշեանցի ծրագրի իրա գործուելուն:

Այդ պատճառաւ՝ Յակովբ վարժապետին մենք դասի ժամանակ սիրով էինք լսում, իսկ արտաքոյ դասի խորթ աչքով էինք նայում:

ԻԸ.

Մինչեւ Շանշեանցի տեսչութիւնը՝ ինձ անյայտ է, թէ ո՞վ է եղել կրօնուսոյց։ Ես հանդիպեցայ ստորին դասարաններում Գորեցի տիրացու Գրիգոր տէր Բարսեղեանցին, (այժմ տէր Գրիգոր՝ Բեթղեհէմ եկեղեցու աւագ քահանան)։

Նա սրբազան պատմութիւն էր ուսուցանում։

Տիրացու Գրիգորը մի գեղեցկագէտ, համեստ եւ քաղցր բնութեան տէր մարդ էր։

Շանշեանցն եկած օրից՝ իւր վերայ առաւ կրօնագիտութեան ուսուցումը։

Սկզբներում՝ քանի Հոգաբարձուաց եւ տեսչի յարաբերութիւններն այնքան լարուած չէին, ամենեքեան անտարբերութեամբ էին նայում այդ գործին, վերջերքը՝ Շանշեանցի կրօնագիտութեան տետրակը դարձաւ մի գայթակղութեան քար տեսչի հակառակորդների համար։

Կաթողիկոսը, կերեւի, կարդացել էր այն տետրակը, այդ պատճառաւ՝ ուշադրութիւն չէր անում քնջերում եղած բամբասանքներին։

Ընդ հակառակն նա ամենայն սիրով լսում էր իւր տանը մեր՝ վերին դասարանի աշակերտաց պատրաստած քարոզները։

Առաջիկայ մեծ պատի համար Շանշեանցի հրամանաւ մենք պատրաստել սկսանք քարոզներ։

Մեր քարոզներն այն կրօնական ուսումի արդիւնքներն էին, ինչ որ դաս էինք առել Շանշեանցից։

Շանշեանցի աւանդած քարոյախօսութիւնից իւրաքանչիւրը մեզանից, ըստ իւր հասկացողութեան, գրում էր քարոզ եւ հետեւեալ դասին աշակերտաց ներկայութեամբ Շանշեանցի առաջին կարգում։

Տեսուչը նախապէս մեր ամէն մէկիս կարծիքներն էր լսում, ապա թէ իւր եզրակացութիւններն անում։

Տօն օրերը՝ քարոզ գրող աշակերտներից հետը տանում էր վեհարան եւ ներսէս Կաթողիկոսի մօտ կարգաւ տալիս։

Որքան ուրախանում էր խորիմաստ Հայրապետը մեր պարզ եւ անկեղծ սրտով գրած քարոզների համար։

Այդ օրն ազագայ քարոզախօսը ճաշելու էր Շանշեանցի հետ Կաթողիկոսի մօտ։

Բացի քարոզներից՝ մենք գրում էինք եւ ուրիշ շարադրութիւններ։ Ազգային պատմութիւնը, ազգի անցեալ եւ ներկայ կենցաղը, յաջող եւ անյաջող արարքներն եւ առնելիքները, ընդհանրապէս մեր ամէն մի ցաւերը՝ մեր հասկացածին չափ՝ պարզում էինք մեր յօդուածներում։

Այս գրուածքներիս ղեկավարողը նախապէս Յակովբ վարժապետն էր լինում։ Յետոյ լսում էր դասարանի մէջ Շանշեանցն եւ իւր կողմից

նկատողութիւններն անելուց յետոյ՝ շաբաթ օրերը ճաշերից յետոյ հրաւիրում էր դպրոց իւր ծանօթ հասկացող հայերին եւ նրանց ներկայութեամբ կարդալ էր տալիս:

Այս ամէնը մի նորութիւն էր, որ փշի պէս ծակում էր Շանշեանցի հակառակորդների աչքերը:

Սկսուեցան այնուհետեւ բերանէ բերան սխալ ենթադրութիւններ եւ չարախօսութիւններ պտտել շրջանների մէջ, յարձակուում էին մանաւանդ Շանշեանցի կրօնագիտութեան տետրակի դէմ, ուր, իբր թէ, բողոքականութեան սկզբունքի նշաններ են երեւում:

Կաթողիկոսն արհամարհում էր այն լուրերը, իսկ ժողովրդի մէջ հետզհետէ սերմանում էին:

Այն կրօնագիտութեան տետրակը մինչեւ այսօր սրբութեամբ պահպանում են ես, քանիցս անգամ քննադատական աչքով ուսումնասիրել են, բայց եւ ոչ մի բառ չկայ Լուսաւորչի լոյս հաւատի դէմ:

Ընդհակառակն՝ աւետարանը բացատրուում է բուն քրիստոնէական ոգւով եւ ուղղութեամբ:

Կարդալու՝ մարդ վերանում է մտքով դէպի Աստուծոյ նախախնամողի Աթոռը, դէպի փրկիչ Յիսուսի գիրկը:

ԻԹ.

Եկաւ մեծ պահքը. քարոզ խօսելու օրեր են: Մինչեւ այդ ժամանակը մի քանի քահանայք էին յայտնի իրանց խօսեցած քարոզներով. Սահառունի տէր Սահակ, Զիալեան տէր Սահակ եւ այլք:

Ի՞նչ էր սրանց քարոզածը.—Յայսմաւուրքից եւ պառաւական հէքեաթներից հանած առականք եւ օրինականք եւ Աղամ—Նւայի պատմութիւնը:

Երբեմնապէս ինքը Ներսէս Կաթողիկոսը կը քարոզէր Քրիստոսի աւետարանը՝ ներկայ եւ հանդերձեալ կեանքի պահանջներին համեմատ մեկնաբանելով:

Ահա Ներսիսեան վերին դասարանի աշակերտներս սրտատրոփ՝ առած մեր գրած քարոզի տետրակը՝ Շանշեանցի առաջնորդութեամբ՝ կիւրակէ օրերը գնում ենք Ներսէս Կաթողիկոսի մօտ, կարդում մեր քարոզը նրա առաջին եւ օրհնութիւնն առած՝ ցրուում Թիֆլիսի առաջնակարգ եկեղեցիները:

Հայ ժողովուրդը ժամասէր է, մանաւանդ մեծի պահոցը՝ հայն իրան հայ-քրիստոնեայ չէ համարում, եթէ ժամից յետ ընկնի. գոնէ մի օր այդպէս էր:

Թիֆլիսի հայը, որքան եւ օտար սովորութիւնների ու նորամուտ հասկացողութիւնների ենթարկ-

ուած՝ նա բոլորովին չի սառչում իւր եկեղեցուց, ազատամտութեան կեղծ դրօշակի տակ իւրեանց գլուխը թագցրած անհեռատես երիտասարդները՝ տօն եւ յայտնի օրերում՝ կիւրակի ճաշին հաւաքուում են եկեղեցու գաւիթը:

Մեծ պահոց կիւրակէներին նա մանաւանդ՝ եկեղեցիներում ասեղ ձգես՝ գետինը չի ընկնիլ, ժամերում կանգնելու տեղ չի մնում, բակերում դարձեալ վիտում են:

Կանացի սեռը երկու գլխաւոր պատճառունի եկեղեցի յաճախելու. մէկ՝ որ իսկապէս եռապատիկ ջերմեռանդ է այր մարդից եւ երկրորդ՝ գնում են իրանց պաճուճանքները ցոյց տալու:

Մի եւ նոյն է Թիֆլիսի կնոջ համար, հասկանում է հայերէն թէ ոչ, քարոզի օրերը նա տեղ — խլուկ է անում:

Իմ մանկութիւնից այդպէս եմ տեսել, հիմա էլ նոյնն է. առաջ վրաց լեզուով էր կանանց դասի աղմուկը ականջ ծակում, այսօր վրացերէնը փոխուել է ռուսերէնի, մանուկ սերունդ, միջին սերունդ, հին սերունդ՝ բոլորեքեան ռուսերէն են միմեանց յանդիմանում՝ իրար տեղ յափշտակելու համար:

Որքան կուգես՝ մէջդ նեղացիր, յայտնի տհաճութիւն ցոյց տուր, երեսդ դէպի արեւմուտքդէպի կանանց դասը շրջիր եւ ձեռքերով լռելու ականարկներ արա, մի եւ նոյն է, կանանց դասի

22ուկը չի դադարիլ:

Ես լսել եմ Թիֆլիսի ճակատով քահանաների ոմանց՝ քարոզի ժամանակ, կամ ժամ ասելուս՝ կանանցը տուած սառը յանդիմանութիւնը: Մի օր տէր Սրապիոն աւագ քահանան սաստիկ գոռաց ու անպատիւ խօսքեր ուղղեց դէպի կանայքը, դարձեալ նրանք չը լռեցին:

Քարոզաբանն այս գիտելով՝ չի նեղանում, երբ իւր խօսքերը կանանց դասումը միայն արձագանգի խուլ սուլոց է:

Մեզ համար նոյնպէս նոր բան չէր Թիֆլիսի կանանց անհաճոյ սովորութիւնը, այդ պատճառաւ առանց ուշադրութեան մենք ժամի վերջին, կիւրակէ երեկոները, ժամաշապիկը հագած՝ բարձրանում էինք սեղան, գրակալը առաջներիս դրած, մեր գրուածքը վրան փռած՝ կարդում էինք մեր քարոզները:

Եթէ հոգի էինք քարոզաբաններս, որ փոխ առ փոխ շրջում էինք այս եւ այն եկեղեցիները:

Այնպէս ուրախալի չէր լինում մեր համար ուրիշ եկեղեցիները գնալը, ինչպէս որ վանքը: Վանքումը մենք մեզ մեր տանն էինք զգում, այն տեղ մենք սիրեկան զաւակներ էինք՝ մեր Հօր ներկայութեամբ մեր մտքերն արտայայտող հերիք էր, որ բեմ բարձրանալուս՝ նախապէս մօտենայինք ներսէս Կաթողիկոսի աջը համբուրէինք, մենք սիրա էինք առնում եւ բարձր ու համարձակ էինք խօ-

սում: Միւս եկեղեցիներում աւագ քահանաների ցոյց տուած թթուած դէմքը սպանում էր մեր ոգեւորութիւնը: Նրանցից մէկը մեր ընկերներից մէկի վերայ ուղղակի գոռացել էր. — հոգն էն օրը թափուեց Թիֆլիսի գլխին, երբ աւագ քահանայքս դասումը պէտք է անասունի պէս բերաններս փակենք ու կանգնենք եւ ձուից դուռ դուրս չեկած ձագերը մեր առաջին կշկշան:

Մենք ի՞նչ մեղաւոր էինք, մեզ ուղարկում էին, մենք գնում էինք:

Մեր մխիթարութիւնը կատարեալ էր, եթէ ժողովուրդը սառն երես չը ցոյց տար, եւ չէր ցոյց տալիս:

— Սպրիք, ապրիք, Աստուած աւելի շնորհք տայ, էս օր որ էդպէս քաղցր լեզու ունիք, երբ մեծանաք՝ աւելի լաւ քարոզիչներ կը դառնաք. ձեր ջահէլ տեղովը մեր տէրութենների երեսը պարզացնում էք:

Այս եւ սրա նման քաջալերական խօսքեր շատերից էինք լսում:

Վանքումը միայն սիրտս կոտրեց մի ծերունի: Քարոզս վերջացրել էի, շապիկս հանել էի ու ժողովուրդի հետ խառը դուրս էի գալիս ժամից:

Ճխլոց է, իրար հրելով սխմուում են դրան անջքումը:

Ինձ ճղմող ծերը դառնում է իւր հարե-

ւանին:

— Լսեցիր քարոզը:

— Լսեցի:

— Հաւանեցիր:

— Հաւանեցի, իսկ դ՞ո՞ւ:

— Ինձ համար լաւ էր, որ մի մեծ միրուքաւոր է՞ծ կանգնացնէին սեղանի վրայ մկկար, քան թէ այս մի թզաչափ լածիրակին (լակոտ) էին քարոզիչ շինել:

Ժամի դրանը ես աչքերս ձգեցի ծերունու երեսին եւ խէթ խէթ նայեցի. էն օրուանից ես նրան ատեցի:

Միշտ նրան տեսնելուս՝ մի տեսակ սառնութիւն էի զգում մէջս:

Աստուած հոգին լուսաւորի՛, մեռաւ, իմ ձեռքից պրծաւ:

Մի բան լաւ չեմ՝ յիշում՝ մեր քարոզիչ տարին ուրարներ ունէինք, թէ յետոյ ստացանք:

Խօսքս ընկերներինս մասին է, ապա թէ ոչ, ես ուրար չունէի:

Ահա ինչպէս պատահեց մեր ուրարակրութիւնը:

Մի օր՝ Ժամը մօտ 10-12-ին՝ Շանշեանցը հաւաքեց վերին դասարանի աշակերտներին 10-12-ին եւ տարաւ վեհարան:

— Բերի, հոգեւոր տէր, ասաց Շանշեանցը:

Կաթողիկոսը տեղիցը կանգնեց, «պահպանիչ» ասեց: Ապա մէկ մէկ մեզ մօտ կանչելով, իւր

ձեռքով վերցնում էր սեղանի վրայից ծալած ուրարները եւ ձգում մեր ուսին:

Սկսուեց Գարեգին Մուրատեանից:

Հերթը հասաւ ինձ: Ես տեղիցս չը շարժուեցի:

— Ի՞նչ ես կանգնել, մտաւ արի, կոչեց Կաթուղիկոսը:

— Ո՛չ, ես ուրար չեմ ուզում, ես քահանայ դասնալու ցանկութիւն չունիմ, ասացի ու կանգնած մնացի:

— Վնաս չունի, չես կամենում, չենք տալ, զօնով արջին կալ լծել չի լինիլ, ասաց ծիծաղելով կաթուղիկոսն ու հետեւեալին կանչեց:

Ոչ որ ոչինչ չը նկատեց, իսկ ես հասկացայ, որ Կաթուղիկոսն ինձանից սրտամնայ եղաւ, թէ եւ ոչինչ չը ցոյց տուեց:

Վերջը կը տեսնենք, որ ես սխալուած չէի:

L.

Երեք անգամ Ներսիսեան դպրոցումն եղածս «ժամանակ» հրատարակական «հարցաքննութիւն կատարուեց: Առաջինը՝ մտած տարիս, որ դեռ նոր էի եւ ուշադրութեան չառնուեցայ, երկրորդը՝ երկրորդ դասարանից վերին երրորդը՝ փոխուելիս, երբ արժանացայ առաջին մրցանակի: Մի քանի «յառաջադէմներիս բաժանեցին Վենետիկցոնց փառակազմ հրատարակութիւններից՝ ոսկի տառերով

վրան գրած. «մրցանակ առաջին կարգի վասն գերազանց ջանասիրութեան, յառաջադիմութեան եւ պարկեշտ վարուց»:

Ինձ տուին «ճառք Կիկերոնի յաղագս պատշաճից»:

Երրորդ եւ վերջնական հարցաքննութիւնն եղաւ 1855 թուի Մայիսին, երբ դարձեալ աչքի ընկայ:

Յառաջադէմներիս համար ոչինչ դժուարութիւն չէր սովորածներս կրկնել Ներսէս Կաթուղիկոսի եւ հանգիսականների առաջ, բայց դաստարանում ամենեքեան հօ յառաջադէմ չեն կարող վիսել:

Վ երջինները՝ հարցաքննութիւնից մի քանի օր յառաջ՝ կարողացան հաճեցնել մեր ուսուցիչներից երկուսին՝ Կարենեանցին եւ Փափազեանցին խարդախութիւնի դիմել:

Ահա թէ ինչպէս:

Յակովբ վարժապետն ինքը բերան գիտէր «Սեթեանի» ճարտասանութիւնը:

Մեզ էլ նոյնն անգիր էր անել տալիս:

Շատ խնդրեցինք, որ թոյլ տայ մեզ գրաբառը կարդալ եւ մեր լեզուով միտքը բացատրել, չեղաւ:

Ստիպուեցանք շաբաթական վեց հայերէն դասից երեքը՝ ճարտասանութիւնը թութակի նման բերանացի սովորել, երկուսը՝ գրաւոր շարադրութեամբ պարապել եւ մինը՝ խօսելով անցկացնել:

Այս վերջին մէկը մեզ համար ամենից ցան-

կալի դասն էր. ոչ թէ նորա համար, որ ոչինչ գործելիք չունէինք, այլ որ սիրահարուած էինք Կարենեանցի լեզուին:

Այնքան քաղցր, այնքան պերճ լեզուով եւ այնպէս ճոխաբան էր Յակովբ վարժապետը, եւ այնպիսի հետաքրքիր նիւթ էր գտնում ամէն ժամանակ խօսելու, որ նոյն ինքն Շանշեանը գալիս էր երբեմնապէս լսելու:

Նրա պատմածները ոչ թէ դատարկաբանութիւններ, կամ աշակերտի համար անյարմար անցքեր էին լինում, ընդհակառակն հայկական անցեալ եւ ներկայ կեանքն էր գրուցի միջնորդութեամբ մեր ականջին հալեցնում:

Որքան էլ բաներ գիտէր եւ ի՛նչ սուր յիշողութիւններ ունէր. միայն իւր կեանքը մի ամբողջ պատմութիւն էր:

Ամէն դէպքից մի ազգային գաղափար էր հանում: Ինչպէս իւր նախկին աշակերտները պատմում էին, ազգայնութեան գաղափարը նրա խօսակցութեան մէջ միացած էր Շանշեանցի տեսչութեան օրից հետէ:

Յառաջ Կարենեանցը բոլորովին այլ կարծիք է ունեցել հայ կեանքի պայմանների մասին:

Աւետարանը միացնել ազգայնութեան գաղափարի հետ, ազգային անհատականութեան սկզբունքը աւետարանի ճշմարտութեանց վերայ հիմնել — այդ Շանշեանցի քարոզած մտքերն էին:

Յակովբ վարժապետն արդեօք համոզուել էր, թէ Նանշեանցին հաճոյանալու դիտաւորութեամբ էր անում՝—չեմ կարող ասել, բայց որ Կարենեանցի համար գրած մեր շարագրութեան նիւթն ազգայնութեան գաղափարն էր:

Օ՛, օ՛, օ՛.. ժամանակակից մարդ էր Կարենեանցը. նա իսկոյն ըմբռնում էր, թէ քամին ո՞ր կողմից է փչում, դեռ չը փչած՝ հասկանում էր: Օրինակի համար ասենք. մինչեւ այդ օրը մեր բոլոր շարագրութիւններն եւ ընդհանրապէս գործածական լեզուն գրաբառն էր: Մի նամակ, մի հասարակ տոմսակ գրաբառ պէտք է գրուէր, առանց ուշադարձութիւն անելու, թէ դիմացի մարդը հասկանում է թէ ոչ գրաբառը. որքան խրթին ու անհասկանալի ո՞՞ գործ դրուէր, այնքան գրուածքը յարգելի էր:

Չը գիտեմ՝ ի՞նչպէս եղաւ, ո՞ր տեղից մտքումս ծագեց. մի անգամ՝ եւ այն բոլորիս համար առաջին անգամը՝ ես մեր տեղական բարբառով մի ոտանաւորով գրեցի Աշտարակից—Թիֆլիս իմ ճանապարհորդութիւնս:

Ինչպէս սրտատրոփ սպասում էի՝ ընկերներիս կողմից ծաղրի ենթարկուեցի: Նոյնը չը պատահեց, սակայն, Յակովբ վարժապետի կողմից:

— Ո՛ր, ոչ, սխալ էք, տղայք, բխախոտը քիթը լցնելով՝ գլուխը տմբացնելով ասաց վարժապետը. մեր Պռօշն ամենիցս շուտ է հասկացել ժամանա-

կի պահանջը, մօտ են օրերը, երբ գրաբառը տեղի պիտի տայ աշխարհաբառին, գրաբառագէտներս երկնքից հօ չենք իջել՝ ոտներս ամպոտ, աւելի լաւ չէ, որ ինչպէս խօսում ես, այնպէս էլ գրես, քան թէ ուրիշի դռները մուրացկանի պէս բաղխես, թէ արի ինձ գրած երկու տողը բացատրիր:

Այդ օրից յետոյ՝ իմ շաբաթական գրած երկու շարադրութիւնից՝ մինը գրաբառ, մինն աշխարհաբառ էր:

Թէպէտ միշտ էլ ծաղրի ու ծանակի առարկայ էի դառնում ընկերներիս կողմից, բայց արհամարհում էի, քանի որ իմ կողմն էր Յակովբ վարժապետը:

Այն էի ասում, մի այսպիսի ժամանակի պահանջը շուտ ըմբռնող վարժապետը պահանջում էր, սակայն, որ մենք Սեթեանի ճարտասանութիւնը ծայրէ ի ծայր անգիր անենք:

Ինչպէս ասացի, մի քանիսիս համար հեշտ էր, բայց մեծամասնութեան համար տաժանակիր աշխատանք:

Թոյլ աշակերտաց խնդրանօք՝ առաջիկայ հարցաքննութեան համար վարժապետը մեզ տուեց պատրաստել մի մի գլուխ:

Հարկաւոր չէր հարցմունքի տոմսերի վրայի գրածը կարդալ, բեզ ընկել է պերճախօսութեան կանոնը, եթէ դու անգիր ես արել չափազանցութիւնը, դու կարգա ջյաղագս չափազանցութեան

եւ տոմսակը շարտիր հակառակ կողմով սեղանի վերայ ու Կարենեանցի հարցերին պատասխանիր:

Հանդիսականներից, կամ ընթերականերից ում ցաւն է կտրուել տոմսակդ ձեռքիցդ առնելով ստուգել:

Այս մի եւ նոյն հնարքը յօժարեցրինք գործ դնել եւ Փափաղեանցին:

Եկեղեցական պատմութիւնից մի մի գլուխ սովորեցինք եւ ճարտարութեամբ պատասխանելով՝ գովասանքներ տարանք:

Բայց արի տես, որ մազ մնաց Հայկաբանութեան դասին մենք էլ էինք խայտառակուում՝ Կարենեանցն էլ:

Կանչուում եմ ես, վերցնում եմ տոմսակ եւ կանգնում:

Այդ իսկ ըոպէին՝ Միքայէլ Պատկանեանցը փսփսում էր Դաւիթ Արզանեանցի ականջին:

Կանխօրէն պիտի ասեմ, որ այդ ժամանակն անհաշտ թշնամի էին իրարու Կարենեանցն ու Պատկանեանցը, թէ եւ միմեանց հետ միշտ խօսում էին:

Պիտի ասած՝ որ այս երկու մարդը վաղուց ի վեր մինչեւ իրանց մահը շարունակ շփուել են իրար հետ, միմեանց տուն յաճախել են, միմեանց հացը կերել են, բայց երբէք մաքուր սիրտ չեն ունեցել իրարու դէմ:

Բանն այն է, որ ոչինչ ընդհանուր շահեր չեն ունեցել, մինը միւսի առարկան յափշտակելու ձրգ-

տում էլ չեն տածել մէջները, եւ ոչ կարող էին. Կարենեանցը Ռուսաց լեզուի մէջ միանգամայն անգէտ էր, իսկ Պատկանեանցը թէ եւ լաւ գրաբառ գիտէր, բայց թոյլ չէր տալ իրան Յակովբ վարժապետի հետ մրցել, բայց եւ այնպէս իրար օձիքից անդադար ձաւար էին բաղում:

Կերեւի Պատկանեանցը վարժապետի խարդախութեան հոտն առել էր եւ յարմար միջոցի էր սպասում կաղին կամրջումը ճանգել:

Ինչպէս ասացի, իմ տոմսակ վերցնելն ու Պատկանեանցի Արզանեանցի ականջումը փսփսոցը մինեղաւ:

— «Յաղագս կցորդական հանդիսի» բարձրաբարբառ կարգացի ես իմ տոմսակի վրայ:

— Չի՞նչ է Կցորդական հանդէսն, անմիջապէս հարց տուեց ինձ Կարենեանցը եւ զարմացած ու բարկացած նայեց երեսիս, երբ տեսաւ, որ ես ուշացնում եմ տոմսակս շարտելը:

Վարժապետի շրթունքը բարկութիւնից կապտեցին, մանաւանդ, երբ Արզանեանցը ձեռքն ինձ մեկնելով՝ խնդրեց եւ ձեռքիցս առաւ տոմսակս:

Վարժապետի հարցին համարձակ պատասխանելով՝ տոմսակս տուի Արզանեանցին եւ շարունակեցի գործս: Հետն էլ ակնարկներով հասկացրի վարժապետին, թէ ինքն իզուր է քրտնում ու սառչում, բաղդը մեզ յաջողել է, իւր թշնամին կորա-

գլուխ է եղել. դիպուածով ինձ վիճակուել էր իմ
իսկական տումսակս:

Պէտք է տեսնէիք, թէ վարժապետը հակա-
ռակորդին կռուի հրապարակից փախցնող աքա-
ղաղի նման ինչպէս էր հպարտ հպարտ գլուխը
բարձրացրել եւ հարցեր հարցերի ետեւից ինձ ա-
ռաջարկում ու բարձրաձայն կրկնում. ապրիս Պաօշս,
ապրիս. արժանի ես Վեհափառի հայրական սիրոյն:
Ներսէսը ներկայ էր հարցաքննութեանը:

Այդ խրախուսական խօսքերն յիշեցրին Իշ-
խան Յովհաննէս Արղութինսկուն Քամոյենց եկե-
ղեցումն արած իւր խոստումը:

Իշխանն ինձ մօտ կանչեց եւ ասաց. ճաշից
յետոյ արի մեր տունը:

Գնացի եւ ստացայ Նարեկացու մատենագրու-
թիւնը: Այս մեր վերջնական հարցաքննութիւնն էր,
բայց միայն ես ատեստատ ստացայ ու դպրոցը
թողի, ընկերներս բոլորն երկու տարի էլ նստեցին:

ԼԱ.

Հարցաքննութիւնը տուել ենք, բայց մեզ չեն
բաց թողում:

Շանշեանցը միշտ գալիս է եւ մեզ յուսա-
տրում, թէ առաջիկայ Սեպտեմբերից բացուելու է
չորրորդ, ապա հետեւաբար հինգերորդ, վեցերորդ
եւ եօթներորդ դասատուն:

Այսօր մեզ յոյս է տալիս, վաղը նա ինքն է մեզ յուսահատեցնում:

Ոչ ուրախութիւնը կարելի էր նկատել Շանշեանցի դէմքի վերայ եւ ոչ տխրութիւնը, ամէն երեւոյթի նա սառն աչքով էր նայում. այդ էր պատճառը, որ մենք էլ թէ աւետելուս եւ թէ գութելուս չափազանց չէինք գրգռուում:

— Գիտէք, տղայք, այսօր Կաթուղիկոսը խոստացաւ համոզել հոգաբարձուներին սեպտեմբերից չորրորդ դասարան բանալու. նա համաձայնեց ընդունել իմ գրած կանոնադրութիւնը, եթէ Կաթուղիկոսի միտքը չը պղտորեն, երեք տարուց յետոյ դուք կարող կը լինիք առանց նախապարաստական քննութեան համալսարան մտնել:

— Գիտէք, տղայք, կասկածս ճիշդ դուրս եկաւ, Թայրեանը որ յառաջ համակարծիք էր ինձ հետ նոր դասարաններ բանալու եւ առարկաներ մըտցնելու համար, այսօր, ինչպէս Կաթուղիկոսն, ասում էր, նա ինքը Թայրեանը Խէրողինեանցի հետ միասին խնդրել է Կաթուղիկոսից բաւական համարել ձեր ստացած ուսումն եւ ձեզ ատեստատ տալ ու արձակել:

Այդպիսով, իբր թէ, կը վերանայ ներսիսեան դպրոցի խռովութիւնը. այժմ Թայրեանն այն եզրակացութեանն է եկել, որ Երեմիան ճշմարիտ եւ արդար է, մեզաւորն եւ սուտն ես եւ դուք մեծ աշակերտներդ էք, եւ իբր թէ, ես խմորում եմ

ձեր միտքը հակալուսաւորչական ուղղութեամբ:

— Գիտէք, տղայք, Կաթողիկոսը խնդրեց ինձ համբերել մի քանի ժամանակ, մինչեւ ինքը վերահասու կը լինի դպրոցի ներքին կեանքին եւ արդարութիւնը պարզելուց յետոյ՝ կընդունի իմ առաջարկութիւնը:

— Գիտէք, տղայք. . . .

Գիտէք, գիտէք, բայց ես ի ծնէ անհամբեր եմ, այդ թերութիւնս Շանշեանցն իւր համբերատարութեամբ չը կարողացաւ ուղղել:

Մի օր էլ մտայ Կաթողիկոսին եւ ասացի.

— Մինչեւ երբ նստեմ ես դպրոցում, ինձ ուղարկիր Լազարեան ձեմարան:

Կաթողիկոսը գլուխը բարձրացրեց եւ խէթ խէթ երեսիս նայելով ասաց. ընչի՞, չե՞ս հաւանում իմ դպրոցս:

— Հաւանում եմ, ասացի, բայց եղած ուսումը վերջացրինք, նոր առարկայք էլ չես ուզում մտցնել:

— Քո կամքն է, եթէ չես ուզում, կարող ես ուրիշ դպրոց մտնել, սառնութեամբ ասաց Կաթողիկոսը:

— Ուրեմն ուղարկիր ինձ Լազարեան ձեմարան:

— Ես Լազարեանների հետ լաւ յարաբերութեանց մէջ չեմ, Մատթէոս եպիսկոպոսի պատճառաւ մենք միմեանց հետ սառն ենք, ես չեմ կարող խընդրել, եթէ ուրիշի ձեռքով կը յաջողեցնես, ես գէմ չեմ:

— Եթէ այդպէս է, ինձ տուր այստեղի Գիմնազիան:

— Դարձեալ ես չեմ կարող խնդրել, չափահաս ես, այժմ ինքդ հարթիր քո ճանապարհը:

Հարթեցի, գտայ միջոցը, մտայ արքունի Գիմնազիայի չորրորդ դասարանը, բայց միւս օրն ստիպուեցի բաց օդի տակ մնալ:

Ներսիսեան դպրոցից իրաւունք ստացայ ընդ միշտ հեռանալ, բոլոր կարողութիւնս — երկու երեք փոխնորդ, մի քանի կտոր նոր ձեռք բերած գրքեր ու տետրակներս ամրացրի արկղիս մէջ, ծառայի շալակը տուի եւ ուրախ ուրախ եկայ վանքը ու շեշտակի մտայ Կաթողիկոսի սենեակը:

— Եկայ:

— Ո՞ր եւ ի՞նչ տեղից, առանց երեսիս նայելու հարցրեց Կաթողիկոսը:

— Իրեղէններս վերցրի դպրոցից եւ եկայ այստեղ, երկու օր է՝ ինչ Գիմնազիայ եմ յաճախում:

— Շատ ուրախ եմ, բայց մեր տանը քեզ համար տեղ չը կայ, կարող ես ուրիշ բնակարան վարձել քեզ համար:

— Ինչպէս, ի՞նչ միջոցով:

— Այդ էլ քո գիտնելու բանն է, ասաց Կաթողիկոսն եւ գրիչը թաթախեց ու սկսեց գրել:

Ներսէս Կաթողիկոսին ես շատ քաջ ճանաչում էի, գիտացի, որ մեր մէջն ամէն մօտիկութիւն վերջացաւ: Թեւերս կախ, սիրտս կտորած

դուրս եկայ եւ գնացի Կաթողիկոսի եղբօր որդի Նահազդիգեան Յովակիմ աղայի մօտ ու ամէն բան մի առ մի պատմեցի:

— Դժուար թէ կարողանանք Կաթողիկոսին համոզել, ասաց Յովակիմ աղան եւ իսկոյն եկաւ վեհարան: Կէս ժամից՝ նա ինձանից ոչ պակաս կարմրած՝ դուրս եկաւ եւ ասաց:

— Չուր է աշխատանքդ, Կաթողիկոսը խիստ վշտացած է, որ դու իւր ուսումնարանը չես հաւանել եւ գնացել ես գիմնազիա. նա չի ուզում այսուհետեւ քեզ ճանաչել: Վերցրու իրեղէններդ եւ եկ մեր տունը, մինչեւ տեսնենք ինչ կը լինի:

— Դուք գնացէք, ես կը գամ ասացի Յովակիմ աղային եւ չը կատարեցի խոստումս:

Մտայ Վեհապետեան Գէորգ Արքեպիսկոպոսի սենեակը:

— Հը՛, Աշտարակցի, ի՞նչ կայ, ժպտաց լըջադէմ՝ Վեհապետեանը:

— Աշտարակցին աշտարակցու հետ խռովել է, Աշտարակցին պիտի հաշտեցնի, ասացի ես եւ պատմեցի բոլոր եղելութիւնը, չը թափցրի եւ Յովակիմ աղայի միջնորդութիւնը:

— Հիմի մարդ բեր, որ նրա կողմից կողքը ծալի, ասաց Գէորգ եպիսկոպոսն ու տեղիցը վեր կացաւ:

Մի ժամից վերջապէս նա դուրս եկաւ Կաթողիկոսից եւ ասաց. հոգիս դուրս եկաւ, կողբաւեր հայրն ինքն է, շարունակ այն է պնդում, թէ

Նա իմ դպրոցս չը հաւանեց: Վերջ ի վերջոյ հազար օձի լեզու թափեցի, մինչեւ կարողացայ քեզ համար քնելու տեղ եւ սնունդ գտնել, իսկ դասական պիտոյք, իսկ հագուստ, իսկ ուսման վարձ (այն ժամանակը տարեկան երեք մանէթ էր) միանգամայն մերժում է: Գնա իրեղէններդ դիր զանգակատան տակի սենեակը, այն տեղ էլ ապրիր մի քանի ժամանակ, մինչեւ իծանը դուրս գնան գլխիցը:

ԼԲ.

Երեք ամիս շարունակ գիմնագիւ եմ յաճախում, չորրորդ դասարանում ընդունուած եմ ոչ իբրեւ իսկական աշակերտ, այլ ինչպէս կամաւոր ունկնդիր՝ առաջիկայ տարին աշակերտ համարուելու պայմանով:

Թէպէտ ռուսաց լեզուի ուսուցիչը չի կարողանում հաշտ աչքով նայել երեսիս՝ прилага-ТЕЛЬНЫЙ (ածական) բառը լաւ արտասանել չը կարողանալուս պատճառաւ, բայց միւս վարժապետները հետս քաղցր են:

Ամէնից աւելի յարգ ունէի հայոց լեզուի ուսուցիչ Արարատեան Առաքել վարժապետի եւ կրօնի ուսուցիչ Տէր-Յովսէփ Օրբելլու մօտ:

Նոքա երկուսն էլ ժամանակի հայ գործիչներից էին:

Երկու անձնաւորութիւն վայելում էին այն
ժամանակ քաջ հայկաբանի կոչում՝ Յակովբ վար-
ժապետ Կարենեանց եւ Առաքել վարժապետ Արա-
բատեանց։ Նախամեծարութիւնը երբեմն Առաքել
վարժապետի մասն է եղել, երբ վերջինս դասա-
տու է եղել Ներսիսեան դպրոցում, իսկ պատմու-
թեանս ժամանակը առաջնութիւնն Յակովբ վար-
ժապետի կողմն էր։

Յիշեալ երկու հայկաբանները միմեանց ան-
հաշտ ախոյեաններ էին. չը գիտեմ՝ հաշտ էին թէ
խուով, բայց Ներսիսեան դպրոցում շարունակ սար-
սաւանք էի լսում Արարատեանի հասցէին Կարե-
նեանցից շռայլած, իսկ գիմնադիայում Առաքել
վարժապետն էր փոխարէնը վերադարձնում։

Այսքանը կարող եմ անկեղծ օրէն ասել, որ
Յակովբ վարժապետն աւելի ազատամիտ էր եւ
ժողովրդական, քան թէ Արարատեանը։ Խորաման-
կութեան եւ ուղիղ հայեցակէտի կողմից նոյնպէս
գերակշռութիւն ունէր Կարենեանցը. դալով հեռա-
տեսութեան, անձնական հաշիւների միտումներին,
շահագիտական նրբութիւններին եւ առհասարակ
ամենատեսակ հմտութիւններին՝ իւր ժամանակին
շատերը կը տկարանային մրցել Կարենեանցի հետ.
միաժամանակ ուսուցիչ էր Ներսիսեան դպրոցում,
միաժամանակ կապալաւու էր Բէհրուզեանց բաղա-
նիքների, միաժամանակ եւ հացտիւճաւու էր, ունէր
իւր առանձին փոռներն ու թոնիրները, որ տեղերից

մեծ քանակութեամբ օրական հաց էր ծախում: Աւր որ ինչ ազգային խորհրդածութիւն լինէր, առանց նրա մասնակցութեան չէր. իւր ժողովրդականութիւնը վայելում էր, ինչպէս պատմում են, Կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեան օրերից հետէ: Չը գիտեմ, առում են, իբր թէ Կարապետ եպիսկոպոսի մօտ փոքրաւոր է եղել եւ իւր ճարպիկութեամբ կարողացել է մեծաւորի մօտ դեր խաղալ. ուրիշներից եմ լսել, իբր թէ նա իւր ուսումը ստացել է Կարին քաղաքում:

Կարենեանցի հակապատկերն էր Առաքել վարժապետը, մի ողորմելի, մի Աստու գառը մարդ, գոնէ այսպիսի տպաւորութիւն արեց նա իմ վերայ գիմնազիայում: Կը մտնէր դասարան, ուր ժողոված էին լինում չորրորդ դասատանից մինչեւ 7-րդ դասարանի բոլոր հայ աշակերտները եւ, կարծես, թէ վախենում էր որ եւ է աշակերտի դասի կանչել: Աղմուկ, շփոթ, փոշի, անուշադրութիւն նրա դասարանի յատկանիշներն էին, ոչ դաս պատրաստել կար, ոչ հայախօսութիւն: Երես պարզ անող համեստ կարգապահներ միայն ներսիսեան դպրոցից եկած տղայքն էին, որոնք թէ անգիր սովորում էին տուած երկու երեք տող Կռիլովի առակներից էմինի Խրիստոմատիայի մէջ եղած ոտանաւորները եւ թէ երբեմնապէս շարադրութիւն էին գրում, ի հարկէ գրաբառ: Մնացեալներից շատերը տառերը հազիւ ճանաչում էին, այլք հեզե-

լով էին բրդագլուճ ընթերցանութիւնը: Երիցեանց Աղէքսանդր, Տէր-Աղէքսանդրեանց Գէորգ՝ այն ժամանակուան Գիմնագիայի քաջ հայագէտներն էին: Զարմանալին այն է, որ Առաքել վարժապետը բոլորին անխտիր շարագրութիւն էր յանձնում գրելու եւ ուզում էր, որ իր պատուիրածները կատարուած լինէին: Ինքնախարէութիւնով մխիթարուում էր Արարատեանը. մեծ գովեստներ էր շուայլում, երբ տեսնում էր, որ հայ տառերը հազիւ որոշող աշակերտը ներկայացնում է իրան քիչ ու շատ տանելի մի շարագրութիւն, իսկոյն ահագին 5 թուանշանը բազմացնում էր: Բայց ինչպէս էին շարագրութիւն գրում, հարցնող կը լինի ինչ ձանից:

Ասեմ.

Մինչեւ իմ գիմնագիւ մտնելս, կերեւի յիշեալ հայագէտներն էին որ եւ է բան կարկատում եւ ընկերների ձեռքը տալիս: Իմ մտնելու օրից, ես էի գրում:

Բոլորեքեան առանց բացառութեան այն ժամանակուայ գիմնագիւայի աշակերտները քաղաքի իշխանների ու ծառայողների—այսպէս ասած՝ ազնուականների որդիքն էին. հիմիկուայ պէս հասարակ դասակարգի որդւոց համար չէր. անունն էլ համապատասխանում էր նշանակութեանը «Թիֆլիսի ազնուականաց գիմնագիւ»:

Հետեւաբար՝ բոլորեքեան փափկակեաց «մօր

պահած, երես տուած մանուկներ էին, որոց տներու մը չէր լսուում հայի խօսքը:

Միջանկեալ ասենք, այն ժամանակն ընդհանրապէս Թիֆլիսումը հայերէն խօսքը շատ սակաւ գաղթականների սեպհականութիւնն էր, ուստի նր նոր նոր սկսել էր գործածական դառնալ բարձր շրջաններում, այսինքն այն դասակարգի մէջ, որոց որդիքը գիմնազիական էին, իսկ մնացեալ տեղերը վրացերէնն էր թագաւորում:

Ահա յիշեալ երես տուած քաղցրապարտ աշակերտները շրջապատում էին ինձ եւ շաքարահացերով ու քաղցրեղէններով տրաքացնելով խընդրում էին իրանց համար շարագրութիւն գրեմ, իրանց կրօնի ու հայոց լեզուի դասեր սերտացնեմ: այսինքն ես բառէ բառ կարդամ, իրանք թութակի նման առանց հասկանալու կրկնեն:

— Ապրիս, ապրիս, Պռօշեանց, բանի գու եկել ես, մեր տղայքն արիաջանացել են: Տեսնում ես ինչ գեղեցիկ շարագրութիւն են գրում: ձեր փուչ Յակովբ վարժապետը կարող է այսպէս լաւ աշակերտներ պատրաստել: Յետոյ ոգեւորուած՝ աւելացնում էր. «արենք՝ ինքն ինչ գիտէ, որ ինչ սովորցնի, ես նրան աշակերտ չեմ պահիլ, անիծած, անուռն էլ հայկաբան է գրել ու աշխարհքի աչքերը փոշի փչելով ման գալիս: Հայոց մէջ միայն երկու հայկաբան կայ Ռուսաստանում. Թիֆլիսումն ես եմ, Մոսկովումը տիրացու Մսեր վարժապետը:

ձեր Յակովբ վարժապետն երբ կարող է մեզ հա-
ւասարուել, նրա գրած շարագրութիւնը հինգ տա-
րեկան երեխէն էլ կը հասկանայ, իսկ ես ու Մսերն
այնպէս խրթին գրաբառ կը գրենք, որ սատանէն
էլ չի կարող միտք հանել, ես ինչ գիտեմ, Վենե-
տիկցի ֆռանգի վարդապետների միջից գուցէ մէկն
ու երկուքը կարողանան մեր գրածները թարգմա-
նել ու քերականորէն վերլուծել:

Ես լսում էի Սուաքել վարժապետի ինքնագո-
վութիւններն ու հեզնական ժպիտով համեմատու-
թիւն անում սորա եւ Յակովբ վարժապետի մէջ.
Սրարատեանի տափակ ու բոլորակ երեսը, ոչխարի
աչքերը, գերծած ընչացքը, ստորին՝ դէպի յառաջ
կորացած ծնօտը, սեւացած ատամները, հնութիւ-
նից դեղնած, կարծեմ, կեղծամբ, կարճ հասակն
եւ երկճղի ձայնը, մանաւանդ անձոռնի կարգալը
— այս բոլորը միասին գումարած՝ բթամտութիւն
եւ անշնորհքութիւն էին արտայայտում. ընդհա-
կառակն Կարենեանցի բարձր հասակը, երկայն, տաճ-
կանստանցիներին յատուկ ճաղատ գլուխը, խոշոր
ու սրահայեաց աչքերը, արծուի մեծամարմին քի-
թը, հաստամազ ու խառնուած ընչացքը, առնա-
կան հաստ ձայնը մի տեսակ խորամանկութիւն էին
մատնացոյց անում ու սուր խելք, բայց ոչ անկեղ-
ծութիւն:

Մանաւանդ՝ երբ որ խօսելու կամ շարագրու-
թիւն ուղղելու եւ առ հասարակ լրջմտօրէն գոր-

Ծելու կարիք էր զգում ու դիմում էր քթախոտի օգնութեանը, այդ ժամանակ նրա ճակատի վերայ ժողովում էին կնճիռներ, յօնքերը ծածկում էին աչքերը, ծանրախոհ դէմք էր ստանում: Այդպիսի դրութիւնը դիմացի մարդի վերայ մի վսեմ տպաւորութիւն էր թողնում, բայց եւ այնպէս ոչ սէր:

Միւրոյ զգացմունքով լցուում էր մարդ՝ Շանշեանցի երեսին նայելիս:

Սէր ու պատկառանք ներշնչում էր եւ գիմնազիայի կրօնի ուսուցիչ Տէր-Յովսէփ Օրբելին:

Մի համեստ, մի քաղցրախօս հոգեւորական էր նա: Ներսիսեան դպրոցում եղած ժամանակս՝ Օրբելունն ես երբեմնապէս տեսնում էի ներսէս Կաթողիկոսի մօտ գալուս եւ գնալուս, անունը շատ էի լսել, եւ այդքան:

Այժմ գիմնազիայում ես արժանացել եմ նրա խորին ուշադրութեանը, իբրեւ ամենալաւ հայագէտ գիմնազիստը՝ պատուէրներ էի ստանում նրանից օգնել իւր աշակերտներին՝ դասերը պատրաստելու, որ եւ սիրով կատարում էի:

Հայր Օրբելունն ոչ միայն ես, բոլոր աշակերտները յարգում էին, նրա դասերը շատ խաղաղ էին անցնում, մի տեսակ պատկառանք տիրում էր դասատանը Օրբելու դասերին. թէպէտ ոչ Առաքել վարժապետի պէս ճղճղում էր եւ ոչ բարձր խօսում, կամ աշակերտներին նախատում:

Մոռացայ ասել, որ Առաքել վարժապետը մի-

այն Կարենեանցի վերայ աննպաստ կարծիք չունէր իբրեւ անհայագիտի:

Այն ժամանակ Քիֆլիսում հայագիտութեան հռչակ վայելում էին եւ երկու վարժապետներ, որոնք ոչ գիմնազիայի ուսուցիչ էին եւ ոչ Ներսիսեան դպրոցի, այլ իրանց համար մասնաւոր ուսումնարաններ էին պահում: Նրանցից առաջինը համարուում էր «Եգիպտացի» մականուանեալ Կարապետ վարժապետ Բէլախեանցը, իսկ երկրորդը Յարութիւն Մահնազարեանցը, որ առանց ազգանունի կամ մականունի, լոկ Յարութիւն վարժապետ էր կոչուում:

Այս երկու մարդի վրայ Արարատեանը վատ կարծիք ունէր, իսկ Կարենեանցը արհամարհում էր եւ երբէք չէր խօսում:

Մի անգամ միայն՝ երբ մենք հարցրինք, քիթն ու մուտքը հաւաքեց, ձեռքը թափ տուեց եւ ասաց. էհ, չարժէ նրանց վերայ խօսել, նրանք ձեր աշակերտները կարող են համարուել:

Եւ այսպէս, երբք ամիս է, որ ես գիմնազիայի ունկնդիր եմ:

Ճաշում եւ քնում եմ վեհարանում: Հագուստս Ներսիսեան դպրոցի լայնաբզանց կապէն է, իսկ գրքերս՝ ընկերներէս հները:

Փող չունիմ, միջոց չունիմ, դասական պիտոյքի անհրաժեշտութիւն կայ, Ներսէս Կաթողիկոսը բարկացած է, չի տալիս, ի՞նչ անեմ: Մոլո-

լորուել ու պաշարուել եմ, գործ չի յառաջ գնում,
եթէ այսպէս շարունակուի, երբէք չեմ կարող քըն-
նութիւն տալ:

Իմ տարաբաղդութիւնից՝ Չատկից յետոյ Պա-
թողիկոսը գնաց Էջմիածին, ես մնացի միանգա-
մայն անտէր:

Ստիպուեցայ թողուլ գիմնազիան:

Լաւ էր, որ այդ ժամանակ Ներսիսեան դըպ-
րոցի տէրտէրութեան պատրաստուող աշակերտ,
Սօմխէթ գաւառի Թոնէթ կոչուած գիւղից Սար-
գիս Սարգարեանցը դիմեց ինձ եւ խնդրեց արձա-
կուրդներին հետը գնալ իրանց գիւղը եւ պատ-
րաստել իրան:

Եթէ Սարգարեանցը չէր եղել, մտադրուել էի
Թիֆլիսին հրաժեշտ տալ:

ԼԳ.

Չորս տարի է գիւղից հեռացել էի, գիւղա-
կան պարզ կեանքին կարօտել էի:

Առաջին իսկ գիշերը լցրի երկար ժամանակ-
ուան փափագս:

Դիպուածով ես ընկել էի մի կատարեալ նա-
հապետական բազմամարդ գերդաստանի մէջ:

Ինչպէս գիւղացի, անձանօթ չէի նահապե-
տական կեանքին, բայց միտորն, մի յարկի ներքոյ հա-
մախմբուած քառասուն հոգի՝ առաջինն էի տեսնում:

Րնտանիքի հայր նահապետն ութսունից աւել ամառներ ու ձմեռներ ճանապարհ գրած՝ վերին անկիւնումը յենուած էր ձեռնափայտին. նրա կրտսեր եղբայրը՝ նոյնպէս զառամեալ չէր վստահանում իւր երէց եղբօր մօտ մի կարգում նստել. նա կուչ էր եկած ստորին անկիւնում:

Տան կառավարութիւնը՝ արտաքինը յանձնուած էր նահապետ երէց եղբօր անգրանիկ որդուն, որի որդին էր ինձ հիւրընկալող Սարգիս Սարգաւրեանը, միւս վեց կրտսեր եղբայրները, ինչպէս եւ ծերունի հօր եղբօր չորս որդիքը, բոլորեքեան հլու հնազանդ էին Պաւլէին (կառավարիչ եղբօրը— Սարգսի հօրը): Տան ներքին տնտեսութիւնն եւ կերակրի շերեփը կրում էր Պաւլէի կինը— Սարգըսի մայրը:

Այսպիսով՝ տասը չափահաս տղամարդ եւ նոյնչափ հարսներ՝ իւրեանց մեծ ու մանր զաւակներով ընտանիքի նահապետ մեծ եղբօր երէց որդու եւ նորա կնոջ ձեռքին էին մտիկ տալիս:

Ահա վեր է կենում ամենից շուտ լուսադէմին Պաւլէն եւ իւր կնոջ հետ խորհրդակցելով՝ տնօրինում օրուան անելիքը. ի՞նչ եւ ի՞նչ պիտի կատարէ ընտանիքի ամէն մի արական անդամը:

Ո՞վ պէտք է գնայ գութանին հսկելու, ո՞վ հնձուորներին նայելու, ո՞վ կթան նախիրը ո՞ր հանդը քշելու, ո՞վ հորթերը, ձիանքը, ոչխարը, եզները, գոմէշները, եւ այլն:

Մի փոքրիկ գիւղ էր առանձնապէս Թօնէթի մէջ Սարգարովենց, կամ ըստ իսկականին, Սարգիւլովենց տունը. 40 կթի կով՝ ամէն առաւօտ եւ երեկոյ՝ գիւղից դուրս շինած իւրեանց գոմանոցումը կթուումէին եւ քշուում արօտի, 20 գոմշի կաթն ու կարագը, մածունը երբէք չէր խառնուում կովի կաթի եւ կաթնեղէնի հետ: Ահագին փայտէ լայնափոր տաշտերի մէջ փռուում էր երեկոյեան կթած կաթը՝ միւս առաւօտն արաժանը քաշելու եւ իւղ հարելու համար:

Այն ի՛նչ հաստ արաժան էր, որ կաթնատնտեսուհի նշանակուած երեք հարսները լայն ափսէներով քաշում էին կաթի երեսից:

Պարտականութիւն էր դարձել իմ ու Սարգսի համար, ամէն առաւօտ, ի հարկէ ուտիս օրերը, արելը գեռ չը ծագած՝ ելնել անկողնից եւ մեզ առաւօտեան հովին տալով՝ մի ախորժեղի դբօսանք անել եւ հանգստութիւններս առնել գոմանոցի սենեակումը, ուր մեզ սպասում էր թարմ եւ համեղաճաշակ արաժանը, կամ նոր կթած, գոլորշին երեսին խաղացող կաթը եւ կամ սերն երեսին գոմշի թանձր մածունը:

Թէպէտ տան բոլոր անդամներից հաւասարապէս սիրուած էինք, բայց մի առանձին համակրութիւն բացառապէս վայելում էի ես Սարգսի հարսնացու քրոջից՝ մի թխադէմ, սեւաչեայ եւ քաղցրարիւն գրաւիչ օրիորդից:

Չը գիտեմ՝ հարսների հրամանաւ, թէ մասնաորապէս իւր բացառակի ցանկութեամբ ինձ եւ եղբօրը գումանոցումը հիւրասիրելու պարտքը օրիորդն ինքն էր սիրալիր կատարում: Ստեղ չեմ կարող, մեզ տեսած ըոպէին յանկարծակի շփոթմունքը, կարմրել ու սիրթնելը, այլայլուելն եւ գողունի հայեացքն օրիորդին մատնում էին. օրիորդն ինձ համակրում էր, չը նայեցեալ՝ որ իմ կողմից՝ բացի սառն յարգանքից՝ ոչինչ հետապնդութիւն տեղի չէր ունեցել: Ուզենայի եւս, չէի կարող, ոչ օրիորդը, ոչ իրանց ամբողջ գերդաստանն եւ ոչ բոլոր գիւղը հայերէն եւ ոչ մի խօսք չէին հասկանում. իմ գիտեցած հատ ու կտոր, սուտ սխալ վրացերէն բառերի պաշարով սիրախօսութիւններ էի անելու, այդ մի եւ նոյն էր, թէ կաղ իշով կարաւանի խառնուել:

Չեմ կարող ասել, թէ մնջկատակութիւններով էի երկու ամիս օրերս անցնում Թօնէթումը, ինգելով, կակազելով, որպէս եւ իցէ, միտքս հասկացնում էի: Այս դէպքում ես իմ տանուտէրերից շատ երջանիկ էի եւ իրանք էլ վկայում էին: Խեղճերը գոլով հայ, մայրենի լեզուով հացի անունն էլ չէին գիտում:

Թշուառները թէպէտ շատ հայրենի ծէսեր կորցրել էին, բայց անկեղծ հայեր էին, որ կտոր կտոր անէիր, իրանք հայութիւնը չէին ուրանալ:

Եկեղեցին է այն հաստաբուն եւ պնդարմատ

Ճառը, որի հովանու ներքոյ ապրում են համատարած աշխարհում Լուսաւորչու զաւակները՝ կորցրած լեզու, ազգային սովորութիւն, կտրուած իրաւորներից եւ պահած միայն Թաղէոսի եւ Բարդուղիմէոսից աւանդած քրիստոնէական կրօնը:

Մի փոքրիկ եկեղեցի ունէին Թօնէթեցի հայերը գիւղից վեր, բլրակի գլխին, ինչպէս երեւում է, խեղճերը ամիսներով չէին արժանանում ներս մտնել եւ աղօթել, անբարեխիղճ քահանան հարկ պատահած օրերն ու զատկին եւ ջրօրհնէքին է ժամ ասելուս եղել: Մասամբ մեղաւոր էլ չէր, երեք չորս գիւղի մի ծխատէր քահանայ էր, ինչպէս հասնէր:

Տնաւեր տէրտէրն այնքան բարձի թողի էր արել ժողովրդին, որ արմատացել էին նրանց մէջ դրացի ազգերի կրօնական ծէսերը:

Ահա թէ ի՞նչ պատահեցաւ:

Թօնէթից մի ժամու ճանապարհով հեռի Դվալթա (Փոքր Թօնէթ) գիւղում Աստուածածնի Վերափոխման կիւրակէին պատարագ էր:

Տէրտէրն ինձ եւ Սարգսին խնդրեց գնալ եւ տիրացուութիւն անել:

Հաւաքուել էին այնտեղ եւ Թօնէթեցի ժամակարօտ հայերը:

Ո՛րքան գարմացան եւ ուրախացան խեղճերը, երբ խաղողի օրհնութիւն կատարեցինք:

Ծերունիքը չէին յիշում այդպէս բան:

Այդ տարին Վերափոխումն եկել էր Օգոստոսի, չը գիտեմ, 11-ին, 12-ին, թէ 13-ին. մի խօսքով ոչ Օգոստոս 15-ին՝ ինչպէս յունադաւան եկեղեցու սովորութիւնն է:

Պատարագից յետոյ՝ քահանայի հետ մենք եւ ամբողջ երկու գիւղի ժողովուրդը հրաւիրուած ենք պատարագատիրոջ տունը:

Մեծ հացկերոյթ է:

Մի ընդարձակ տուն գլխէ գլուխ փռուածքի վերայ նստոտած են բազմութիւնը:

Այ գարմացք:

Սեզանը փռուած է եւ փոխանակ ուտիսեղէնի՝ պնակներով շարուած են հատխաշ լոբի, սիսեռ, բողկ եւ այլն:

Չարմանքս երկպատկուեց, երբ կերակրները քաշեցին եւ բոլորը պահոց ուտելիք:

— Ի՞նչ է այս, տէր հայր, գառնում եմ ես դէպի քահանայն:

— Այո՛, որդի՛, ասում է նա, սրանց սովորութիւնն այսպէս է, մինչեւ Աստուածածինը չը գայ, սրանք պահք չեն խախտիլ:

— Ի՞նչպէս թէ Աստուածածինը գայ:

— Այսինքն՝ Աստուածածնի տօնի օրը միայն սրանք իրանց պահքը բաց կանեն:

— Ի՞նչ է ասում, գրգռուած հարցնում եմ ես, հապա այսօր Աստուածածնի Վերափոխման կիւրակէն չէ՞:

— Դու ուղիղ ես ասում, բայց սրանք Աստուածածին կատարում են օգոստոսի 15-ին, վրացիների հետ:

— Եւ դու թո՞յլ ես տալիս:

— Դէ, ես ի՞նչ կարող եմ անել, մարդիկն ուզում են մի շաբաթի փոխարէն երկու շաբաթ պահք մնալ, այդ իրանց հոգուն աւելի շահ է, քան թէ վնաս:

— Գետինը մտնեն քեզ նման քահանայքը, գոչեցի ես եւ տեղիցս կանգնեցի ու՝ մասամբ իմ գիտեցած վրացերէնով եւ մասամբ Սարգսի թարգմանութեամբ՝ հասկացրի հայերին մեր եկեղեցու ծէսն ու դիրքը, բացատրեցի շաբաթապահքերի նշանակութիւնն եւ այն օրուան խորհրդաւորութիւնը:

Ամէնքը բերանարաց ականջ էին դնում եւ խէթ խէթ քահանայի երեսին նայում. — ի՞նչպէս թէ Հայոց եկեղեցին այսօր է կատարում Աստուածածնի տօնը, ի՞նչպէս թէ հայ եկեղեցու կանոններով Աստուածածնի տօնը պարտադիր չէ կատարելու անպատճառ օգոստոսի 15-ին, այլ օգոստոսի մէջ, առանց ուշադրութիւն անելու օրաթուին, ի՞նչպէս թէ մենք երկու շաբաթական պահք չենք ունեցել եւ քահանան մեզ մինչեւ այսօր ոչինչ չի ասել:

— Եթէ այդպէս է, սիրելի Հայ եղբայրներ, ձայն տուի ես, խնդրեմ ձեզանից ոչ ոք ձեռքը կերակրի չը մօտեցնի, իսկ դու, հիւրասէր ժամատէր, խընդ-

րեմբերես այս տեղ իւղ եւ մի քանի ձու:

Երեսունից աւել հաւկիթ, մի մեծ ամանով իւղ բերին առաջս:

Ես պահանջեցի մեծ կաթսայ, իւղը ածեցի մէջը, տարայ կրակին դրի, հալեցրի, ձուերը ջարդեցի, մխուր կամ եքուր կոչուած ձուածեղը ձեռաց պատրաստեցի եւ բերի:

Առաջին պատառն ինքս կերայ, երկրորդը Սարգիսը, երրորդը տէրտէրին ուտացրի եւ ապա իմ ձեռքով բոլոր ժողովրդին մասնատրեցի:

Մի քանի ծերունիք շատ տհաճութեամբ եւ ակամայից էին ճաշակում, ասելով՝ որ կեանքների մէջ առաջին անգամն է Աստուածածնի պահքը խախտում են, իսկ տէրտէրը հինգ ըոպէաչափ աղաչում էր ինձ չը գայթակղեցնել իրեն.

— Օրհնած, ժամարար տեղովս պահք խախտե՞մ, կրկնում էր քահանան:

Եւ չէր էլ խախտիլ, եթէ սպառնալիքներիցս չը վախենար, երդուեցի, որ սուրբ պարտք կը համարեմ Թիֆլիս գնացած օրս զեկուցանել Կոնստանտնուպոլիսին, սպառնացի գրել եւ Էջմիածին Ներսէս Կաթողիկոսին, ասելով, որ իմ բարերարս է եւ համագիւղացիս ու ազգականս: Վերջին բառը սուտ էր, Ներսիսի հետ մենք ոչինչ ազգակցութիւն չունէինք:

— Ե՛հ, որ Կաթողիկոսն էլ պաս է ուտում, ես նրանից շուտ կուտեմ, ասաց տէրտէրն ու ձուածեղը կուլ տուեց:

Երեկոյին մենք դեռ Թօնէթ չեկած, մեր քա-
ջագործութեան համբար մեզանից շուտ էր տա-
րածուել:

Այդ օրուանից գիւղացիք մի տեսակ ակնա-
ծութեամբ էին վարուում հետս:

Ափսոս Սարգարեանց շէն օջաղ, ինչպէս մօտ-
ժամանակներս ստուգեցի, տունը քանդուել, կտոր
կտոր, բաժան բաժան է եղել, ծերունիքը, Պաւլէն
եւ եղբայրներից մի քանիսը մեռել են, աղքատու-
թիւնն իւր շնորհքը ցոյց է տուել եւ մի քանի
որբեր հազիւ օրական պարէնը հայթայթում են:

ԼԴ.

Ամբողջ ամառն ազատ անհոգ ճպուան նման
օդ ծծեցի ու աշնան բերանին վերագարձայ Թիֆլիս:

Աւային գիշերը հիւրընկալուեցանք Սարգա-
րեանցի աղգականի տանը, միւս օրը նա գնաց
Ներսիսեան դպրոց, ես մնացի փողսցում:

Վանքումը ոչ ոք չը կայ, ծանօթ եւ ոչ մէկը
չունիմ, իմ ծանօթներս ընկերակիցներս էին ու
վարժապետներս. առաջինները՝ ոմանք որդեգիր եւ
այլք անձեռնհաս ինձ պատասպարելու, գրպանումս
էլ մկներն են պարում:

Մինչեւ ճաշ թափառեցի, ոտքերս ինքնաբե-
րաբար գէպի հացալաճառներն են մօտենում, բայց
անփողութիւնս ինձ յետ է կասեցնում, քաղցածու-

Թիւնն ստիպում է ձեռք մեկնել փռնչուն, իսկ պատուամոլութիւնս հակառակն է պնդում:

Երկար դիմանալ չի լինիլ, մի որոշում պէտք էր անել եւ արի. միտքս բերի դարձեալ իմ Եսայի բիձա Աբիսողոմեանցին— եւ մտայ նրա մառանատունը:

— Ա՛հ, գանա իս մեռած իմ, որ զու քաղցած մնաս, բացականչեց Եսայի բիձէն եւ ինձ կուշտ կերակրեց:

Իլ չը մտածած, թէ ո՛ւր եմ գիշերելու, ուրախ ուրախ շնորհակալութիւն արի բիձա Եսայուն եւ դուրս եկայ ուղղակի քայլերս ուղղեցի դէպի սուրբ Սարգսի թաղը:

Այնտեղ էր կենում Յակովբ վարժապետը:
Դուռը բազխեցի եւ ներս մտայ:

— Օ՛, օ՛, օ՛ . . . բարեւ Պա՛օշ, դու հազար բարի՛, էդ ո՛րտեղից:

Իրութիւնս առանց քաշուելու յայտնեցի վարժապետին:

— Ոչի՛ննչ . . . թթախոտը քաշելով ծոր տուեց վարժապետը, քեզ համար մի անկիւն եւ մի կտոր հաց Աստուած տուել է, մեր տունը քեզ լտուն, Թորոսը քեզ եղբայր:
— ան թորոս Զարֆասեան Յակովբ վարժապետի հոգեղաւակն էր:

Կարենեանցն անորդի էր, Թորոսին էր օրգեգրել, որով գերդաստունի թիւը երեքանում էր:

ինքր, կինը եւ Թորոսը:

Վարժապետն ինձ յատկացրեց իւր հինգ սենեակներից մէկը, ինձանով դառանք չորս հոգի:

Այնուհետեւ ապրում էի Յակովբ վարժապետի տանը:

Իմ գալուս երկրորդ օրը չորեքշաբթի էր: Նստեցինք ճաշի:

Ճաշ հօ չէր, որ ես կերայ, զահրումար, զառու զխկում, չօռ ու ցաւ էր ինձ համար, ինչպէս ասում են գիւղացիք:

Առաջս դրել են մսով արգանակ, անուշ գոլորշին քիթ է ծակում, իսկ ես նստել եմ եւ բերանս պինդ փակել, կարծես թէ իմ նախկին ընկեր Մկրտիչն ու վանքի սարկաւազներն են բազուկներս բռնել, մնի կտորը բերանս կոխում եւ ստիպում պահքս խախտել:

Այդ խաղը խաղացին նրանք մի տարի յառաջ վեհարանումը՝ բուն բարեկենդանի ուրբաթ օրը: Թիկունքիս վրայ պառկացրին, կռներս բռնեցին, դրգալի կոթով ատամներս յետ բաց արին եւ մաժուճը լցրին կոկորդս:

Մինչեւ մաժուճը ներս չը գնաց, ինձ բաց չը թողին: Դարձեալ յաղթողը ես եղայ:

Դուրս գնացի, մատով կոկորդս գրգռեցի, մաժուճը յետ բերի եւ այնքան ողողեցի, որ բերանս դառաւ կլայեկած կաթսայ:

Այժմ Յակովբ վարժապետի սեղանի վերայ

ինձ ստիպող չը կայ: Նկատեցի, որ վարժապետը կնոջն ու Թորոսին ակնարկով լռել պատուիրեց ու իրանց գործը շարունակել, ինքն էլ ոչինչ չի խօսում եւ գլուխը կախ ուտում է:

Ճարս կտրեց, ցամաք հացին զօռ տուի: — Չէ, սիրելիս, հացի թանգութիւն է, ասաց վարժապետը եւ պնակով կտրտած սեղանի մէջտեղը դրած հացը վերցրեց, յետ դրեց. մենք քաղաքացի ենք դարձել, գիւղացու պէս հացով չենք տուրդւում, երբ որ տաք կերակուրը առաջներինս ուտող է կանչում:

— Էսօր չորեքշաբթի է, համեստ ժպիտով պատասխանեցի ես:

— «Չոր ինչ դնիցեն առաջի ձեր, կերիջիք անխտիր», կրկնեց վարժապետը Քրիստոսի խօսքերը:

— Մեղքը:

— Մեղքն ուտողի վիզը: Կեր, Պաճշ, կեր, ես քո վարժապետդ եմ, դժոխքը գնալուս քեզ էլ ոտքիցս կապած՝ քարշ կը տամ: Կեր, մի երկմտիր, լրջադէմ ասաց նա, մեր տանը գայթակղուող չը կայ, գիւղերումը ոչ ես կուտեմ եւ ոչ քեզ կը թողեմ:

Կերայ, բայց վայ էն ուտելուն: Այն օրն երեք անգամ փսխել եմ:

Հետզհետէ պասակերութիւնը հեշտացաւ, ուրբաթ չորեքշաբթուն հետեւեց շաբթապահքը, ապա մեծ պահքը:

Այսօրս իմ ջրաղացաբարի նման պինդ ստա-

մորս, սլաս սլահած ժամանակս ամէն բան մտրտում էր, յետոյ, յետոյ՝ թուլացաւ, ուժահատեցաւ եւ մշտաբորբորումն ստացաւ. երկու գրգալ ոսպնաթանը մահուան դուռն է տանում ինձ ու յետ բերում, դեղերով արհեստական մարտեցողութիւն եմ յառաջ բերում: Ի՞նչ էք ասում, հիմի է լաւ, թէ այն ժամանակը:

Մօտ երեք ամիս ապրեցի ես Կարենեանցի տանը, խեղճը շատ աշխատեց իմ համար սաշտօն ձարել եւ չը գտաւ: Ի՞նչ անէր նա, վաճառակա՜նութիւն ես մերժում էի, արքունի ծառայութիւն նոյնպէս չէի սիրում, արհեստի բոլորովին ձգտումն չունէի, տէրտէրութեան յարմար ձայն եւ ցանկութիւն նոյնպէս պակասում էր, էլ ի՞նչ գործ ձարէր:

— Այս ձմեռ էլ կաց մեր տանը, մինչեւ գարուն, տեսնենք ի՞նչ կը լինի, ասաց վերջապէս վարժապետը, տունդ տաք, փորդ կուշտ, հագուստի էլ դեռ պէտք չունիս, հարկ եղած ժամանակ դրացաւն էլ կը քաշենք, Աստուած ողորմած է:

— Է՛լ բաւական է, անգործութիւնից գժուում եմ, ասացի ես եւ մի օր բարեւ մնայ տուի ամէնքին, ֆուրգոն նստայ եւ դէպի իմ ծննդավայրն Աշտարակ:

Այդ դէպքում ես լսեցի եւ հնազանդուեցի Նանշեանցի խորհրդին, որ դեռ սպասում էր Ներսիսեան գալոցում Կաթողիկոսի անելիք կարգադրութեանը:

1857 թուին Շանշեանցն ընդ միշտ թողնում է Ներսիսեան դպրոցը Ջալալեան Սարգիս եպիսկոպոսի առաջնորդութեան օրով, Ներսիսի մահից յետոյ:

Սարգիս եպիսկոպոսն իւր համախոհների հետ քանսարկութեամբ դեռ եւս Ներսիսի կենդանութեամբն էին իրանց որոգայթները լարել:

Այժմ քարն էլ է իրանց ձեռքին, ընկոյզն էլ:

ԼԵ.

Հայրենիքիս տեսութիւն անելուց յառաջ՝ աւելորդ չէր մի քանի լրացուցիչ արտաքին դէպքեր չը թողուլ առանց ուշադրութեան:

Մի անգամ յանկարծ Թիֆլիսը դղրդաց, ուրախութիւնն ամէնքի երեսին փայլում է, ամէնքը միմեանց շնորհաւորում են, աւետիք են տալիս:

— Ի՞նչ է.

— Լեզգիների պետ՝ Իմամ Շամիլի առաջին նայիբ (նախարար, խորհրդական) Հաջի Մուրատ անյաղթելի հերոսը ապստամբել է Շամիլից եւ ուղղակի եկել է փոխարքայ Վօրոնցուլի մօտ:

Փոխարքան սիրալիր ընդունել է եւ մեծ պատուով հերասիրում իւր պալատում:

Ամէն ոք սրտատրոփ սպասում է տեսնել Դաղստանի կէս-աստուած, ուստի հզօր զօրութեան դէմ կամակորութեամբ դիմադրող հսկային:

Ասում էին, իբր թէ Մովսէս Զաքարեան Արդութինսկի հայազն իշխանը, որ այն ժամանակ Պաղստանի ռուսական բանակի հրամանատարն էր, չի կամեցել ընդունել Հաջի-Մուրատին, հաւատ չի ընծայել նորա անկեղծութեանը, սպառնացել է գլուխը տիգի ծայրին շամփրած՝ ուղարկել փոխարքային, եթէ խորամանկ Ղեգզին կը յանդգնի ռուսի հողի վրայ ոտք դնել, բայց Արդութինսկու սպառնալիքն յօդս է ցնդել, երբ Կովկասի փոխարքայ Վօրոնցովը հրամայել է իշխան Արդութինսկուն սիրով ներս ընդունել Հաջի-Մուրատին եւ ամենայն յարգանօք ուղարկել իւր մօտ:

Ահա եկել է Հաջի-Մուրատը Թիֆլիս եւ փառքի մէջ է:

Իշխան Վօրոնցովը կոչունքներ է անում, ծանօթացնում է լեգզու իշխանին իւր մեծամեծներէ հետ եւ յատուկ օր է որոշել զինուորական զօրախաղի համար:

Էլ չը գիտեմ՝ բացառապէս Հաջի-Մուրատի պատուի համար էր, թէ այլ նպատակաւ՝ մի կիւրակի օր ողջ Թիֆլիսը հաւաքուեց դաքախի հրապարակը:

Ամէնքի աչքը դէպի իշխան փոխարքայի կողմն է, որի ուղեկցութեամբ նստել է լեգզի նախիրը մի գեղեցիկ սպիտակ նժոյգի վերայ եւ գալիս է զօրահանդիսին ներկայ լինելու:

Բարձրահասակ էր իշխան Վօրոնցովը, բայց

իրանից ոչ պակաս բարձրահասակ էր իւր հիւրը:

Սպիտակ չերքեզկան հագին, սպիտակ լեզզու գլխարկը ծածկած, խոժոռադէմ, բայց գեղեցկերես, արծուէքիթ Հաջի-Մուրատն իւր կարճ խուզած ալեխառն մօրուքով մի յաջողավարժ, եւրոպական հմուտ զօրավարի, քան թէ մի լեռնացի վայրենի հրոսակապետի տպաւորութիւն էր անում տեսնողի վրայ:

Զօրքի աջ կամ ահեակ շարժումների եւ տեղափոխութեան հետ իւր քաջամարզ ձին վարելով՝ Հաջի-Մուրատը դիտում էր վաշտերի կատարած մարզութիւնները: Երբեմն էլ ձիու գլուխը դարձնում էր դէպի շրջակայ խմբուած ամբոխը, մի կողմից միւսն էր քշում եւ քաղցր ժպիտով գլուխ տալիս իրան ողջունող բազմութեանը:

Ամբոխի հետաքրքրութիւնը գլխաւորապէս կեդրոնանում էր Հաջի-Մուրատի, լաւ չեմ յիշում, անջ, թէ ձախ ոտքի վերայ: Նրա մի ոտքը պարզ տեսնուում էր անպանդակումը, իսկ միւսը չը կար, ծնկնից ներքեւ սպիտակ լեզզու շալի անդրավարտիկն էր ճօճում:

Ասում էին, որ ծնկնից ներքեւ չը կար, կրտսրուած էր:

Այնուհետեւ ամէն Աստուծո՛ւ օր Հաջի-Մուրատը ձի հեծած, իւր հետ ապստամբած երկու լեզզիների եւ մի օֆիցերի ու երկու դազախների ուղեկցութեամբ ազատ համարձակ քաղաքում շրջում էր:

Տեղ չը թողեց, որ չայցելեց նա:

Լսուում էր, որ երկիցս եւ երկցս բարձրացել է քաղաքի արեւելա-հարաւային կողմի, բուսարանական այգու գլխի սարը, ուր մինչեւ այսօր էլ գտնուում է հինաւուրց մի ամրոց ու այն տեղից գիտել է քաղաքը:

Այն ժամանակը վառօդը պահուում էր յիշեալ ամրոցի մէջ:

Փակագծի մէջ ասեմք, որ միանգամ էլ կայծակը զարկել է ամրոցին, վառօդը բռնկել է եւ քաղաքին բաւականին վնաս հասցրել:

Հաջի-Սուրատը մի անգամ սարը, ամրոցը եւ վառօդի պահեստն այցելելուց յետոյ, իբր թէ այսպէս է ասել իւր հետեւորդ ղազախի օֆիցերին.

— Ափսո՛ս, որ իմ թշնամի ժամանակս չը գիտէի թիֆլիսի վառօդի պահեստի տեղը, վաղուց արդէն վառօդը կրակ տալով՝ սարը բլցրած կը լինէի քաղաքի գլխին:

Չը գիտեմ, քանի ժամանակ մնաց թիֆլիսում Հաջի-Սուրատը:

Նա իրաւունք է ստանում իշխան Վօրոնցոսից ճանապարհորդել թիֆլիսի շրջակայքը:

Գնում է Կախէթ—Թէլաւ, Սղնախ, Զաքաթալայ, դիտում է Կովկասի սարերի ճանապարհները, իմանում է սահմանապահ զօրքերի որքանութիւնն եւ ճանապարհն ուղղում է գէպի Նուխի ի հարկէ, իւր հետ են լինում իւր անբաժան

ուղեկից երկու լեգզիքը, օֆիցերն եւ երկու զա-
զախները:

Հաջի-Մուրատը նուխու շրջակայքն եւս ուշի
ուշով զննելով՝ գնում է գէպի միակ կիրճը, որ
տեղից ճանապարհը տանում է գէպի սարերը:

Այնտեղ մի ապահով տեղում, իբր թէ յան-
կարժ ատրճանակով սպանում է օֆիցերին եւ զա-
զախներից մէկին ու փախչում գէպի սարը:

Ղազախներից մէկը փախչում է, կարճ ճա-
նապարհով իրան ձգում է Արղութինսկու բանակը
եւ զօրապետին եղելութիւնն իմաց է տալիս:

Արղութինսկին շտապում է ճանապարհը կրտ-
րել ու Հաջի-Մուրատին զօրքերով շրջապատել:

Հրացանաձգութեամբ սպանում են Հաջի-Մու-
րատի եւ իւրայնոց ձիանքը:

Լեգզիները ապաստան են գտնում մի կրտ-
րած ծառի կոճղի ետեւը. երկու կողմից հրացանա-
ձգութիւնը շարունակուում է. երկու լեգզիքը լըց-
նում են հրացանները, Հաջի-Մուրատն արձակում է:

Սպանուում են երկու լեգզիքը եւ մնում է ինքը
Հաջի-Մուրատը:

Մի քանի գնդակներ ցցւում են նորա մարմնի
մէջ, բայց հերոսն արիարար խէնչալով կտրում է
իւր արխալզի փէշը, ամրացնում գնդակի վէրքը,
որպէս զի արին չը դուրս գայ եւ դարձեալ կըռ-
ուում է:

Կատաղում է մի հոյ ենթապայ, յարձա-

կումն է անում ուղղակի Հաջի-Մուրատի վրայ եւ ատրճանակը շեշտում ապստամբի կրծքին:

Սեւանում են Հաջի-Մուրատի աչքերը, նա սպանուում է. բայց վերջին շնչումը, մարած ոյժը հաւաքած՝ նա իւր բաց սուրը յաջողեցնում է շարժուել հակառակորդին:

Սուրը կտրում է երիտասարդ ենթասպայի ուսը. սուրը միջից երկու կտոր է լինում, կէսը գետինն է ընկնում, միւս կէսը ցցուում է քաջ տղայի թոքերի մէջ:

Ափսճս կտրծին, իսկոյն հոգին փչում է:

Մի ուրիշ ռուս զօրական, չը գիտեմ սպայ, թէ հասարակ զինուոր, մօտ է վազում, կտրում Հաջի-Մուրատի գլուխը, ցցում իւր սրի ծայրին եւ մօտեցնում իշխան Արղութինսկուն:

Իշխանն երիտասարդին Հաջի-Մուրատի գլխի հետ միասին ուղարկում է Վօրոնցովին, յայտնելով մանրամասն իրողութիւնը:

Ասում են՝ իբր թէ Հաջի-Մուրատի գլուխը մի քանի օր ի ցոյց է դրուած եղել կուսակալի պալատում, ամէն ոք իրաւունք է ունեցել մտնել, տեսնել, թքել դաւաճան հայրենադրժի երեսին եւ դուրս գալ:

Ապա գլուխը խաշել են, մսերը թափել եւ չոր գանգը ուղարկել Պետերբուրգ:

Լսողանց եմ ասում, ինքս չը գնացի, աշակերտ էինք, ո՞վ մեզ թոյլ կը տար:

Լ. 2.

Շատ անյարմար տեղումն էր շինել Ներսէս Կաթողիկոսն իր ուսումնարանը, ինքն էլ նկատում էր:

Մի քանի անգամ լսել եմ այդ մասին խօսելուս այս ու այն նշանաւոր մարդկանց հետ:

— Այ միայն տեղն է անյարմար, Վեհափառ Տէր, պատասխանեց նրան մի խօսակցութեան ժամանակ Շանշեանցը, իբրեւ գպրոցական շինութիւն, միանգամայն անհամապատասխան է. ոչ օդ ունի, ոչ երեխաներին խաղալու բակ ունի, ոչ բաւականաչափ լոյս կայ մէջը եւ ոչ հնար է լինում Սուխրանսկու խանութներում զետեղուած դարձնանոցների կռանահարութիւնից խօսելու կամ լսելու:

— Կը փոխենք, կը փոխենք, Պետրէ, Աստծով կը փոխենք, ասաց Կաթողիկոսը:

Մի օր էլ երբ Շանշեանցը ներս մտաւ, Ներսէսն ուրախ ուրախ գոչեց. իզձգ կատարուեց, փօշտի տներն աճրդով ծախում էին, մենք յանձնեցինք Գաւիթ աղային եւ գնեց, շատ էլ աժան ձեռք բերուեց. օրհնեալ լինին քաղաքիս հարուստները, հէնց որ լսում են, որ մենք ենք կամենում գնել գպրոցի համար, յօժարութեամբ հեռանում են աճրդից:

— Շնորհաւորում եմ, պատասխանեց Շանշեանցը, բայց դարձեալ անյարմար է, սենեակներ կարելի է աւելացնել, բայց ուրիշ պակասութիւններ շատ ու-

նի, բակը փոքր է, տեղը փոսուամն է, երկու կողմից հասարակաց փողոց է:

— Օրհնած, շատ խստապահահանջն ես, քեզ որ մնայ, կը տանես սարի գլխին կը շինես. մի բան մոռանում ես, որ կեդրոն տեղ է, երեսաներին յաճախելը շատ հեշտ է. այս նոր կամուրջը գետի միւս երեսի հայերին մօտեցնում է դպրոցի հետ:

— Խօսքը Վօրոնցոյի կամրջի մասին էր: 1851 թուին գրուեց նորա հիմքը:

Առջ հասարակ փայտեայ նեղ կամուրջ էին կապում ներկայ կամրջից բաւական լիւր եւ հարկաւորում էր երբեմն տարին երկու երեք անգամ փոխել, գետը վարարում, սրբում, տանում էր:

— Ուղիղ էք ասում, Վեհափառ Տէր, բայց Գուք մոռացել էք, որ խաժամուժն ամէն անգամ աղմկելու է դպրոցի շրջակայքում, կամրջի պատճառաւ երթեւեկութիւնը կրկնապատկուել է, դասախօսութեան համար արգելքներ յառաջ կը գան: Մտի պատմութիւնը միտքդ չէ:

— Վնաս չունի, վնաս չունի, Պետրէ, ամէն յարմարութիւն մի մարդի չեն տալ, մտի անցքը մի բացառիկ դէպք է:

Իրաւ, որ մտի անցքը բացառիկ դէպք էր:

Մի օր դասերը նոր սկսուել են. մէկ էլ դրպրոցի երկու կողմից ահագին աղմուկ լսուեցաւ, ճիչ, հայհոյանք, գոռուն գոչիւն, պարապել չի լինում: Հերիք էր որ դասարաններից մէկում ուսու-

ցիչը լուսամուտը բանար եւ նայէր, ամբողջ դասարանները դուրս թափուեցին եւ գէպի կտուրը: Դպրոցի կտուրն այն ժամանակն երկաթապատէր, տափարակ էր եւ փոխարինում էր բակին. մենք կտերն էինք խաղում ու վազվզում: Կտերն էինք աթոռմա թռչում ու ոչ մի վնաս չը պատահեցաւ:

Ահա այդ մտի օրը՝ հաւաքուած ենք կտերը եւ նայում ենք:

Ողջ քաղաքը ստքի վրայ է, համքարները մի քանի հատ մորթոտած եւ մաշկուած ոչխարներ չորս ստքերից բռնած՝ հարայ-հրոցով տանում են ու անգրեւի հայհոյանքներ թափում մի Բէթխուղեանցի հասցէին:

Միս հօ չէր քարշ տուածները, կատարեալ գէշ, լէշ, ջամդաք էր, լղար, կապտած ու հոտած. մօտի մարդիկը քթերի ծակերը մատներով սեղմած ունէին:

Մօտ մի ժամ անցնում է դպրոցի երկու կողմից բազմութիւնն եւ ծայրը չի կտրուում:

Եղելութիւնն այս է, որ մի ումն, կարծեմ, Բէթխուղուով առաջին անգամն է մտցրել մտի մեռնալաճառութիւնն եւ լղար ու նեխած միս է տալիս:

Համքարութիւնը մի քանի ապարդիւն դիմումներից յետոյ՝ քանդել է սպանդանոցը, հանել է նեխած մսերն եւ տանում է Բէհրուղուին ներկայացնելու:

Կարծեմ այդ ժամանակը Բէհրուզովը կուսակալի օգնական էր եւ կենում էր Վօրոնցովի կամրջի մօտ, այժմեան Լօնգօն հիւրանոցի տեղում շինուած բնակարանում:

Համբարը կամեցել է այդ օրը յարձակում գործել Քէթխուզովի տան վրայ, բայց վերջինս ազատել է իր գլուխը՝ Կուր գետի մէջ խեղդուելով:

Ահա այս մտի աղմկի գէպքի մասին էր խօսում Շանշեանցը, խեղճը չը գիտէր, որ մի քանի տարուց յետոյ Ներսիսեան դպրոցի չորս կողմը բազար է դառնալու:

Այն ժամանակը չը կար եւարմըկէն կամ կիւրակի օրուայ բազարը. մի երկու տարի յետոյ փոխեցին այս տեղ:

ԼԷ.

Միայն միան ու դարբինները չէին մեր դասերը խանգարում, օրական նոր նոր ազմուկներ միշտ անպակաս էին լինում:

Երբէք չեմ մոռանում մի բարեկենդանի մուշտակուիւր (բռնամարտ):

Խաժամուժի մի ծայրը Թամամշեանցի քարվանսարայի մօտն էր, միւսը հասել էր այժմեան Աղէքսանդրեան կոչուած այգին: Վանքի Փոքր փողոցից շուրջ բոլորած՝ ներկայ փօշտի փողոցները՝ բոլոր տեղերը մուշտակուիւ էր. պատառոտած

գլուխներ, արիւնաշաղախ երեսներ, դուրս թափուած աչքեր ամէն տեղ տեսնուում էին. քարեր է՛ որ ամէն կողմից գալիս են կարկտի պէս, լուսամբաների ապակիք են, որ փշրտուում են:

Իմ աչքի առաջին՝ Ներսիսեան հին ուսումնարանի արեւելեան կողմը՝ մի աղիւս ձիաթափ արեց, ձիուց վայր գլորեց ամբոխը ցրուելու համար եկած ղազախներից մէկին, մարդն ընկաւ եւ անշնչացաւ. ասում էին, որ այդ օրն ուրիշ փողոցներում էլ ղազախներ են սպանել:

Քանի քարակուիւր չը կար, մեք դպրոցականներս կտրից նայում էինք, քարը որ խառնուեց, մեզ քշեցին սենեակները:

Պատուհանների մօտ էլ արգելում էին կանգնել, կարող էր քարը կտորել պատուհանն եւ մեզ դիպել:

Մի ուրիշ դէպք՝ մի ամբողջ շաբաթ՝ օրական երկու երեք դասից մեզ զրկում էր:

Ս, յգ. Թիֆլիսեցոց ընդհանուր զինավառութիւնն էր:

Եղելութիւնն այս էր:

50-ական թուերի՝ ռուս-տաճկական պատերազմն էր. ոչ միայն Թիֆլիսի զօրքերն են տարուել պատերազմի դաշտը Սղէքսանդրապօլ, Ղարս եւ այլն, այլ եւ Ռուսաստանից նորանոր գնդեր ամէն Աստծու օր գալիս էին ու անցնում:

Հրամանատարը Բէհրուզովն էր, ասում էին, որ շարունակ զօրք է պահանջում:

Նեղ դրութիւնից օգուտ քաղելով՝ Շամիրը յարձակումն է գործում Կախեթի վերայ:

Լսուեցաւ, որ Շամիրը Թելաւին տիրել է եւ մտադիր է գալ Թիֆլիսի վերայ:

Լաւ են լրտեսած եղել տգէտ լեռնականները, եթէ եկած լինէին, կը յաջողեցնէին:

Թիֆլիսում մի քանի հարիւր զինուորներ էին մնացել միայն պահակութեան պէտք գալու:

Շամիրին երկիւղ ազդելու խելացի նպատակաւ՝ այդ սակաւաթիւ զինուորներին ամէն օր վարժեցնում էին Թիֆլիսի հիւտիսային կողմը՝ Մախաթի սարի ստորոտի դաշտավայրում:

Ողջ դաշտի վերայ վրաններ էին տնկուած՝ լեզուէն ցոյց տալու, թէ զօրքը բանակած է Թիֆլիսում:

Բայց լեզդին չի խաբուում. յանդգնութիւնը ծայրայեղութեան են հասցրել, տասնեակ լեզգիներ հրազինուած՝ օրով ցերեկով, արձակ համարձակ դուրս են գալիս Մախաթի սարի ետեւից եւ ձիանքը քշելով՝ անվախ անց ու դարձ անում վրանների մօտերքով:

Տեսնում են այս այն տեղ գտնուած զինուորները եւ դիտմամբ չը տեսնելու են տալիս. հրամայուած էր հրացան չարձակել:

Քաղաքացիք չը տարան այս նախատինքը, համբարն ինքնաբուղիս իւր պատրաստականութիւնն է

յայտնում անձամբ քաղաքը պաշտպանելու, միա-
նում է նոցա եւ ազնուականութիւնը, կառավարու-
թիւնը բարեհաճ է գտնուում:

Ահա փակուեցան խանութները, ձեռքին զէնք
բռնել կարացող պատանուց սկսած՝ մինչեւ 50, 60
տարեկան ծերունիքը բոլորեքեան զէնք առան-
շրագէն ունեցողն իւրն էր վերցրել, չունեցողին
տէրութիւնն էր մատակարարել:

Մի բոլոր շաբաթ այս անհամար բազմութիւնն
ուրախ երգերով հրացանն ուսերին, նոր նոր եւ թան-
կագին հագուստով պճնուած՝ հինգ հինգ՝ կարգով
շարուած՝ անցնում էր Ներսիսեան դպրոցի առաջով
եւ գնում Մախաթի սարի ստորոտում վարժու-
թիւններ անում ու երեկոյեան դէմ վերադառնում
տուն:

Գնացքն այնքան երկար էր, որ մի ժամ էր
տեւում: Կանոնաւոր վարժուած զօրքերի նման
նրանք հաւասար քայլեր էին անում:

Ունէին նրանք իրանց զօրավարներն ու զօրա-
պետները. վրաց իշխանազուհները՝ թաւիշի բուլա-
ջաներով շքեղ զարդարուած, ոսկեհուռն զէնքերը
կապած, շատերը միջնագարեան ասպետների եր-
կաթի թելից հիւսուած զրահները հագին, երկա-
թի սաղաւարտը գլխներին, սանձակոտոր զարդա-
րուն նժոյգների վերայ հեծած, բաց սրերը ուսե-
րին շողացնելով՝ սպաների դեր էին կատարում:
տասնապետները, յիսնապետները, հարիւրապետ-

✓ ներն ու հազարապետները ճանաչում էին իրանց անձնագոհ յօժարակամ զինուորներին, որոնք իրանց զինավառութեան երկրորդ օրուանից՝ փորձառու զինուորներ էին արդէն՝ պատրաստ միանգամայն արիւնով պաշտպանելու իւրեանց ծննդավայր Թիֆլիսը:

Այսքան էլ հայրենասիրական վառ խանդ: Ոչ որ ոչ որքի չէր ստիպում, իրանք իրանց էին կամաւորապէս խառնուում ընդհանուր պատրաստութեանը:

Մեր վարժապետներից ոմանք էլ գասերից ազատ ժամանակը զէնք էին վերցրել:

Յակովբ Կարենեանցը հրացանն ուսին վերին դասարանի լուսամուտի տակովն անցնելիս՝ գլուխը վեր բարձրացրած մեզ խրախուսում էր՝ հայրենիքի փրկութեան համար կեանք չը խնայել: Այն քանի օրը դասերը թողած՝ օրուան գէպքի մասին էր խօսում:

Թիֆլիսեցոց այս ընդհանուր ոգեւորութիւնը Շամիլի մէջքը կոտրեց:

✓ Լսուեցաւ, որ երբ իւր լրտեսները յայտնել են Շամիլին Թիֆլիսեցոց զինավառութիւնը, նա, իբր թէ, ասել է. իգիթ թիֆլիսեցիներին եմ բաշխում Թելաւը, գնանք, քաշուենք, նամարդութիւն է հայրենիքի համար գլուխները յետ դրած ազնիւ ժողովրդի խաղաղութիւնը վրդովել: Ոմանք խօսում էին, իբր թէ, Շամիլն ասել է՝ ով կամենում է

գլուխը Թիֆլիսումը թողնել, թող գնայ, երբ մարդինքն է իր տան պաշտպանութեան հոգսը քաշում, այն տեղ թշնամին յաջողութիւն չի ունենալ:

Ի հարկէ այս ամէնը թուուցիկ լուրեր էին: Ճշմարտութիւնն այս է, որ Շամիլը լսում է Թիֆլիսեցոց պատրաստութիւններն ու գլուխ առնում, քաշուում իւր սարերը:

Միայն Ղէյնօբան էր, որ մի առանձին հաճութիւն էր պատճառում ներսիսեան դպրոցի սաներին — այսինքն միայն որդեգիրներին:

Շատ ժամանակ չէ, որ Ղէյնօբայի սովորութիւնը վերացել է, բայց հին ժամանակն աւելի փառաւոր էին կատարում:

Ղէյները ներկայացնում էին հարսն ու փեսայ. թուրքի խաների կամ փաշաների հարսանիքներն էին ծաղրուում:

Նստում էր չալմէն գլխին փաթաթած ղէյն փեսան իշի, կամ ուղտի վերայ եւ երկայն փայտը, ծխամորձի փոխարէն բերանին բռնած՝ ուրախ ուրախ ժպտում էր իւր կողքիցը գնացող, նոյնպէս իշի, կամ ուղտի, կամ լզար մատակ ձիու վերայ բազմած իւր հարսին:

Պատահում էր, որ միայն հարսի երեսին էր դիմակ լինում. այդ ժամանակ մրով սեւացրած փեսան արաբի հոգեւորական էր ներկայացնում. եր-

բեմն երկուսն էլ դիմակաւորուած էին լինում։
Նրանք ոչ որ էին, ի հարկէ, եթէ ոչ Թիֆ-
լիսի կինտօները, որոնք դաւի ու զուռնան ածելով,
բազմամարդ փողոցները շրջելով, կամ հարուստ
խշխանների լուսամուտները թակելով՝ փող էին ժո-
ղովում մեծի պահոց երկուշաբթի օրը։

Երբեմն նրանց ուղեկցում էր եւ հանրահը-
ջակ ձեռնածու Աբէլն իւր փայտէ ոտքերովը։

Աբէլը մի հիւան էր, որ երեք չորս սափէն
բարձրութեամբ ձողերի ծայրը բարձրացած՝ լոք-լոք
անելով շրջում էր հանդիսաւոր օրերին քաղաքի
կեդրոններում, որոնցից մի գլխաւոր կեդրոնը Ներ-
սիսեան դպրոցն էր։

Ահա այս եւ ուրիշ բազմատեսակ անյարմա-
րութիւններն էին, որոնք ստիպեցին Ներսիսին տե-
ղափոխել դպրոցն իւր հին շինութիւնից փօշտի
տները, ուր կայ մինչեւ այսօր

Բայց ի՞նչ օգուտ, երկու դպրոցների զանա-
զանութիւնը շատ աննշան է։

Եթէ այսօր նախկին աղմուկներն ու խառնի-
ճաղանձ խաժամուժի կուտակուելը պակասել են,
կառքերի ու ձիաքարշի բարձրացրած աղմուկները
ոչ պակաս արգելք են լինում պարապմունքներին։

ԼԹ.

Սեւանայ ծովի մօտ բնակուած նորագաղթ մալականի ֆուրգոնով ճանապարհ եմ ընկել դէպի Երեւան:

Գիշերել ենք վերջին կայարանում. նոյեմբերն է, բայց տաք եղանակներ են. Երեւանի աշնանային ազնիւ բերքերից խաղողն ու ղուլթմա կոչուած հիւթալից, քաղցրահամ եւ անվնաս սեխը կիտուած է խանութպանի առաջին, հինգ երկար տարիներ են անցել, չեմ կերել. բերանս ջրակալեց:

Երեք տարի յառաջ՝ Թիֆլիս վաճառելու համար ալիւր էին բերել համաբնակիչներս. նոցա մէկից երկու մանէթ փոխ առայ, յանձնարարելով երէց եղբօրիցս ստանալ:

— Վնաս չունի, ասաց համշիրակս, եթէ եղբայրքդ չը վճարի, մի օր դու մարդ կը դառնաս եւ կը տաս:

Այն երկու մանէթից մէկն երեք տարուայ բնթացքում ծախսել էի, վերջին մանէթը գրպանումս էր. հետո տանում էի այն մտքով, որ եթէ եղբայրս դեռ վճարած չըլինի, ինքս մէկը տամ, միւսի համար էլ Աստուած ողորմած է:

Մի ժամաչափ մտատանջուում եմ, ծախսել մանէթից, թէ ոչ: Փուրգոնի վճարքն ապահոված էր. Երեւանցի մի սլարոն մի ֆուրգոն ապրանք էր ուղարկում Երեւան, ինքը մնալու էր Թիֆլիս. իմ

պատահելս նրա համար գիւտ էր. մալականին ներկայացրեց ինձ իբրեւ իւր եղբայրը:

Պարզ բան է, որ ապրանքատէրն իրաւունք ունէր իւր ապրանքի հետ գնալ. աղայի պէս նրստեցի հակների վերայ եւ ճանապարհ ընկայ. ի հաստատութիւն, որ ես իսկապէս իւր եղբայրն եմ, Երեւանցին իւր փողով ֆուրգոնչու ներկայութեամբ գնեց ինձ համար ճանապարհի պաշար:

Ոսկեգոյն դութմէքն ինձ հրապուրում են. թող կեանքիս մէջ միանգամ շոռայութիւն արած լինիմ. դողդողալով քսան եւ հինգ կոպէկանոց արծաթ գրամը հանում եմ մօրս կարած մետաքսէքսակից, բռումս պինդ սեղմում եւ մօտենում:

— Ի՞նչ արժի այս, հարցնում եմ խանութպանին, վերցնելով մի մեծը:

— Երեք կոպէկ:

Ապշում եմ, Թիֆլիսում հասարակ սեխը տասը կոպէկից պակաս չես առնիլ, այս ահագին պատուական դութմէն այստեղ այսքան աժան:

Շարտում եմ խանութպանի առաջ 25 կոպէկանոցը:

Նա մանրում է փողն եւ ինձ վերադարձնում 24 կոպէկ:

— Պարոն, սխալուած էք՝ վեհանձնաբար երկու կոպէկանոց ձգելով սեղանին, ասում եմ ես:

— Ո՛չ, աղայ, ես իմ փողս ստացայ:

— Ուրեմն կրկին համարիր:

Մարդը համարում է եւ նորից տալիս ինձ
24 կոպէկը:

Ես եմ համարում՝ մատնացոյց անելով մի առ
մի գրամների վրայ տպուած թուանշանները:

— Հասկացայ, աղայ, հասկացայ. դու սաղ փող
ես հաշուում, իսկ դու-թմէն արժէր երեք չու-
ռուկ կոպէկ:

Այժմ յիշեցի. Երեւանումն այն ժամանակ սաղ
եւ չուռուկ փողով էին առեւտուր անում. սաղը
ներկայիս արծաթ կոպէկն է, այժմեան մի արծաթ
կոպէկը ունէր երեք չուռուկ կոպէկ, մի չուռուկ
շահին ոչ թէ հինգ, այլ մի եւ կէս կոպէկ էր, մի
չուռուկ ապասին մօտաւորապէս վեց արծաթ կո-
պէկ էր:

Ուրախ ուրախ մի կոպէկով դու-թմէն վայե-
լեցի եւ 99 կոպէկ գրպանումս մտայ Երեւան, ապ-
րանքը տիրոջը պահ տուի ու հետեւեալ օրը մօրս
գրկում հանգստացայ:

Իս.

Ի՞նչ պէտք է գործէր ինձ պէս մի անգործ
պատանին Աշտարակում առանց ուրիշների օգ-
նութեան:

Ընտանեկան դրութիւններս նեղ էր. հօրս
թողած 300 մանէթ պարտքի տոկոսը հազիւ կա-
րողացել էր վճարել եղբայրս՝ ծախելով մեր պա-

պական պարտէզը, մի ձեռք տները եւ մարազը. պարտքը մնացել էր պարտք. միակ այգու բերքով իրանք չորս հոգւով հազիւ ապրում էին. մայրս, եղբայրս եւ երկու քոյրս, ես էլ հինգերորդն աւելացայ:

Հարկաւոր էր մի գործի կաշել:

Աշտարակումն այն ժամանակ մի ծխական դարոց կար, գիւղական տիրացուներից մէկն ուսուցիչ էր, բայց ուսներէն չը գիտէր:

Գիւղացիք ժողովեցան, խորհուրդ արին եւ ինձ ընկերացրին Յովհաննէս վարժապետին:

Ես ուսներէն պէտք է ուսուցանէի. նրանց հասկացողութեամբ ես քաջ ուսագէտ էի:

Շուտով երկու ծայրն էլ ինձ մնաց. Յովհաննէս վարժապետը չը կամեցաւ իրանից աւելի գիտնականի հետ միասին ծառայել եւ թողեց ուսուցչութիւնը:

(Աշտարակցոնց աչքում նախկին պատմական եօթն իմաստասէրներից մէկն ես էի. Յովհաննէս վարժապետն էր այդպէս տարածել, խեղճն իւր հետ համեմատութեամբն էր կշռադատել):

Դեռ թագաւորում էր ծննդավայրումն Նապուհ Նահնազարեանցի՝ որպէս եւ առհասարակ խալֆայականութեան՝ սիտեմը:

Առաւօտեան ժամին աշակերտներիս հետ ժամերգութիւն անելուց յետոյ՝ պարտական էի դըպրոց մտնել, ուսում սկսել, մօտաւորապէս տասնու-

մէկ ժամին արձակել ճաշելու, կերակուրը կոկորդ-
ներումը կրկին ժողովել եւ երեկոյեան ժամից յե-
տոյ ցրուել:

Քաջ գտնուեցայ. առաջինն ես էի, որ կա-
րողացայ՝ մի միջոցից յետոյ՝ այդ սովորութեան հիմ-
քը խախտել:

Մի ժողով արի աշակերտահայրերից, ասացի,
խօսեցայ եւ համողեցի մտցնել հոգաբարձական կազ-
մակերպութիւն:

Մինչեւ այդ օրը վարժապետի յարաբերու-
թիւնն աշակերտաց ծնողաց հետ էր:

Տարեկան վճարքն երեք մանէթ էր, ամիսը
25 կոպէկ՝ տասն անգամ խնդրելով ու գլուխ ծռե-
լով՝ ժողովելու էր ուսուցիչը ծնողներից. վարժա-
պետն ինքը պէտք է իւր ոտքով գնար դռները
բաղխէր:

Եօթանասուն աշակերտ էին. այդքանի քա-
ռորդից եթէ ուսուցիչը յաջողէր ամսավճարն ստա-
նալ, բարբաղդ էր. ապառիկի ծայրն երբէք չէր
կտրուում:

Թէ ի՞նչ քաշեցի մինչեւ կարողացայ երեք մարդ-
ընտրել, որոնք իրանց անձնական գործը թողնէին
եւ ուրիշի տղաների հոգսը քաշէին, թողնում եմ
երեւակայել նրանց, որոնք ծանօթ են կոպիտ գիւ-
ղացիների բարբ ու վարբին:

— Ա՛յ բան, դու հանգիստ ու անհոգ քո տանը
քնիս ու ես քո երեսի հոգսը քաշեմ. հոգիդ ելնի՛

Ծնել, մեծացրել ես, ուսման համար էլ մտածիր:

Իսկ ի՞նչ է ասում ծնողը.

— Իմ գլուխս մեռել է, որ Պետրոսենց Շամօն իմ տղի ցաւը քաշի, երեխէս ո՞րք է, ի՞նչ է:

— Եատ լաւ է ասում վարժապետը. սա իր դասերը տան, թէ գզրի պէս հինգ սաղ շահու համար մեր դռները ծեծի, մէջ մտաւ ուաշիդ (կտրիճ) Պետրոսենց Շամիրը, կամ Շամօն. եթէ գուք ինձ չէք հաւատում, ես ձեզ կը հաւատամ, ձեռքներդ էլ կը համբուրեմ. համեցէք մէջ տեղ:

— Եատ լաւ, շատ լաւ, թող Շամօն լինի հոգիբարձ (հոգաբարձու), ձայն ձայնի տուին ամէնքը եւ Աշտարակի անդրանիկ հոգաբարձուն եղաւ Պետրոսենց Շամօն, կամ Շամիր Շահագիղեանցը: Շամիրին ընկերացան եւ երկու ուրիշը, որոնց անունը չարժէ անդրանկութեան փառքին արժանացնել. յանձն առան եւ չը կատարեցին. մնաց միայն Շամիրը ճշգրտակատար հոգաբարձու:

Հոգաբարձութիւնն ընտրեցի, ծնողների ստորագրութեամբ վաւերացրի եւ մի ուրիշ նորութիւն առաջարկեցի:

Չեմ կարող որոշակի ասել, թէ ո՞ր օրից, այլ որ Աշտարակումն աշակերտական տարեկան վճարը ի բնէ երեք մանէթ է եղել:

Յանկարծ ես առաջարկում եմ չորս մանէթ, այն էլ ոչ թէ ամսէ ամիս վերջն օտանալու, այլ վեց ամսական կանխիկ վճարքով:

— Հայ, - հոյ, հարայ-հրոյ. . . չենք կարող, որ չենք կարող:

— Ձէք կարող, դուք ձեզ համար, ես ինձ համար, մնաք բարեւ:

Եօթանասուն ծնողներից 40 հոգի Աշտարակցու օրհնանքներ երեկուայ լակոտի՝ այսինքն իմ հասցէին երեսիս շուայլելով՝ թողին հեռացան, մնացին 30 հոգի:

Պետրոսենց Շամօն կարողացաւ նրանց համոզել: Միւս օրը 30 աշակերտով սկսեցի գործս:

Ինձ չը մեղադրէք, միւսները ուսումից չը զրրկուեցին, Յովհաննէս վարժապետը բարի եղաւ, իւր սենեկումը նորից ուսուցչութիւնն սկսեց:

Ապրի Շամօն, մի շաբաթ չանցած՝ բերեց ինձ երեսուն մանէթ. — այսքանը դեռ ստացի, ասաց նա, մինչեւ միւսներից էլ կը հաւաքեմ, նեղացնելու չէ, քիչ քիչ կը սուփորցնենք:

30 մանէթ, կեանքիս մէջ առաջին անգամ ստացած՝ 30 հազարի արժէք ունեցաւ աչքումս. մօրս եւ եղբօրս աչքերը ճոթուեցան զարմացումից, սրտուռ արծաթների ձայնը քեամանչի ձայնից աւելի քաղցր հնչեց մեր ականջներին ու սրտերին, ուրախութիւնից ոտքներս գետնից կտրուել են:

Դորա համար են ասել՝ երկաթը տաք տաք կը ծեծեն, հետզհետէ Շամօն էլ պաղեց, աշակերտահայրերն էլ. այն 30 գումար մանէթն էր, որ ստացայ, այնուհետեւ ամնական երկու, երեք, ամե-

Նաշատը չորս մանէթից աւելի չէի տեսնում:

— Որ չեն տալիս, ի՞նչ անեմ, խաղինա հօ չեմ կտրում, որ իմ քսակից հանէի ու սուռալով համարէի առաջիդ. վնաս չունի, չի կորչիլ, Աստուած բարաքաթ տայ, ծմծման աղբիւրի պէս անկտրում կը գայ, արդարանում էր Շամօն:

Չարս ի՞նչ, կակղես, կուտես, այդ քանն էլ որ չը տային, ձեռքիցս ի՞նչ կը գար, կամ ո՞ւր գնայի:

Ամէն բանը լաւ, բայց հոգիս անհանգիստ է. մտմտութիւն ինձ տանջում է. ուզում եմ կարճել պարապմունքների ժամերը, բայց վախում եմ, որ չը յաջողեմ. գիմացս էլ Յովհաննէս վարժապետն է ախոյեան:

Ի՞նչ գալու է թող գայ:

Խօսեցայ Պետրոսենց Շամօյի հետ:

Մի քանի անգամ ծանրութեամբ մտախոհ գլուխը շարժեց ու լռեց:

Ես ճարտասանութեան մէջ սովորած Կիկերոնի պերճախօսութիւնն ինձ նեցուկ առայ եւ սկսեցի Շամօյին համոզել, շօշափելի կերպով բացատրեցի ուղեղի հանգստութեան օգտակարութիւնը:

Շամօն համոզուեց:

— Դեռ չսկսես, ասաց նա, թող ես իմ գիւղացու լեզուովը աշակերտատէրերի բէյինումը (խելապատակ) նստացնեմ՝ յետոյ:

Ուրախ ուրախ տուն մտաւ մի օր Շամօն:

— Աչքդ լոյս, վարժապետ, գլուխ եկաւ, ծնողները քո կամքին են թողում պարապմունքի ժամանակը. նրանք քեզ հաւատում են, որ լաւ դասատու ես, բայց մի բանի համար սրտները քեզանից պակաս է. անբաւական են, որ ծեծը պակասացրել ես. եթէ կը խոստանաս, որ առաջուան վարժապետների պէս խիստ կը լինիս, կուզես՝ օրական մի ժամ պարապի, համաձայն են:

— Իսկ դու ի՞նչ կարծիքի ես, պարոն Շամիր:

Ես էլ էն կարծիքին եմ, որ տուրը կանի խաղաղութիւն. իշին պիտի բզես, որ գնայ. երեխէն որ կայ, յիմար է, իշի պէս անհասկացող է, բիզ է հարկաւոր ու ճիպոտ:

— Գիտես ի՞նչ կայ, վարժապետ, վճռապէս ասաց Շամօն, եթէ դու մեր երեխաներին չը ծեծես, մենք քեզ մօտ որդի չենք թողալ, Յովհաննէս վարժապետն էն տեղ պատրաստ է, ի՞նչ անենք, թէ մեր երեխէքը ռուսերէն չեն գիտենալ, մենք որ հայերէն էլ կարդալ չը գիտենք, մարդ չէ՞նք:

Շայեցի, նայեցի Շամօյի երեսին եւ ասացի.

— Լաւ:

Լաւ խօսքի հետ երկու կաթիլ արտասուք ցած գլորուեցին աչքերիցս:

Գոյութեան կռիւն էր ինձ տագնապի մէջ գնողը. կամ պէտք է պառաւ ծնողիս եւ քոյրերիս օգնելու քաղցր պարտականութիւնից ձեռք քաշէի եւ կամ գաղափարից:

Մնաս ընթերեւ, Շանշեանցի ներշնչած սուրբ գաղափար. չեմ թագցնում յանցանքս, որդիական պարտքիս զոհեցի:

Երկու տարի վարժապետ էի այնուհետեւ Աշտարակումն եւ ամենախիստ վարժապետներից մէկը, պատժում էի իմ նախորդներիցս ոչ պակաս:

Երեխաների համար ծանր չէր պատիժը, նրանք կաթնի հետ լսել էին խալֆայական բռնակալութիւնը. ամէն մի երեխայ գիտէր մորթելու տանելու այժի առակը:

— Զօռ, այ այժ, յիմար, ինչ ես լալիս, մորթելու են տանում, հօ կարդալու չեն տանում, ասել է գիւղական թշուառ մոնթը, լսելով սպանգանոց քշուող աղիողորմ մկրկացող այժի լացը:

✕ Եւ երեխայքն իրանց շատ բաղդաւոր էին համարում ու սիրում էին ինձ. իրանց համար մեծ շնորհք էր իմ կողմից. իւրեանց միւս ընկերները՝ Յովհաննէս վարժապետի մօտ՝ ամբողջ օրն անդադար պարապում էին, իսկ իրանք՝ իմ աշակերտներս օրական առ առաւելն վեց ժամաչափ պարապմունք ունէին՝ կէսը ճաշից յառաջ եւ կէսը ճաշից յետոյ:

Մենք դասամիջոցներ էլ ունէինք որոշած: Բացի դրանից ձմեռուան խիստ ցրտերին պարտագիր չէր մանրներին եւ ոտնաման չունեցողներին առաւօտներն եկեղեցի յաճախելը:

ԽԱ.

Երկու տարի է՝ ուսուցիչ եմ Աշտարակում եւ լվայելում եմ առաջնութեան պատիւը. բարձրացրել է նշանակութիւնս մանաւանդ ժամանակի գաւառապետ (участковый заведатель, մուրով) Պետրոս Մատաթեանը, որ յայտնի է քնարերգական քանաստեղծութեան մէջ Սէյեադ Տականունով:

Մատաթեանը մի ամառ իւր դիւանատնով ապահովութեան էր եկել Աշտարակ. նա կարգում է մի խնդրարկուի համար իմ՝ իրան գրած խնդիրը եւ իսկոյն կանչել է տալիս, ծանօթանում հետս եւ շնորհակալութիւն յայտնում պարզ գըրուածքիս համար:

Այնուհետեւ քանի Մատաթեանն Աշտարակումն էր, ոչ ոք իրաւունք չունէր ուրիշի գրած խնդիր ներկայացնել իրան. պատռում, շպրտում էր եւ հրամայում՝ «Պաօշեանցին» գրել տալ:

Ահա ես համարուած եմ ամենայաւ արզա (խնդիր) գրողը գաւառի մէջ: Մատաթեանն առաջարկեց ինձ ծառայութեան մտնել իւր մօտ եւ չինովնիկ դառնալ: Ես անընդունակ գտայ այդ կոչմանն ու մերժեցի:

Մատաթեանի հետ Աշտարակումն էր իր հոգեորդի Աղէքսանդրապօլցի Յովհաննէս Բարայեանցը. մեր բարեկամութիւնն սկսուեց Աշտարակից եւ շարունակուեց մինչեւ Յովհաննիսի մահը:

Ազնիւ էր Բարայեան Յովհաննէսը, ազնիւ
ապրեց եւ ազնիւ մեռաւ:

Նա իմ «Հայի խնդիր» երկասիրութեան մե-
կենասն էր:

Բարայեան՝ անաղարտ եւ յայտնի տան պատ-
ուին հասած վիրաւորանքի նախանձախնդրութիւնը
նրան գերեզման իջեցրեց:

Այդ տարիներն էր, որ Ներսէս Կաթողիկոսը
կարճ ժամանակով էջմիածին եկաւ եւ դարձեալ
Թիֆլիս վերադարձաւ: Էջմիածնումն ես միանգամ
եւ վերջին անգամն արժանացայ նրա հայրական
օրհնութեանը:

— Քեզ վերայ ես բարկացած էի, ասաց ինձ
Կաթողիկոսը, որ դու իմ ուսումնարանս չը հաւա-
նեցիր, բայց հիմի դարձեալ սիրեցի, որ հայրենի-
քիդ պէտք ես գալիս:

Կենդանի գնաց Ներսէսը Թիֆլիս եւ մեռած
յետ եկաւ:

1857 թուի, մարտի երեքին, Մեծի պահոցը,
Անառակի կիւրակէին՝ նրա մարմինը բերին Թիֆլի-
սից եւ հողին յանձնեցին:

Բերողը Մակար եպիսկոպոսն էր. նա Սինօզի
կողմից յուղարկաւորող էր գնացել:

Թիֆլիսի առաջնորդն էր այդ միջոցին Սարգիս
Ջալալեան եպիսկոպոսը. նա չէր ցանկացել յուղար-
կաւորելու իւր բարերարի նշխարներին եւ մնացել
էր Թիֆլիսում: Ներսիսի թաղման օրը Սարգիս ե-

պիսկոպոսի արարքն ընդհանուր տհաճութիւն պատճառեց՝ թաղմանը ներկայ լինելու համար Էջմիածին հաւաքուած անհամար բազմութեանը:

Երեւանից եւ շրջակայ գիւղերից փոքր ի շատէ հասկացող ու աչքի ընկնող մարդ չէր մնացել, որ չը գային:

Իմ պարտականութիւնս էր երախտագիտութեան պարտիքը հատուցանել բարերարիս եւ կատարեցի: Տխուր հանդիսականներից մէկն էլ ես էի:

Վաղարշապատի արեւելեան ծայրից՝ «Սողոմոնի կամուրջ» ասուած տեղից, մինչեւ վանքը, բոլորը բազմութիւն էր:

Հոգեւորականութեան տխուր թափօրը դիմաւորեց մեծ հանգուցելուն Սողոմոնի կամրջումը:

Տեղակալ Ղուկաս արք եպիսկոպոսն էր օժողն եւ հանդիսադիրը:

— Օրհնեսցի՛, օճցի՛ ճակատ ներսէս Կաթողիկոսին, արտասանեց Տեղակալն եւ էլ չը կարաց շարունակել, արուստիքը խեղդեց նրան: Մի եւ նոյնը կատարուեց եւ ձեռքն օճելիս:

Տեղակալին օգնութիւն հասաւ Վեհապետեան Գէորգ եպիսկոպոսը. ամենայն անտարբերութեամբ նա շարունակում էր երգաձայն լրացնել տեղակալի թերի թողածը:

Բոլոր միաբանութեան մէջ ես ամենից սառը տեսայ Վեհապետեանին:

Թաղումից յետոյ նա մի քանի վիրաւորիչ խօս-

քեր շուայլից՝ իմ ներկայութեանն իւր խցումը՝ ներսիս ստուերի հասցէին:

Ներսիսին թաղեցին էջմիածնի զանգակատան հարաւային կողմումը:

Սգաւորներն էին. ներսիսի քրոջ գուտար տիկին Աննան՝ վերոյիշեալ Մկրտիչ ընկերիս մայրը եւ Կաթողիկոսի մօտ ծառայող Թիֆլիսից եկած իւր երեք սարկաւազները՝ Գրիգոր Ալխաղեանցն եւ Եսայի ու Գէորգ սարկաւազները:

Թիֆլիսումն, ըստ տեղական սովորութեան, երեք սարկաւազին եւ շաթիրներին սեւ էին հագցրել:

Ներսիսին թաղեցին կամարակապ գերեզմանի մէջ, իւր բարերար Դանիէլ Կաթողիկոսի մօտ:

Նրա մարմինը զմուսած էր:

Զարմանալի կենդանութիւն էր մնացել դէմքի վերայ, բոլորովին չէր փոխուել, կարծես երէկ լինէր հետս խօսում, նա մեռել չէր, այլ խաղաղ քնով քնած մի մարդ:

Իագաղի կաթարիչը ծածկելու ժամանակ՝ Տեղակալը հրամայեց սարկաւազներին բռներով հող վերցնել՝ օրհնելու եւ երեսին շաղ տալու:

Զը գիտեմ՝ ինչ պարօն էր Տեղակալի ետեւը կանգնած, նա Ղուկաս եպիսկոպոսի ականջումը բարձրաձայն քչիչաց:

Մօտ եղողներս լսեցինք: Ես կանգնած էի անգլիացի Մագդոնալդի յուշարձանի վերայ՝ ներսիսի գերեզմանից ոչ հեռու:

Պարոնը խորհուրդ տուեց Տեղակալին՝ հող չը
ցանել զմուսած դիակին, այդպիսով մարմինն երբէք
չի փթիլ ասաց. բայց Առեկաս եպիսկոպոսը խոժոռ-
ուած պատասխանեց.

— Դուք կամենում էք, որ Աստու հրամանին
հակառակ գնանք. «Հող էիր եւ ի հող դարձցիս»
վճռել է Տէրը մարդու համար:

Երկու սարկաւազներն իսկոյն հողը բուռն
առան, իսկ Ալխազեանը չը վերցրեց, մինչեւ Տե-
ղակալը մի քանի անգամ կրկնելուց յետոյ՝ չը բար-
կացաւ:

Տեղակալն Ալխազեանի հողն օրհնեց, իսկ
Ալխազեանը դեռ բռնով հողը քսեց իւր երեսին,
մի քանի անգամ տրորեց, ապա ձգեց դիակի վերայ:

Ալխազեանի երեսը բոլորովին փոշոտուեց:

Առ հասարակ, ինչպէս այդ օրը, նոյնպէս եւ
յետոյ՝ Ալխազեանը խիստ տխուր էր եւ զգամջուած:

Ալխազեանին ես քաջ ճանաչում էի Թիֆլի-
սից. նա մի ուրախ եւ զուարճախօս, սիրաշահ ու
պատուական երիտասարդ էր. հիանալի սազ էր
ածում, սքանչելի երգում էր:

Պարսկի թխութեան հետ մի համակրելի գե-
ղեցկութիւն ունէր:

Այսօր՝ ներսիսի թաղման օրը՝ Ալխազեանին
դժուար էր ճանաչելը. նա Ալխազեանը չէր, Ալ-
խազեանի ուրուականն էր. ուրուական, եթէ նե-
րուի ասել, բառի բուն նշանակութեամբ, ուրուա-

կանն երբէք չի խօսիլ. այդպէս էլ Ալիսազեանի լեզուն փակուեց Ներսիսի մահով եւ էլ չը բացուեց։
— Զարիւր հարցին՝ մի անլսելի եւ կարճ շշուկով կը պատասխանէր ու երեսը կը շրջէր. Ներսիսի մահուան օրից մինչեւ մահը՝ Ալիսազեանի երեսը ժպիտ չեկաւ։

Ես ներկայ չեմ եղել, բայց լսողանց շատ արտառօց լուրեր են հասել ականջիս։

Ասում էին, որ Ալիսազեանը՝ մի քանի տարի ամէն գիշեր՝ ժամերով ընկած է եղել Ներսիսի գերեզմանի վրայ, որ նա չի կամեցել վարդապետանալ, բռնութեամբ են կարգ տուել, որ ձեռնադրուելուց մինչեւ երկու-երեք տարի, մինչեւ Մատթէոս Կաթողիկոսի օրերը չի պատարագել, որ Թիֆլիսից Մատթէոսի ընտրութեանը Էջմիածին եկած Զալալեան Սարգիս եպիսկոպոսի ոչ միայն կոչին չի գնացել, այլ եւ փնթփնթալով եւ բարկութեամբ իւր խուցն է մտել, դուռը ներսից փակել Սարգիս եպիսկոպոսի երեսին, երբ վերջինս ինքն է եկել Ալիսազեանին տեսնելու։

Այս անգամ միայն, ասում են, մօտ եղողները լսել են Ալիսազեանի հայհոյական սպառնալիքը Սարգիս եպիսկոպոսին.

— Ի՞նչ ես ուզում, հեռացիր ինձանից, գոչել եւ տուն է ընկել Ալիսազեանը, թէ չէ՝ հիմա քեզ էլ կը խայտառակեմ, ինձ էլ։

— Խեղճ մարդ, ժպտալով ասել է Սարգիս եպիս-

կոպոսն իւր շրջապատողներին, ողորմելին ցնդել է:

Ալիսազեանի այս վարմունքներն էին, որ կասկած զարթեցրին Ներսիսի յանկարծահաս մահուան առթիւ հասարակութեան սրտերում՝ Սարգիս եպիսկոպոսի դէմ:

Ասում են, որ Ալիսազեանի վրդովմունքը մի փոքր պակասել է Մատթէոս Կաթողիկոսին խոստովանելուց յետոյ:

Մատթէոսի «Ողորմեսցին» բացել է Ալիսազեանի բերանը՝ առաջին, կարծեմ, եւ վերջին պատարագն անելու:

Վերջին անգամ ես հանդիպեցի Ալիսազեանին 1865 թուի ամսուն Երեւանումը:

Նա մի քանի խօսքով յիշեց մեր Քիֆլիսումն անց կացրած երջանիկ օրերն եւ խոր հառաչեց:

Այն օրը նա ողջ առողջ գնաց Երեւանից եւ միւս օրը խօլերով մեռաւ Էջմիածնումը:

Ալիսազեանի ծագման մասին հետեւեալն են պատմում: Նրա հայրը գօրեցի էր եւ վարդապետ:

Ձր գիտեմ ի՞նչ զեղծման համար՝ վարդապետը փախչում է Էջմիածնից Պարսկաստան եւ այնտեղ մահմետական դառնում ու ամուսնանում:

Մի քանի ժամանակից յետոյ՝ նախկին վարդապետը զղջում է արածի վերայ եւ առնում իւր միակ որդուն—յիշեալ Գրիգոր սարկաւազին եւ յետ փախչում էջմիածին, ընկնում Յովհաննէս

Կաթողիկոսի ոտքերն ու թողութեան հետ կարգն էլ յետ ստանում:

Հայր Ալիսաղեանը մեռնում է, իսկ որդին մկրտուած՝ ուսանում է սուրբ Էջմիածնի վանական դպրոցում եւ սարկաւազանում:

Իւր ընդունակութեան եւ քաջահմուտ հայագիտութեան շնորհիւ արժանանում է Ներսէս Կաթողիկոսի վեհարանական գրագրութեանն եւ հաւատարմութեանը:

Բէրոյեան Գրիգորի հեռանալուց յետոյ՝ Ալիսաղեանն էր՝ մինչեւ Ներսիսի մահը վեհարանի գլխաւոր հրամանատուն:

Թէ ինչ կողմնակի կամ ուղղակի կապ ունէր Ալիսաղեանի օտարոտի ընթացքը՝ Ներսիսի մահուան կնճռոտ եւ խորհրդաւոր խնդրում, այդ ապագայ պատմութիւնը, գուցէ, մի օր կը լուսաբանէ:

Այսքանը միայն կասեմ, թէ չը նայեցեալ, որ Ներսէս Կաթողիկոսը խիստ սիրում էր Ալիսաղեանին, բայց շաբաթուան երկու օրն առնուազը հետը խոժոռած էր լինում:

Ասում են՝ որ Ներսիսի մահուան ամիսներին՝ Կաթողիկոսի եւ իւր սարկաւազի մէջ գժտութիւն էր տիրում:

Ես ներկայ չեմ՝ եղել, չը գիտեմ:

Մի քանիսն ասում են, որ Ալիսաղեան Գրիգորը ոչ թէ իւր մահամետականացած հօր զաւակն էր, այլ կնոջ առաջին ամուսնու որդին էր, որին

վարդապետը, կնոջ մահից յետոյ շատ սիրելով՝ որ-
գեգրել է եւ փախցրել ու էջմիածնում մկրտել:
Ես հակամէտ եմ այդ լուրը հաւատալուն.
Գրիգոր Ալխազեանը պարսկի պատկեր ունէր. կա-
տարեալ պարսիկ էր, որ կար:

ԽԲ.

Ներսէս Կաթողիկոսն իւր կենդանութեան
օրով իւր անձի մէջ էր ամփոփել ամէն հոգեւոր
գործերը. Սինօզ, վիճակաւոր առաջնորդներ, կոն-
սիստորիայք, յաջորդութիւն եւ այլն բոլորն ինքն էր:

Սինօզի անունը կար, ինքը ոչ. երկու միակ
անդամները՝ Ղուկաս արքեպիսկոպոս Արագածու-
նին եւ Մակար եպիսկոպոսը՝ լոկ թղթեր ստորա-
գրողներ էին:

Թէպէտ, ըստ օրինի, Ղուկաս եպիսկոպոսն
իրբեւ տեղակալ՝ նախագահ էր Սինօզի, որովհետեւ
Կաթողիկոսը կեանքի մեծ մասը Թիֆլիսումն էր
անցկացնում, բայց իրօք տեղակալն էլ ոչինչ չէր
շինում:

Թիֆլիսում կարգադրուած ամենատեսակ
գործ ուղարկուում էր էջմիածին Սինօզի անունով
եւ Սինօզի երկու անդամների ստորագրութեամբ
ի կատար ածուում:

Ասում են՝ իւր այս անհատական եւ եզակի
եսականութեան գէմ տրտնջացողներին Ներսէսը

պատասխանել է. արժանաւոր պաշտօնեաներ չունենալու համար՝ ստիպուած եմ ամէն բան ինքս անել:

Միակ Մատթէոս արքեպիսկոպոսն էր՝ Բեսարարիայի եւ Հաշտարխանի թեմերի առաջնորդը, որ ապաւինած Լազարեաններին՝ Մոսկուայից չէր հեռանում. իսկ, ինչպէս Ներսիսի թղթերից յայտնի է, Կաթողիկոսը մինչեւ վերջին շունչը կռիւ էր մղում Մատթէոսի դէմ:

Վերջին կոնդակը, որի թանաքը դեռ չէր ցամաքել, երբ Ներսիսին գտան վախճանած՝ դարձեալ Մատթէոս եպիսկոպոսի դէմ էր:

Մի հատիկ արժանաւորը գտաւ Ներսէսն եպիսկոպոսացնելու եւ Թիֆլիս առաջնորդ նշանակելու, այդ, իւր խօսքով, Ջալալեան Սարգիսն էր, որ Ներսիսի մահից յետոյ ստանձնեց առաջնորդական կոչումն եւ պաշտօնը:

Եւ ահա, Սինօզի երկու անդամները՝ Ներսիսի մահից յետոյ՝ անսահման իշխանութեան տէր եղան եւ սկսեցին փոխել, փոխփոխել հանգուցեալ Հայրապետի ամէն կարգադրութիւնները:

Անմիջապէս յետ մղուեցին ըզոր աշխարհական կառավարիչները եւ փոխարէնը վարդապետներ նշանակուեցին, գաւառները լցուեցին տէրտէրներով, Էջմիածնի վարդապետներն աւելացան, վիճակները ժամանակաւոր կառավարիչներ ուղարկուեցան, կոնսիստորիաների շտաւը լրիւ ամբողջացաւ, եւ այլն:

Ուրիշների թուում՝ մեր Աշտարակեցի Սիմօն աղան եւս յետ նստեց իր պաշտօններից:

Մողնու վանքն ունեցաւ մի նոր վանահայր՝ Քեանդարեան Յակոբ վարդապետը, որ՝ մեր գործը չէ ներքինը քննել, թէ ինչ միջոցներով վեց եօթը որդւոց տէր վաճառական մարդ, այբը բենիցը հազիւ որոշող եւ իւր անունը դժուարութեամբ ստորագրող մի անձնաւորութիւն, այրիանալուց յետոյ՝ Ղուկաս արքեպիսկոպոսի հրամանով վարդապետանում է եւ գալիս ոչ միայն վանահայր Մողնու վանքին, այլ եւ լիազօր բարեկարգիչ կամ գործակալ Աբարանու, Կարբու եւ Թալինու կողմանց գիւղօրէից, այսինքն 70-ից աւել գիւղերի, մի ամբողջ գաւառակի կառավարիչ:

Քեանդարեան հայր սուրբը կատարեալ աղայ էր՝ թէ նիստ ու կացով եւ թէ գործով. «հարկս հարկաւորաց, պատիւս արժանաւորաց», գիտէր իւրաքանչիւրին ըստ արժանոյն գնահատել:

Տարին երեք անգամ գնում էր Էջմիածին իւր յարգանքը մատուցանելու իւր իշխանաւորներին, որոնք, կարծեմ, անհամբերութեամբ համարում էին Քեանդարեանի գալստեան օրերը՝ սկսած Սինօզի ծառայից եւ վերջացրած՝ «Նորին բարձր սրբազնութեան Տեղակալ Ղուկաս սրբազան արքեպիսկոպոսով», ոչ մի պաշտօնէի չէր մոռանում, ամէնքի համար՝ ըստ պատշաճի դրամական նուէրներ էր տանում:

Նախօրօք փաթաթուում էին մտքուր թղթի մէջ փոշեթաթախ պօլիմպերեալները թուերը փաթեթների վերայ որոշակի նշանակուում եւ ապա թէ հայր սուրբի ծոցում խնամքով զետեղուած՝ ճանապարհ ընկնում դէպի Սուրբ Աթոռը։

Ամենից հաստ փաթեթը Տեղակալինն էր, իսկ ամենից լայնագիրը Սինօզի աւելածուներինը։

Այս վերջին լայն փաթեթների մէջ հանգըտացողներն արծաթի մանէթանոցներ էին։

Պարգեւների փաթեթները, բացի մէկից, պահուում էին հայր սուրբի աջ ծոցագրպանում։ Զախ ծոցագրպանը բացուում էր ոչ էջմիածնում, այլ Երեւանում, ուր բազմած էր Երեւանի փոխ-թեմակալ առաջնորդ Բաղալեան Ստեփան վարդապետը։

Հայր Քեանդարեանը, թէ եւ, անձամբ չէր սիրում Երեւանի թեմակալին, «նա իրանից ընչով է աւելի, մի վարդապետ ինքն է, մի վարդապետ Բաղալեանը», բայց եւ այնպէս այս չը սիրած մարդու փաթեթը հաստութեամբ շատ քիչ էր վախենում Տեղակալի ծրարից. «ինչ արած, առաջնորդ է մարդը»։

— Ինձ ինչ, արդարանում էր հայր գործակալը հետաքրքիր մեղադրողների առաջին, վանքի հացը վանականների փորը. ժապաւինեալ տօմարի մէջ նշանակուածն էլ իրանք պիտի ուտեն, չը գրուածներն էլ իրանց ենք տանում. եթէ չը գրելով սրտերն աւելի եմ շահում, առաւել լաւ է՝ երկու

երրորդը չը գրել, մնացածը գրաւոր ներկայացնել:

Սուտ չէր հայր սուրբի խօսքը. իւր գործակալութեան օրով ակթուահասաներն եռապատկուեցին ու քառապատկուեցին. իրանից յառաջ մի մանէթից աւել պսակահարկ ակթուահաս չէր լսուած, իսկ ինքը բարձրացրեց հնգից մինչեւ 15 մանէթի, հնգանոցն էլ՝ ոչ թէ թղթագրամով, այլ պօլիմպերեալով էր սիրում ստանալ:

— Չէ կարելի, սիրելիք, բաղցրութեամբ համոզում էր գործակալ հայր սուրբը, հասարակ թըղթագրամները ո՞ր երեսով ես սրբազաններին ներկայացնեմ:

Սկզբներումը ժողովուրդը շատ էր դժուարանում հոգեւոր տուրքերն աւելանալու համար, բայց քիչ քիչ սովորեցին եւ տհաճութեամբ չէին տալիս, ըստ որում հայր սուրբը ոչ մի եկողի առանց պատուելու չէր թողում:

Քաջ մարդաճանաչ էր Քեանդարեանը, ներս մտնողի գալուստը ճշտութեամբ գուշակում էր եւ արժանի պատիւը տալիս:

Վ երջին ռամիկ գիւղացին, գոնէ, մի կթղայ օղի պէտք է վայելէր եւ այնպէս գնար:

Վ արդապետի սիրտը լայն էր, սեղանը ճոխ:

— Ձեր հացն է, որդիք, ազգի հացն է՝ ազգի տունը, դուք ազգի որդիք՝ մենք ազգի մշակները. ձեր բերած՝ ձեր կերած, մենք էլ ձեր շնորհիւ ապրում եւ օրհնում ենք ձեզ:

Այսպէս էր սիրաշահում հայր սուրբն ամէն այցելուի: Մողնու վանքի պատուելի ուխտաւորներին հօ գլխի վրայ էր նստացնում:

Դատարկաբանութիւններ չեն պատմածներս. երկու բոլորակ տարի լի օրերը ցերեկներն Աշտարակում ուսուցչութիւն էի անում, իսկ գիշերները Մողնու վանքումը գործակալի քարտուղարութիւն. կիւրակի եւ տօն օրերին միշտ Մողնի էի:

Հայր սուրբը միայն իր ստորագրութիւնն էր դնում, մնացած պաշտօնական թղթերն ես էի գրում:

Սկզբներումը հայր սուրբն ստորագրում էր. «Քեանդարեանց Յակովբ վարդապետ գործակալ»:

Յարգելի պատճառաբանութեամբ էր հայր սուրբն այդպէս գրում. — ես Քեանդարեան էի՝ աշխարհ գալուցս յառաջ, ծնայ ու անուն ստացայ, մեծացայ՝ վարդապետացայ, վարդապետանալով՝ գործակալ եղայ:

Վերջը հետեւեց նա սովորական ձեւին եւ ստորագրում էր. «Գործակալ Յակովբ վարդապետ Քեանդարեանց»:

Իմ ներկայ եղած ժամանակ՝ ես էի գրում պօսակի եւ հանգուցեալների եռթը կատարելու հրամանները, իսկ իմ բացակայութեան ժամանակի համար հրամանները պատրաստում էի եւ անուան ու վճարքի տեղը թողում. այդ բացերը լցնում էր հայր սուրբի սպասաւոր՝ վերջը նորա դատեր ամու-

սին Աշտարակցի Յարութիւնը, որ մի քանի տարի յետոյ Երեւանումը քահանայացաւ եւ մի լաւ տէր-տէր դարձաւ:

Տնօրինուած էր՝ տուած հրամանների մէջ նշանակել Բաթումի Գալաթի հասոյթի որքանութիւնը. բայց ոչ մի հրամանագրի մէջ ճշգրտութեամբ չէր կատարուում այս տնօրէնութիւնը:

Մինչ ես գրում էի, հայր սուրբը հայկական թուահամարական տառերն երգով կրկնելով, որոշում էր գրելիք դրամի որքանութիւնը. օրինակի համար՝ երբ նա կամենում էր ինձ հասկացնել, որ գրեմ՝ թէ Բաթումի հասոյթի ստացել է երկու մանէթ՝ այսպէս էր երգում. բեմ—բեմ, բեմ—բեմ. բեմ—բեմ, բեմ:

Բեմ անուանում էր ընն, կամ ըստ նոր հընչման ը տառին:

Երեք մանէթի համար երգում էր. գեմ—գեմ, գեմ—գեմ, գեմ—գեմ, գեմ:

Գեմը՝ նրա գիմ, կամ գ տառն էր:

Չորսի եւ հնգի համար՝ դա—դա, դա—դա. եչ—եչ, եչ—եչ, եչ—եչ, եչ:

Եչից այն կողմն անցնել չը կար, հինգ մանէթից վեր Քեանդարեան հօր Ժապաւիսեալ տօմարների մէջ չի ներմուծուել:

—Եթէ բոլոր ստացածներս գրենք, ասում էր աշկարայ ամէնքին եւ չը թագնում, էլ ինչպէս կարող ենք տարին երեք անգամ մեծաւորներիս

պարզերեսութեամբ ներկայանալ: Բացի անձամբ ներկայանալը՝ հայր սուրբը տարին մի քանի անգամ ուղարկում էր ներկայանալու գաւառի մէջ եղած քահանայացու տիրացուերին:

Ինձ եւս, ինչպէս իւր քարտուղարի, անխնայօրէն վարձատրում էր հայր սուրբը, ամէն մի պսակի հրամանից, որ անմիջապէս իմ ձեռքով էին գրուում, նա վճարում էր քսան կոպէկ. իմ մասնակցութեամբ չը տրուած հրամանների վճարքը Յարութիւնին էր հասնում:

Վնաս չունի, որ չնչին էր դրամական վարձատրութիւնս, գաւառից եկած աթոռապատկան իւր ու պանրից, առանց իմ գիտութեան, իմ բաժինն ուղարկում էր գործակալ հայր սուրբը:

Տարուայ վերջերումն էլ ինձ ուղարկում էր ժողովելու՝ գիւղերի քահանաներին եւ երեսփոխաններին կոնսիստորից տուած՝ չափաբերական եւ ել եւ մտից մատենաները:

Այդ մի արգիւնաւոր գործ էր, որ հայր սուրբն իբրեւ վարձատրութիւն, ինձ էր յանձնում. հաստատ գիտէինք, որ ոչ մի գիւղական քահանայ, կամ երէցփոխ չունի գրած իւր մատենանի մէջ եւ ոչ մի տառ: Կտոր-մտոր թղթերի վրայ տէրտէրը խզբզած էր ունենում մի քանի պսակի, մկրտութեան եւ թաղուածների անուններ, երէցփոխն էլ իւր ել եւ մտից մի քանի աչքի ընկնող հաշիւներն

էր ունենում: Այդ երօզլիֆներից, հոգիս դուրս
գալով, ցուցակագրում էի ամէն ինչ ժապաւինեալ
տօմարներում:

Իմ այս արդար քրտնքի համար՝ տէրտէրնե-
րից եւ երեսփոխաններից ստանում էի երեք մա-
նէթից ոչ աւել, մի մանէթից ոչ պակաս:

Երեք մանէթներն ստանում էի այն դէպքում,
երբ տէրտէրի ու երեսփոխի յիշատակարանն իւ-
րեանց ուղեղն էր լինում:

Մի առ մի մտաբերում էին տէրտէրն ու
երեսփոխանը ծխականների մէջ պատահած հար-
կերը, իսկ ես նախ սեւագրի, ապա տօմարի մէջ
էի արձանագրում:

Այս դէպքում՝ ժամկոչի օգնութիւնը մեծ
էր լինում: Քահանայի ու եկեղեցւոյանի մոռացած-
ները նա էր յիշում:

Բայց ժամկոչն էլ հողածին էր. մանր մուկը
ծծկերների եւ գիւղի մէջ արհամարհուածների հա-
մար չարժէր նեղութիւն կրել, գլուխ տրաքացնել
ու միտքը բերել:

Այս ամէն վարձատրութիւնները չնչին են այն
մեծ եւ բարոյական վարձատրութեան հետ համե-
մատած, որ արեց ինձ հայր Քեանդարեանը՝ կար-
գելով քարտուղար:

Նա միջոց տուեց ինձ մօտից ծանօթանալ
Սրարատեան եւ Սրագածոտն գաւառների բնա-
կիչների կեանքին եւ բնաւորութիւններին, որոնք

իմ երկասիրութիւնների էական մասն են կազմում։
Այո՛, այդ կողմից ես շնորհապարտ եմ հայր-
Քեանդարեանին։

ԽԳ.

Հայրապետական գահը թափուր է, շուտով՝
ընտրութիւն պիտի կատարուի, ամէն տեղ էջմի-
ածնում՝ մօտիկ ապագայում ժողովուրդիք համազ-
գային վեհաժողովի մասին են խօսում։

Իմ խօսքս էջմիածնումն ու գիւղերումը քա-
մու բերած լուրերի մասին է, ապա թէ ոչ, մեր-
ինչ գործն է քաղաքների եւ բարձր շրջանների
մէջ արծարծուած՝ մեր ռամիկ խելքիցը վեր գոր-
ծերը քննել։

Մենք մեր փոքրիկ շրջանում՝ Քեանդարեան-
հայր սուրբի նախագահութեամբ՝ էջմիածնի չորս-
պատից դուրս արժանաւոր կաթողիկոսացու չենք
ուզում. եւ ի՞նչ կը համարձակուենք, հայր Քեան-
դարեանը գնդակաստորով կանի այնպիսի յանդուգն
մարդին, ով «Նորին Բարձր Սրբազնութիւն Տեղա-
կալ Առկաս արքեպիսկոպոսից» աւելի արժանաւոր
կաթողիկոսացու կը տեսնի իւր մտաւոր աչքերով.
չէ՞ որ ընտրող պատգամաւորներից մինը հէնց մեր
հայր սուրբն է, նա կը թողնի՞, որ ուրիշ կաթողի-
կոս նստի։

Հայր սուրբը մարգարէ էր. մի քանի ժամա-

նակից մասնաւոր նամակով հրաւէր ստացաւ Էջմիածին փութալու:

Գնաց, երրորդ օրը վերադարձաւ եւ յայտնեց, որ վանքի միաբանութեան կողմի պատգամաւորներից մէկն ինքն է նշանակուել «Տեղակալ Ղուկաս բարձր սրբազանի» կողմից:

— Հապա էլ ո՞ւմ պիտի նշանակէր բարձր սրբազանը, իւր հաւատարիմներին թողած՝ օտարի յուսով պիտի գործ կատարէր, պարծենում էր գործակալը. իմ գնալուց յառաջ՝ անուս իւր օրհնեալ հայրապետական մասներով ցուցակագրել էր. ծոցիցը հանեց, ինձ ցոյց տուեց. իմ աչքովս կարգացի՝ գործակալ Յակովբ վարդապետ Քեանդարեանց, նոյն եւ բարձրապատիւ վանահայր Մողնու վանուց սրբոյն Գէորգայ:

Մի օր էլ գործակալը Սինօզից պաշտօնական թուղթ ստացաւ ներկայ լինելու հայրապետական ընտրութեանը եւ ոտքը ձիու ասպանդակին դնելու՝ այսպէս ասաց. այսօր պատգամաւոր վարդապետ, մի երկու ամսից վեհափառ Ղուկաս ծայրագոյն Կաթողիկոսից օժուած սրբազան եպիսկոպոս եւ սինօզի անդամ: Ծ՛օ, ի՞նչ ես քիթդ կախել ու տըխրել, հէջ կը թողնե՞մ քեզ Աշտարակումը փթել, կը տանեմ Էջմիածին եւ կը բազմացնեմ Սինօզի գրագրական սեղանին, յուսագրեց ինձ հայր սուրբն եւ ձին մտրակեց:

Ափսոս մեր հայր սուրբի ուրախութիւն, որ

կորաւ. ոչ թէ ես, իր սպասաւոր Յարութիւնն էլ, որին իւր գլխից աւելի էր սիրում, չը համարձակուեց բան հարցնել:

Ընտրութեան հետեւանքը մենք հայր սուրբի գալուց յառաջ էինք իմացել եւ վճռել էինք խօսք չասել, մինչեւ ինքը մեզ չը պատմի:

Երկու շաբաթից հազիւ զիջաւ հայր սուրբի արդարացի զարոյթը. այն ժամանակ միայն ճաշի վրայ յայտնեց, թէ բարձր սրբազան տեղակալ Ղուկաս արք եպիսկոպոսը պէտք է լինէր Կաթողիկոս, եթէ նզովից արմատ Ստամբուլի ամիրաները գրած չը լինէին, որ եթէ այս անգամ Կաթողիկոսը Տաճկաստանի եպիսկոպոսներից չընտրուի, իրանք կը բաժանուին Էջմիածնից:

— Եւտ համոզեցի տեղակալին, բարձր սրբազան, թող բաժանուին, կորչին, բայց նա ասաց. չէ, Յակովբ հայր սուրբ, ես չեմ կամենալ իմ պատճառով ազգիս մեծագոյն մասի սիրտը կտորել. վնաս չունի, թող այս անգամ Տաճկաստանից լինի, միւս անգամ մենք կը նստենք: Իսկ քո եպիսկոպոսութեան համար մի հոգար, Մատթէոսի առաջին ձեռնադրածներից մէկը դու ես, քեզ խօսք եմ տալիս:

Մատթէոսի մասին հայր սուրբն այս լուրն էր բերել, իբր թէ պատգամաւորքը միայն իւրեանց ձեւական ստորագրութիւնն են դրել. այդպէս է տնօրինուած եղել:

ԽԳ.

Մողնում Յակոբ վարդապետ Քեանդարեանի մօտ ես հանդիպեցայ Թիֆլիսի առաջնորդ Զալալեան Սարգիս արք եպիսկոպոսին:

Նա գալիս էր Էջմիածնի վեհաժողովից եւ գնում էր Աբարանով Սանահին:

Սարգիս եպիսկոպոսին մի քանի անգամ միայն հանդիպել եմ Թիֆլիսի վեհարանում:

Այն ժամանակ նա վարդապետ էր:

Ներսէս Կաթողիկոսը նրան բոլոր հոգեւորականներէրց առաւել էր սիրում եւ շարունակ ուղարկում էր օտար քաղաքներ հոգեւոր գործերը քննելու եւ կարգի դնելու:

Վերջումը ներսէսը Սարգսին միայնակ օժեց եպիսկոպոս: Շատ էին միջնորդել, որ մի քանի ուրիշներին էլ հետը ձեռնադրէր, բայց Կաթողիկոսը հակառակել է՝ ասելով. ոչ, սա միակն է մեր հոգեւորականութեան մէջ եւ միակ պիտի ձեռնադրեմ:

Թիֆլիսումը Զալալեանցը մի երկու անգամ հետոս խօսեցաւ եւ հաւանեց: Այսքան է եղել մեր հանդիպումն եւ ուրիշ ոչինչ:

Միանգամայն զարմացաւ եւ ուրախացաւ Սարգիս եպիսկոպոսը, երբ ինձ գտաւ Մողնումը, իսկ երբ պաշտօնս իմացաւ եւ դրութիւնս, վճռական հրաման արձակեց ինձ, թողուլ անմիջապէս գործս:

եւ շտապել Թիֆլիս՝ առանց մտածելու ապրուստի եւ օթեւանի մասին. Թիֆլիսի առաջնորդարանի սենեակներից մի յարմարաւորն եւ մի կտոր հացը պատրաստ էր ինձ համար:

— Գիտէ՞ք, հայր վարդապետ, դարձաւ նա դէպի գործակալը, ձեզ մօտ գրագրի ստորին պաշտօնով պահում էք մեր ընդունակ երիտասարդներից մէկին, հանգուցեալ Ներսէս Կաթողիկոսը սրա մէջ մի շնորհք էր տեսնում. նա ասում էր, որ չի կարող անյայտ ապագայ ունենալ: Իմ սիրտս նոյնպէս վկայում է, որ սա անյայտութեան մէջ մեռնողներից չի լինելու:

— Էլ չը մնաս, վեր կաց շուտով արի Թիֆլիս, մինչեւ օգոստոս 15 այն տեղ կը լինիմ եւ քեզ կսպասեմ, հրամայեց ինձ:

Թող ոչ ոք չը զարմանայ, եթէ ասեմ, որ ես եւ՛ խոստացայ գնալ իւր մօտ եւ հէնց այն տեղ հետը մեծ կռիւ ունեցայ, երբ նա յայտնեց, թէ ինքը Շանշեանցին արձակել է Ներսիսեան դպրոցի տեսչութիւնից, թէ Շանշեանցը բողոքական է, միլորեցուցիչ է, Հայաստանեայց եկեղեցու հակառակ է, եւ այլն եւ այլն: Շատ մի մտացածին զրբպարտութիւններ, ինչ որ ինքն ու իւր համախոհները մինչեւ իւրեանց մահը տարածում էին:

— Դեռ արի ծանօթացիր, ապա ինքդ ինձ հետ կը համաձայնես Ներսիսեան դպրոցի համար պատրաստածս արժանաւոր եւ գիտնական տեսչացուի

մասին: Իմ հոգեգաւակն է՝ Նիկողայոս Տէր-
Յակովբեանց, Լազարեանց Լիցէօնից աւարտած:
Շուտով մտադիր եմ վարդապետ ձեռնադրել
եւ տեսչութիւնն իրան յանձնել, իսկ հիմա մի
քանի ժամանակով տեսուչ եմ նշանակել Բաւիթ
Արզանեանցին:

— Ես ձեր Նիկողայոսին չեմ ճանաչում, պա-
տասխանեցի, բայց Արզանեանցի համար կասեմ,
որ ձեր կողմից մեծ սխալ էր Շանշեանցին նրանով
փոխարինել. ընդհանրապէս իմ կարծիքս այս է՝
որ մենք դեռ երկար ժամանակ չենք ունենալ Շան-
շեանցի նման առաքինի եւ ճշմարիտ հայ ու ար-
ժանաւոր տեսուչ. ներեցէք, սրբազան, ասացի, ես
ձեր կարգադրութիւնները վնասակար եմ համար-
ում՝ թէ ազգի եւ թէ ձեր սեպհական անձի հա-
մար. դուք Թ. . . . ին համակարծիք էք դարձել եւ
այդ ձեզ աժան չի նստիլ:

Գործակալ հայր սուրբն երբ ակնարկներով չը
կարաց ինձ լռեցնել, ուղղակի հրամայեց չը յան-
դրգնել բարձր սրբազանի նման մեծ անձնաւո-
րութեանն եւ իմ բարերարիս հակառակ պատաս-
խաններ տալ:

Ամենեւին ուշադիր չը լինելով հայր սուրբի
ցասմանը, արիւնը գլուխս տուած՝ տաք տաք վի-
ճում էի Ջալալեանցի հետ եւ իւր սխալմունքներն
ապացուցանում:

— Այնչ, վարդապետ, ժպտալով ասաց Սարգիս

Եպիսկոպոսը, մերը գաղափարի կռիւ է, մինչեւ սա չը գայ Թիֆլիս եւ անձամբ չտուգի ասածներս, դժուար է սրան համոզելը:

Օ՛հ, թէ ի՞նչ ձիւն եկաւ գլխիս գործակալ հայր սուրբից՝ Սարգիս եպիսկոպոսին ճանապարհ դնելուց յետոյ. երեք օր կերածս քթերիցս էր հանում. ի՞նչպէս թէ դու համարձակուեցար այնպիսի մեծ մարդին, մանաւանդ քո բարերարին հակառակել:

Եպիսկոպոսի մօտ առիւծ կտրած տղայն՝ վարդապետի առաջին մուկն էի դառել. ակնկոր տանում էի կծու խօսքերը: Չը տանէի, ի՞նչ անէի, լուսահոգու համոզմամբ՝ հնազանդութիւնը փոքրերի բաժինն է, թէկուզ այդ լինէր կոյր հնազանդութիւն.— մաժու՛նը սեւ՛ է՝— սեւ է:

Վարդապետին վշտացնելս անտեղի եւ աւելորդ էր՝ մի ամսից խօսառ բաժանուելու էի իրանից:

Այդպէս էլ արի. հարիւր քսան մանէթ ուսուցչական ստանալիք ռոճկից ամենայն դժուարութեամբ ութ մանէթ ու կէս ժողովեցի, Քեանդարեանցի ընծայած սպիտակ թեւաւոր շալի չուխէն հագած եւ մի ձեռք փոխնորդով, յուլիսի վերջերին հրաժարական տուի մօրս եւ մերայնոց:

Եթէ ասեմ, որ մինչեւ Զալալօղլի, ուրեմն եւ ճանապարհի կէսը եղբօրս հետ միասին մեր ձին հեծած գնացի, իսկ այն տեղից չորս մանէթով Թիֆլիս հասայ, պարզ է, ուրեմն, որ չորս մանէթ

ու կէս կար գրպանումս, երբ ես օգոստոսի սկզբը ներին՝ լի յուսով՝ մտայ Առաջնորդարանի բակը եւ շփոթուած մնացի, լսելով, որ սրբազանը դեռ չի եկել եւ իմ մասին ոչինչ կարգադրութիւն չի արել:

ԽԵ.

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի».
յաւիտենական Հանգիստ Մինաս արք եպիսկոպոսին:

Վանքի աւագ եկեղեցու Հիւսիսային կողմը մի բոլորածեւ բրգանման սենեակ մինչեւ այսօր եւս անխնամ ընկած է: Հնումն այն սենեակը կոչուում էր Մինաս եպիսկոպոսի բուրգ կամ բուրջ:

Այդ բրջումն էր ապրում զառամեալ կարճահասակ Մինաս արք եպիսկոպոսը:

Առանց պատճառի չէ նրա յիշատակն օրհնելս. հայրենիք գնալուս ես Մինաս պապին կենդանի թողի. եթէ վերադարձիս ապրելիս լինէր, ես ո՞ր ջուրը պէտք է ընկնէի:

— Աստուած ողորմի՛ հոգուն, ասացի ու նոյն գիշերը մտայ Մինաս եպիսկոպոսի բուրջը, դուռը վրաս ծածկեցի:

Լոյս դառնայ եւ վանքի քահանայ ու կոնսիստորի անգամ վերոյիշեալ «Սատանի չաքուչ» մականուանեալ Տէր-Մկրտիչը, մինչեւ Սարգիս սրբազանի գալուստն ինձ իրաւունք տուեց Մինաս եպիսկոպոսի բրջի բնակիչը լինել:

Իմ բաղդից՝ բրջի մէջ կար մի խոտով լցրած, հնամաշ, երեք ոտնանի գահաւորակ. Ներսիսեան դպրոցի որդեգիր Գէորգ Ազիբէգեանցիինն էր: Չը գիտեմ՝ ինչ էր փչել Գէորգի խելքին, դեռ աշակերտ ժամանակն էժան գնով առել էր կիւրակնորեայ բազարից ու տեղ չունենալով՝ դրել Մինաս եպիսկոպոսի բուրջը:

Դիւանի պակաս ոտքի փոխարէն աղիւսներ շարեցի ու վրան փառաւորապէս գլորուեցի:

Այլ եւս երկիւղ չը կար, այլ եւս ծանօթներիս ու նախկին ընկերներիս նեղութիւն պատճառելու իրաւունք չունէի:

Այս էլ ասենք, որ շատ քիչ ծանօթ բարեկամներ էին մնացել. ընդ ամէնը մի քանի ընկեր եւ յիշատակաց արժանի ծերունազարդ Ամրիկեան Յովհաննէս աղայն, որ թէ եւ զառամելութեան տարիներում, բայց երիտասարդ ուղեղով:

Այն ժամանակն Ամրիկեանն այլ եւս Ներսիսեան դպրոցի վերակացուն չէր, այլ ծախսարարը: Այսինքն՝ ոչ թէ ինքն էր փողոց գնում առուտուրի, ոչ, նա նստած տեղիցն էր կառավարում: Իւր օգնական Մկրտիչ Մամիկոնեանն էր նորա հրամանները կատարում:

Ի դէպ՝ այդ ժամանակը Ներսիսեան հին դպրոցի մէջ չէր ուսումնարանը, իմ բացակայութեամբը տեղափոխել էին փօշտի տները, ուր է մինչեւ ցայսօր:

Ամրիկեան Յովհաննէս աղայն շատ էր ցաւում այս մասին. նա ինքն է եղել հին դպրոցի շինութեան վերակացուն եւ այսօր իւր ձեռքով կառուցուած շէնքը բարձի թողած ընկած է:

Ամրիկեանը Ներսէս Կաթողիկոսի հաւատարիմն է եղել. իւր երիտասարդութեան թարմ տարիներից մինչեւ խորին ծերութիւնը Ներսիսի հրամանակատարն էր. մինչեւ մահն էլ, որ պատահեցաւ եօթանասնական թուականներին, Ամրիկեանը վայելեց Ներսիսի շնորհքը:

Մտածէ՛ս Կաթողիկոսի հրամանաւ՝ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը բազմաշխատ ծերունուն յատկացրեց բնակարան, սնունդ եւ 300 մանէթ կենսաթոշակ:

Յովհաննէս աղայ Ամրիկեանի մարմինը Ներսիսեան դպրոցի միջից յաւիտենականութեանը յանձնուեցաւ:

Ամրիկեանն էր, որի մօտ ես շուտ շուտ յաճախում էի եւ մխիթարութիւն գտնում:

Ես միայն չէի, շատ շատերը հաճոյք էին զգում հանճարաշատ ծերունու հայրական խրատներն ու առողջ դատողութիւնները լսելու:

Ինչպէս ինքը բազմիցս կրկնում էր, Մշու երկրում—իւր հայրենիքում, գիւղական քահանայի մօտ, կանոն-սաղմոսի էջերումն էր աւարտել Ամրիկեանն իւր ուսումը: Այլինչ, շատ ուսումնականներ բաղբաւոր կը լինէին՝ Ամրիկեանի չափ զարգացում ունենալով:

Ափսոս, մի ամբողջ դարու արկածալից պատմութիւն էր Յովհաննէս աղայի կեանքը եւ բոլորը կորաւ։ Ամօթ մեզ՝ իւր ծանօթներիս, ոչ ոք չը հետաքրքրուեց խնդրել եւ գրի անցնել։

Այսօրուան Թիֆլիսի փողոցներում անխնամ թափառող, օրերով քաղցած քարշ եկող, խելացնոր համարուած հանրածանօթ տիկին, չարաբաղդ ու թշուառ Անայիսը Ամրիկեանի դուստրն է։ Իսկ նորա տղան էր 60-ական թուականների հայ բեմի փայլը—Միհրդատ Ամրիկեանը, որի մասին իւր տեղում։

Եստու՞մ էի ժամերով Յովհաննէս աղայի մօտ եւ ճաշի ժամանակին վեր կենում, գալիս բուրջս։

Որքան եւ խնդրում եւ ստիպում էր ծերունին ճաշի մնալ, չէի լսում. երեկոներն էլ մօտն էի գնում, երբ թէյը վերջացրած էր։

Գոռոզութիւնս թոյլ չէր տալիս։ Նաշերից խոյս տալուս պատճառաբանում էի, իբր թէ արդէն պանդոկից կերակուրս բերուած կը լինի, իսկ թէյի համար ասում էի, հէնց հիմի ժամկոչ Մինասի կինը ինքնաեւը դուրս տարաւ։

Ի՞նչ ճաշ, ի՞նչ թէյ, մի կտոր մօթալի պանիր, մի երկու վարունգ, երբեմն, իբրեւ շռայլութիւն, երիշկ, խոզի ապուխտ, կամ տապակած միս թաշկինակիս մէջ փաթաթած՝ տուն էի տանում՝ եւ վերջացաւ։ Վճռել էի օրական քսան կոպէկից աւել չը մնսել, էլ սեխ ու ձմերուկ ի՞նչպէս գնէի։

Երեմիան այդ ժամանակ չը կար, թողել էր Ներսիսեան դպրոցը, բայց իւր ցանկութեամբ թէ արտաքսուելով՝ չը գիտեմ: Ասում էին՝ գնացել էր Մոսկվա համալսարան մտնելու, ուր եւ մի քանի տարի սրանից յառաջ մեռաւ յիմարանոցում:

Ի 2.

Օգոստոս 15-ն է, յոյսերիս կատարման օրն է. տանից դուրս չեմ գնում, աչքս վանքի պարսպի մեծ դռնից չեմ հեռացնում: Ահա, ահա փօստի ձիանոնց զնգզնգոցը կը լսուի, ահա սրբազանը տուն կը մտնի եւ սրտիս բաբախիւնը կը մեղմացնի:

Դժուար թէ հրէայքն այնքան անհամբեր սպասում լինին իրանց Մեսիային, ինչպէս ես էի սրտատրուի բուպէները համարում:

Արի ու մի սպասիր. չորս մանէթ ու կէս դրամագլխիցս երեքը՝ երկու շարթուան ընթացքում անհեռատեսութեամբ վատնել եմ, ծոցումս մնում է մանէթ ու կէս, որ է 150 կոպէկ, որ է 30 շահի:

Այսքանն էլ չէի ունենալ, եթէ խոհեմութեամբ լուացարարութիւն չանէի:

Ասացի որ ունէի, չունէի մի ձեռք էփանագին փոխնորդ ունէի. լուացարարին տայի, ինչ հագնէի: Վճռեցի ամէն երեկոյ, մութը կոխելուց յետոյ՝ պատուին իջնել Կուր գետի ափն եւ լուանալ, մզել, սննեակումս փռել ու միւս առաւօտը

չորացած հագնել: Եթէ քիչ խոնաւութիւն էլ մնացած լինէր, հոգ չէր, ամառն էր, աւելի հով կը պահէր:

Վերը մոռացայ ասել, որ անկողնի կարիք եւս չունէի. խոտալից փափուկ դիւանը մահճի պատօն էր կատարում, չուխէս վերմակ էր, արխալուղս եւ անդրավարտիկս բարձութիւն էին անում:

Սրբազանին սպասելով՝ քաղցս մոռացել էի, մինչեւ երեկոյ ոչինչ չը կերայ, մթնեց, նոր փորս սկսեց գլխիս չաքուջ կոտրել:

Սիրտ չը կար, գլուխս պտտեցի ու պառկեցի, մտքիս հետ ընկայ: Նղղել եմ, քունս տարել է մինչեւ առաւօտ:

Տէր Մկրտիչն ինձ բօթարեր հանդիսացաւ, հէնց իմանաս կացինը քաշեց, թիկունքիս իլիկը (ողնաշարը) երկու կէս արեց, երբ առաւօտեան ժամին ասաց, թէ սրբազանն ուշանալու է մինչեւ ամսիս վերջը, գուցէ եւ աւելի:

Մտայ սենեակս, մտմտուքի հետ ընկայ:

— Ուրիշ, կը փորձեմ ու կապրեմ, վճռաբար վեր թռայ տեղիցս եւ շտապեցի փուռը, մի շահանոց բոլորակ հաց առայ:

Այժմ այն հացերը չը կան:

Բերի, հացը չորս հաւատար բաժին արի եւ մի կտորը կերայ, ժամկոչ Մինասի տուած փարջից (ջրի անօթ) կուշտ ջուր խմեցի ու դուրս եկայ:

Մօտաւորապէս իննը ժամն էր:

Տասնութէկ ժամին տուն դարձայ, հացիս երկրորդ կէսը կերայ, երկուսին թէ երեքին, երրորդ մասը եւ երեկոյեան ութ ժամին չորրորդ մասը վերջացրի:

Ոչինչ, կուշտ եմ:

Փորձս յաջողուեց, Կոլումբոսի աչքն եմ հանել նոր գիւտովս, օրական մէկ շահու հացով բաւականանում էի:

Ուրեմն մի ամբողջ ամիս կեանքս ապահովացրած է, եթէ ուրիշ անակնունելի անբաղդութիւններ չը պատահեն:

Պատահեցաւ դժբաղդութիւն, բայց յաջող անցաւ:

Մի տկարութիւն վրայ հասաւ. փորս քարից պինդ էր, թոյլ եմ. ոտքերիս ոյժը պակասեց, աչքերս մթնում են:

Կեցցէ բազմափորձ եւ կարեկից Յովհաննէս աղայ Ամրիկեանը. դպրոցի ծառայի ձեռքով ինձ ուղարկեց բժիշկ Արտեմ Իվանիչ Յովհաննիսեանի մօտ, որին աշակերտութեան օրիցս գիտէի. իմ ժամանակից նա դպրոցի բժիշկն էր:

Յովհաննիսեանի դեղատոմսն Ամրիկեանը դըւրոցի դեղատետրակի հետ դեղատուն ուղարկեց, ի հաշիւ դպրոցի դեղ բերել տուեց եւ անողջացրեց, որով դրամարկղիս մնաս չը հասաւ:

Այդպիսով մանէթ ու կէս գումարս ողջ առողջ ինձ հասցրեց մինչեւ սեպտեմբեր 15-ի երեկոն:

Նախախնամութեան տնօրէնութեամբ՝ հետեւեալ օրը, ինչպէս եւ մինչեւ այս կէտս, առանց ճաշի չը մնացի եւ չեմ մնացել:

Լուսաբացին՝ մօտ ութ ժամին՝ Վանքի զանգակն ինձ աւետեց Սարգիս սրբազանի շնորհաբեր մուտքը:

Ամէնքը դէպի սրբազանի կառքը վազեցին, իսկ ես դէպի տաճարի դուռը: Զերմաջերմ համբուրեցի եկեղեցու շէմքն եւ մի ժամից՝ սրբազանի տնօրէնութեամբ՝ Մինաս եպիսկոպոսի բուրգից փոխուեցի դարձեալ իմ հին բնակարանս—զանգակատան տակի սենեակը:

Ճաշում եւ ապրում էի սրբազանի տանը:

Աւելորդ չեմ համարում մի երկու խօսք եւս ասել Մինաս եպիսկոպոսի մասին եւ այս գլուխը փակել:

Շատ վաղուց էր Մինաս եպիսկոպոսը Թիֆլիսում, ինձ յայտնի չի, թէ ինչ գործով էր եկած եւ ինչո՞ւ էջմիածնի միաբան եպիսկոպոսն իւր մըշտական բնակարանը շինել էր Թիֆլիսն եւ ոչ էջմիածինը, բայց որ նա իւր ջահել հասակիցն էր մնացած:

Յիսնական թուերին՝ նա կատարեալ մանուկ էր դարձել, օրն ի բուն առանց վերարկուի, մէտակ (միայնակ) սպիտակ վարտիկով, մի գգգզուած մուշտակ հագին՝ իւր պարտէզը ոտնատակ տուող չարածճի երեխաներին էր քարհալած անում:

Մինաս եպիսկոպոսին խնամք էր տանում նրա բազմամեայ ծառան, որի համար սրբազանը Հաւարար քաղաքամասումը գնել էր տներ:

Այդ ծառայի տանը մեռաւ եպիսկոպոսը:

Լսուում էր, որ այս վերջին հանգամանքի պատճառաւ՝ Ներսէս Կաթողիկոսը թաղել է տուել արք եպիսկոպոսին առանց քահանայի:

Չորս մշակ միայն հանգուցելու դագաղն ուսերին դրած՝ տարել հողին են յանձնել:

Լսուեցաւ, իբր թէ հանգուցելու քոյրը բողոքել է այդ մասին Նախարարին, իբր թէ վերջինիս եւ Ներսիսի մէջ երկար գրագրութիւններ են տեղի ունեցել:

Ինձ յայտնի չի, ես Թիֆլիսումը չէի:

ԽԷ.

Սարգիս սրբազանի գալուց մի երկու շաբաթ առաջ՝ ինձ պատահած դէպքի մասին չեմ կարող լռութեամբ անց կենալ:

Ամառուան մի փոշոտ եւ տաք օր, երեկոյեան բաւականին ուշ՝ Թիֆլիսի այն ժամանակուան միակ զբօսարան ծառուղիում՝ կուսակալի տանից ոչ հեռու, զբօսնում եմ:

Յանկարծ մի հեղեղանման անձրեւ ուրիշների հետ ինձ եւս փախցրեց դէպի իմ բուրջը: Հարիւր քայլաչափ չէի անցել, որ անձրեւաջուրը պա-

բանոցովս մտել, ոտքերիցս դուրս էր գալիս:

— Աւելորդ է շտապել, մտածեցի ես եւ տեղն ու տեղս կանգ առայ:

Ի՞նչ պէտք է անեմ տուն գնալով, մահի՞ծ, վերմակ, փոխնորդ՝ բոլորը վրէս ունիմ, մինչեւ լոյս հազիւ թէ ցամաքեն, գիշերը Ադամ-Եւայի հագուստով հօ չեմ անց կացնելու:

Երկար չը քաշեց վարանմունքս, կարիքը մարդիս աչքերը բաց է անում՝ վարպետ է շինում:

Աչքս ընկաւ մօտիկ տներից մէկին, ուր բնակուում էր իմ համագիւղացի (արդիս հանգուցեալ) գիմնազիայի վերակացու եւ ուսուցիչ Յովհաննէս Տէր-Յովսէփեանը:

Վճռեցի եւ դուռը բաղխեցի:

Երեւի, տանուտէրերը կը զարմանային. ո՞վ կարող էր լինել այս հեղեղին դուռը բաղխողը:

Ծառան իսկոյն ցած իջաւ եւ բացեց ու դռան արանքից գլուխը կիսահանել հարցրեց ո՞վ լինելս:

Ես հրեցի եւ ներս ընկայ առանց ուշք դարձնելու ծառայի դիմադրութեանը:

Խեղճն իրաւունք ունէր ներս չը թողնելու, սանդուխքների առաջը հագուստիցս իջած ջրով լճացաւ:

— Դիցուք տանուտէրը տանն է, պատասխանեց իմ հարցին ծառան, բայց այդ դրութեամբ դուք հօ՞ վեր գալու չէք:

— Քո գործը չի, դու ազգանունս տուր եւ խնդրիր այստեղ քո տիրոջը:

Ծառայի զեկուցումն աւելորդ էր, սանդուխքի գլխին ճրագը ձեռքին երեւաց ինքը հիւրասէր տանուտէրը՝ իւր մօտ պատասպարուող մի քանի գիմնազիականների հետ եւ ձայնիցս ճանաչելուն պէս՝ իսկոյն ցած իջաւ եւ անմիջապէս հրամայեց ծառային ինձ համար բերել իւր հագուստներից։

— Փոխնորդներից մինչեւ կօշիկները, պարոն Յովհաննէս, պատասխանեցի ես։ Ի դէպ, թող երեսուրբիչ ու սանտր եւս չը մոռանայ, արդէն լուացուած եմ, երկինքն ինքն է ինձ ջուր մատուցել։

Շնորհակալութիւն պարոնին՝ ոչ միայն իւր սիրալիր հիւրասիրութեան համար, այլ եւ իմ կեանքի մէջ կատարուած ամենանշանաւոր երեւոյթին նախապատճառ հանդիսանալու առթիւ։

Սրտաբաց տանուտէրս ոտից գլուխ հագցրեց ինձ, տարաւ իւր սենեակը, թէյի հետ մի նոր հայերէն գիրք առաջս դնելով՝ ներողութիւն խնդրեց, որ ստիպուած է մի երկու ժամով միայնակ թողուլ ինձ. ինքը պարապելու է մօտը գիշերօդ աշակերտների հետ։

Գիրքը նոր էր ինձ համար։

«Վ էրբ Հայաստանի» եւ «Խաչատուր Արփեանց» բառերը լափեցին հետաքրքրութիւնս. դեռ չը թերթած՝ կազմին նայելով՝ շուարածի նման շուռէշուռ էի տալիս։

Սկսեցի յառաջաբանից։

Դժուար է ինձ պատմել այն տպաւորութիւնը

եւ այն յեղ յեղուկ զգացմունքները, որ անդադար ներսումս միմեանց հետեւում էին. մի բոպէ արտասուք տրումաթախիծ, միւս վայրկենին՝ ուրախութեան արտասուք, երրորդ ակնթարթին՝ նստած տեղիցս անհեթեթ ուտոստումներ: Ես ի՛նչ գիտեմ, ընչե՛ր չէին պատահում ինձ. լաւ էր, որ տանուտէրս գնացել էր եւ մօտս ոչ ոք չը կար, ապա թէ ոչ, արժէր կապկպել եւ յիմարանոց տանել:

Թէ ի՛նչպէս անցաւ ժամանակը, ոչինչ չեմ կարող ասել, բայց մէկ էլ զգում եմ, որ աջ բազուկս մի բան ծակում է եւ հեռաւոր տեղից լսուած արձագանգի նման մի ձայն դիպչում է ականջիս:

Կարելի է, դարձեալ անուշադիր գտնուէի, եթէ արդէն գիրքը վերջացրած չը լինէի:

— Ա՛յ տղայ, վերացել ես, խլացել ես, թէ անզգայացել ես, հինգ բոպէ կայ, քեզ շարժում եմ, գոռում եմ եւ չես պատասխանում:

— Ի՞նչ էր այս, ասացէք խնդրեմ, պարոն Յովհաննէս, ի՛նչ է անում Աբովեանցը. այս ի՛նչ նորանշան եւ սքանչելի երեւոյթ է մեր գրականութեան մէջ, ո՛ւր էր թագցրած մինչեւ օրս այս անգին գանձը:

— Ա՛յո՛, մի եւ նոյն տպաւորութիւնն է թողում դա ամէն ընթերցողի վերայ, այսօր ամէնքի խօսելիքն եւ դատելիքը «Վերք Հայաստանին» է, շնորհակալութիւն Փոնդոյեանցին, որ հրատարակեց:

— Եւ ընչի՛, պարոն Յովհաննէս, հետեւողներ

չունենայ Արուիեանցը, ընչի՞ զուրկ պահել մեր ժողովրդին ընթերցասիրութիւնից, մինչեւ երբ մեր գրականութիւնը գրագէտ դասակարգի սեպհականութիւն մնայ:

— Մենք այդ մասին շատ ենք խօսել, բայց ո՞ր է այսօր մեր մէջ դորա շաւղով գնացողը, հեշտ չը կարծես:

— Փորձելը յանցանք հօ չի՞:

— Ի՞նչ է գիտաւորութիւնդ, թերահաւատական ժպիտով հարցրեց ինձ:

— Այսչափով չեղած, կիսով պակասն ընդուս ների՞ է:

— Քառորդի քառորդն էլ մեզ կը գոհացնէ:

— Լիակատար յաջողութեանս համար խօսք չեմ տալիս, բայց ահա իմ ձեռքը, ես Արուիեանցին աշակերտելու եմ:

— Յանկանում եմ փայլուն յաջողութիւն, եթէ մի այդպէս բան անես, ամէնքից աւել ինձ կուրախացնես. քեզ տեսնեմ, մեր Աշտարակի անունն անմահացրու: Բայց եւ այնպէս ընթրել պէտք է, կերակո՞րները սառեցին, այն տեղ, գինու ազդեցութեան ներքոյ՝ մենք կը շարունակենք մեր խօսակցութիւնը:

Ընթրիքից յետոյ «Վէրք Հայաստանին» անկողնում պառկած երկրորդ անգամ ծայրէ ի ծայր կարգացի:

ԻՆԸ.

Իմ Թիֆլիս եկած ժամանակ գտայ Ներսիսեան դպրոցում տեսուչ Դաւիթ Արզանեանցին, մի ծերունի, որ իւր կեանքը անց էր կացրել պաշտօնականութեան մէջ, որի մէջ ոչ մի բարոյական սկզբունք չը կար:

Սարգիս եպիսկոպոսն Արզանեանցոյն էր փոխարինել Շանշեանցին:

Արզանեանցը՝ մտած օրից՝ Հոգաբարձութեան եւ Առաջնորդի հետ միացած՝ աշխատել էր կտրել Շանշեանցին համակրող աշակերտների արմատը:

Շատ ուշ էին հասկացել Արզանեանցն եւ իւրայինքը իրանց մի մեծ սխալմունքը:

Աշակերտներին նրանք ցրուում են, իսկ նրանց գլխաւորին պահում:

Այն ժամանակ Ներսիսեան դպրոցում աւագ վերակացու էր նկարիչ Յովհաննէս Բաբայեան Քաթանեանցը:

Այս մարդը Շանշեանցի գաղափարների ջերմ երկրպագուն լինելով, ամրացնում էր դպրոցի սաների մէջ Շանշեանցի ցանած բարոյական սերմը:

Սա մի հաստատուն եւ անպարտելի ախոյեան էր՝ քամուն տալու նոր կազմակերպութեան անբարեմիտ ջանքերը:

Քաթանեանցն ամէն օր՝ ժամու եւ տարա-
ժամու՝ հաւաքում էր դպրոցի աւագ սաներին իւր

գլխին, յիշեցնում էր իւրեանց սիրելի տեսչի տը-
ւած դասերն եւ առ հասարակ բաց էր անում
Շանշեանցի հալածիչների խարդաւանութեամբ լա-
րած թակարդները:

Կատաղած էին մեծ աշակերտները, որովհե-
տեւ տեսնում էին Արզանեանցի օրով դպրոցը բա-
րոյական քայքայման ենթարկուած. նրանք լսում
էին իրանից—Արզանեանցից այնպիսի խօսքեր, որ
փողոցային կինտօները կամաչէին արտասանել:

Այդպիսով Արզանեանցը կորցրել էր աշա-
կերտների մէջ իւր փոքր ի շատէ ունեցած յար-
գանքը:

Աշակերտների բարկութիւնը սահմանից անց
էր կացել, երբ լսել էին, թէ Քաթանեանցն այլ եւս
չը կարողանալով տանել Արզանեանցի եւ իւրայնոց
վատթարութիւնները, մտադիր է նոյն երեկոյին
հրաժարական տալ:

Այդ օրն ես գնացել էի Ներսիսեան դպրոցը՝
իմ ընկեր Մկրտչին տեսութեան:

—Վաղը մի թրխկոց կը լսես, ասաց ինձ Մկրտի-
չը. էս երեկոյ Քաթանեանցը զգուած Արզանեան-
ցից եւ հոգաբարձուներից, լսել ենք, որ կամե-
նում է հրաժարական տալ, իսկ մենք աշխատելու
ենք չը թողնել մեզանից հեռանալու. եթէ չը յա-
ջողեցինք, իմացիր, որ Արզանեանցին կիսամահ
կանենք:

Մկրտչի խօսքերը միւս առաւօտ ճշմարտուե-

ցան. դարդաց Թիֆլիսում՝ որ նոյն գիշեր Հոգաբարձութիւնը Ներսիսեան դպրոցի աւագ սաներից եօթը հոգու պօլիցիայում բանտարկած ունի:

Անմիջապէս վանքի դռանը հաւաքուեցան Թիֆլիսի հասկացող հայերն եւ խոնուած բարձրացան Առաջնորդարան:

Շուտ, աղաղակում էր Գրիգոր Իզմիրեանցը. — Մեր գլուխը մեռած է, որ ազգային դպրոցի սաներն իբրև յանցաւորներ փակուէին պօլիցիայում:

Թէ ի՞նչ խօսեցան Թիֆլիսի հայերը, ես չը գիտեմ, այն ժամանակն ես դեռ մարդի շարք ընկած չէի, չէի փտահանալ կաղ իշով քարվանի խառնուել:

Հեռուից հեռու հետեւեցի ազաներին դէպի դպրոց: Սարգիս եպիսկոպոսը խոստացել էր պարոններին՝ հանել տալ պօլիցիայից աշակերտներին:

Պարոններն սպասում էին աչքով տեսնելու կալանաւորներին:

Արզանեանցը ընակուում էր դպրոցումը. նա փակուել էր իւր սենեակում եւ չէր բանում դուռը:

Պարոններին թողնելով դպրոցի նրբանցքումը՝ Արզանեանցի սենեակի դռանը բարձրաձայն իւրեանց ահաճութիւնն արտայայտելու, ես մտայ մեր Մկրտչի մօտ:

Ճարպիկ Մկրտչին ազատուել էր եւ պատժից եւ բանտարկութիւնից, չը նայելով որ գլխաւորներից մէկը ինքն էր:



Ահա ինչ պատմեց Մկրտիչը.

Երեկ երեկոյեան՝ ընթրիքից յետոյ՝ Քաթա-
նեանցը մեզ ժողովեց եւ հրաժարական ողջոյն
տուեց. նա յիշեցրեց մեզ մեր պարտքը դէպի դըպ-
րոցի հիմնադիրն եւ մեր տեսուչ Շանշեանցը, յի-
շեցրեց մեզ Շանշեանցի քարոզած ճշմարտութիւն-
ները՝ հաւատարիմ լինել ազգին եւ եկեղեցուն եւ
չը շեղուել քրիստոնէական բարոյականութիւնից:

Իւր սրտազգած ճառի վերջին՝ Քաթանեանցը
չը լսելով մեր աղաչանքը, գրկեց մեզ մի առ մի եւ
համբուրուեց մեզ հետ:

Մենք ծնողը կորցրած անտէր որբի նման՝ ող-
բում եւ հառաչում էինք, մինչեւ դպրոցի մուտքը
ճանապարհ դրինք եւ վերադարձանք ու յարձա-
կումն գործեցինք Արղանեանցի սենեակի դռանը,
նեքս ընկանք եւ պահանջեցինք յետ կանչել մեր
սիրելի պաշտպան Քաթանեանցին:

Չէր սպասում Արղանեանցը մեզանից աւելին
դիմադրութիւն, ապա թէ ոչ, նա օձի միս կուտէր
եւ հայհոյելով չէր գողալ մեր վրայ:

Լաւ էր, որ շուտ հասան ներքեւից դպրոցի
ծառաները, շարունակեց Մկրտիչը, ապա թէ ոչ՝
փոխանակ չորս հինգ բռնցքի, ջախջախուած կը
լինէր մեզանից:

Մենք հրը տեսանք որ ծառայքը մօտ են,
թողինք Արղանեանցին եւ շտապեցինք վանքը Սար-
գիս եպիսկոպոսի մօտ:

Դռները փակ էին, սկզբումը եպիսկոպոսի հրամանաւ ծառայքը ներսից սպառնալիք տալով խորհուրդ էին տալիս թողուլ, հեռանալ, բայց վերջը՝ երբ քիչ մնաց դռան նիւթերը կոտրուում էինք, եպիսկոպոսը մեզ ներս ընդունեց եւ անկողնի մէջ կիսամեռ սիրթնած դիակի նման հարցրեց, թէ ի՞նչ ենք կամենում:

Մենք ոչինչ չը թագցրինք, յայտնեցինք, որ Արզանեանցին ծեծել ենք եւ խնդրեցինք՝ նոյն իսկ կէս գիշերին վերադարձնել մեզ մեր սիրելի վերակացուին:

— Շատ լաւ, ասաց Սարգիս եպիսկոպոսը, դուք գնացէք դպրոց, ես իսկոյն կը ժողովեմ Հոգաբարձուներին եւ կը գամ այն տեղ, կանչել կը տամ եւ պարոն Քաթանեանցին:

Յիմար էինք մենք, որ խաբուեցանք, պատմեց Մկրտիչը, արդարեւ կէս ժամից եկան, բայց ոչ Սարգիս եպիսկոպոսն ու հոգաբարձուք, այլ վերջիններս եւ 15—20 պօլիցիականներ:

Ներս ընկան նրանք դպրոց, փակեցին սենեակների դռները, փոքրներին բռնուտեցին, ոռզգի խփեցին եւ արձակեցին, իսկ մեծերից եօթը հոգի տարան պօլիցիա:

Ինձ էլ էին կամենում բռնել, բայց ես լուսամուտը բացի եւ դուրս ընկայ ու բարձրացայ, արտաքնոցի գլխին ժողոված փայտերի տակը մտայ:

Մի քանի տղայք էլ դուրս պրծան ինձ հետ:

եւ ողջ գիշերը մնացին սանդուխքների տակերին եւ մութն անկիւններում կուչ եկած. խեղճերն երկիրդից եւ մրսելուց հիւանդացել են եւ այսօր պառկոտած են:

Մինչ մեր Մկրտիչը պատմում էր իւր հետաքրքիր զրոյցը՝ մի պօլիցիականի ուղեկցութեամբ տուն եկան կալանաւորները:

Թիֆլիսեցի պարոնները տեսնելով գունատ եւ գզգզուած աշակերտներին, զայրացած թքում էին Արզանեանցի ստուերին:

— Այնչ, երեսայք, գոչեց Իզմիրեանցը, դուք մի յուսահատուիք. ոչ եպիսկոպոսը, ոչ հոգաբարձուքն եւ ոչ Արզանեանցը չեն մարսիլ իրանց եփած կերակուրը. նրանք չեն վստահանալ ձեր մի մազին անգամ դիպիլ, շատ չի քաշիլ՝ իրանք այս տեղ են մնայ:

Իզմիրեանցի խօսքը ճիշդ կատարուեց Արզանեանցի վերաբերութեամբ, Թիֆլիսեցոյ ստիպմամբ՝ Արզանեանցը տեսչութիւնից արտաքսուեց:

Նրա փոխարէնը տեսչական պաշտօնը ձրիաբար յանձն առաւ կատարել ցենզօր Յովհաննէս Ղայթմազեանցը, որ լինելով զգոյշ եւ խոհեմ մարդ՝ կարճ միջոցից ընդհանուր յարգանք էր վայելում:

Որպէս զի պարոն հոգաբարձուքը հերքեն Արզանեանցի ծեծուելու անպատուաբեր համբաւը, նրանք Արզանեանցին նստացրել էին կառք եւ փո-

դոցէ փողոց շրջեցնում. բայց այդ այրուած սրտի մխիթարանք էր միայն, ուրիշ ոչինչ:

Ընդհակառակը Թիֆլիսի յառաջաւորներէից շատերը մեծ հրաւէրքներ էին սարքում Քաթանեանցի պատուին եւ խնդրում էին պատմել եղելութիւնը:

Մի բանում Հոգաբարձութիւնը խելացի գըտնուեց. Արզանեանցից յետոյ՝ Ղայթմազեանցը դեռ չը մտած՝ տտեստամներ տալով՝ արձակեցին բոլոր Շանշեանական հասկացող աշակերտներին:

Դորանից յետոյ էր, որ դպրոցը հին շինութիւնից փոխեցին փօսաի տները:

ԽԹ.

Օգոստոսը վերջանում է, Սարգիս եպիսկոպոսի տանն եմ:

Մի օր սրբազանն ինձ առաջարկում է մի տետրակ կարել, մէջը գրել՝ ինչ որ ինքը կը թելագրի:

— «Առ Աուկաս արք եպիսկոպոսն». այս եղաւ վերնագիրը:

— Նամակ ես գրում:

— Այո՛:

— Լաւ: (Միջանկեալ ասեմք, որ ես Սարգիս եպիսկոպոսի հետ առաջին տեսած օրից՝ եզակի էի խօսում):

Ի՛նչ նամակ, Ներսիսեան դպրոցի քառասնա-

կան թուականների պատմութիւնն ենք օրական երկու երեք ժամ շարունակ գրում:

Ետ հետաքրքիր պատմութիւն է:

Հասնում ենք 1849 թուի վերջերը, երբ Ներսէս Կաթողիկոսը հրահրում է Պետերբուրգից առաջին անգամ Շանշեանցին տեսուչ Ներսիսեան դպրոցի:

Ուշադրութիւնս լարում եմ եւ մատս կծում, եպիսկոպոսի միտքը Շանշեանցին անուանարկելն էր:

Այդպէս էլ դուրս եկաւ. Շանշեանցը նկարագրուեց մի գիտնական, խելացի, բայց անհամբեր երիտասարդ. մի քանի ամիսից յետոյ՝ իրան թոյլ է տալիս Հայոց Հայրապետին սառը խօսքերով հակառակել եւ հրաժարական տալ, գնալ Պետերբուրգ:

Ես լուռ գրում եմ:

Ահա մտանք 52 թուականի սկիզբը, Շանշեանցն երկրորդ անգամ ստանձնեց Ներսիսեան դպրոցի տեսչութիւնը:

Այժմ բոլորն ինձ համար ժամանակակից անցքեր են. տեսնեմք ընչով է սկսուում եւ ո՛ր է յանգում:

Սկսուում է Շանշեանցի կրօնի ուսուցչութիւնից եւ կրօնագիտութեան ձեռագիր դասատետարից եւ շարունակուում է Շանշեանցի տարածած հակահայկական գաղափարների վնասակար եւ վտանգաւոր հետեւանքներով:

Շանշեանցը նկարագրուում է բողոքականու-

Թեան բոլից արտաժայթքուած մի անհաւատ ու
անաստուած կեղծաւոր, մարդախար, մոլորեցուցիչ
ու մատաղ նոր սերնդին խմորող մարդ:

Պէտք է ասեմ, որ շատ համբերատար մարդ
էր Սարգիս եպիսկոպոսը, ամէն բառի, ամէն տողի
վրայ կանգնացնում եմ, ընդհատում եմ թելա-
դրութիւնը եւ հետը տաք տաք վիճում եմ, ապա-
ցուցանում եմ, որ ինքն է ստախօսը, Շանշեանցն
իւր նկարագրածի միանգամայն հակապատկերն է:

— Քո բանը չէ, սիրելիս, մեղմօրէն ժպտալով
պատասխանում է եպիսկոպոսը, դեռ գրի վեր-
ջացնենք, յետոյ օրերով քեզ հետ վիճենք:

— Ո՞նց թէ գրի, բարկութեամբ գոռում եմ ես,
իմ արդար, առաքինի ու անմեղ տեսչիս դէմ իմ
ձեռքով զրպարտանքներ շարադրեմ, մինչ դեռ գի-
տեմ, որ բոլորը ստութիւն է:

— Շարագրողը դու չես, ես եմ, քո մատներդ
միայն մեքենայ են, որ շարժուում են:

— Կոտրատուին էսպէս մատները, որ արդարի
դէմ են շարժուում:

— Ձեռ ուզում, թող, վեր կաց, դու չը լինիս՝ քո
հօր եղբօր որդին լինի:

Թողում եմ, վեր եմ կենում եւ վազում եմ
ուզղակի Շանշեանցի մօտ, որ այդ ժամանակ Թիֆ-
լիսումն էր եւ ամէն ինչ մանրամասնօրէն յայտ-
նում եմ:

— Գրէ, տօ, Պռօշեանց, զուրթ է ասում եպիս-

կոպոսը, ուրիշին կու նստեցնէ գրելու, աւելի լաւ է, վուր դուն գրիս ու իմանաս, թէ ինչ ու ինչ է գրում:

— Ախար դուք չը գիտէք, նրա գրածները բոլորը սուտ գրպարտութիւններ են. նա առանց ապացոյցի կամենում է հաստատել, որ ձեր՝ մեզ սովորցրած կրօնագիտութեան տեսրակը հակառակ է Հայոց եկեղեցու դաւանութեանը, որ իբր թէ ձեր միտքն է բողոքականութիւն տարածել հայութեան մէջ, որ դուք մեզ խմորել էք, որ մեր երանելի նախնեաց սուրբ մատենագրութիւնները, օրինակ Նարեկացին, Ներսէս Շնորհալին եւ ուրիշ շատ հայ եկեղեցական հայրերի Աստուածաբանական գրուածքները, մինչեւ իսկ Սաղմոսը դուք արհամարհում էք, որ հայ եկեղեցւոյ ծէսերը, ձեռնագրութիւնը եւ ուրիշ խորհուրդներն աւելորդ էք համարում. . . .

— Գիտիմ, տօ, գիտիմ, քանի՛ ձգձգես, էդ բաները քեզ համար են նոր, մենք շատ ենք լսել, ընդհատեց ինձ Շանշեանցը. դեռ հանգուցեալ Կաթողիկոսի կենդանութեամբը՝ Սարգիս եպիսկոպոսը, Թայրովն եւ Յակոբ վարժապետը օր ու գիշեր անհանգիստ էին անում Ներսիսին, մինչեւ կարողացան այնպիսի մեծ եւ իմաստուն մարդու միտքը պզտորել:

Ներսէսն այդ մասին մինչեւ անգամ 1855 թուին կոնդակ գրեց Էջմիածնից:

— Ի՞նչ կոնդակ, հարցրի ես:

— Ես ի՞նչ գիտեմ. Սարգիս եպիսկոպոսն այն ժամանակն էջմիածնումն էր եւ Կաթողիկոսին շարունակ կրկնում էր քո ասած զրպարտութիւնները, այստեղից էլ իր համախոհ հոգաբարձուքն էին անստորագիր նամակներով մի եւ նոյնը յիշեցնում:

Ուստի խեղճ Կաթողիկոսը հոգաբարձուներին կոնդակ է գրում, կոնդակի մէջ վերոյիշեալ բամբասանքներն է յիշեցնում եւ խոստանում է շուտով ուղարկել Սարգիս եպիսկոպոսին անկարգութիւնների առաջն առնելու եւ եկեղեցին ազատելու մեզ նման մոլորեցուցիչների հերիտիկոսական վարդապետութիւններից:

— Ախար, Պետր Սամուէլից, փրփրակալած դառնում եմ Ծանշեանցին, էդ անիրաւն ուզում է Ղուկաս եպիսկոպոսին հասկացնել, որ ոչ թէ դուք էք հակառակ Հայաստանեայց եկեղեցւոյն, այլ եւ մենք՝ վերին դասարանի աշակերտներս սկսել ենք հայհոյական խօսքեր արտաժայթքել մեր սուրբ եկեղեցւոյ եւ իւր բազմավաստակ երանաշնորհ հայրերի ու իրանց թանկագին աշխատասիրութիւնների դէմ. . . .

— Հերիք է, տօ՛, քանի՛ ասես:

— Բայց մի՞թէ այդ ամէնը սուտ չեն, մի՞թէ դուք չէք մեր մէջ արմատակալացրել ազգայնութեան գաղափարը. ձեր շնորհիւ չէ՛, որ մենք՝ իմ բոլոր ընկերներովս՝ համոզուած ենք, թէ եկեղեց-

ւոյ ամենահասարակ ծէսերից մինը քանդելով, մենք քանդած կը լինինք մեր ազգայնութեան եւ ինքնուրոյնութեան հիմքը. դուք չէք մեզ սովորցրել հաստատուն պահել Թագէտոսից եւ Բարդուղիմէոսից մեզ աւանդած եւ Գրիգոր Լուսաւորչից ու բոլոր հայ սուրբ հայրապետներից ու հայրերից կտակած եկեղեցին, եթէ կամենում ե՞նք, որ Հայ անունը յաւիտեանս չը մեռնի ազգերի շրջանում. դուք չէք, դուք չէք:

— Այո՛, ես էի, յետո՛յ:

— Դուք չէիք, որ բողոքականութեան պատմութիւնը պատմեցիք ու ասացիք, որ եթէ Լուտերը ծանօթ լինէր հայ եկեղեցու դաւանութեանն եւ ծէսերին նա անշուշտ կը միանար հայերիս հետ եւ Պապերի ջիգրու այնքան չոր ու ցամաք նոր եկեղեցի չէր ստեղծիւ: Հիմի՛ Աստծոյ եւ խղճմտանքի ընդդէմ չէ՛ ասել թէ Շանշեանցի միտքն է բողոքականութիւնը տարածել:

— Որ ասում են, ի՞նչ անենք, ո՛ւմ լեզուն կտրենք:

— Եթէ այդպէս է, ես էլ չեմ գրիլ:

— Դու չես գրիլ, ուրիշը կը գրի. եթէ դու գրես, այս մի օգուտը կունենաս, որ կիմանաս, թէ ուրիշ ի՞նչ զրպարտութիւններ են անում:

Միւս օրը Շանշեանցի խօսքերից հանդարտած՝ մտնում եմ եպիսկոպոսին եւ առանց թագցնելու յայտնում Շանշեանցի տուած խորհուրդը:

— Տեսար, որ ես սուտ չեմ ասել, թէ Շան-

շեանցը խելօք մարդ է, նա քեզանից աւելի ուղիղ է դատել. առ ուրեմն տետրակն եւ նստիր:

Մի քիչ ժամանակ գրում եմ ու դարձեալ ընդհատում, հակաճառում:

Եպիսկոպոսը բարակ կշիչոցով ծիծաղում է:

— Լաւ, քո միտքդ ինչ է, որ այդպէս խիղճդ մեռցնում ես, սասցի ես:

— Սսենք՝ գրածներս բոլոր ճշմարտութիւն են, պատասխանեց եպիսկոպոսը, բայց միթէ ուրիշները խիղճ չունին, որ ինձ համար տարածում են զանազան լուրեր:

— Շանշեանցն ինչ մեղաւոր է այդ բանում:

— Շատ մեղաւոր է, տարածողները բոլորը նրա բարեկամներն ու աշակերտներն են. այո՛, խոստովանում եմ, կարելի է գործն այսքան սուր կերպարանք չառնէր, եթէ ես Նանշեանցի հետ լաւ վարուէի, այս բանումն էլ իմ բարեկամներն են մեղաւոր, բայց երբ այսքան յառաջ ենք գնացել, յետ մնալը յիմարութիւն է. գրիր, վերջը քեզ հետ կը վիճենք:

— Չէ, էլ չեմ տանիլ՝ վերջապէս կատաղութեամբ գոչեցի ես եւ վեր թռայ, երբ թելագրեց՝ «Շանշեանց խմորէ զմիտս պարզամիտ եւ մատաղ աշակերտաց իւրոց»:

— Քո կարծիքով ուրեմն ես էլ խմորուած եմ, ես Շանշեանցի հարազատ աշակերտն եմ:

— Ի ու խմորուած ես, բայց դեռ մէջդ իսպառ

արմատ չեն բռնել վարժապետիդ մոլորութիւնները: Աստուծով մի օր դարձ կը գաս, դու դեռ նորաբողբոջ տունկ ես, քեզ կը վերատնկենք պարարտ հողի մէջ, ճղնիկներդ կը խուզենք, հարազատ պտուղներով կը պատուաստենք եւ կը շինենք Հայաստանեայց սուրբ եւ Առաքելական եկեղեցու պիտանի անդամներից մէկը:

-- Ե՛տ հեռու ես բարեկենդանից, ասացի ես յայտնի առածն եւ դուրս թռայ, մտայ սենեակս, կարծելով՝ թէ մեր մէջ ամէն ինչ վերջացաւ:

Սպասում էի, թէ ահա կը գայ ծառան եւ սրբազանի կողմից կը հրամայի ինձ թողուլ իւր տունը:

Փնօք եւ պատիւ սրբազանին՝ ոչ միայն թթու գէմք չը ցոյց տուեց, այլ ընդ հակառակը՝ ինձ համար պաշտօն ճարեց:

Նոյն տարին էր սկսել սրբազանի որդեգիր Նիկողայոս Տէր-Յակովբեանցն իւր դպրոցն եւ միայն վեց աշակերտ ունէր:

Սարգիս եպիսկոպոսն երբ շատ համոզել էր Նիկողայոսին եւ չէր յաջողացրել վարդապետացնելու եւ Ներսիսեան դպրոցի տեսուչ շինելու, ստիպուել էր օգնել Նիկողայոսին մասնաւոր դպրոց բանալու:

Նիկողայոսի վեց աշակերտներն էլ Սարգիս եպիսկոպոսի ծանօթ Թիֆլիսի հարուստների որդիքն էին:

Սարգիս եպիսկոպոսի առաջարկութեամբ ամ-

սական տասը մանէթ ռոճիկ, սնունդ եւ սննեակ յատկացրեց ինձ Տէր-Յակոբեանցը:

Ես կատարելու էի վերակացութիւն եւ ուսուցանելու էի հայոց լեզու:

Հոգս չէր, որ օրական երեք ժամ ուսուցչական պարապմունքի հետ, երեք ժամ էլ դասեր էի սերտացնում ու վեց ժամ վերակացուի պաշտօն էի վարում, ուրախութիւնիցս ոտքերս գետնից կտրուեցին, երբ Տէր-Յակոբեանցը 200 մանէթ կանխիկ տուեց ինձ եղբօրս ուղարկելու՝ հօրս թողած պարտքի մի մասը վճարելու համար:

Աւագ, փողերս նպատակին չեն ծառայել: Այն տեղ ստացուած օրից մի շաբաթ յետոյ՝ մեր գիւղի եկեղեցում Աշտարակի համար երեք քահանայ են տնօրինուած եղել ձեռնադրուելու:

200 մանէթի շնորհիւ եղբայրս չորրորդ քահանան է դառնում:

Բազդիս դռները բացուում են, մեր կացած տանը՝ մեր հարեւաններից մէկն ինձ առաջարկեց՝ ամսական երեք մանէթով՝ օրական մի ժամ հայերէն դաս տալ իւր տասը տարեկան դստերը:

Մի ուրիշ նոր պաշտօն եւս գտայ:

Իմ հայրենակից Նիկողայոս Տէր-Յովսէփեանցը (վերջումն Էջմիածնի յայտնի պրօկուրօրը) վննելով հոգաբարձու Թայրովի ազգականը, աւագ վերակացու եւ ազդեցիկ անձնաւորութիւն էր ներսիսեան դպրոցում:

Նիկողայոսը մի օր ձեռքիս տեսաւ գեղին սաթի համրիչս, որ Երուսաղէմից ուղարկել էր իմ համար իմ բազմերախտ ուսուցիչ վերոյիշեալ Մժէժեան Մարտիրոս վարդապետը:

Իւր փախած օրից՝ Մժէժեան հայրն Երուսաղէմումն էր ապրում:

Նիկողայոսը մի գիշերով խնդրեց իմ համար նուիրական նուէրն եւ այլ եւս չը վերագարձրեց:

Փոխարէնը՝ նա ինձ կարգեց Ներսիսեան գըպրոցի պատրաստական դասատանը ռուսաց լեզուի ուսուցիչ:

Պռօշեանց եւ ռուսերէնի ուսուցչութիւն: Նիկողայոսը մեզաւոր չէր. երկու ուսուցիչ էին հարկաւոր. նա ինձ հայերէն առաջարկեց:

Ես միջնորդեցի երկրորդ ուսուցիչը կարգել իմ սիրելի ընկեր Պօղոս Բէնքլեանցին (վերջումը՝ Թիֆլիսի Մողնու եկեղեցու աւագ քահանայ հանգուցեալ Տէր-Արիստակէսը):

Եւ որովհետեւ Պօղոսն ինձանից աւելի բոբիկ էր ռուսաց լեզուի մէջ, Պօղոսի սիրոյն՝ ես յանձն առայ ռուսերէնը:

Հարիւր եւ քսան աշակերտանոց մի դասատան համար երկու ուսուցիչներս հնգական մանէթ ամսական ենք ստանում, օրական երեք ժամ պարապելու պարտականութեամբ:

Էլ ինչ դարդ ունիմ. 18 մանէթ ամսական ունիմ, ինչն է արգելում ինձ առաւօտները ժամը

չորսին վեր կենալ, գրիչը ձեռքս առնել եւ նուիրուել երազական ցնորքներս գլուխ տանելու գործին. ո՛չ ապաքէն խօսք էի տուել սլատուական Յովհաննէս Տէր-Յովսէփեանցին:

Վեց թերթից մի տետրակ կարեցի եւ առաջին գիշերը «Սօս եւ Վարդիթերիս» առաջին գլուխը կտրեցի:

Գրեցի, մի քանի անգամ կարգացի եւ առաւօտը վեր կացայ շտապեցի Ներսիսեան դպրոց:

Ծ.

— Պօղո՛ս, սիրելիս, նուիրիր ինձ այս առաւօտեան առաջին ազատ ժամերդ, պարապիր իմ փոխարէն, թող տուր ինձ գնալ վերին դասարան՝ Յակօվբ վարժապետի դասը լսելու:

Պօղոսը սիրով համաձայնեց եւ ես ինձ ձգեցի Կարենեանցի դասատունը:

Շարագրութեան դաս էր, վարժապետը մի տետրակ առաջը դրած՝ նոր սկսել էր ուղղել:

— Հը՛, ինչ կայ, Պա՛օշ, հատիկ ունիս թակել տալու, նոր ոտանաւոր ես գրել: Գարնան գրածդ լաւն էր, ամէնքը հաւնեցան:

— Ձեր շնորհիւն էր:

— Հա՛, Ծառուկիս էիր նմանացրել, շատերն ասացին՝ Պաօշը քեզ կուղէ նմանիլ. ես էլ կը պատասխանէի՝ «Ժառ ի պտղոյն ճանաչի»:

Յակովբ վարժապետը յիշում էր նոյն 1859 թուի գարնանը՝ «Մեղուի» մէջ տպուած իմ ոտանաւորս. «Առ անձկալին Շուշան դուստր Վարդանայ» վերնագրով:

Վարժապետն ինձանից յառաջ՝ տպել էր իւր Թառուկ ոտանաւորը. ես իրան էի նմանացրել, ինքը՝ Նահապետ — Ալիշանին:

«Շուշանն» իմ անդրանիկ տպագրուած աշխատասիրութիւնն է: (Տես «Մեղու Հայաստանի», 1859 թուի, ապրիլ 18, № 16):

Տպագրութիւնից յառաջ՝ դարձեալ դասատանը ցոյց էի տուել Կարենեանցին:

— Ի՞նչ է այդ, հարց տուեց Յակովբ վարժապետը՝ տեսնելով ձեռքիս տետրակը, էլ ի ոտանաւոր:

— Առէք, տեսէք, ժպտալով դրի տետրը սեղանի վրայ:

Վարժապետն աշակերտի շարագրութիւնը մի կողմը դրեց եւ սկսեց բարձրաձայն կարդալ «Սօս եւ Վարդիթերիս» առաջին գլուխը:

Սիրտս ժամացուցի պէս ձկնկում էր, երբ վարժապետն իւր հաստ ու վսեմ արտասանութեամբը շարունակում էր կարդալը:

— Կ՛անց, գրիչը վայր դրեց Կարենեանցը, թխտոր ներս ծծեց եւ աչքերն առաստաղին յառելով՝ մտածութեան մէջ մտաւ:

Անձանօթ չէր այն հայեացքն իմ համար, իսկոյն հասկացայ, որ վարժապետը հաւանում է

աշխատութիւնս եւ ուզում է իւր կողմից մի բան աւելացնել:

Նա վերի շրթունքով ներքին շրթունքին հուպ տուեց, երեք անգամ գլուխը տմբամբացրեց, բազմապատկութեան ծուռը խաչը նշան դրեց ու լուսանցի մէջ այս տողն աւելացրեց. «ես ու դու էլ եթէ էջմիածին բարեկամ ունենայինք վարդապետների մէջ, մենք էլ մահուտի շինել կը ծածկէինք»:

Այդ երկու տողն ինձ բաւական էր ոգեւորուելու եւ գրուածքս շարունակելու, եթէ այնուհետեւ վարժապետը ոչինչ ասելու չը լինէր:

Բայց նա ընթերցումը վերջացրեց, հաւանական ժպիտով գլուխը շարժեց եւ ասաց.

— Լաւ ես սկսել, շարունակիր, իմ գուշակութիւններս կատարուում են, աշխարհաբառի հարազատ մշակներից մէկն ես լինելու: Հիմի Սսերին ու Առաքել Արարատեանցին աւետիս գնալ է հարկաւոր, թող աշխարհաբառն ընդհանուր գործածական լեզու դարձնել ցանկացողներին հայհոյեն:

Ես վարժապետի հեգնութիւնը հասկացայ. նա ինքը, թէ եւ, հիանալի, քաղցր եւ դիւրամբռնելի գրաբառ գրող էր, թէ եւ շարունակ խորհուրդ էր տալիս իւր սաներին կարգալ նախնեաց մատենագրութիւնները, թէ եւ աշխարհաբառ շատ սակաւ էր գրում, բայց աշխարհաբառի ջերմ պաշտպան էր: Շատ անգամ էր դասատանը դատա-

պարտում Մսերի եւ Առաքել վարժապետի խորթ-
նաբանութիւնները:

— Արովեանցը փակ լեզուդ բաց արաւ, Պռօշ,
տետրակն ինձ տալով, ասաց վարժապետը. շարու-
նակիր, չը թողնես. նա իր Քանաքեռն անմահա-
ցրեց, դու էլ քո Աշտարակն անմահացրու:

Ես գլուխ տուի եւ ուրախ ուրախ դուրս եկայ:
Երեսս կարմրում է, երբ ես յիշողութիւննե-
րիս մէջ Կարենեանցի եւ Ջալալեան Սարգիս եպիս-
կոպոսի խօսքն եմ անում:

Վերը տեսանք, որ երկուսին էլ երախտա-
պարտ եմ, բայց անաչառութիւնը պահանջում է
խոստովանել, որ ես երկուսի դէմ էլ ապերախտ
գտնուեցայ. որքան նրանք ինձ սիրում, ընդունում
եւ փայփայում էին, այնքան օր ըստ օրէ՛ ժամա-
նակակից կարծիքների ազդեցութեան ներքոյ՝ ես
նրանցից հեռանում էի:

Գաղափարական էր մեր կռիւր:

Շանշեանց եւ Շանշեանցականութիւն, ահա
այս էր ժամանակի հրատապ խնդիրը: Սար-
գիս եպիսկոպոս, Թայրով, Կարենեանց եւ բոլոր
հնութիւնը միացած՝ հալածում էին Շանշեանցին
եւ իւր հետեւորդներին:

Շանշեանցի աշակերտներն ու լուսամիտ երի-
տասարդութիւնն էին Շանշեանցի հետեւողները:

Տէր-Ստեփան Մանդենեանցի «Մեղու Հայաստա-
նին» էր «խաւարամիտների» դատը պաշտպանողը:

Մոսկուայում հրատարակուող Ստեփաննոս Նազարեանցի «Հիւսիսափայլն» էր «լուսաւորեալների» օրգանը:

Այս երկու թերթն էին հայկական խաւար հորիզոնի վերայ ցոլացող միակ աստղերը, եթէ չը յիշենք Մոսկուայի Լազարեան ձեմարանի հայ լեզուի ուսուցիչ Մսերի «ձուքաղը» եւ Թէոդոսիայի Խալիբեան տպարանից լոյս տեսնող «Մասեաց Աղաւնին» կամ «Ծիածան Հայաստանին»:

Վերջին երկու թերթերն աւելի բանասիրական նշանակութիւն ունէին, թէպէտ ի պահանջել հարկին՝ ջերմ կ'օժակից էին «Մեղուին»:

ԾԱ.

Ես յարգելի պատճառ ունէի իւր տեղումը չը յիշատակելու ժամանակի նշանաւոր դէպքերից մէկը:

Վենետիկի միաբան հ. հ. Սարգիս վարդապետ Թէոդորեանի, Գաբրիէլ վարդապետ Այվազովսկու եւ Ամբրոսիոս վարդապետ Գալֆայեանի՝ որպէս եւ մի տարի յետոյ՝ վերջինի հարազատ եղբայր Խորէն վարդապետ Գալֆայեանի՝ կաթողիկոսութիւնից հայ եկեղեցու ծոցը վերադառնալու մասին է խօսքս:

Վերոյիշեալների դարձն եղել է իմ Աշտարակում ուսուցչութեան ժամանակ, ուրեմն իմ

Համար միանգամայն անծանօթ եղելութիւնս
Բայց քանի որ այժմ Թիֆլիսումն եմ, սկսել
եմ շփուել Հայ կեանքի խաւերի հետ, մինչդեռ
այդ մարդիկն եւ իրանց գործերը ժամանակի ըն-
թացիկ գլխաւոր խնդիրներից մէկն են Համար-
ուում, չի կարելի գոնէ հարեւանցօրէն մի քանի
խօսք չասել նրանց մասին:

Երեք առաջին վարդապետների դարձը կա-
տարուել է Ներսէս Կաթողիկոսի կենդանութեան,
կարծեմ, վերջին տարին՝ Կ. Պօլսի Պօղոս պատրի-
արքի հաւանութեամբ:

Յակովբ վարժապետը գրել է այդ պատմու-
թիւնը «Ռարձ երկից վարդապետաց» վերնագրով:

Վարժապետի գրուածքին եթէ նայենք, Ներ-
սէսը շատ ուրախացել է, կարդալով Պօղոս պատ-
րիարքի նամակը, որով սրբազան պատրիարքը յայտ-
նում է Կաթողիկոսին՝ Հայ ազգն երջանկացնող
անցքը:

Բայց ինձ հետ շատերը լսել են անշուշտ վար-
ժապետի բանաւոր անկեղծ խոստովանութիւնը: Իւր
ասութեամբ՝ ինքը խեղաթիւրել է Ներսիսի խօսքերը:

— Ոչ թէ չէր ուրախացել Կաթողիկոսն, ասում
էր Յակովբ վարժապետը, ընդհակառակն՝ շատ
տխրել էր:

— Այս ի՞նչ է անում օրհնած Պօղոս պատրի-
արքը, իբր թէ, բացականչել է Ներսէսը Կարե-
նեանցի ներկայութեամբ, ամէն մի տուն ընկնողի

ընդունել կը լինի. այդ մարդիկն եթէ մի գաղտնի նպատակ չունենային, իրանց կրօնը չէին ուրանալ. երբէք լաւ մարդը կրօնափոխ չի լինիլ:

— Հապա ընչի՞ հակառակը գրեցիք, վարժապետ, եղել են Կարենեանցին հարց տուողներ:

— Ի՞նչ անէի, աշխարհը ոգեւորուել էր, չուզեցայ եռանդները պաղեցնել, Ներսէսը կենդանի չէր, որ սուտս բռնէր, պատասխանել է Կարենեանցը:

Մեր գործը չէ, թէ ինչպէս եւ ինչ նպատակաւ են եկել. ես հասայ այն ժամանակը, երբ Այվազովսկին իւր երկու ընկերներին՝ Սարգիս ու Ամբրոսիոս վարդապետներին՝ թողել էր Փարիզումը, նորաբաց Հայկազեան վարժարանը երեսի վրայ ձգել ու առանց Հոգեւոր Իշխանութեան միջնորդութեան՝ իւր աշխարհահռչակ նկարիչ եղբօր շնորհիւ՝ փոխուել էր Թէոգոսիա առաջնորդութեան պաշտօնով, հիմնել էր Խալիբեան ուսումնարանն եւ իւր գործակալ Պետրոս Հաքիմեանին ուղարկել էր հայ քաղաքներն՝ աշակերտներ ժողովելու:

Հաքիմեանին ես ուշ ծանօթացայ, կարծեմ՝ հետեւեալ 1860 թուին էր:

Մի խարդախ, մի կեղծաւոր, մի խորամանկ եզուխ կաթողիկ էր նա. վայ նրան, ո՞վ Հաքիմեանի ճանգն ընկնէր, իւր քաղցր ու թովիչ լեզուովը խեղճի արիւնը կը ծծէր:

Մի օր կար, նա Այվազովսկուն երկինքն էր հանում, մի ժամանակ էլ մինչեւ դժոխքն էր իջե-

ցնում, երբեմն մի եւ նոյն օրուայ մէջ երկու գործողութիւններն էլ կատարում էր, քաջ գիտելով իւր հաշիւը եւ ճանաչելով դիմացի խօսակցին:

Տեղն ընկած ժամանակ՝ ամէն գործի ձեռնամուխ էր լինում. կոմիսիօներութիւն, հաշտութեան միջնորդ, մինչեւ մօցիք լուծիւն:

Ես ճանաչում էի մի երիտասարդի, որի գլուխը կապեց մի արատաւոր, տգեղ ու կիսացնոր օրիորդի: Այս բանի համար 2000 մանէթ ստացաւ Հաքիմեանը աղջկայ ծնողներից:

Ձի կարելի ասել, թէ Այվազովսկին չունէր Թիֆլիսի մէջ իւր բարեկամները, կեղծ թէ անկեղծ՝ մի եւ նոյն է. բայց Թիֆլիսի մեծագոյն հասկացող երիտասարդութիւնը հակակրում էր Այվազովսկուն:

Սարգիս եպիսկոպոսն եւ իւրայինքն էին Այվազովսկու համակրողները, Շանշեանցն եւ իւր հետեւողները չէին սիրում՝ «Հայոց Հայրապետի իրաւունքները ոտնատակ տուող եզուխտ» վարդապետին:

Միակ անձնաւորութիւնը, որի դարձն անկեղծ եւ առանց յետին մտքերի էին ընդունում լուսամիտները, Թէոդորեան Սարգիս վարդապետն էր:

Հետզհետէ, հետեւեալ տարիներում՝ դէպի Այվազովսկին եւ իւրայիններն ատելութիւնն աճելով աճեց, երբ Մատթէոս Կաթողիկոսը ոչ միայն չը ձեռնադրեց Այվազովսկուն եւ Խորէն Գալֆայեանին (վերջումը Նար-Բէյ) եպիսկոպոս, այլ եւ Գար-

րիէլ վարդապետին տպագրական խօսքով՝ առան-
ձին գրքոյկով՝ հայ եկեղեցուն եւ կրօնին անհա-
րազատ հրատարակեց:

Վերջին տարիները՝ հայ լուսամիտ մասը
ձեռքէ՛ ի ձեռք շրջեցնում էր Այվազովսկու շրջա-
բերականի պատճէնները, որ, թէ եւ, վաղաժամ,
բայց նոյնութեամբ արտագրելն աւելորդ չեմ հա-
մարում: Իսկապէս ասած՝ ոչ թէ մի Առաջնորդի
գրութիւն էր այն, այլ Հայրապետական կոնդակ:

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Գարիէլ վարդա-
պետ Այվազեան, Տեղակալ Առաջնորդութեան վի-
ճակիս Հայոց Նախիջբեանի եւ Պեսարապիոյ:

Ծնորհազարդ քահանայից, Քրիստոսասէր ժո-
ղովրդականաց մերոց առ հասարակ ողջոյն եւ
օրհնութիւն ի Քրիստոս:

Եթե՛նամեան բոլորեցաւ ժամանակ, յորմէ հե-
տէ կամօքն Աստուծոյ եւ հրովարտակաւ Օգոստոս-
փառ Ինքնակալին ամենայն Ռուսաց հաւատացաւ
մերումս նուաստութեան տեսչութիւն Առաջնոր-
դութեան վիճակի Հայոց Նախիջբեանի եւ Պեսա-
րապիոյ, յորում պաշտաման եւ հաստատեցաք ա-
պա հրամանագրովք Սինհոգոսին ս. Էջմիածնի,
յետ այնորիկ եւ զանազան կոնդակօք նորընտիր
սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց Տեառն
Մատթէոսի Ա:

Ապաքէն՝ ոչ անծանօթ են ազգիս մերում
ընդհանրապէս, եւ առանձին հաւատացելոցդ այսօր
վիճակի, որչափ ինչ գործեցան ի մէնջ յայսր մի-
ջոց ժամանակի՝ օգնականութեամբ շնորհացն Աս-
տուծոյ եւ պաշտպանութեամբ մեծազօր Պետու-
թեանն՝ յօգուտ եւ ի պայծառութիւն հօտիդ յանձն-
եղելոց ի խնամս մեր. նորոգութիւնք, ասեմ, եկե-
ղեցեաց հնացելոց ի տեղիս տեղիս եւ յայլս նորոց
եկեղեցեաց կառուցմունք, անվթար պահպանու-
թիւն եւ բարեզարդութիւն կտրգաց աստուած-
պաշտութեան ամենայն ուրեք ըստ հնաւանդ վար-
դապետութեանց Հայաստանեայց եկեղեցոյ, ան-
խոնջ եւ անընդհատ քարոզութիւն բանին Աստու-
ծոյ առ հաւատացեալսդ յամենայն քաղաքս եւ ի
գիւղօրէս վիճակիս, բարեկարգութիւն ժողովրդա-
կան դպրոցաց արդէն եղելոց եւ բազում նորանոր
վարժարանաց ի հրահանգս մերազնեայ մանկուոյն,
հաստատութիւն ազգայնոց ուսումնարանիս ի Թէո-
դոսիա հանդերձ տպագրութեամբ պիտանի գրե-
նոյ եւ ամսագրի եւ որ այլն եւս. Բայց թերեւ
ոչ ամենեցուն իցէ յայտնի եւ այն, թէ որչափ ինչ
արդեօք կրեցաք կիրս մինչեւ ցայսօր, առ ի կա-
տար աճելոյ զայս ամենայն անհրաժեշտ պարտա-
պաշտաման մերոյ:

Այլ մեզ եւս շատ խակ էր, արդարեւ, ցան-
կալի բարեբաստութիւն, եթէ կրեալքն ի մէնջ
վիշտք եւ տառապանք ցայս միջոց ժամանակի եւ

վասն այդր ամենայնի՝ միայնոյ ամենատես եւ սրբ-
տագէտ Արարչին եւ եթ մնային քաջածանօթք,
առ որ եւ ունիմք ասել հանապազ «Ծառայք ան-
պիտան եմք, զոր ինչ պարտն էաք առնել, արա-
րաք», եւ առ ի նմանէ ակն ունել երանական պա-
տասխանւոյն, եթէ, «Ազնիւ ծառայ, բարի եւ հա-
ւատարիմ . . . մուտ յուրախութիւն Տեառն քո»:

Սակայն, աւանդ, ստիպիմք աւասիկ եւ բռնա-
դատիմք յողբալի հարկէ իրաց այժմու ժամանա-
կիս, բովանդակել աստանօր ի լսելիս հաւատա-
ցելոցդ Քրիստոսի կարճառօտ բանիւ զգլխաւորս
ի վշտագնութեանց անտի մերոց, հանդերձ պատ-
ճառանօքն, եւ այս այնու մտօք եւ եթ, զի թե-
րեւս մարթասցուք մերովսանն ի բաց փարատել
զտկարացն գայթակղութիւնս, որոց թերեւս տեղի
տուեալ իցէ, եթէ ոչ մերս գնացք ընդ ում եւ
իցէ, գէթ այլոցն ընդ մեզ քաղաքավարութիւն:

Քանզի մեք անդստին ի ժամանակէ անտի,
յորում Կայսերական հրամանաւ կոչեցաք յաթոռ
առաջնորդութեան վիճակիս, ցաւագին սրտիւ գը-
տաք բունեալ ի Նորն-Նախիջեւան զանհաշտ իմն
եւ զվաղեմնի հակառակութիւն, որով ժողովրդա-
կանք քաղաքին այնորիկ պատուականք մաքառէին
սաստկապէս ընդդէմ իրերաց. թշնամութիւն եւ
հակառակութիւն ողբալի, որ պատճառանօք եկե-
ղեցական դրամոց Նախիջեւանի, աւանդելոց ի բա-
րեյիշատակ Կաթողիկոսէն Ներսիսէ ի պահեստ

ի ձեռն միոյ ուրուք յիշխանաւորաց քաղաքին այնորիկ եւս քան զեւս սաստկացեալ, հուսկ ուրեմն յերկուս ռիւերիմ կուսակցութիւնս պառակտեալ էր զքնակիչսն՝ զմիոյ ազգի սերունդս սիրելիս եւ զմիոյ եկեղեցւոյ որդիս հարազատս:

Չայս հերձուած չարաբաստիկ եւ զայս վէճ անտեղի, որ վասն դրամոց եկեղեցականաց միաբանական եւ վաւերական հաւանութեամբ կողմանցն երկուցուն դադարեցուցաք մեք եւ բարձաք ի միջոյ անդէն իսկ յամին 1858, որոյ վասն եւ գոհութիւն եւ գրուատիս ոչ սակաւս ի Պետութենէն եւ ի Սինհոդոսէն միանգամայն ընկալաք եւ աներկմիտ վստահութեամբ ակն ունէաք այնուհետեւ, թէ առատապէս կ'իթեցիրն ի քաղաքին այնմիկ բազմաբեղուն արգասիք տիրապարգեւն խաղաղութեան:

Սակայն հակառակորդն ամենայն բարեաց սատանայ յաջողեցաւ թագուցանել եւ պահել ի նմին քաղաքի զխմորն հին դատելութեան եւ զնախանձու, իբրեւ զհուր ընդ գազախաւ (մօխիր) ի սիրտս ոմանց ի բնակչաց Նախիջեւանի:

Որոց տեսեալ ի վերջ կոյս 1859 ամին, եւ յորս յետ այնորիկ, զի ընտրութեամբ Ազգին եւ հաստատութեամբ Կայսերն մեծի հրաւիրեցաւ Սթոռ Հայրապետութեան Հայաստանեայցս եկեղեցւոյ սրբազան Արքեպիսկոպոսն Մատթէոս, որ հարկաւ իմն անգէտ էր եւ անձանօթ խնդրոց եւ

գործոց, որք յուզէին ի ժամանակին յայնմիկ ի վիճակս վիճակս Ռուսաստանեայց Հայոց, — ժամ պատե՛հ համարեցան վերստին գրգռելոյ զխնդիրն եկեղեցական գումարաց Նախիջեւանի, զաւարտեալն արդէն օրինաւոր դատաստանաւ, եւ ամբաստանելոյ զմէնջ, որպէս թէ ինքնակամ եւ անհրաման յօրինաւոր իշխանութենէ ի գործ ածեալ իցէմեր զգրամսն զայնոսիկ ի պէտս ազգայնոյ ուսումնարանին, եւ այնպէս իմն պարաւանդեալ պաշարեցին զմիտս սրբազան Հայրապետին եւ այնպէս գրգռեալ զարթուցին ի վերայ մերումն նուաստութեան ի բարկութիւն, զի ամենայն համօրէն խորհուրդք մեր եւ բանք եւ գործք առհասարակ ի թիւրն մեկնեցաւ ի Նորին Սրբազնութենէ: Որ եւ անանց իսկ արժան համարելոյ արկանել զնոսին ընդ զգուշաւոր եւ օրինաւոր քննութեամբ դատաստանի, վճռեաց եւ դատաւարտեաց զամենայն գրով, բանիւ եւ տպագրութեամբ:

Այնուհետեւ անթերի եւ անկեղծ հաւատարմութիւն մեր առ վարդապետութիւն մերոյ եկեղեցւոյն, զորս յայտ յանդիման ջատագովէաք եւ ջատագովեմք միշտ ընդդէմ հռովմէական (աց) եւ նորադանդից, պարսաւեցաւ ի հակառակորդաց անտի իբրեւ զհակամիտութիւն յայլ իմն դաւանութիւն զազգս մեր շրջելոյ: Վաստակք մեր եւ աշխատութիւնք նուիրեալք ի փառս Աստուծոյ եւ եթ եւ ի լուծաւորութիւն ազգի, խոտեցան եւ

անարգեցան իբրեւ հնարք փառամոլութեան եւ գործիք իշխանասիրութեան. եւ ի կիր առնուլն մեր Կայսերական հրամանաւ զգրամս եկեղեցեաց վիճակիս ի կառուցումն եւ ի պահպանութիւն ազգայնոյ ուսումնարանի, եւս եւ՝ որպէս օրէն էր՝ ի բարեկարգութիւն այլոց ժողովրդական դպրոցաց այսր վիճակի եւ ի նորոգութիւն նոցին իսկ եկեղեցեացն, անգոսնեցաւ եւ դատապարտեցաւ, նոյնպէս առանց դատաստանի, իբրեւ զյաւիշտակութիւն եւ զսեղանակապտուութիւն:

Զուր տարապարտուց ջանահնար եղաք մեք մինչեւ ցայժմ բազմաթերթ գրուածովք, բայց միշտ խոնարհական բանիւ, անբասիր զանձն կացուցանել առաջի Սինհոդոսին ս. Էջմիածնի եւ մանաւանդ առաջի Վեհափառ Ատենապետի Նորին Բանք ոսոխացն մերոց եւ բանսարկու արանց, եւս եւ անանուն գրութեանց անարգ եւ վատշուէր մարդկան յայլ եւ այլ քաղաքաց, հաւատարմագոյնք երեւեցան յաչս նոցա քան զմեր ճշմարտութիւնն: Զուր տարապարտուց անձամբ իսկ հատեալ անցեալ զտաժանական ուղին, որ ընդ մէջ է Թէոդոսիոյ եւ Էջմիածնի, եւ յատենի կացեալ Վեհափառ Գաթողիկոսի, երկրորդ անգամ յամին 1863, արդարացուցաք զանձն լիուլի պատասխանատուութեամբ յամենայնի, զոր ինչ յառանձնեալ էին հակառակորդքն մեր շինել զմերովս անսոգիւտ վարդապետութեամբ եւ զանշահասէր գործովք եւ զգուշա-

ւոր բանիք՝ կարծիս եւ զկասկածանս անգոսնելիս
եւ անյարիրս: Քանզի եւ անդր զկնի մեր պատ-
գամաւորք առաքեալք ի հակառակորդաց անտի,
որ ի Նախիջեւան, ոչ միայն խափան արկին նո-
քա ձեռնադրելոյ զմեզ Վեհափառ Կաթողիկոսին
յեպիսկոպոսութիւն, որ ոչ ըստ մերում իսկ ցան-
կութեան սպասեալ լինէր, քաւ լիցի, այլ ըստ բա-
զում անգամ առաջարկութեան Կայսերական Պե-
տութեան եւ ըստ ձերոց իսկ բարեսէր խնդրա-
գործութեանց, — այլ եւ յաջողեցան, չգիտեմք որ-
պէս, տալ սրբազան Կաթողիկոսին առաքել շտա-
պաւ զմի ոք յիւրոցն՝ զԱնդրէատ եպիսկոպոս զկնի
մեր՝ ըստ երեւութին՝ իբրեւ թէ ի վերազննութիւն
եկեղեցական գործոց վիճակիս, այլ իրօք՝ ի փո-
խանակել զմեզ նուաւ յառաջնորդութեան այսր
վիճակի:

Եկն եհաս վերազննիչն այն եւ փոխանակ յԱ-
ռաջնորդական ատեան այսր գիմելոյ եւ աստէն
տեղեկանալոյ ստուգութեամբ ամենայն հանգամա-
նաց տեսչութեան վիճակիս, տարի մի ողջ եւ աւելի
եկաց մնաց ի Նախիջեւան, եւ այն ի խումբս այ-
նոցիկ ի հակառակորդաց Առաջնորդական իշխա-
նութեան մերոյ, որոց հրաւիրանաւն իսկ եկաւո-
րեալ էր, եւ իբրեւ ի գործս Հոգեւորական Կառա-
վարութեան տեղւոյն անգամ չկարաց գտանել զթե-
րութիւնսն զոր խնդրէր, այսինքն է՝ այնպիսի ինչ
իրս, որ բաւականք իցեն ի դատապարտ առնել

զմերս տեսչութիւն, զարմանալի իմն համարձակութեամբ, եւ որպէս թէ միշտ Կաթողիկոսական կոնգրակաց զօրութեամբ, ձեռնամուխ եղեւ ի պէս պէս գործս կառավարութեան վիճակիս, մինչեւ ի փոփոխել ապօրինաւորապէս եւ զԱնդամս Հոգեւորական Կառավարութեան Նախիջեւանի, հեռացուցանելով զքահանայս արժանաւորս՝ հաւատարիմս երգման եւ անմիջական օրինաւոր իշխանութեան իւրեանց, եւ կարգելով ի տեղի նոցա քահանայս համբաւեալս արգէն ըմբոստ գնացիւք իւրեանց եւ անուանարկս ի ժողովրդեան Նախիջեւանի: Մինչդեռ մեք բողոք առեալ զայսմ ամենայնէ ըստ օրինի առ Սինհոգոսն սրբոյ Էջմիածնի եւ առ վսեմափայլ Ոստիկանն Ներքին գործոց, սպասեալ մնայաք առ ի նոցանէ իրաւանց եւ դատավճռոյ, եւ ահա ազդ եղեւ մեզ, զի Յովհաննէս Արքեպիսկոպոս Արշարունի կարգեալ է ի Վեհափառ Կաթողիկոսէն առաջնորդ վիճակիս այսր ի Թէոգոսիա: Ար եւ եհաս ի 28-ն յունվարի ի Նախիջեւան եւ յՅ-ն նորին ամսոյ ի մայր եկեղեցւոջ քաղաքին ետ ընթեռնուլ ի լուր ժողովրդեան զկոնգրակ մի անծանօթ մեզ մինչեւ ցայժմ, որով, որպէս թէ, Արքազան Կաթողիկոսն մերժէ զմեզ յԱռաջնորդական իշխանութենէս յանձնելոյ մեզ հրամանաւ ՕԳՈՍՏՍՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց եւ կարգէ ի տեղի մեր առժամանակեայ կառավարիչ վիճակիս զՅովհաննէս Եպիսկոպոս Արշարունի, պատուի-

րելով զնորա անունն յիշատակել ի պատարագի եւ ի հասարակաց աղօթս եւ նմա միայնոյ հնազանդիլ յամենայնիւ :

Կայսերական Պետութիւնն տեսանելով, զի այս անօրէնութիւն Ս. Կաթողիկոսի յայտնապէս հակառակ է 966 յօդուածոյ Ա. մասին, ՃԱ. հատորոյ օրինաց, որ ասէ. «Զթեմակալ Առաջնորդ Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ որ ի Ռուսաստան նշանակէ Թագաւոր - Կայսրն յեկեղեցական աստիճանաւորաց այսր դաւանութեան, նորակարգին եւ արձակին Բարձրագոյն հրովարտակօք, եւ զի զկարգեալն ի պաշտօն ինչ հրամանաւ Վեհափառ Ինքնակալին ոչ ոք կարէ փոխել առանց հրամանի Նորին Վեհափառութեան, ի ձեռն վսեմափայլ ընդհանուր կառավարչին նորոյն Ռուսիոյ Քօցեբու սպարապետի հեռագրական հրամանաւ յՅն ամնոյս փետրվարի պատուիրեաց փոխանորդի բարեկարգապետին Ռոստովի պ. Վասիլիեւի փութալ ի Նախիջեւան եւ ի Ժողով կոչեալ զԺողովուրդն եւ զամենայն եկեղեցականս ի ձեռն քաղաքագլխոյն ի Ա-ն փետրուարի ծանուցանել, զի ամենեքեան սու հասարակ սլարտին միմիայն առաջնորդ օրինաւոր ճանաչել յայսմ վիճակի զկարգեալն հրամանաւ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ եւ ոչ զայլ ոք :

Յաղաքս այսր ամենայնի անակնունելի եւ ծանր ծանր եղելութեան, հարկ անհրաժեշտ հա-

մարեցաք պատուէր հրամանի առնել առհասարակ ջնորհազարգ եկեղեցականացդ եւ համօրէն աշխարհականաց, յանձնելոյ ի խնամս տեսչութեան մերոյ, զի ամենեքեան միտ ղնիցեն եւ ի ղէպս այսոցիկ անվրէպ պահպանութեան երեցունցս այսոցիկ կարեւոր գիտելեաց եւ անստերիւր կանոնաց:

Ա) Զի հաւատարիմք կայցէք մնայցէք ամենեքեան ընդ մեզ օրինաց եւ հրամանաց ՕԳՈՍՏԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց, ընդ որոյ հովանաւորութեամբ տաւաղիմքս ¹⁾ ողորմութեամբ Աստուծոյ, եւ որում երգուեալ ենք եւ մեք եւ գուք եւ ամենայն որ զերգումն հաւատարմութեան մինչեւ ցմահ:

Բ) Զի հաւատարիմք իցէք նոյնպէս ընդ մեզ յանթերի հպատակութեան Մայր Աթոռոյ Հայաստանեայցս եկեղեցւոյ եւ ի հլու հնազանդութեան Արժանաժառանգ Աթոռակալի Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի յամենայն խնդիրս եւ ի վարդապետութիւնս հաւատոյ բացատրեալս ի նմանէ հաստատութեամբ Սիւնհոգոսին Եջմիածնի եւ յամենայնի, որ համաձայն իցէ Հայրապետական կանոնաց եւ Կայսերական օրինաց: Եւ՝

Գ) Զի առաջնորդ հարազատ վիճակիս այսո-

1) Գուցէ տաղաւարիմքս:

րիկ ճանաչիցէք յորում ժամանակի եւ իցէ զնա միայն, որ կարգեալ իցէ, կամ կարգիցի ըստ օրինաց Կայսերական գերագոյն հրամանաւ եւ ոչ զայլ ոք:

Իսկ ի կնիք բանիցս յորդորեմք զամենեսեան զձեզ ի սէր Քրիստոսի ներել միմեանց, շնորհել իրերաց, հեռի լինել յամենայն չարախօսութենէ եւ ի գրգռութենէ եւ մանաւանդ ի խառնելոյ ի գործս եւ ի խնդիրս, որք արտաքոյ իցեն ձերոցք իրաւանց եւ իշխանութեան եւ դատողութեան:

Եւ որ առաւելն է քան զամենայն՝ եւ մեք եւ դուք առ հասարակ մաղթեսցուք վասն ազգիս մերոյ եւ եկեղեցւոյ սրբոյ զՀոգւոյն Աստուծոյ զցանկալի խաղաղութիւն, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զխորհուրդս, զի մխիթարեսցէ զանձինս ծառայից իւրոց ընդունելով զաղաչանս ամենայն հովուաց սրբոց եւ հովուապետաց Հայաստանեայցօ եկեղեցւոյ եւ անցուցէ ի մէջ զարդար ցասումն պատուհասի յանցանաց մերոց՝ որ է ոգին երկպառակութեան եւ նախանձու եւ հակառակութեան, ապականիչ եւ կործանիչ Ազգի եւ եկեղեցւոյ:՝¹⁾

Եթէ ոչինչ պատմական նշանակութիւն եւս չունենայ այս նամակը, դարձեալ արտագրելու մեծ

¹⁾ Այս կոնդակը տպուած է Այվազովսկու գրած «Խալիբեան դպրոցի պատմութեան» մէջ:

պէտք կար՝ իրրեւ նմուշ կոկ եւ ընտիր գրաբառ-
շարագրութեան:

Իր ճոխ դարձուածներովն ու վսեմ ոճովն
Այվազովսկին առաջին գրաբառախօսն էր ժԹ դա-
րի վերջին կիսում:

ԾԲ.

Յիսնական թուականի վերջին տարու նշանա-
ւոր դէպքն է՝ Մատթէոս Կաթողիկոսի գալուստը:
1859 թ. յունիսին էր, կայծակի արագու-
թեամբ տարածուեց Թիֆլիսում Կաթողիկոսի մօտ
օրերում գալստեան համբաւը:

Ահա խումբէ խումբ դիմում են հայերը դէ-
պի Վէրայի կամուրջը, համբարն իւր դրօշներով
Վէրայի Խաչի տակին է սպասում Հայոց Հայրա-
պետին:

Տէրութիւնն իւր կողմից չի խնայել ամենա-
պարտուկատշաճ ընդունելութեան տնօրէնութիւնը:

Մի քանի վաշտ զօրք առաւօտից սպասում է
Վէրայումը. նահանգապետն ու քաղաքապետն եւս
գնացել են, Ղազախի մի ամբողջ գունդ հեծելա-
զօր շրջապատած ներս է բերելու Վեհափառին
Թիֆլիս:

Մատթէոսի ընդունելութիւնը ներսիսից վեր
է եղել եւ մինչեւ ցայսօր ոչ ոքի չեղաւ Կառավա-
րութեան կողմից:

Ահա նորին Սրբութեան կառքը յամրաքայլ գնացքով բերաւոր բազմութեան ուղեկցութեամբ հասաւ «Ղարախ» հրապարակը, ուր եկեղեցական թափօրը խաչ ու խաչվառներով սպասում է:

Վեհափառն իջնում է կառքից եւ շուրջառ առած՝ մտնում է ամպհովանու ներքոյ, որ բըռնած ունէին չորս գեներալ:

Եկեղեցական հանդէսը յառաջում է մինչեւ Վանքի աւագ եկեղեցին:

Ինձ՝ հակառակ իմ ցանկութեան՝ ամբօխի հոսանքը Հայրապետի ետեւից կրնկակոխ մտցրեց եկեղեցին:

Հարաւային կողմի դռան մօտի մեծ սիւնի վերայ կախուած էր ոսկի շրջանակով մի սուրբ Գէորգի պատկեր:

Կաթողիկոսի աչքն առաւ պատկերին: Նա կանգ առաւ եւ բարձրաձայն հրամայեց վերցնել ձիու պատկերը եկեղեցուց:

— Ի՞նչ հարկաւոր է սուրբ Գէորգին անպատճառ ձիով նկարել, առանց ձիու էլ սուրբ Գէորգին պատուած կը լինինք, գոչեց բարկացած Կաթողիկոսը:

Երբ Կաթողիկոսի հրամանը ուշ կատարուեց, նա գոռաց. «Ծ՛օ, հայդէ, չէք հասկնար, վռնդեցէք, կըսեմ, Աստուծոյ տաճարէն անասնոց խայտառակ պատկերները»:

Մինչեւ որ մօտ եղողները չը հասկացան եւ

չը վերցրին պատկերը, Կաթողիկոսը յառաջ չը գնաց:

Առուր պատշաճի սաղմոսը կարգալուց յետոյ՝
Կաթողիկոսը բարձրացաւ բեմ եւ քարոզ խօսեց:

Վեհափառի հետ ուղեկից էր Թէոդորեան
Սարգիս վարդապետը, լաւ չեմ յիշում Այվազով-
սկին եւ Ամբրոսիոս Գալֆայեանն էլ կային թէ ոչ:

Հայր Սարգիս Թէոդորեանը կանգնած էր ա-
ւագ դասում:

Առաջին խօսքը, որ Մատթէոս Կաթողիկոսն
արտասանեց սեղանից՝ ուղղուեց դէպի Թէոդորեանն,
այս բառերով.

— Թէոդորեան, ի՞նչ կըսէ Գրիգոր Մագիստրոսը՝
ազգին դառնալով:

— Ազգ իմ աչք իմ, պատասխանեց դասից հայր
Սարգիսը:

— Այո՛, ազգ իմ աչք իմ, այսօր իմ առաջին տե-
սութեանը, սիրելի զաւակո՛ւնքս, Գրիգոր Մագիստրո-
սին խօսքերով կողջունեմ ձեզի, դո՛ւք իմ աչքն էք:

Վեհափառի քարոզը բոլորը Մագիստրոսի
բնաբանի շուրջն էր պտտուում:

Ամէն լսողներին զարմացրեց Կաթողիկոսի ար-
տակարգ վարմունքը. ամէն անգամ երբ հարկ էր
զգում Գրիգոր Մագիստրոսի բնաբանը կրկնելու,
գառնում էր դէպի Թէոդորեանն եւ հարցնում.
«Թէոդորեան, ի՞նչ կըսէ Գրիգոր Մագիստրոսը»:

Նոյն երեկոյեան՝ վանքի բակում ճրագալոյց
էր, մեծ բազմութիւն էր հաւաքուած:

Կաթողիկոսն ահագին հաստ մուշտակը հագին, երեքսունեան գլխարկը գրած՝ առանց վերարկուի նստել էր պատշգամբի վրայ եւ զուարճանում:

Նա մօտ էր կանչում իրանից ոչ հեռու կանգնած մանուկներին եւ խօսեցնում ու փայփայում:

Միւս օրը Կուսակալի կառքը հրաւիրեց Վեհափառին պալատ, ուր ստացաւ նա Ս.դէքսանդր Նեվաջու շքանշանն եւ Կայսերական հրովարտակը:

Ասում են՝ կէս ժամից Կուսակալն է եկել փոխայցելութեան, բայց Կաթողիկոսը չի կարողացել տկարութեան պատճառաւ ընդունել:

Երբ Սարգիս Ջալալեան սրբազանը շատ ձանձրացրել է Կաթողիկոսին համոզելով ընդունել Կուսակալին՝ իբրեւ քաղաքավարութեան ընդդէմ տրամարդի վարմունք Կաթողիկոսի կողմից, Վեհափառը բարկութեամբ ասել է, իբր թէ Սարգիս եպիսկոպոսին. «եթէ չես հաւատար որ ես հիւանդ եմ, կարող ես երթալ եւ ըսել, թէ Կաթողիկոսն ապուր կը խփշտէ»:

Սարգիս եպիսկոպոսը Վեհի հիւանդութիւնը յայտնելով՝ ներողութիւն է խնդրել Կուսակալից:

Այսքանով չի բաւականացել Սարգիս եպիսկոպոսը. նա կէս ժամից յետոյ կառք է նստել, պալատ գնացել եւ պատճառ բռնելով Կաթողիկոսի քաղաքավարական կանոններից զուրկ լինելը եւ իբրեւ Օսմանցուի մարդ ընդունուած ձեւականու-

Թիւններին անտեղեակ գողը, շահել է Կուսակալի սիրտը:

Այս գէպքը Մակար եպիսկոպոսն իւր քմաց համաձայն մեկնել է Կաթողիկոսին, վերջինս կանչել է Սարգիս եպիսկոպոսին եւ փառաւոր յանդիմանելով հրամայել՝ չը համարձակուել այսուհետեւ իրեն չը վերաբերած գործերի մէջ ինքնագլուխ խառնուելու:

Մակար եպիսկոպոսն էջմիածնի միաբանութեան կողմից Մատթէոս Կաթողիկոսին հրաւիրակ էր ուղարկուած Կ. Պօլիս:

Տէրութիւնն էլ իւր կողմից գեներալ Մլիքայէլ Լօրիս-Մելիքեանցին էր ուղարկել:

Իբրեւ հայ գեներալ՝ Լօրիս-Մելիքեանցը մեծ ընդունելութիւն էր գտել Կ. Պօլսի հայ ամիրաներից:

Բայց գեներալը նոյն ընդունելութիւնը չը գտաւ երկրորդ անգամ պաշտօնական գործով գնացած ժամանակը: Հայերը բոլորեքեան սառնութեամբ երես էին թեքել նրանից:

Այդ մասին «Օդեսայի թերթը» (Одесскій Листокъ) Պօլսից ստացած մի գրութիւն էր հրատարակել, որին ռուս մամուլի միջոցով հերքումն գրեց ինքը Լօրիս-Մելիքեանը:

«Մեղու Հայաստանի» լրագիրը թարգմանութեամբ տպեց Լօրիս-Մելիքեանի նամակը:

Չը գիտեմ, ընչի՞, Մատթէոս Կաթողիկոսի

մուտքի նման հանդիսաւոր չեղաւ նրա Էջմիածին ուղեւորուելը: Մի քանի պօլիցիականներ միայն կարգապահութեան համար վերահսկող էին նշանակուած:

Քաղաքապետի օգնականը, կարծեմ, տուեց վերջին հրաժեշտի ողջոյնը:

Ողջ Թիֆլիսի ժողովուրդն ուղեկցեց Կաթողիկոսին մինչեւ քաղաքագուռը:

Այն տեղից մինչեւ Սօղանլուխ կայարանը 150 կառքերից աւել ուղեկցում էին Վեհափառ Հայրապետին:

Սօղանլուխումը մենք որդիական ակնածութեամբ համբուրեցինք ազգի արժանաւոր Պետի սուրբ աջն եւ ճանապարհ դրինք:

Ես երկրորդ անգամն էի Մատթէոս Կաթողիկոսի աջը համբուրում:

Առաջին անգամը համբուրեցի Ներսիսեան դպրոցում՝ երկու օր յառաջ:

Այն ժամանակն ես ուսուցիչ էի այն տեղ: Հոգաբարձութիւնը մեծ պատրաստութիւն էր տեսել իւր Հայրապետին ընդունելու. Յակովբ վարժապետը մի սքանչելի ճառ խօսեց:


Մատթէոս Կաթողիկոսի սուրբ էջմիածին ուղեւորութեամբն ես փակում եմ 1850 թուականների յիշատակարանս:

Տեսնենք՝ պէտք է յաջողի՞ հետեւեալ շրջանները կենդանութեանս օրերում լոյս ածելու:



ПОКАЛЕННАЯ РОСПИСЬ ДВОРЯНЪ ХУБОВЫХЪ.

Князь Брошъ былъ въ
провинцій Карни.
Իշխան Պառչէր Գուրնու
Կալանդուսի:



ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Ռ. Կ.

1. «ՍՕՍ ԵՒ ՎԱՐԳԻԹԵՐ» վէպ (Երկրորդ տիպ)	1	50
2. «ԱՂԱՍԻ» Թատրերգութիւն (սպառ.ուած)	—	—
3. «ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԱՄՔԱՐԻ ՄԱՍԻՆ» Թարգ- մանութիւն (սպառ.ուած)	— —
4. «ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Թարգմանութիւն (սպառ.ուած)	— —
5. «ՂԱՐԱԲԱՂԻ ՏԻՐԱՄԱՅՐ ՄԱՐԻԱՄԵԱՆ ԱՂԶԿԱՆՅ ԴՊՐՈՑԻ ԲԱՅՈՒՄԸ» (սպառ- ուած)	— —
6. «ԱԳՈՒԼԵԱՅ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ ԲԱՅՈՒՄԸ» (սպառ.ուած)	— —
7. «ԿՈՌՈՒԱԾԱՂԻԿ» վէպ (սպառ.ուած)	— —
8. «ՀԱՅԻ ԽՆԴԻՐ» (սակաւարիւ)	1 —
9. «ՇԱՀԷՆ» վէպ	1 —
10. «ՅԵՅԵՐ» վէպ	1 —
11. «ԲՂԴԷ» վէպ	1 20
12. «ՍԿԻԶԻՆ ԵՐԿԱՆՑ» վէպ	1 20

Բոլոր իմ աշխատութիւններս բացի «ՍՕՍ և ՎԱՐ-
ԳԻԹԵՐ»-ից վաճառուում են բացառապէս ինձ մօտ:

Հասցէս՝ Տփլիս, Ներսիսեան դպրանոց:
Պումարով առնողներին 20% զիջումն կը լինի:
Ճանապարհածախքն առնողի վրայ:

ԳԻՆՆ Է 1 ՄԱՆԷԹ

24 JAN 2013

50577.7
out 21.5

